Հ. ՊԱՐՈՆՅԱՆ

ՑԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

VI

891.99
Պ-34

19 NOV 2011

891.99
Պ-34

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԱՌՏՆԻՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Խմբ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1935

891.99
Պ-34
1589

18.07.2013

49991

Տեխ. խմբագիր՝ Վ. Մանուկյան
Սրբագրիչ՝ Հ. Հայրապետյան

Պետհրատի տպարան
Հրատարակ. 3205
Գ լ ա վ լ ի տ 53,
Պ ա տ վ ե ր 52
Տիրաժ 4000
▽

782
43

ԽՄԲԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Սույն VI և հաջորդ հատորներով հրատարակվում են Պարոնյանի այն գրվածքները, վորոնք առանց վերահրատարակման մնացել են ինչպես նրա խմբագրած յերգիծական հանդեսներում, նույնպես և Պոլսի զանազան թերթերում։

Այս հատորի նյութերը քաղված են հեղինակի «Թատրոն» ամսագրից, վոր լույս է տեսել Կ. Պոլսում, 1884—88 թվականներին։

Նախորդ հատորների խմբագրական հանձնաժողովը հնարավորություն չունենալով ծանոթանալու այս նյութերի ծավալի հետ, յենթադրում եր ամբողջական Պարոնյանն ամփոփել 6 կամ առավելն 7 հատորներում. այժմ պարզվում ե, վոր ամբողջական Պարոնյանի համար նույնիսկ 10 հատորների սահմանը նեղ պիտի գա։

Այս նյութերի վորոշ մասը, ինչպես և ներկա հատորի նյութերն ամբողջապես՝ անստորագիր են։ Նրանց հարազատությունը յենթակա չե կասկածանքի, Պարոնյանի հանդեսներում բոլոր անստորագիր գրությունների հեղինակը ինքն ե, ստորագրված չե նմանապես նրա հանրածանոթ աշխատությունների վորոշ մասը։ Բայց նա գործածում ե բազմաթիվ այլ ծածկանուններ ևս, վորոնց մասին պիտի անդրադառնանք համապատասխան տեղում։

Ս. Մանուկյան

ԱՌՏՆԻՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Ա.

Երէկ բարեկամներէս մին կը հարցնէր ինծի.

— Կիրակնօրեայ Հայրենիքին [1]) մէջ ալ պիտի գրես։

Եւ ես կը պատասխանէի.

— Այո, կիրակի աւուր Հայրենիքի մէջ պիտի գրեմ։

— Առաջի՞ն կարգի հոդուած պիտի գրես, երկրո՞րդ կարգի պիտի գրես, թէ երրորդ կարգի։

— Չեմ հասկնար։

— Չի հասկնալու ի՞նչ կայ, Կիրակնօրեայ Հայրենիքը երկու կարգի բաժանորդագրութիւն բացած է. առաջին կարգի բաժանորդագին, երկրորդ կարգի բաժանորդագին. բայց աղքատներու մոռցած է բաժանորդագրութիւն բանալ։ Երկաթուղեաց ընկերութիւնն ալ երեք կարգի վագոն ունի։ Տարակոյս չկայ, թէ առաջին կարգի հոդուածներուդ մէջ թաւշեայ բազմոցներ, հայելիներ, սեղաններ, վարագոյրներ և անգլիական գորգեր պիտի գտնուին, երկրորդ կարգի հոդուածներուդ մէջ չուխայէ բազմոցներ և վարագոյրներ միայն պիտի տեսնուին, իսկ երրորդ կարգի հոդուածներուդ մէջ միայն փայտէ բազմոցներ, ընկուզի կեղևներ, ձիթապտուղ և փոշիներ պիտի գտնուին։

— Ձեր կարծիքին չեմ. Կիրակնօրեայ Հայրենիքին նպատակն է ազգին ծառայել. արդ, ազգին ծառայելու համար քաջալերութեան կարօտ զգացած է ինքզինքն, և այդ տնօրէնութիւնն ըրած է, տնօրէնութիւն՝ որ առանց վնաս պատճառելու հարուստ բաժանորդաց՝ կրնայ նպաստել Կիրակնօրեայ Հայրենիքին ծաւալման։

— Շնորհակալ եմ ձեր տուած բացատրութիւններուն։

— Ի՞նչ նիւթի վրայ պիտի գրեք։

— Ընտանեկան նիւթերու վրայ։

— Կը շնորհաւորեմ։

— Շնորհակալ եմ։

— Ի տեսություն։

— Յե՛րթաք բարո՛վ։

Ճամբաս շարունակեցի մտախոհ՝ մինչև վոր տան մը վերի հարկեն առջևս նետված դույլ մը ջուրեն սթափեցա։

Վեր նայեցա։

Ի՞նչ տեսնամ։

Քառասնամյա գիրուկ կին մը, ծունկերը բաց, թևերը բաց, մազերը չսանտրված և չհյուսված, վրայեն ճերմակ շապիկ մը հագած, վոտքերը բոբիկ։

— Ներեցե՛ք, ըսավ ժպտելով, քիչ մնաց, վոր ձեր գլուխն ի վար պիտի թափեյի ջուրը։

— Վնաս չունի, պատասխանեցի։

— Բայց ջուրը մաքուր եր։

— Շնորհակալ եմ։

— Տաք ալ չեր, չեյիք խաշվեր։

— Յերախտագիտությունս կը հայտնեմ։

— Աֆ կընեք։

— Բան մը չե։

— Կարծեմ քիչ մը թրջեցաք։

— Սանկ քիչ մը։

— Կաղաչեմ, մ՚երթաք, վար իջնամ ու սրբեմ։

— Զահմեթ կընեք։

— Տեր վողորմյա, ինչո՞ւ զահմեթ ըլլա, պարտքերնիս ե, սպասեցեք։

Սպասեցի։

Վար իջավ մաքուր լաթ մ՚ի ձեռին և սրբեց վերարկուս։

Սպիտակ և պարարտ ազդրեր, թևեր ու պարանոց։ Կարելի յեղածին չափ զգուշացա ծածկել անցնողներեն այդ ազդրերը, թևերն ու պարանոցը ուսումնասիրելս։

Շնորհակալ եմ, ըսի, յերբ լմնցավ գործողությունն ու շարունակեցի ճամբաս։

Մտածությունները նորեն սկսան։

Այս կինը, կըսեյի, դիտմամբ զիս թրջեց, վորպեսզի յուր գեղեցիկ թևերն, ազդրերն ու պարանոցը ինձ ցույց տա։ Կիները, կըսեյի, ամեն միջոց ի գործ կը դնեն երիկ մարդոց ուշադրությունը գրավել իրենց գեղեցիկ և ամենեն ավելի աչքի զարնող կողմերուն վրա։ Հիշեցի խելացի հովվի մը խոսքը։

— Պե աղբար, կըսեր այս հովիվը ինձ որ մը, երիկ մարդիկ այսքան մեծ գործեր կը տեսնեն, տուներ կը շինեն, պալատներ կը կանգնեն և վոչ վոք անոնց վոտքը կամ ձեռքը տեսած ե, մինչդեռ կանայք յեթե տախտակ սրբելու յելնեն՝ իրենց ծունկերն, թևերն ու կուրծքը կը բանան։

Յեվ իրավո՛ւնք տվի հովվին։

Հարուստ կանայք իրենց մեծափարթամ հոխությամբը, զարդարանոք, ծանրագին հանդերձներով և ադամանդներով կը ջանան իրենց վրա ուշադրություն հրավիրել. իսկ աղքատներն, վոր զարդարվելու, պճնելու համար դրամ չունին, կը շատանան ծունկերը, թևերը ու կուրծքը բանալով։ Ասոնք ճշմարտությունը մերկ ներկայացնել կուզեն, մինչդեռ անոնք ճշմարտությունը կը զարդարեն ու կը պճնեն ավելի ազդեցություն ընելու համար աչաց վրա։

Բայց յերբ տախտակ սրբող աղքատ կնոջ ծունկերը բարակ ըլլան՝ խնդիրն կը փոխվի. այն ատեն ցույց չտար քեղի ծունկերը։ Կանայք մեծ վարպետություն ունին իրենց տգեղ կողմերը ծածկելու մասին։

Նախ և առաջ ամենուս գիտցած բանն ե, թե ինքզինքը ցույց տալ ուզող կինն — և կին մը չկա, վոր չուզե ցույց տալ ինքզինքը — միշտ իրմե ավելի տգեղ կնոջ մը հետ կուզե դուրս յելնել, և ընդհակառակն, տգեղ կին մը բնավ չհաճիր իրմե գեղեցիկին հետ պտըտիլ և պատճառ մը կը գտնե. այսոր հիվանդ եմ կըսե, կամ այսոր դուրս յելնելու փափաք չունիմ կըսե, կամ այսոր ծունկերս կը դողան կոր, կըսե. վերջապես կըսե, ինչ վոր պետք ե ըսել իրմե գեղանի կնոջ մը հետ դուրս չելնելու համար։

Հարուստ կիներն, վոր իրենց գեղեցկությանը շատ վստահ չեն՝ բռնությամբ իրենց հետ կառնեն իրենց տգեղ սպասուհիները, վորք առ նվազն իրենց տիկիններեն տասը քայլ հեռուեն կը քալեն, վորպեսզի երիկ մարդոց աչքին չզարնե իրենց տգեղությունը։

Այս ե պատճառ, վոր տիկին մը յուր սպասուհվույն հետ պտտած ժամանակ յետև կը դառնա հաճախ և սպասուհվույն կըսե.

— Ճանըմ, ինչու հեռվանց կուգաս կոր, յետևես չի գա՞ս։

— Կուզամ կոր, ունկին, կուզամ կոր, տանձ ինչպես գամ։ Ախ, այս կանանց վրա շատ կը խնդամ յես յերբեմն։

Այն կինն, որու քիթը, բերանը պզտիկ է և աչքերը ոգեղ՝ ակնոց կը դնե աչքին, որ չը տեսնվին. իսկ այն կինն, որուն աչքերը գեղեցիկ են և քիթը բերանը մեծ՝՝ միշտ թաշկինակով քիթը, բերանը կը գոցե և աչքերովը կը գործե։ Խոշոր և կարճ ձեռներ ունեցող կիներն միշտ և ամեն տեղ ձեռնոց կը գործածեն, մինչդեռ փոքրիկ և փափուկ ձեռներ ունեցող կիներն առիթ կը փնտռեն... կը փնտռեն, առիթ կստեղծեն իրենց փափուկ մատները ցույց տալու համար։ Փոքրիկ ոտք ունեցող կիներն ընդհանրապես ծունկ ծունկի վրա կը դնեն իրենց ոտները ցույց տալու համար։ Կրնայի տակավին շատ օրինակներով հաստատել մեր կարծիքն, յեթե անոր հակառակվողներ գտնվեյին։ Ի՞նչ խայտառակություն է ասս։

Ինչու համար կին մ՛յուր ծունկերը, թևերն ու պարանոցը ցույց տալու համար տախտակ սրբելու ստիպվի, իմ վերարկուս թրջե և ստիպե զիս ասանկ դիտողություններ ընելու։ Ինչու համար համոզված չըլլան մինչև հիմա՝ թե կին մ՛որ համեստ, պարկեշտ, ժրաջան և ազնվասիրտ է, ունի փափուկ ձեռներ, փոքրիկ ոտներ, սիրուն աչեր և հրապուրիչ դեմք։ Ինչու հասկցած չըլլան, թե մարմնո գեղեցկությունն ոչինչ է հոգվո գեղեցկության քով։ Ինչու սորված չըլլան՝ թե կին մը կրնա շատ գեղեցիկ ըլլալ և միանգամայն ատելի, յեթե օժտված չէ հոգվո գեղեցկությամբ։

Այս ինչուները մեծ ցավ յեղած են ինձի և միշտ սիրտս կը կրծեն ու կը մաշեցնեն. ամեն որ անոնց վրա կը խորհիմ, կը մտածեմ, կը խոսիմ։

Կանայք, ինչու չեք սորվիր ու չեք հասկնար այս ինչուները։ Հոգ չէ, յես կը սորվեցնեմ ձեզի, յես կը հասկցնեմ ձեզի։

Բ

Կանայք․

Անցյալ շաբաթ խոսեցա ձեզ այն հնարներու վրա, զորս այնքան հաջողակությամբ կստեղծեք ծածկելու համար աչաց, ինչ որ տգեղ ու տձև է ձեր անձին վրա։ Բայցը է ինձ հուսալ, թե գոհ յեղաք, ո՛վ իմ իգական ունկնդիրք։ Ցավ դժգոհելու պատճառ

չունիք, ըստ որում ձեզմե շատերն իրենց այդ հնարից շնորհիվ հաջողած են ամուսնու տեր ըլլալ։

Կը ճանչեմ կին, մ՚որ յուր ցուցամատին պարտի ամուսինն. կը ճանչեմ նաև կին, մ՚որ յուր ակռաներուն շնորհիվ կրցած է գտնել ամուսին մ՚որուն բոլոր ակռաներն թափած են. գիտեմ նաև կին մ՚որ յուր ոտքերն ամուսնացուց պարկեշտ մարդու մը հետ, որուն ոտքերուն յերկայնությունն եր կես կանգուն։ Կը խնդաք անշուշտ կարդալով այս տողերն, որոց մեջ ակներև կը տեսնվին ձեր վարպետությունն և երիկ մարդոց տխմարությունը, երիկ մարդոց՝ որ շատ անգամ կամուսնանան կամ ոտքի մը հետ—կամ մխի մը հետ—կամ ականջի մը հետ — կամ ոտքի մը հետ— կամ մազի հետ—կամ քթի հետ։

Խնդացեք, վնաս չունի. բայց կը խնդրեմ, որ ուշադրությամբ լսեք ինձ։

Այսոր պիտի ճառեմ ձեզ այն զգուշության վրա՝ որովք կզգուշանաք անեղծ պահել ինչ որ գեղեցիկ է ի ձեզ։ Չպիտի ջանամ ձեզի հաճելի լինելու, ջանահնար պիտի լինիմ ձեզի օգտակար ըլլալու։ Ուստի, մի բարկանաք, յեթե դառն ճշմարտությանց բաղխիք ճառիս ընթացքին մեջ։ Վստահ յեղեք, որ կը սիրեմ զձեզ և ձեր բարվույն համար կաշխատիմ։

Սկսինք ուրեմն։

Կանայք, դուք այնպես կը կարծեք, թե ձեր մեջքը դուռ-նյուռ կապելու համար միայն ստեղծված եք, թե ձեր մեջքը դուռնյուռ կապելով միայն կրնաք ընկեր և օգնական ըլլալ ձեր ամուսնույն։ Մեծապես կը սխալիք։

Իբր օրինակ առնենք կին մը ձեր մեջեն և քննենք յուր կյանքը։

Այս կինն քաջառողջ է։

Խոսել տանք զինքն յուր ամուսնույն հետ։

— Սիրելիս, վաղը լաթ լվացվի պիտի, լվացարար մը կանչեյինք։

— Լվացարար մի՞, լվացարա՞ր մի, ժամանակները գեշ են, լվացարարի ստակ տալու ժամանակ չէ։

— Շատ աղտոտ ունինք, ճերմակեղեն չունինք հագնելու։

— Դուն լվա՛։

— Ցե՞ս լվամ... կը վայլե յա։

— Ինչո՞ւ չվայլեր յաղեր։

— Յես չամաշըրճի կնիկ չեմ, թող չամաշըրճի կնիկ մ'առնեյիր։

Ամուսինն կը մեկնի։ Թափինը կուգա. հետևյալ օրն և կըսկըսի լվալ։

— Ամուսինս, այսօր քանի մը դահեկան տուր ինծի, վոր կնիկ մը բռնեմ լաթերը փռելու համար։

— Լաթերը փռելու համա՞ր ալ կնիկ պիտի բռնենք։

-- Ճանըմ, ամեն մարդ ինչպես կը բռնե կոր։ Յես կրնա՞մ չամաշըր փռել, կը սենամ, չինկյանե կը դառնամ նե։

— Բարա չեմ տար ես։

— Լաթերը չեն չորնար։

-- Դուն չփռե՞ս։

— Ճանըմ, խենդեցա՞ր։

— Խենդենալու ի՞նչ կա հոս։

— Լվա՞ծ բան է վոր…

— Ատանկ պուշ բանի համար բարա չեմ տար յես։

— Ինչ է նե՝ յես կը փռեմ, աղոթք ըրե, վոր ինծի պես մաղլում կնկան մ'ինկած ես։ Յես կը փռեմ, բայց տասը դրուշ տուր, վոր յերկու տուփ բուտրա առնեմ ու յերեսս քսեմ, վոր չերևիմ փռած ատենս։

— Բարա չունիմ։

Ամուսինը կը մեկնի։

Հետևյալ օրը։

— Շապիկներդ իւթիւ պիտի ըլլան, բարա տուր, վոր մեկը կանչենք։

— Դուն ինչո՞ւ չես ըներ կոր։

— Յես ձեռքերս փատ չեմ դարձուներ քուկին շապիկներուդ համար. գերի չառիր զիս յա։

— Մեղք չե՞ իւթիւյի համար տրված բարային։

— Անանկ է նե՝ իւթիւսիզ հագիր շապիկներդ։

— Իւթիւ ընելը դժվար բան մը չե։

— Ճանըմ, յես կրնա՞մ ծռիլ յելլել, ինչո՞ւ պուշ լախըրտներ կընես, չիյտե՞ս, վոր մեջքս կը ցավի, չիյտե՞ս, վոր իւթիւ ընեմ նե՝ ձեռքերս կավրվին։

Հետևյալ օրը։

— Կնի՛կ, սենյակները լեփլեցուն փոշի կա։

— Խապար ըրի չեկավ կնիկը, այսօր պիտի գա ավլելու։

— Ավլելու համար ալ կինի՞կ կը բերեք։

— Բա ճանըմ, յես հալ ունի՞մ ավլելու. ավլելու համար խոշոր և զորավոր ձեռքեր պետք են։ Նայիս նե՝ ավելը քու գործդ է ամա, յես քեզ ցավելուս համար կնիկ բերել կուտամ կոր։ Վա՜հ, վոր ասանկ կնիկ մը ունիս տե՝ խըյմեթը չիյտես կոր, իմ տեղս ուրիշ մը ըլլար նե՝ տունին մեջ ամեն օր խըռխըռը պակաս չեր ըլլար։

— Աստված համբերություն տա ինծի, սա կերակուրը բեր նայինք։

— Աֆ կընես, այս իրիկուն տաք կերակուր չունինք։

— Ինչո՞ւ։

— Քույրս չեկավ այսօր։

— Քույրդ ինչո՞ւ պիտի գար։

— Ինչո՞ւ պիտի գար… կերակուր յեփելու։

— Դուն չե՞ս յեփեր կերակուրը։

— Այս ձեռքերով միս կրնա՞մ ջարդել յես։ Ճանըմ, պաղի, պաղի անանկ խոսքեր կընես, վոր կարծես թե լեռնեն յեկած ես, չիտակը քեզի յախըշտըրմըշ չեմ ըներ կոր այդ խոսքերը. աղեկ վոր քովերնիս մարդ չկա. լողն ի՞նչ պիտի ըսեր, վայ մեղքիս։

— Ի՞նչ կա նե բեր փաթլամիշ ըլլանք ու յելլանք։

Կըլլան ու կելլան։

Ամուսինը կերթա ձեռները լվալու։

— Մուսլուխին մեջ ջուր չկա։

— Աշկը քեորնա սախային, վոր այսօր չհանդիպեցավ։

— Հորի ջուրով չեյի՞նք լվացվեր։

— Անուշ ջուրով պիտի լվացվեյինք յա։

— Եյ, սախան ինչ գործ ունի…

— Այս օրերս թոաֆ մարդ մը յեղեր ես դուն։

— Ինչո՞ւ համար այս օրերս թոաֆ մարդ յեղած եմ։

— Զիտեմ։

— Ինչո՞ւ։

— Ճանըմ, յես ջուր քաշելու կնի՞կ եմ, յես քաշեմ նե պիլե, դուն թող տալու չես։

— Ինչո՞ւ համար թող տալու չեմ։

— Անոր համար, որ յես ջուր քաշեմ նե՝ անկե վերջը այս ձեռքերուն խերը տես։

— Ի՞նչ կըլլա։

— Ջվանը քար պիլե կը մաշեցնե, ուր մնաց ձեռքերս։

— Սանքի շարունակ ջուր քաշելով ձեռքերդ կը մաշին ու բոլորովին կը հատնին, հե՞...

— Ամա՛ն, կատակին ալ սրան կա, ամեն վախիթ շախա չըլլար։

— Շատ աղեկ, շատ աղեկ, փառք կուտամ աստուծո, որ զավակ չունեցանք...

— Զավակ ալ պիտի ունենայինք գահեր... ավելի աղեկ է, որ հիմակվընե վողջ վողջ թաղես զիս։

— Ատ ի՞նչ խոսք է։

— Զավակ բերելու կնի՞կ եմ յես, ոհ, կը մեռնիմ նե., վայրկյան մը չեմ ապրիր։ Զավակ բերելու համար սաղլամ ըլլալու յե... բուն նայիս նե...

— Յես բերելու յեմ զավակը այնպես չէ՞։

— Ճանըմ, ինչու անանկ քեննայի խոսքեր կընես։

— Կամ սախան բերելու յե։

— Բարկացնե՞լ կուզես կոր զիս։

— Հալուստ չենք քի, պեսլեմենիս բերե մեզի համար ու մենք սիրենք։

— Տեր վողորմյա, տեր վողորմյա. այս իրիկուն պամ պաշխա մարդ յեղեր ես, կարծեմ քանի մը հատ տնկեր ես։ Զավակն ի՞նչ պիտի ընես, խոլայ պա՛ն է զավակ մեծցնելը։

Ամուսինը կը քնանա։

Քնացի՛ր, խեղճ մարդ։

— Թողունք մարդուն քնանալ և սկսինք մեր խորհրդածության։

Այն ամուսինները, որ ձեռներու հետ ամուսնացած են՝ ամենեն ավելի դժբախտներն են, վորովհետև ձեռքով կաշխատի մարդ։ Այն ամուսինները, որ քթի հետ ամուսնացած են, նվազ դժբախտ են, քանզի քթով վոչ մեկ կը ջարդվի և վոչ ալ կավլվի։

Անոնք, որ ակռաներու հետ լծակից յեղած են՝ դժվարավ կը հաջողին իրենց կանանց կերակուր յափել տալ, խոհարարություն թշնամի յե ակռաներու. և շատ խոհարարներ ակռա չունին։

Անոնք, որ խարտյաշ և յերկար մազեր ունին իրենց կողակից՝ յերջանիկ չեն, վորովհետև իրենց կինն որվան յերեք քառորդը կանցունե մազերը սանտրելով։

Անոնք, որ սև փայլակնացայտ և աշխարհակալ աչաց հետ կենակից են՝ շատ դժբախտ են, անանկ աչքերեն հնազանդություն չակընկալվիր. անոնք կոչված են դրավելու, տիրելու և թագավորելու։ Այն աչքերն վոչ չիրոզ սալաքասը կը չինեն, վոչ ալ բանթալոնի կոճակ կը կարեն։

Իսկ անոնք, որ բնական դուռնյուռներ առած են իրենց կնության՝ յերջանիկ չեն դարձյալ, վորովհետև այդ կանայք Շիրքեթի Խայրիեյի 2) 2 թիվ շոգենավուն մեքենային պես հագիվ կրնան շարժիլ ու յերերալ, մանավանդ թե չեն ուզեր իրենց միսեն մաս մը կորսնցնել։

Յեվ անոնք, որ փափուկ կազմով կիներ ունին՝ ապերջանիկ են. այդ կիներն իրենց փափկությունն չկորսնցնելու համար հանձնառու կըլլան կորսնցնել ամեն բան։

Կը տեսնեք, գեղեցիկ ընթերցողներս, կին մը հաստատ և անխախտ պահելու համար ինչ որ ամենեն ավելի գրավիչ, հրապուրիչ և դյութիչ է յուր անձին վրա, կը զոհե շատ անգամ տան մ'երջանկությունն։

Կին մը կուզե միշտ հաճելի ըլլալ։ Կուզե որ գեղեցիկ ըլլա մինչև իննսուն տարեկան, ի՞նչ կըսեմ, մինչև հարյուր հիսուն տարեկան։

Բնավ չեմ մոռնար, որ մը նշանավորության մը վրա խոսք կըլլար տեղ մը։ Վաթսունը հինգ տարեկան կին մ'որ քառասունը մեկ տարեկան է միշտ, հանկարծ խոսքի մեջ նետվեցավ և ըսավ. «Յես կառնեյի այդ յերիտասարդն, յեթե պոյը պոսը փառավոր ըլլար և սակ ունենար»։

Ո՛ւհ, ըսի մտքես ու դուրս յելա։

Ո՛վ կանայք, մինչև յե՞րբ նանրասեր և խստապահանջ պիտի ըլլաք, և դուք, վո՛ երիկ մարդիկ, մինչև յե՞րբ։

Բնավ չեք հարցներ ինձ, թե տգեղ կին ունեցողներն ինչպես են։

Այս խեղճերուն վիճակը մի՛ հարցներ. ասոնց ալ յուրաքանչյուրը կը չարչարվի տեսնելով, որ իր կինն առավոտե մինչև իրիկուն կաշխատի ինքզինքը գեղեցկացնելու։

Յերջանիկ ամուսիններն անոնք են, վոր հոգվո գեղեցկութ֊յամբ ոժտված կնոջ մը հետ կը կարգվին։

Ո՛վ կանայք, կարեորութ֊յուն մի տաք վաղանցուկ գեղեցկութ֊յան, դյուրաշեջ փառաց և անցավոր հաղթանակաց։ Աշխատեցեք ձեր պարզասիրութ֊յամբ սրտի, հոգվո, բարուց և զգեստուց ոգտակար և սիրելի ըլլալ։ Ծրաջան կին մը տուն կը կանգնե։ (Կարծեմ ասոր նման բան մը կըսե Սողոմոն իմաստուն). քիթ մը կոկիկ պահելու համար տուն կործանելը մեղք է։ Գեղեցկանալու անձնատուր կինն՝ ամենեն տգեղ կինն է։

Սառաքինութ֊յունն յերբեք ապրած չե վոչ քթի մեջ, վոչ վոտքերու վրա։

Պատմութ֊յան մեջ չեմ կարդացած անունն կնկան մ'որուն գերեզմանին վրան շիրիմ կանգնած ըլլան պզտիկ ականջներ ունեցած ըլլալուն համար։

Հրաժեշտ տվեք այդ թեթևութ֊յանց, նույնպես մեկդի նետեցեք այդ դյուռնյուռներն, վորոնց մահու չափ թշնամի յեմ։ Յեվ յեթե չնետեք, ուր վոր հանդիպիմ ձեզի՝ պիտի քաշեմ, պիտի փրցունեմ ձեր դուռնյուռները, վորովհետև ձեզի հետ ուրիշ կերպով վարվիլ կարելի չէ։ Իմ այս արարքս, գիտեմ, վայրենութ֊յան և կոշտութ֊յան գործ պիտի նկատվի։ Յես չունիմ իմ ճկասելով-ներու։ Պիտի հալածվիմ, պիտի ծեծվիմ։ Վնաս չունի. Սոկրատ [3]) ալ հալածվեցավ. ապագա սերունդը պիտի անմահացնե իմ անունըս։ Զկարծեք սակայն, թե անմահանալու համար պիտի պատռեմ այդ դուռնյուռներն, վոր ձեր ամեն քայլափոխին կը շարժին մի հաջ մի հանյակ։ Ատանկ կեղծ մարմին չեմ ուզեր յես, անանկ շարժուն բան չի պիտի ըլլա։ Բայց պիտի անպատվեն զիս և գուցե ինձի համար շատերն ալ պիտի հալածվին։ Ո՛ւմ հոգ. սիրով հանձն պիտի առնեմ այդ նեղութ֊յունները, իրիկ մարդերը գերութ֊յան դժոխքեն ազատելու համար։

Կախաղան պիտի յելնեմ և պիտի պոռամ E pur si muove [4])
Այդ դուռնյուռ ըսված բանը պիտի վերնա։

Դ.

Գեղեցիկ ունկնդիրներս.

Անհուն բերկրութ֊յուն զգացի իմանալով ձեր բարկութ֊յունն վերջին դասախոսութ֊յանս վրա։ Կը վախնայի, վոր չպիտի բարկանայիք և դասախոսութ֊յունս առանց ազդեցութ֊յան պիտի մնար։ Ուղղութ֊յան ճանբուն մեջ մտած է այդ կինն, վոր կը բարկանա յուր թերութ֊յունները մատնանիշ ընող անձին դեմ։ Անուղղա յե այն կինն, վոր պաղ արյամբ և կատարյալ անտարբերութ֊յամբ մտիկ կընե յուր պակասութ֊յուններն իրեն ցույց տվողին խոսքերը։ Կանայք ընդունած են արդեն, ինչ վոր կը հերքեն և հերքած են այն, վորուն հավանած են։ Պարտութ֊յուն խոստովանիլը հայտնապես քաջերու գործ է։ Կանայք տկար են, հաղթելով կը հաղթվին և հաղթվելով կը հաղթեն։

Շարունակեցեք ուրեմն մտադիր լինել խորհրդածութ֊յանցս, վոր նպատակ ունին ձեր յերջանկութ֊յունն ու բարորութ֊յունն, ձեր ներկայն ու ապագային բարելավութ֊յունն, ամուսնութ֊յանց հավելումն և թեթևութ֊յանց բարձումն։

Կանայք,

Առանց հոգվո գեղեցկութ֊յան վոչինչ է մարմնո գեղեցկութ֊յունն։

Միօրինակութ֊յունը ձանձրույթ կը պատճառե և հաճախ քուն կը բերե, պեսպիսութ֊յունն է, վոր հաճույք և զարթումն կը ծնանի։

Մեկ կին մը միօրինակ գեղեցիկ կրնա լինել. կրնա վարդ մ'ըլլալ, բայց չկրնար միանգամայն մանուշակ, շուշան, շահպրակ, ֆամելիա և այլն ըլլալ։

Ամեն որ վարդ հոտոտելն վոչինչ հոտոտել է։

Հոգվո գեղեցկութ֊յունն է, վոր միօրինակ չե, ամեն որ վերըստին կը ծնանի նոր հրապույրներով, նոր թույր կառնու, նոր բույր կը բուրե, յերթալով յերթալով կը գեղեցկանա, կը հրապուրե, կը դյութե, կը հափշտակե, կը տիրե և կը գահակալե։

Ինչու ուրեմն զոհեք հոգվո գեղեցկութ֊յունն մարմնույն։ Ինչու տկարացնեք դուք զձեզ։ Ինչու, կըսեմ, ձեր ամենեն տկար զենքովն պատերազմիք, հաղթվիք և զիս վշտացունեք, մինչդեռ պատերազմելու հարկին մեջ բնավ չպիտի տեսնեյիք զձեզ, յեթե ձեր զորավոր զենքով սպառազինվեյիք։ Ամենեն ավելի ըմբոստներն և ապստամբներն ծունր պիտի դնեյին, յերկիր պիտի պագանեյին ձեզի և վոչ վոք պիտի ստիպվեր յեղջյուր աճել...

Շատ անգամ կը սխալիք դուք, կարծելով թե ձեր ամուսիններն կը գլանան ձեզ հարգանքն, որուն արժանի յեք։ Կը մոռնաք դուք, թե կատարելապես կը պակսի ձեզ այն, որուն համար հարգվիլ կուզեք։ Մի միայն մարմնո գեղեցկությամբ թագավորել կուզեք։

Հագեցությունը կը ջնջե անոթությունը։

Անոթությունն փափաքն է։

(Կարծես Վիքթոր Հյուկոյի պես կը խոսիմ կոր)։

Գեղեցիկ ունկնդիրներս, ըրեք այնպես, որ ձեր ամուսիններն միշտ անոթի մնան, ձեզմե ստանալու բան մ'ունենան միշտ։ Հագենան և անոթենան։ Անոթությամբ հագենան... հագեցողությամբ նոթի մնան...

Փաթթվեցեք ուրեմն հոգվո գեղեցկության։

Մի՛ խաբվիք այն յերիտասարդներեն, որ զձեզ կը շողոքորթեն և զձեզ շողոքորթելով ձեր տանն խաղաղությունը կը խռովեն։ Ուրիշներե շարունակ շողոքորթվելով կը կարծեք, թե չեք հարգվիր ձեր ամուսիններեն։ Կուզեք, որ ձեր ամուսինն ամեն յերեկո տուն մտնելուն ձեզի ըսե.

— Ո՜հ, իմ աղվորիկ կնիկս... ոհ, իմ նոնոշիկս... արևուդ մեռնիմ... այսօր որչափ աղվոր ես... յես արժանի չեյի քեզի պես աղվոր կնկան մը... գերիդ ըլլամ։

Յեվ յիրը ամուսին մը թերանա այս արարողության մեջ՝ կսկսիք տունը տակն ու վրա ընել և պոռալ.

— Ի՞նչ ըսեմ յես իմ սև բախտիս, տխուր ճակատագրիս, որ անզգա մարդու մը ձեռք ինկա. յեթե ուրիշ ամուսին մ'ունենայի՝ թագուհվո պես կյանք կանցունեյի, վա՜յ ինձ, վա՜յ ինձ, վա՜յ ինձ...

Մի՛ լաք, մի՛ լաք, սրբեցեք ձեր արտասուքն և ուրիշ ատեն առիթ մի տաք ինձ գրել հետևյալ տեսարանները.

— Կնի՛կ, սա կերակուրը բեր ուտենք։

— Հելե նստե քիչ մը։

— Անոթի յեմ։

— Քիչ մը յերեսս նայե։

— Ի՞նչ նայեմ, անոթի յեմ հիմա։

— Անոթի, անոթի, հայվանի պես մարդ մ'ես, ատամ. այսօր քիչ մը փողոց յելա և մինչև որ տուն դարձա նե՝ յես գիտեմ քա-

շածս, մարդ չմնաց, որ ժամերով յերեսս չնայի... դուն ի՜նչ անզգա մարդ ես, որ սանկ քիչ մը յերեսս չես նայիր։

— Յես քուկին յերեսդ այսօր պիտի տեսնեմ։

— Թո՛ղ ըլլա... վախ որ կնկան խըյմեթ չիտես։

— Խըյմեթի բան կա՞ հոս հիմա։

— Չիտեմ։

— Կերակո՞ւրը։

— Ուտելու ախորժակ ձգեցի՞ր, որ ուտեմ։ Յես դուրս պիտի յերթամ, դուն գնա կեր։

Ուրիշ տան մը մեջ.

— Բարի իրիկուն, տիկին։

— Աստուծու բարին.

— Յերթամ սա ծաղիկներուն քիչ մը ջուր տամ։

— Ծաղիկներն ալ գետինն անցնին...

— Ինչու... կը չորնան նե...

— Յես չորնալես յետքը...

— Դուն ինչու չորնաս... ի՜նչ ըրինք դարձյալ.

— Ի՞նչ պիտի ընես, ծաղիկներդ ինձմե ավելի կը սիրես կոր։

— Ինչու այդպես կը խոսիս։

— Ինչու չպիտի խոսիմ յեղեր... նստե քիչ մը քովս, անուշներ ըլլա ըսե, այսօր բաղնիք գնացի։

— Շատ աղեկ, անուշներ ըլլա... հորին չվանը վրա՞ն է։

— Մեկ անուշներով կը լմնա՞։

— Անուշներ ըլլա դարձյալ... հորին չվանը վրա՞ն է։

— Նստե, բան մը պիտի պատմեմ։

— Հորին չվանը...

— Բաղնիքին մեջ չես հարցներ ինչեր յեղավ այսօր... քիչ մնաց կը ճաթեյի կոր...

— Ինչու։

— Ի՞նչ գիտնամ, վրաս գեշություն մ'եկավ...

— Պատճա՞ռ։

— Պատճառ նազար և յեղեր... լեփլեցուն եր բաղնիքը... սա ի՜նչ աղվոր կնիկ է... սա ի՜նչ հրեշտակի պես կնիկ է... սա ի՜նչ մարմին է... սա ի՜նչ հասակ... ան ի՜նչ ճերմակություն... սա ի՜նչ փիլիճի պես կենճ է, այնչափ ըսին, որ աչքով պիտի ուտե-

յին գլխ։ Բաղնեպանն յեկավ, շուտ մը դուրս հանեց, հագցուց ու մեյ մ'ալ ասանկ խալապալըխի մեջ մի մտնար, աղջիկս, ըսավ։

— Անցած ըլլա անանկ է նե։ Սա հոգին չվանը…

— Ասանկ գեղեցիկ կին մը ունիս տե… ա՜հ, իմին տեղս ուրիշ մը ըլլար նե՝ քուկին գլուխդ շատ փորձանքներու կը հանդիպցուներ ամա, աղոթք ըրե քի յես քիշիզատե յեմ տե, չեմ կըրնար ընել… զաթը դուն կնիկդ հիչ սիրած չունիս վոր… մեղք ինձի, մեղք… երվեցա, երվեցա։

Անցնինք ուրիշ տուն մը.

— Բարիկուն, կնիկ։

— …

— Բարիկուն, կնիկ։

— …

— Ինչու չես խոսիր։

— Ինչու պիտի խոսիմ։ Յեթե հետս միշտ այսպես վարվիս՝ քիչ ատենեն կնիկդ ձեռքեդ պիտի յելլա։

— Ինչու։

— Բան մը կերած չունիմ, քնացած չունիմ, գլուխս կը դառնա, ծունկերս կը դողան… ու մը որանց հարցուցած չունիս վոր, կնիկ, ինչու կը նիհարնաս կոր։

— Ինչու կը նիհարնաս կոր։

— Քուկին վարմունքդ ինձի պիտի մեռցունե։

— Ի՞նչ ըրի քեզի…

— Ի՞նչ պիտի ընես, իրիկուն մը յեկուր տե, սանկ անուշ խոսք մը ըրե։

— Ձե՞մ ըներ կոր։

— Գալուդ պես թավուլխներուդ քովը կերթաս… թավուլխներըդ ինծմե ավելի կը հոգաս։

— Աս ալ խո՞սք է հիմա։

— Ուրիշները քեզմե ավելի կը հարգեն զիս։ Այսօր տուն մը գնացի՝ նստեցնելու տեղ չկրցին գտնել… դուն յերեսս չես նայիր։

— Զիյտես վոր քեզի համար կը մեռնիմ յես։

— Ատանկ բան մը ըսած չունիս նե։

— Սրտանց կը սիրեմ յես։

— Սրտանց սիրելն ի՞նչ ընեմ յես, մարդս քիչ մ'ալ անուշ

խոսքերով սիրելու յե։ Ամա իմ թալեհես է ան, վոր քաշեմ։ Այսօր պատուհանը նստեր եյի, յերկու յերեք հոգի անցան և անանկ ուշադրությամբ յերեսս նայեցան, վոր կը վախնամ քի չփախցունեն զիս ասկից… աղվոր ըլլալն ալ պելա յե յեղեր… քեշկե քիչ մը չիրքին ըլլայի ու կարենայի պատուհանին առջև նստիլ։ Ինչ անկիրթ մարդիկ կան յեղեր… անանկ նայիլ մը ունին քի, կարծես թե պիտի ուտեն… արարատ աշխարհ կը խենթենա վըրաս, միայն դուն բանի տեղ չես դներ զիս։

Ահա ասոնք են այն կիները, վորոնց կը պակսի հոգվո գեղեցկությունը։

Թերևս առարկվի մեզ.

— Հոգվո գեղեցկություն, հոգվո գեղեցկություն, հոգվո գեղեցկություն մ'առեր կերթաս, պարտեզներու մեջ, հրապարակներու վրա ի՞նչպես ցուցնելու յե հոգվո գեղեցկությունը, յերիտասարդները հոգվո գեղեցկություն փնտռած ունի՞ն… հոգիին վրա բուտրա և լավանտա կը դրվի՞… հոգիին մեջքը դուռնյուռ կը կապվի՞…

Կը հավանիմ սա պայմանավ, վոր օրիորդները մարմնո գեղեցկությամբ գրավեն, բայց հոգվո գեղեցկությամբ տիրեն, այսինքն՝ ամուսնանալե հետո կանայք հոգվո գեղեցկությամբ միայն փայլելու յեն։ Ուրիշ յերկիրներ գրավելու պետք չունին այլևս, այլ պահպանելու պարտավոր են այն, վորուն տիրացած են արդեն։ Կարգվելեն յետքը պարտավոր են մինչև անգամ տգեղացնել իրենց մարմինն ի պատիվ և ի փառս յուրյանց ամուսնույն և զավակաց։

Անգամ մը միայն հաղթանակ տանելու յե կին մը։

Ախշարհակալությունը կանանց համար չէ։

Դ

Տիկնայք,

Պիտի շարունակեմ խոսելու ձեզ այն անկեղծությամբ և համարձակությամբ, վորոց պարտավոր եմ միայն այն փոքրիկ համարձակությունն, զոր կը վայելեմ այսօր։

Զարմանալի չթվի ուրեմն ձեզ, յերբ ըսեմ, թե ձեզմե վոման իրենց ամուսիններեն ավելի կը սիրեն իրենց հագուստն ու կա-

պուսար։ Յեթէ չեմ սխալիր, ձեզմէ մին ժամանակաւ հաջողած է այլ և այլ հնարքներով մեռցնել յուր երիկն, վորպեսզի սևեր հագնի և ըսած է.

Կը սիրեմ ամուսինս, բայց աւելի կը սիրեմ սևը. այսինքն՝

Amicus Plato, sed magis amica veritas վոր է.

Կը սիրեմ Պղատոնը, բայց աւելի կը սիրեմ ճշմարտութիւնը։

Ձեզմէ վոմանք գիտութեամբ կամ անգիտութեամբ վերոհիշյալ այրասպան կնոջ օրինակին կը հետևին դժբախտաբար։

Տիկնայք, կաղաչեմ, մի բարկանաք և ըսեք ինձ, ինչ է, յեթէ վոչ այրասպանութիւն ամուսինէ պահանջել ծանրագին կերպասներ, վորոց գնումն մեծ հարված կուտա ամուսնոյ և սրտին և քսակին։

Յեվ ինչ է հագուստը։

Ըստ իս պարզապես կեղև մ'է։ Կեղև մը կրնա շատ գեղեցիկ, ինչպես նաև շատ տգեղ ըլլալ, բայց վո՞ր մարդն է այն, վոր պտուղ առած ժամանակը անոր կեղևին հավնի։

Խնձորներ կան, տիկիններ, վորք շատ անուշ են և շատ տգեղ կեղև ունին։ Այսու ամենայնիվ ամեն մարդ ասոնցմէ կը գնէ և իրավունք ունի, վորովհետև կեղևը կը հանէ և այնպես կուտէ խնձորը։ Խնձորի կեղևը սագերն ու բադերն կուտեն, ինչպես նաև սեխինը եշերն... Ա՜խ, սրտես արյուն կերթա, յերբ անասնոց սեղանին արժանի մորթի մը կը զոհվին խեղճ ամուսինները։

Տիկիններ, դուք ալ խնձոր եք, նարինջ եք, նուռ եք, վերջապես եք պտուղն, վոր ըլլալ կը հաճիք. յեթէ անուշ եք, թարմ եք, համով հոտով եք, վոչ վոք կարևորութիւն կուտա ձեր կեղևին, իսկ յեթէ լեղի յեք, փտած եք և անհամ եք, վոչ վոք կուտէ զձեզ, նույնիսկ յեթէ աշխարհիս գեղեցկագույն կեղևներուն մեջ փաթաթվիք։

Վոչ վոք կը հանձնարարէ բարեկամին աղջիկ մը սա բառերով.

«Կարգվեցե՛ք այդ աղջկան հետ, յերջանիկ կըլլաք, վորովհետև շատ գեղեցիկ հագուստներ ունի»։

Հետևյալ տողերով կին մը հանձնարարված չէ ցարդ.

«Համեստութիւնն, ազնվութիւնն, հեզութիւնն միացած կը բերէ հանձին յուր շրջազգեստի»։

Վոչ շրջազգեստն, վոչ գլխարկն, վոչ կոշիկն, վոչ ձեռնոցն,

վոչ թևնոցն, վոչ գուլպաներն կարող են զմեզ գեղեցկացնել։

Մեծ է մարմին քան զկեղև։

Գեղեցիկ հոգին պճնամոլ չէ, և այս իրավունք պիտի տար ինձ պնդելու քիչ մը, թէ հոգին իգական չէ, յեթէ անոր անմահության վրա ճառող կրոնավորն այնքան ուժով չը գրկեր զայն։

Գեղեցիկ մարմինն ևս կարոտ չէ մետաքսյա հանդերձներու։

Տգեղ մարմինն աւելի կը տգեղնա, յերբ հագուստներն իրմէ աւելի գեղեցիկ ըլլան։

Այս ճշմարտութեանց առջև չեմ կարող խեղճ երիկներու դատը չպաշտպանել և ի նպաստ անոնց գոնէ տեսարան մը չպարզել։

Այրն վաճառատան մը մեջ սպասավոր—հավաքիչ—գանձապետ—համարակալ— թղթակիցի պաշտոն կը վարէ յերեք հարյուր դահեկան ամսականով։

Կինը մայրաքաղաքիս ամենեն հարուստ սեղանավորին կնոջը պես հագվիլ, շքվիլ կուզէ։

Այրն սնտուկեն բավական գումար մը քաշած է ի հաշիվ յուր ապագա ամսականներուն, վորպեսզի գոհացում տա կնոջը պահանջմանց։

Կնոջը պահանջումները անսպառ են։

— Այս իրիկուն ալ մոռցա՞ր կօշիկս բերելու։

— Կրողը տանի քեզի ալ կօշիկդ ալ, խոսք չես հասկնար կոր, ստակ չկա։

— Տեր վողորմյա, կօշիկի մ'ալ խօ՞սքը կըլլա, քանի՞ վոսկիի բան է։

— Մեր վիճակը չներեր։

— Ինչո՞ւ համար չպիտի ներէ։

Այս խոսակցութիւնն կը տևէ գրեթէ յերկու ամիս։

Այրն չուզեր վերստին ստակ առնել ի հաշիվ յուր ապագա ամսականաց։ Կինը տեսնելով, վոր կերպասը չգար, տան գործերը յերեսի վրա կը թողու, մինչև իսկ կսկսի կերակուր ալ չեփել։ Այրն կը շվարի. խռովութենէ չախորժիր, տան պատիվը պահել ստիպված է—այրերուն է միշտ տան պատվույն պահպանութիւնը—քան վոսկի ևս կառնէ սնտուկեն և կօշիկ կը գնէ։

Կինը ուրախ է։

— Կնիկ, բեր սա կերակուրը։

— Սպասէ քիչ մը, սա կօշիկս մաքրեմ, փոշի նստած է վրան։

— Կնիկ, սա կօշիկներս բեր։
— Համբերէ քիչ մը, սա կռոնս կախեմ, հիմա կուգամ։
Երկու ժամ կը տևէ կռոնի կախվիլը։
— Կնիկ, սա բանթալոնս քիչ մը մաքրէ։
— Կեցիր, ճանըմ, կուգամ, սա կռոնիս վրա լաթ մը ծածկեմ։
— Կնիկ, խահվէ մը բեր։
— Կը բերեմ, սա կռոնս քիչ մը քակված է, ասեղով մը կարեմ կոր։
Չորս ժամ կը տևէ։
— Կնիկ, իրիկվան ուտելիք ի՞նչ ունինք։
— Աստուծո տվածէն բան մը կընենք։
— Ի՞նչ առնեմ։
— Հիմա կըսեմ, սա կռոնս լեքե յեղած է...
— Գետնին տակն անցնի այդ կռոնը։
Տան խաղաղությունը նորեն կը խռովի։ Կինն կռոնին հետ է միշտ, երկանն յերեսն անգամ չի նայիր. սեպե թե շրջազգեստը երիկն է և երիկը շրջազգեստը։
Մարդը կը հալի, կը մաշի։ Վորմէ հոգ։
Վաճառականին որ մը փողոցը կը հանդիպի յուր սպասավոր—հավաքիչ—գանձապահ—համարակալ—թղթակիցին կնոջն, վոր փառավորապես հագված էր. հետևյալ որն անմիջապես սնտուկին հաշիվը ստուգել կուզե. կստուգե և վաթսուն վոսկվո պակաս մը կը գտնե։ Վերահասու կըլլա յեղելության և յերաշխավորության ներքև առնելով յուր սպասավոր եայլն-ը, կը ճանըե։
— Կնիկ, հավնեցա՞ր ըրածիդ։
— Ի՞նչ կա։
— Ծանրա տվին ինձի։
— Աղեկ վոր կռոնս առեր ես... յեթե չպնդեյի, չպիտի առնեյիր։ Տեսա՞ր մի։
— Դուն ես պատճառ վռնտվելուս։
— Յես ինչո՞ւ ըլլամ։
— Կռոնը։
— Զնայիս, բոլոր կռոն հագնողներուն երիկները կը վռընտվին հե՜... պարապ խոսքեր։ Աստված վողորմած է, մեկ դուռը կը գոցե, ուրիշ դուռ մը կը բանա։
Այրն սաստիկ նեղության մեջ է, առանց կանխավ վճարելու, բրինձի հատիկ մ'անգամ չկրնար գնել։ Այրն ու կինն ամեն յերեկո ձեթապտուղ կուտեն և վախ կա, վոր ձիթենվո չը փոխարկվին։

Համեստափայլ տիկնայք, ինչ կը խորհիք այս տիկնոջ ընթացքին վրա։ Դուք ալ այն կարծիքի՞ն եք, թե կին մը նախ հագուստն սիրելու յե և ապա այրն։
Ձեմ կարծեր, մանավանդ թե մտքես անգամ չեմ անցուներ կարծելը, միայն դժգոհություն կը հայտնեմ այն կնոջմեն, վոր իր ամուսնույն վիճակին չուզելով տեղեկանալ, զայն և ինքնին միանգամայն կպաշտնե առանց խրատվելու Լաֆոնթենի գորտեն [5], վորուն մահվան պատճառն ալ իմ կարծյոքս կնիկներն ըլլալու յեն, վորք շատ օրինակ տված են անոր, այլոց պես մեծ ըլլալու անմտության մասին։

Ե

Տիկնայք,
Ձեմ կարծեր, վոր ձեր արժանապատվության դպչիմ և ձեզ բարկացնեմ, յեթե համարձակիմ հայտնել, թե շատ կը հարգեմ այն կիներն, վորք աշխատասեր են և կը գործեն օրն ի բուն։
Սողոմոն իմաստունը յուր առակաց [6] մեջ կըսե. «Կին ժրագլուխ յեթե վոք գտանիցե, պատվականագույն է այնպիսին քան զականս պատվականս»։ Կերևի թե հին դարուց մեջ ժրագլուխ կին գտնելը դժվար եր։ Դարձյալ միևնույն իմաստունն ուրիշ տեղ մը կըսե. «Կին ժրագլուխ պսակ է առն յուրում»։
Կը լսե՞ք, ո տիկնայք, վորքան կը բարձրացնե իմաստունն ժրագլուխ կիները. նախամեծար կընտրե զանոնք ոսկերե, մառանիներե, գայռերե, մանյակներե, ապարանջաններե և մեկ բառով համայն վոսկի զարդերե, և մինչև իսկ կը հանդգնի ժրագլուխ կնոջե մը պսակ հյուսել և զայն երկանը գլուխն անցունել։ Կատարելապես կը ձայնակցիմ իմաստունին և պիտի առաջարկեյի, վոր զարդասեր կանայք իրենց գլխարկներուն վրա մեկ մեկ թռչուն թառել տալու տեղ՝ մեկ մեկ ժրագլուխ կին նստեցնեյին։ Յեվ յեթե կարելի չըլլար այս՝ իբրև խորհրդանշան աշխատասիրության՝ իրենց պարանոցեն մեկ մեկ ավել կախեյին և իրենց գլուխն ալ մեկ մեկ կաթսա անցունեյին։ Ա՜յնքան կը պաշտեմ գործունյա կիներն՝ զորս վոչ նվազ պատվով կը հարգեր, կը մե-

ծարեր և մանավանդ մեզ կը հանձնարարեր Աստվածաշունչին արդարության ատենին նախագահն, փսեմափայլ Սողմոն եֆենտին, վոր, ականջը խոսի, ամեն կորդյան հանգույց [7]) զմելիով կը կըտրեր և հետո՞ յերբ զմելին բթանար՝ մեզի կլեցնելու կաշխատեր սա բացականչությունը, թե ունայնություն ունայնությանց ամենայն ինչ ընդունայն ե։

Դուք եք, տիկնայք, վոր տուներ կը կործանեք։

Դուք եք, տիկնայք, վոր տուներ կը շինեք։

Պիտի խնդրեյի աստուծմե քանիի մը վայրկենի համար կնիկ ըլլալ, և, զձեզ չվիրավորելու համար, ըսել թե մենք ենք, վոր տուներ կը կործանենք, մենք ենք, վոր տուներ կը շինենք։ Կը դիտե՞ք, վորքան ծանր զոհողությանց հանձնառու կըլլամ, վորպես զի կարենամ ձեզի հետ անաչառաբար խոսիլ առանց ձեր արժանապատվության դպչելու։

Ի բաց հինեն կարծել, թե դուք գործունյա չեք, դուք աշխատասեր չեք, այսու ամենայնիվ ներեցեք ինձ քիչ մը կարծել, թե կը գտնվին նաև կանայք, վորք կաշխատին չաշխատելու։ Այդ կանայք յեթե քանի մը վայրկյան ավել ածեն «օրս պարապ չանցուցի» կըսեն ու մինչև յերեկո դաշնակ կը զարնեն։

Ներկայացնեմ, յեթե չեք վշտանար, այդ դասու վերաբերյալ կին մը։

Այրն տուն կը դառնա յերեկոյին։

Կինն անկողնո զգեստով բազմոցին վրա կը քնանա, գլուխը բարձին կռթնցուցած։ Գուլպաներն խակ անցուցած չե վոտքը— վոտքն ավելորդ ե կարծեմ, վորովհետև գլուխն չանցվիր գուլպան —յերեսն լվացված չե. մազերը ցիրուցան են։ Առջևը դրված սեղանին վրան կը տեսնվին պեզիքի թուղթեր, թեյի գավաթներ, մեկ միլիոն սպառած սիկարներ, գնտասեղներ, սկավառակի մը մեջ կարագ, հացի փշրանք, Նոռմայի [8]) կտորներեն քանի մը ձայնագիրներ, կտոր մ՝ապուխտ, քիչ մը տանրելա, Պորտոյի գինվո պարպված շիշ մը, քանի մը կոճակներ, քիչ մը պանիր, երիկ մարդու բաճկոն մը, Մայտա մը [9]) և, կարծեմ, քիչ մ՝ալ խավյար։

— Մարգրիտ, Մարգրիտ, կը ձայնե այրն։

— ...

— Մարգրիտ, չելլե՞ս, կերակուրի պիտի իջնանք։

Մարգրիտ հորանջելով հազիվ կրնա բանալ աչքերն ու.

— Թող չես տար, վոր քնանամ քիչ մը, կըսե։

— Քնանալու ժամանա՞կ ե։

— Ժամանակն ի՞նչ ե, քունդ գալուն պես կը քնանաս։

— Տեր վողորմյա։

— Երիկ մարդիկ խելյանեթ են. վեսալամ, ինչ անուշ անուշ կը քնանայի կոր։

— Յե՛լ, հագվե՛ և սրվո՛նք ժողվե։

— Սպասուհին չե՞ ժողված... շատ ծույլ կնիկ ե սա Անթառամը։ Անհոգ կնիկ մ՝ե, հանըմս այսօր հոգնեցավ, քիչ մը կը քնանա կոր, յերթամ վերը ժողվեմ, ըսել չկա՞ մի։

— Ի՞նչ գործ կար այսոր։

— Տունին գործը կը լմնա՞ մի... երիկ մարդիկ չիյտեն վոր։

— Ըսե՛, վոր գիտնամ։

— Տունի գործ ի՞շտե, սա ժողվեմ, նա տեղավորցնեմ ըսես նե՝ իրիկուն կըլլա, որերն ալ կարճ են։ Կը կարծես, վոր մինչև իրիկուն պարապ կը նստինք, այսոր հոգիս յելավ։

— Ի՞նչ ըրիր։

— Ի՞նչ պիտի ընեմ... բաճկոնիդ կոճակները բրդեր եր...

— Եյ...

— Կոճակ ճարեցի։

— Ուրի՞շ։

— Դերձան ճարեցի։

— Յետքը։

— Ասեղ առի։

— Հետո։

— Սկսա կարել մեկիկ մեկիկ։

— Ի՞նչ յեղավ ասկից։

— Ի՞նչ պիտի ըլլա, բաճկոնդ կարեցի ի՞շտե։

— Մինչև իրիկո՞ւն տևեց։

— Կը նայիմ, վոր Թոաֆ կը խոսիս, կոճակ ե, դերձան ե, ասեղ ե, մեկիկ մեկիկ կարել ե, ժամանակ ե կանցնի. երիկ մարդ չե՞ք մի, ասանկ բաներեն հապար չունիք վոր... կը կարծեք, վոր

կոճակները առնելուդ պես թուքով կը փակցունես, կը լմնա կերթա, վեց կոճակ կարելը բան մը չէ ամա, գործ է վերջապես։
— Ուրիշ ի՞նչ գործ կար վոր...
— Ի՞նչ գիտնամ... տունի գործը կը լմննա։
— Ջամաշը՞ր կար։
— Ջամաշը՞րն է միայն գործ... տունի գործը կը լմննա։ Վահ, վոր խըյմեթ չիյտեք։
— Այս փշրանքները ի՞նչ են հոս։
— Հաց ալ պիտի չուտեյինք զահեր։
— Ջայի գավաթները։
— Ջայ ալ պիտի չխմեյինք զահեր։
— Եյ, սա նոթան։
— Բիանո ալ չպիտի զարնեյինք զահեր։ Հելպեթտե, մարդ չէս մի, քիչ մ'ալ եյլենմիշ ըլլալ կուզես։
— Եյ սա ապռւխտը, գինի՞ն, խավյարը։
— Սանկ քիչ մը խահվալթը ալ չի պիտի ընեյինք զահեր։
— Աս Մայոնն։
— Գի՞րք ալ չկարդանք։
— Եյ, սա թուղթե՞րը։
— Ջըսես, վոր թուղթ ալ չխաղանք։
— Լեփլեցուն սիկարներ։
— Լեռնեն յեկանք զահեր, սիկարն ալ չխմենք, վախ, վոր խըյմեթ չյիտես... սերթ մարդ ես, սերթ։ Բուկին խաշդ գալու յե, վոր կնիկս աղվոր եյլենմիշ է յեղեր տեյի։
— Ո՞վ կար։
— Մարդ ալ չկար տունը... քովի աղջիկներն յեկան, քիչ մը պեզիք խաղացինք, բարթին մեկ մեճխոնեյի։
— Աֆերիմ, աֆերիմ։
— Վռնտելու եյի զահեր...ի՞նչ գիտնամ։
— Ցելլի՞ր, կերակուր ուտենք։
— Կերակուր ուտելու սի՞րտ մնաց վոր։ Անանկ ալ խավեսով մը կարեցի բաճկոնդ, վոր իրիկվան դաս նե՝ աֆերիմ կնիկըս ըսես տեյի... վախ, վոր խըյմեթ չյիտեք։
— Ցերթանք, ուտենք։
— Դուն գնա կեր, յես սա տեղվանքը ժողվեմ, դիմացինները պիտի գան այս գիշեր։ Հեմ յես քեզի բան մ'ըսեմ, Անթառա-

մը վռնտելու յե, հեմեն ուտե, խմե, պառկի, քնանա, տունին բոլոր գործերը իմ վրաս են, պարապ տեղը ամսական կուտաս կոր. այսոր հոգիս յելավ նե... դո՛ւն գնա կեր... նստիլ չունիմ վոր... տունի գործը կը լմննա։
Այրն կերթա ընթրելու և բանակռիվը կը վերջանա։
Արի՛ ու Սողոմոնին իրավունք մի՛ տար. յեթե գործունյա կին մը պսակ է երկանը, յես ալ կըսեմ, թե դանդաղ կին մը փուշ է երկանը վոտքին։
Աշխատեցէ՛ք ուրեմն, ո՛ տիկնայք, ձեր ամուսիններուն գլուխը պճնելու և վոչ վոտքերը։

Ձեր լուսադեղ յես աչք պաչեմ*)
Ձեր վոտներուն յես հող լիզեմ,
Ո՛վ իմ Հայոց ծիր տիկիններ,
Տիտիկ արեք ի ձեր տեղեր.
Սրտով, հոգիով նայեցեք դուք
Լինել հաճի, հանում հարսնուկ։

Ձ

Տիկնայք,
Այսոր պիտի խոսիմ ձեզ հարս և կեսուրի վրա։ Վորպես գիտեք, խնդիրը կարծվածին չափ թեթև չէ, ուստի ձեր մասնավոր ուշադրությունը կը հրավիրեմ այս ավուր դասին վրա և կաղաչեմ, վոր դասախոսության ժամանակ խելոք նստիք։
Ընդհանրապես ամեն հարս կեսուր կըլլա. բնական է, վոր ամեն կեսուր ալ նախ հարս յեղած ըլլա, բայց չկա հարս մ'որ կեսուրեն և կեսուր մ'որ հարսեն գոհ ըլլա։
Ամեն կեսուր հարսեն կը գանգատի ըսելով.
— Ձիս չսեպեր։
Ամեն հարս կեսուրեն դժգոհություն կը հայտնե կրկնելով.
— Շատ կը խոսի։
Ցեվ այն կինն, վոր հարս և միանգամայն կեսուր է, առավոտուն հարսին կը դառնա «զիս չես սեպեր» կըսե և յերեկոյին կեսուրին կը դառնա « դուն ալ շատ կը խոսիս կոր» կըսե։

*) Վահան վարդապետն 10) է ըսողը։

Ի՞նչ գաղտնիք է այս։
Միթե ամեն կեսուր շատախոս է։
Միթե ամեն հարս անհնազանդ է։
Վո՛չ, և վոչ։

Կեսուր մը կատե յուր հարսն այն համեմատությամբ, վորով կը սիրե անոր ամուսինն, այսինքն՝ յուր զավակն, և հարս մը կը թշնամանե կեսուրն այն համեմատությամբ, վորով կը պաշտե յուր այրն։ Կեսուրը մտքեն կըսե.

— Տղաս կարգվելեն ի վեր փոխվեցավ։

Հարսն ալ յուր ձեռովը հասկցնել կը ջանա.

— Ամուսինս յուր մորը կը զոհե զիս։

Առաջինն ամուսնական սերը չափազանց կը գտնե յուր զավակին քով, յերկրորդն վորդիական սերն յուր ամուսնույն քով, ուստի՝

— Զիս չսեպեր։

— Շատ կը խոսի։

Կեսուրը և հարսը սերը մեկ գիտեն, ամուսնական կամ վորդիական սեր չեն ճանաչեր։

Կեսուրն կուզե, վոր զավակն ավելի զինքը սիրե և իրավունք ունի, յերբ մայրական սերն յուր ընդարձակ նշանակությամբ առնվի. հարսն ալ կը պնդե, վոր ամուսինը զինքն ալ ավելի սիրե և հանցավոր չե։ Արդ, երեկ մարդու քով յեթե վորդիական սերն հավասարակշռի ամուսնական սիրույն հետ՝ հարսին և կեսուրին քով նախանձը գաղտնի կը մնա, իսկ յերբ անուշադրությամբ կամ անխոհեմությամբ շարժում, ձև մ՚ընե այրն և հայտնե թե վորդիական սերը կամ ամուսնական սերը հաղթանակը տարավ՝ ներդաշնակությունը կավրվի։

Նախանձն է ուրեմն, վոր կածե կեսուրն և հարսն վարվելու այնպես, վորպես տեսանք։ Յերկուքն ալ գովելի յեն իրենց համար, վորովհետև ուր չկա նախանձ, սեր ալ չկա։ Այս այնքան ճշմարիտ է, վորքան ճշմարիտ է, թե այն հարսը, վոր չսիրեր յուր ամուսինը՝ թույլ կուտա անոր, վոր ուզածին չափ սիրե յուր մայրը՝ զոր ինքն ևս շատ կը սիրե. Նույնպես այն կեսուրն, վոր պաղած է յուր զավկեն՝ թող կուտա, վոր կրցածին չափ պաշտե յուր կինն, զոր ինքն ալ կը հարգե, վորքան չհարգեր նա յուր զավակը։ Նույնպես անհոգ կամ իրենքզիրենք զվարճության

ված կեսուրներու և հարսներու մեջ նախանձը գոյություն չունի, վասնզի զբոսանքին և զվարճության անձնատուր, ժամանակ չունին, վոչ մին և վոչ միուսն, հասկնալու համար, թե այրն կինն ավելի կը սիրե, թե մայրը։

Նախանձոտ կեսուրն և հարսը գովելի յեն ըսի, վորովհետև իրենց սիրույն սաստկությունը կապացուցանեն, բայց գովելի չեն, յերբ ծայրահեղության կը դիմեն։

Գիտեմ լերան պես հարս մ՚որ որ մը կանուխ յելած եր, կրակ շիներ եր, և ամբողջ որն ամսվան մը լաթ լվացեր եր, լաթերը փռեր եր, յերբեմն յերբեմն վեր յելնելով և կաթ տալով յուր քառամսյա տղուն։ Խեղճը մոռցած եր ճաշելու, և յերեկոյան դեմ գլխու ցավ զգալով գլուխը բարձի վրա կռթնցուցած եր։ Այրը տուն կը դառնա և կը հարցնե, թե ո՞ւր է հարսը։

— Հիմա հոս եր, չգիտեմ ուր գնաց։

Յեվ կսկսի գործ տեսնել ինքնիրեն ըսելով.

— Հոգիս յելավ այսոր։

Այրը կերթա կնոջ քով և կը հարցնե, թե ինչո՞ւ կը պառկի։

— Հոգնեցա, գլուխս կը ցավի կոր քիչ մը, կը պատասխանե։

Այրը կաղաչե մայրն, վոր տեղ մը շինե հարսին։

— Ի՞նչ ունի վոր։

— Գլուխը կը ցավի կոր։

— Բոլոր որ բան չըներ, հիմա բռնեց գլխու ցավը, շատ բան, շատ բան... յերթամ սա կերակուրս նայիմ։

— Ինչ վոր է, տեղ մը չշինե՞նք։

— Իրար մ՚անցնիր, իրար մ՚անցնիր, բան մը չե յա, կանցնի, յես ալ իմին կենճությանս անանկ գլխու ցավ մ՚ունեյի, կենճերուն գլուխը կը ցավի քիչ մը... հելպեթտե կանցնի.... սա սեղանը պատրաստեմ։

— Կերևի թե հոգնած է...

— Հոգնա՞ծ, յես կը թողում, վոր հարսս հոգնի, բոլոր որ փերահ փերահ պտըտեցավ, չոճուխին քանի մը կտոր լաթեր կար, անոնք լվաց կարծեմ քի... յես ալ հարսս քեզմե ավելի կը սիրեմ... գործի յելլա նե՝ թող չեմ տար, վոր չհոգնի... ինչո՞ւ պիտի հոգնեցնեմ, յես անիկա զավկիս պես կը սիրեմ... յերթամ վար քիչ մը ժողվըտեմ... ամոթ է, վոր հարսը հոգնի...

Ի՞նչ ըրավ, վոր պիտի հոգնի... ամա մարդկությո՛ւն է...մարդուս գլուխը չցավի՞ր, այսօր քիչ մը շատկեկ պտտեցավ նե՝ արյունը գլուխը յելավ դահեր... ի՞նչ ըսեմ յա...

— Լիմոնի խապուխ կապեյինք ճակատը կամ քիչ մը բաթաթես:

— Ծանըմ, իրար անցնելու ի՞նչ կա, յես քեզի չափ չյիտեմ. հիսուն տարեկան կնիկ եմ: Իմին ալ յերբեմն գլուխս կը ցավի, բայց բերանս չեմ բանար, ամեն բան կըսվի՞... սիրտդ մի հատցուներ. միս բերի՞ր:

— Թող տալու յե, վոր անանկ պառկի՞:

— Բրխըղլա կուղեյիր կոր նե:

— Ո տը քոլոնեը չունի՞նք:

— Ո տը քոլոնեը պրիղոլա կըլլա՞:

— Գլուխը շփեյինք:

— Բրիղոլայո՞վ:

— Ո՜ւֆ, մայրիկ, չես հասկնար, օ տը քոլոնեըով հարսին ճակատը շփեյինք:

— Ծանըմ, ի՞նչ ունի հարսին ճակատը, աստված չընե, վըտանգավոր բան մը ըլլա նե՝ դեղ չե՞մ շիներ: Ցերթամ նայիմ անգամ մը:

Հարսին քովը կերթա և կը դառնա.

— Մաշալլա՜հ, բան մ՚ալ չունի կենճը, սանկ բոոր մը ցավ կա գլխին մեկ կողմը... յելավ, կուգա կոր... մարդը խենդ կը դարձնե, ճանըմ:

Կը ճանաչեմ նաև դարձյալ հիսնամյա և գեր կեսուր մը, վոր օր մը սանդուխեն իջած ատեն սխալ քայլ մը կառնե և սանդուխեն վար կը գլտորի, աջ թևը կը ցավցունե, այնպես վոր չկրնար վերցունել. ճակատն ու քիթը քարի զարնվելով կը ճեղքվին:

— Ծանըմ, ինչու խենդի պես կիջնաս, քա վայ պանս, յելի՛ր, բան չկա, բան չկա, կըսե հարսն և կոգնե կեսուրին, վոր կանգնի:

— Վայ թևս... վայ ճակատս... վայ քիթս...

— Կամաց կամաց յելի՛ր, վոր նորեն չիյնաս... քա վայ պանս, մարդս կոխած տեղը չ՞նայի՛ր. քիչ մը հաց ծամե դիր ճակտիդ ու քթիդ վրա, բան մը չէ:

Կեսուրը կը նստեցնե բազմոցին վրա և կերթա ֆռոշեն շինելու:

Այրը կուգա:

— Ի՞նչ յեղեր ես, մայր:

— Մի՛ հարցներ, զավակս, մի՛ հարցներ:

— Ի՞նչ կա:

— Մազ մնաց, վոր կը մեռնեյի կոր:

— Ի՞նչ յեղավ:

— Մայրդ մեռած պիտի գտնեյիր այս իրիկուն:

— Ինչու:

— Սանդուխեն վար գլտորեցա քարերուն վրա:

— Տեր ողորմյա, տեր ողորմյա:

— Թևս վեր չեմ կրնար կոր առնել, կոտրեցի՞, ի՞նչ ըրի, չիյտեմ վոր:

— Քըրըքճի մը չկանչեցի՞ք:

— Հիմա, նոր ինկա:

— Հարսը ո՞ւր է:

— Սենյակն է:

Այրը կերթա կնոջ քով.

— Մայրս վարը կը չարչարվի կոր, դուն նստեր քռոշե կը շինես կոր:

— Ի՞նչ յեղեր է վոր... ոտքը սահեցավ քիչ մը և կամացուկ մը նստեցավ:

— Քիթը զարկեր է:

— Մարդս քիթը չզարնե՞ր, ի՞նչ կըլլե անկեց:

— Ճակտեն արյուն կը վազե կոր:

— Մարդ չէ, ճակատը չզարնե՞ր տեղ մը... յես զարկած չունի՞մ, դուն զարկած չունի՞ս, ան զարկած չունի՞:

— Թևը չկրնար կոր շարժել

— Մարդ չե՞նք, թևերնիս ալ կը զարնենք, ոտքերնիս ալ, բայց մայրերը շատ կը սիրվին, կնիկները չեն սիրվիր... Նալեթ ըլլա, թելս ալ փախուցի:

— Խըրըխճի մը կանչենք:

— Յես չեմ խառնվիր, շատ ըստակ ունիս նե՝ խարճե:

— Ա՜նանկ ձգենք, վոր տանջվի՞ խեղճը:

— Խե՜ղճ... խե՜ղճ... ի՜նչ խեղճություն... վա՜հ զավալլը...

խեղճ է յեղեր… ի՜նչ է յեղեր… քիթը արուներ է յեղեր… ինչ որ բան… վա՜հ յավրում… կուզես նե՝ քիչ մ'ալ լաց։ Ոհ, յա, բժիշկ մը կանչէ, խըրըխճի մ'ալ կանչէ, քանի մը հատ ալ դեղագործ կանչէ, յերկու յերեք հատ ալ կնիկ բեր, որ հիվանդը նային, ծանր է խեղճին վիճակը, այս գիշեր կը հանէ չհաներ բան մ'է։

— Հի՛չ բա՛ն մը չունի՞։

— Ջունի յա, անիկա նազ կընե քեզի։ Ամեն մարդ կիյնա… աս ալ բան մը չէ յա… ճակատը քիթը ոխալըխ հացին մեջ խոթելու յե, արյունը կը կտրի․ խըրըխճին բարիթ է հիմա․ թեր պաղ ջուրին մեջ դնելու յե, քանի մը ժամեն կանցնի։ Իրար անցնելու, շվարելու բան մը չկա, նստինք կերակուրնիս ուտենք և յերթանք

— Ո՞ւր։

— Խոսք չտվի՞նք Բերրոն հանըմին։

— Այս գիշեր չենք յերթար, ինչ կըլլա յեղեր։

— Ինչու չերթանք, ի՜նչ կա, փառք աստուծո… խոսք տը-վինք, չերթալ կըլլա՞, ամոթ է նե… ի՞նչ կըսեն մարդուն։

— Այս գիշեր թող մնա։

— Նալլեթ ըլլա… ան ալ գտավ իյնալու օրը, սպասեց, ըս-պասեց ու այսօր ինկավ, մախսուս ինկավ, որ չերթանք։

— Խենդեցա՞ր։

— Ինչու խենդենամ, շատ ալ խելացի խոսք է ըսածս։

— Այս կնիկը մի՛վ պետի նայի այս գիշեր։

— Նայելու ինչ ունի որ… յերթամ նայիմ անգամ մը։

Կեսուրոջը քով կերթա։

— Մաշալլահ, բան մ'ալ չունիս… նավղներդ աղեկ են… կարծեմ քիչ մ'ալ վրա յես յեկեր… իյնալը յարամիշ է յեղեր քեզի, յելիր հացերնիս ուտենք շենք շնորհք։

— Յես չեմ գար, դուք կերեք։

— Դուն չես գար նե՝ մենք ալ չենք ուտեր։

— Կաշխատիմ գալու։

Հարսն երկանը կերթա։

— Աչքդ լույս… սիրտդ հանգիստ թող ըլլա, կերակուրե պետի իջնա… սա շապիկդ փոխե, որ յերթանք, գերե Բերրոն հանըմին սեթեմը մտիկ ընելու վախիթ չունիմ։

Կը տեսնեք, ո՛ւ հարսեր և կեսուրներ, որքան ծայրահե-ղությանց կը մղե ձեզ սերը։

Պողոս առաքյալ հարսի և կեսուրի հարաբերությանց վրա բան մը չէ գրած, բայց յեթե որոշ ըլլար՝ այսպես պետի խոսեր․ կեսուրնե՛ր, սիրեցեք ձեր հարսերը ձեր զավակներուն պես։

Հարսնե՛ր, հնազանդ լերուք ձեր կեսուրներուն, որպես ձեր մայրերուն։

Այո՛, այսպես պետի խոսեր, բայց դարձյալ մտիկ ընող չը-պետի ըլլար, որովհետև ինչ որ շյուղ կը տեսնե մայր մ'յուր աղջկան աչքին մեջ, գերան կը տեսնե յուր հարսին աչքին մեջ, և այն հատկությունն, զոր առաքինություն կը կարծե աղջիկ մ'յուր մորը վրա, մոլություն կը փոխվի, յերբ յերևա յուր կեսուրին վրա։

Ի՞նչպես հաշտեցնել ուրեմն հարսը կեսուրին հետ։

Ըստ մեզ՝ յերեք միջոց կա։

Առաջինն է չկարգվիլ։

Յերկրորդն է առավոտները մորը գանգատել յուր կնիկեն և յերեկոները կնոջը գանգատիլ յուր մորմեն։

Այս միջոցն ձեռք առած են արդեն ամեն այն այրերն, որոնց տուներն հարս և կեսուրի կռիվ չկա։

Յերրորդն է յազմա բանեցնել տունն և այնչափ գործ տալ, որ կռվելու ժամանակ չգտնեն։

Այս միջոցն ալ արդյունավոր յեղած է։

Բայց, ըստ մեզ, ամենեն լավագույն միջոցն է, որ հարսը աշխատի հարգելու կեսուրն և կեսուրն ջանա սիրել հարսն․ բայց ամեն պարագայի մեջ հարսը պարտավոր է զինքը սիրցնել, որովհետև մեզմե մեծերուն հնազանդություն և հարգանք պարտինք, ինչ որ ըլլան անոնց թերությունները։

Այսօր այսչափ, ուրիշ անգամներ նորեն պետի խոսիմ ձեզ այս նյութին վրա, վասնզի հարս և կեսուրի գիտությունը քանի մը դասերով ավանդել կարելի չէ։

Է

Տիկնա՛յք

Շատ ցավեցա լսելով, թե վերջին դասախոսությունս, որ հարս և կեսուրի վրա կը ճառեր, խռովություններ հարուցած է

այն տուներուն մեջ՝ ուր հայր մ՚և կեսուր մը կը գտնվին։ Շատ հարսեր, կարդալով հիշյալ դասախոսությունս, կարծեր են, թե իրենց կեսուրներն դրդած են զիս այդ դասախոսությունն ընելու և այս սխալ կարծյաց հենլով, անոնց մազի ներկի սրվակները կոտրեր են. Նույնպես շատ կեսուրներ՝ միևնույն սխալ կարծիքեն սադրյալ՝ իրենց հարսերուն գլխարկները ճմլեր են, անոնց վրա նստելով։

Բնական է, որ ինչպես ինձ, նույնպես ամեն վողջամիտ հայու վիշտ պատճառեն սույն որինակ խռովությունները՝ որ տեղի կունենան առթիվ հոդվածի մ՚որ նմանօրինակ խռովություններ բառնալու նպատակավ միայն գրված եր։ Ո՛չ, տիկնայք, չեկա յես ձեր ներկի շիշերը փշրել տալու, վոչ ալ ձեր գլխարկները ճմլելու, այլ յեկա ձեր մեջ ներդաշնակություն հաստատելու։

Տղայություն է յերևակայել, թե մեր ազգին ընտանեկան կյանքը ծածկված է անոնց, վոր կը դիտեն և կուսումնասիրեն. ուստի, մի՛ վայրապար լրտեսության պաշտոն վերագրեք միմյանց, այլ ջանացեք օգուտ քաղելու այն դասերեն, զորս կատարյալ անձնանվիրությամբ ձեզ խոսելու պատիվը ունիմ։

Այսօր պիտի խոսիմ ձեզ բարձր դասու հարսերուն և կեսուրներուն իրերաց հետ ունեցած հարաբերության վրա։ Կը խնդրեմ, վոր դասախոսությանս ընթացքին մեջ չխնդաք, վորպեսզի արյունս գլուխս չը ցատկե ու չբարկանամ և, հետևաբար, խոսքիս թելը չկորսնցնեմ։

Բարձր դասու ընտանյաց մեջ, հարսին և կեսուրին մեջ տեղ ծագած վեճերուն աղբյուրն չէ այնքան նախանձն, զոր հիշեցի վերջին դասախոսությանս մեջ, վորքան տան մեջ իշխելու և տիրելու վոգին։

Հարսը տկարություն ունի կարծելու՝ թե հաղթությամբ մտած է այն տունը և թե իրեն հրամանները միայն կատարելու յեն տան մեջ գտնվող սպասավորները, սպասուհիները, խոհարարները, մատակարարները, սնտուները, ձիաբույծներն և վարժապետները։

Հարսին մտաց մեջ այս կարծյաց գոյացման շատ կը նպաստեն պարագաները։ Սպասուհիները հարսին անկողինը ավելի խնամով կը պատրաստեն քան կեսուրոջը. սեղանի վրա մսի ընտրելագույն կտորներն հարսին կը տրվին. հաճախ կեսուրին հրամաններն կը հապաղին կատարվելու, մինչդեռ հարսին պատվերներն ի գործ կը դրվին անմիջապես։ Նույնիսկ այն մարդիկ, վոր եփենտիեն բարիք մը փրցնելու նպատակավ անոր տունը կը դիմեն, անոր տիկնոջ ծունկերուն կը փաթթվին, իրենց արտասվոք անոր վոտները կը թրջեն, վորպեսզի եփենտին պաշտոն մը գտնե իրենց։ Ուղիղ կամ սխալ, ընդհանուր կարծիքն սա յե, թե մարդ մ՚ավելի կնոջը կը լսե, քան մորը։

Արդ, հարսին այդ խրոխտ վարմունքը casus belli[11]) է կեսուրոջը համար, վոր չկրնար հաշտ աչոք նայիլ յուր հարսին վրա. ուստի կը վիրավորվի ամեն անգամ, վոր հարսին իրմե ավելի հարգանք մատուցվիլը կը տեսնե, և, յուր վրեժը դարմանելու համար, կնկան դեղերու կը դիմե։

Որինակի աղագավ. յերբ աղախինն հարսին հրամանները գործադրելու համար քիչ մ՚ավելի յեռանդ ցույց տա՝ կը ջախե աղախինն ըսելով.

— Խըպըլիկություն պետք չէ. գործդ տե՛ս։

Յեվ հետո հարսին դառնալով.

— Ասանկ զեվզեկություններեն չեմ ախորժիր... ինտո՞ր ալ դեմդ առեր, խոսեցնել կուտաս կոր... հոշդ կուգա կոր զահեր... Ի՞նչ ընեմ, պայաղի բաները չեմ սիրեր շիտակը, պատվույս չեմ ձգեր, վոր աղախինը դեմս մայմունի պես ձևեր ընե։

Տեսակ մը ultimatum[12]) է այս կեսուրին կողմեն, վոր ամեն հարաբերություն կը խզե հարսին հետ և սենյակը կը քաշվի։

Հարսն ալ, վոր սիրով կըպասեր ultimatum-ի, ուզածին պես կը կառավարե տունը։

Այսպես, հարս և կեսուր բնավ չեն խոսիր իրարու հետ, զի մի ներդաշնակությունն, վոր ավրված եր, ավրվի։ Ցերեկվան ճաշին ու յերեկոյան ընթրիքին ժամանակ միայն պատիվ կունենան իրարու յերես տեսնելու։

Յերբ այրն մորը սենյակը մտնե և հարցնե անոր թե՝

— Ի՞նչ ըրիք, նայինք, մայր... այսոր ո՞վ յեկավ, ո՞վ գնաց։

— Շիտակը չեմ գիտեր, տղաս... հարսը գիտե... յես սենյակես դուրս չեմ յելլեր կոր... յելլամ, ի՞նչ ընեմ, վողջ ըլլա, հարսը հյուրերը կընդունի կոր, անոնց այցելություն կընե կոր։

— Բայց դուն ինչո՞ւ սենյակդ քաշվիս ասանկ... դեռ քառասուն և վեց տարու յես, մա՛յր, դուրս յելիր, պտըտե...

Այրը կնոջը կը հարցնե.

— Մայրս ի՞նչ ունի։

— Բան մ'ալ չունի։

— Այս օրերս բանի մը համար բարկացա՞վ։

— Կը վայլե՞, որ բարկացնենք, մենք գլուխնուս վրա բըռնած ենք անիկա։

— Չըլլա՞ վոր մեջերնիդ բան մը անցած ըլլա...

— Մտքեդ անցնելն անգամ չվայլեր... ասանկ տուներու մեջ հարս և կեսուրի կռիվ լսվա՞ծ բան ե... բան մը ըսե, վոր հարմարի քիչ մը... մենք ամենքնիս ալ կը գուրգուրանք անոր վրա, մեկ խոսքը յերկու չըլլար։

Կեսուրը գրեթե շաբաթը հինգ անգամ ազգականաց տունը կերթա։ Ի՞նչ կը խոսի։

— Բարի յեկաք, տիկին, ի՞նչպես եք։

— Սանկ, նանկ։

— Հարսերնիդ ի՞նչպես ե։

— Գիտցածնուդ պես։

— Ինչո՞ւ համար հետերնիդ չբերիք։

— Նեղվեցա, քիչ մը դուրս յելլեմ ըսի, առի քալեցի, առե քալեցի, հայտե յերթանք ըսեմ նե՝ կամ պիտի գա կամ չպիտի գա, ըսի մտքովս, յելա յեկա... պզտիկս չե յա, ուզեն ե՝ թող գա։

— Նոր կտոնը ի՞նչպես յեղավ։

— Շիտակը չտեսա պիլե... տեսնալ ալ չեմ ուզեր... յես հիմա բանի մը չեմ խառնվիր կոր, չեմ ալ խոսիր կոր, ինչ կուզեն նե՝ թող ընեն, ինչո՞ւս պետք... բան մը կըսես կոր նե՝ չեն սեպեր կոր... եֆենտին ալ ըսես նե՝ սեպե թե կնկանը խելքեն ե... մեր օրո՞ւն ասա՞նկ եր... ամա դուզում, վոտվընիդ պագնեմ, մեկու բան մի՛ ըսեք, տուներնուս գաղտնիքը դուրս չելնե... մենք ալ հարս յեղած ենք... կը դողայինք մեր կեսուրներուն առջև, հիմակվան հարսերը, աստված հեռու ընե, մինակ հրամայել գիտեն կոր... կը հատնիմ կոր նե... կաղաչեմ, մեկու բան մի՛ ըսեք... զաթը ըսածս փասակար բան մը չե ամա, ինչու համար ըսվի քի, հարսը կեսուրին հետ քենով ե յեղեր... քենով չենք իսե տե՝ ինչու համար խոսվթա ըլլա։ Լեզուս քաշեր նստեր եմ, վոր եֆենտին չիմանա, հոշ իմանալու բան մ'ալ չկա յա... դուք մեր սրտակիցն եք տեյի՝ ձեզի կըսեմ կոր, կաղաչեմ, ուրիշին մի՛

ըսեք բան մը։ Ճանըմ, ըսելու բան մ'ալ չկա ամա... բերնե բերան խոսքը կը մեծնա... յես իմ հարսիս դեմ բան մը չեմ խոսիր կոր յա... բամբասանք չեմ ըսեր կոր, վոր վախնամ... հեմ կը վայլե՞, վոր հարսս բամբասեմ։

Հարսն ալ, մյուս կողմեն, յեթե տուն մ'երթա—հոգ չե վորո՞ւնը տուն—կեսուրոջը համար հետևյալ լեզուն կը գործածե.

— Պիտի գար, բայց քիչ մը անհանգիստ ըլլալուն պատճառավ չկրցավ գալ, հատկապես բարևներ ըրավ... շատ ինկավ... շատ... ծերացավ...

— Ի՞նչ կըսեք... քառասունութը տարու կա չկա բան մըն ե։

— Հե, անանկ ե ամա, մերաքե պես բան մ'եկավ վրան կարծես, հիչ չխոսիր, քուրմիշ կընե... քուրմիշ կընե... ղավալը կնիկ... ցնդած ըսեմ չե, ապուշ ըսեմ չե, խենդեցած ըսեմ չե, պամպաշխա բան մ'եղավ, ճանըմ, խելք հասնելու բան չե, վրան կը նայիմ կը մեղքնամ, յես ալ մերաքլանմիշ կըլլամ, ինքզինքս դուրս կը նետեմ... աքխուլթյուն մ'ալ յեկավ վրան տե, տունին մեջ ամենքնիս ալ կը չարչարե... չեմ խոսիր, վոր սիրտը չդնե... քաշվելու բան չե ամա... ինչ ընեմ, ճակատագիրս ասանկ ե յեղեր ըսելով՝ կը քաշենք կոր... դիտնալով չըներ կոր քի, բան մ'ըսես... կաղաչեմ, այս խոսքերը հոս մնան, դուրս չելնեն...

— Խե՜ղճ կնիկ... օր մը գանք տեսնելու։

— Հրամմեցե՛ք, յերբեմն ալ անանկ շենքով շնորհքով կը խոսրաթե, վոր կարծես քի ան չե... ի՞նչ ընեմ, կեսուրս ե, պիտի քաշեմ... եֆենտիին ալ բան մը չեմ ըսեր, վոր քահըր չընե... քաշածս աստված գիտե միայն... տունին բոլոր հոգը իմ վրաս ե։ Դարձյալ կաղաչեմ, մեկու բան մի՛ ըսեք... յես ալ վորո՞ւ բացվիմ, ձենե զատ ո՞վ ունիմ... քիչ մը խոսիմ նե՝ սիրտս կը բացվի... կըսեն քի սիրտ դնելը աղեկ չե, յես ալ անոր համար կը խոսիմ պաղի պաղի... ի՞նչ ընե ղավալըն, ձեռքը չե վոր...

Վորպես կը տեսնեք, բարձր դասու հարս ու կեսուրի վեճերը տուներեն դուրս տեղի կունենան և այս յեղանակավ տան խաղաղությունը կը պահպանվի։

Ներդաշնակությունը կատարյալ ե տան մեջ, և հարսն ու կեսուրն իրարու հետ կը մրցին, յերբ հյուր մ'ընդունին, ցույց տալու համար, թե իրարու հետ շատ սիրով են, այնչափ սիրով՝ վոր ուրիշ հարսերուն և կեսուրներուն նախանձը կարող են շարժել։

— Շիտակը, կըսե կեսուրը հյուրին, իմ հարսես շատ գոհ եմ, աստված թշնամիիս ասանկ հարս տա: Կը զարմանամ, յերբ վոր կը լսեմ, թե այս ինչ կնիկը հարսը չսիրեր, ինչո՞ւ կըլլա, կըսեմ, վոր հարսը չսիրվի, հարսը զավակ կը սեպվի նե, զավակը չ՞սիրվիր... Ինչ դաժան կնիկ ըլլալու յե մեկն, վոր հարսը չսիրե:

Վորուն կը պատասխանե հարսը.

— Աշխարհիս վրա անկիրթ կնիկ շա՜տ... յես կեսուրիս վրա կը խենդենամ, մորս պես կը սիրեմ, ժամ մը չտեսնամ նե, կեսուրս ո՞ւր ե տեսյի իրար կանցնիմ: Կեսուրը չ՞սիրվիր... Ինչ գիտնամ:

Հյուրը կը մեկնի:

Կեսուրը հարսին ծուռ ծուռ նայելով սենյակը կը քաշվի, հարսն ալ կեսուրին համար քթին տակեն բան մը մրմռալով սենյակը կը վազե: Իրարու հետ չեն խոսիր, մինչև վոր հյուր մը չընդունին:

Ի հնումն սովորություն մը կա յեղեր, վոր հարսն մեկ յերկու տարի կեսուրոջը հետ չխոսիր յեղեր: Կերևի թե՝ նախնիք, վորոց չենք հաշվիր յերբեմն, մեզմե շատ ավելի խելացի յեն յեղեր: Յեթե մենք ալ սկսինք այդ նախնյաց սովորությանը հետևիլ՝ սխալ քայլ առած չենք ըլլար և վերջացած կը տեսնենք շատ վեճեր, զորս հարսերն և կեսուրներն հարուցած են, կը հարուցանեն և պիտի հարուցանեն:

Յեթե լեզվով չխոսիլ անկարելի յե՝ գեթ կրնան համրերու պես նշանացի խոսիլ: Համր խոսքն արտասանված խոսքին չափ չկրնար ուժով ըլլալ, և հետևաբար, վեճն—վորովհետև կարելի չե ջնջել զայն հարսի և կեսուրի մեջեն—մեղմ կըլլա, և մեղմ վեճերը կրնանք արդարացնել կարծյաց ազատություն անունն տալով անոնց:

Այսոր ալ այսչափ:

Ը

Տիկնայք,

Այս անգամ դասախոսությանս նյութ պիտի ընտրեյի զոհանչն ու փեսան, բայց նկատելով, թե հարս ու կեսուրի վերաբերյալ վերջին յերկու դասախոսություններս շատ տուներու մեջ կիրքեր հուզած են և վեճերու պատճառ տված են՝ վորոշեցի, յես,

վոր կռվո մարդ չեմ, սպասել, մինչև վոր կիրքերը հանդարտին, վեճերը վերջանան, վորպեսզի կարենամ զոհանչն ու փեսայի վրա ճառել հանդարտ սրտով:

Տիկնայք, այսոր պիտի խոսիմ ձեզ նյութի մը վրա, վոր վոչ նվազ կարևոր ե, և չեմ կարծեր, վոր իրարու գլուխ պատռելու առիթ ընձեռե ձեզ:

Ժամանակացույցի վրա պիտի ճառեմ:

Ամեն բանի ժամանակը կա, կըսե Ժողովողը[13]: Ժամանակ խնդալու, ժամանակ լալու, ժամանակ խոսելու, ժամանակ լռելու, ժամանակ քնանալու, ժամանակ արթննալու, ժամանակ աշխատելու, ժամանակ հանգչելու, ժամանակ կարելու, ժամանակ քակելու կարկտանքը, ժամանակ պառկելու, ժամանակ յելնելու:

Շատ իրավունք ունի Ժողովողն, վորուն կարծյաց վոչ միայն հակառակ քվե չեմ տար, այլ նաև բոլոր ուժովս կը համակերպիմ, և մեր ընտանյաց մեջ տարածելու նպատակավ այս ճշմարտությունն՝ կը կրկնեմ, թե ամեն բանի ժամանակն կա, ժամանակ կռվելու, ժամանակ հաշտվելու. ժամանակ սպասուհին ծեծելու, ժամանակ շոյելու. ժամանակ ամուսինն կործանելու, ժամանակ ամուսինն կանգնելու. ժամանակ ձեր թևերն, ուսերն և կուրծքերն արգո հասարակության ցույց տալու, ժամանակ ձեր թևերն, ուսերն և կուրծքերն արգո հասարակութենեն ծածկելու. ժամանակ պարելու, ժամանակ ուղիղ քալելու. ժամանակ սուտ խոսելու, ժամանակ ճշմարիտ խոսելու. ժամանակ հագվելու, ժամանակ չհագվելու. ժամանակ պճնասեր ըլլալու, ժամանակ պարզասեր ըլլալու. ժամանակ կերակուր յեփելու, ժամանակ կերակուրը կատվին կերցնելու. վերջապես ժամանակ ամեն բանի, վորպես կըսե Ժողովողը, վորպես կըսեմ նաև յես:

Ներեցեք ինձ, ուրեմն, հարցնել ձեզ, վո՛վ տիկնայք, թե ունի՞ք դուք ձեր տուներու մեջ մեյ մեկ ժամանակացույց, վորուն մեջ նշանակված ըլլան ձեր աշխատելու և հանգչելու ժամերը, քնանալու և արթննալու ժամերը, խնդալու և լալու ժամերը:

Յերկրորդ անգամ ներեցեք ինձ պատասխանել ձեզ, թե չունիք ասանկ ժամանակացույց մը: Թերևս ձեր մեջ գտնվին կանայք, վոր ունենան, բայց յես տեսած չունիմ, և ասոր համար ալ ներումն կը խնդրեմ:

Դուք շատ անգամ կը խնդաք լալու ժամանակ, կը պարեք

քալելու ժամանակ, կը քնանաք արթննալու ժամանակ, կը հանգչիք աշխատելու ժամանակ: Աչքովս տեսած եմ տիկին մ՚որ առավոտուն կանուխ տանը բակին մեջ աթոռ մը դրկած բոյճա կը խաղար, և վոր գլխ տեսնելուն պես տանը դուռը ուժով գոցեց՝ ծուռ ծուռ նայելով ինձ: Նույնպես հանդիպած եմ տիկնոջ մ՚որ փողոցի մեջ քալելու ժամանակ վալսի քայլեր կառներ: Չե՞ք տեսած խեղճ երիկն, վոր սեղանին առջև կսպասե պատառաքաղը ձեռքին, վորպեսզի կինն յուր պղտոր տղուն շորերը լվա, լմնցունե և հաճի վեր յելնել կերակուր ուտելու համար: Չե՞ք լսած պզտիկ տղու մը ճիչն ու աղաղակն, վոր լալով կը ճաթի, կը մարի, ապասելով, վոր մայրը մազերը շտկե ու բարեհաճի կաթ տալ: Չե՞ք հանդիպած կնոջ մ՚որ գլխարկ գնելու կերթա՝ տան մեջ մինակ թողլով երիկն, վոր բիծուսե բանված է:

Չե՞ք տեսած բնավ տիկին մ՚որ կես օրին գիշերազգեստով, այսինքն պառկելու հագուստով, նստած է պատուհանին առջև: Բայց վո՞ր մեկն ըսեմ... և այս ամեն անկարգություններն վե՛չ ապաքեն հառաջ կուգան ժամանակացույցի մը պակասութենե:

Արդարև կան կանայք, վոր ունին ժամանակացույց, բայց այս ժամանակացույցին վրա ալ կամ պարել գրված է կամ յերգել կամ խմել կամ ուտել կամ պառկիլ կամ պտտիլ, և լավ եր ըլնալ ժամանակացույց չունենալ, քան թե ասանկ ժամանակացույց մը:

Մտիկ ըրեք:

Թորոս աղան յուր սիրելի բարեկամներեն մին տունը կը հրավիրե մեկ տեղ ընթրելու համար: Հարեթ աղան, այս եր բարեկամին անունը, չմերժեց հրավերը: Յերկու բարեկամներ մեկտեղ տուն կերթան, ժամը մեկ ու կեսին:

Սպասուհին, վոր դուռը բացած եր, կառաջնորդե հյուրեն ընդունելության սենյակը, ուր չուշանար մտնել նաև Թորոս աղան: Սենյակն ընտիր կարասիներով կահավորված է: Անգղիական գորգ մը փռված է, վորուն վրա դրված է, դեպի դռան կողմը, մուկի խափան մը և աման մը: Թավիշով ծածկված յերկու բազմոցներ՝ վորոց միույն վրա դրված է Թորոս աղային գիշերվան ֆյուլյանը, եսրպարին, ձեռքի պզտիկ հայելի մը և պղնձե ֆաղուֆ մը[14]). իսկ մյուսին վրա կը տեսնվին պեզիկի թուղթեր, ջուրի սրվակ մը և քանի մ՚աթոռներ: Յերենոսե ընտիր սեղան մը

դրված է բազմոցին վրա նույնպես թավիշով ծածկված: Բոնսոլին վրա կերևան յերկու ծաղկի անոթներ, մարմարիոնե պզտիկ արձաններ, խահվեյի գավաթներ, տղու քանի մը շորեր ու վարտիկներ, դուռնյուռ մը, յերկու սանտր, անուշահոտ ոճառ մը քառակուսի, շիշ մը յավանստա, ձուկի պզտիկ կասկարա մը և զույգ մը տղու կոշիկ: Այս տեսարանը կը հիշեցնե ինձ տուն մը, զոր նկարագրած եմ պենտասիրություն[15]) անուն նամակիս մեջ:

— Ի՞նչ վիճակ է այս, պոռաց Թորոս աղան սպասուհվույն:
— Սենյակը պետք ավլեյի, ուրիշ գործի կանչեցին, չկրցի շտկել:
— Տիկինը ո՞ւր է:
— Շրջազգեստին բռլան տալու համար մոտխաթրային գնաց:
— Սոֆին ո՞ւր է:
— Իւթիւ կընե կոր:
— Ալավնին ո՞ւր է:
— Կը հագվի կոր:
— Մայրս ո՞ւր է:
— Աղոթագիրք կը կարդա կոր:
— Շուտ ըրե՛, շտկե սա տեղը:

Կարմրեցավ Թորոս աղան և Հարեթ աղայեն ներում խնդրեց:

— Ներեցե՛ք, Հարեթ աղա:
— Ի՞նչ կա ներելու:
— Ներում կը խնդրեմ:
— Ներում խնդրելու բան չկա, տուն է, ամենուս ալ տունը ասանկ բաներ կըլլան. թող վոր բան մ՚ալ յեղած չէ: Պիտի ավլե յեղեր, վերջը ուրիշ գործ յելեր է, ձգեր է...
— Ասանկ ալ անկանոնություն...
— Անկանոն բան մը չկա, Թորոս աղա, հանդարտեցե՛ք:

Սպասուհին կարելի յեղածին չափ շուտով շտկեց, և ավելորդ բաները դուրս հանեց:

— Շուտ ըրե՛, գնա ողի բեր քիչ մը, հրամայեց Թորոս աղա սպասուհվույն, յերբ սա վերստին մտավ սենյակը:

Սպասուհին գլուխը ծռելով դուրս յելավ:

— Զարմանալի սպասուհի մ՚է, ցնդած է, ապո՞ւշ է, ինչ է...

չիյտեմ, ըսավ Թորոս աղան, սպասուհւոյն վրա բեռնավորել ուզելով հանցանքը։

— Շատ գործ ունիր խեղճը... չէ կրցած շտկել սենյակը։ Բայց կաղաչեմ, մի նեղվիք, յեղածը մեծ բան մը չէ։

— Բայց յես կուզեմ, որ ընդունելության սենյակ մը պահվելու յե միշտ այնպիսի վիճակի մը մեջ, որ պատճառ չտատան տիրոջ բարկության։

— Չեմ ըսեր թե իրավունք չունիք, բայց վերջապես տուն է, ասանկ պզտիկ բաներ թերություն չեն համարվիր։

Սպասուհին բերավ ողին։

— Աս ի՞նչ շիշ է... աս հանքային ջուրի շիշ է... Իոնոսի[16]) շիշ։

— Այո, ողիի շիշի մեջ առջի որը քիչ մը հինտ յաղի առինք չոճուխին համար տե, չվացինք տահա, անոր համար...

— Տեր վողորմյա, տեր վողորմյա։

— Վնաս չունի, Թորոս աղա, աս ալ շիշ է, ան ալ շիշ է, ըսավ Հաբեթ աղան։

— Անանկ է, ձեր բախտեն է, որ այսօր ասանկ անվայել բաներ կըլլան կոր...

Այս միջոցին մայրը ներս մտավ։ Սովորական բարևներ փոխանակվեցան։

— Հրամմեցե՛ք, Հաբեթ աղա, առե՛ք նայինք, ըսավ Թորոս աղան, գավաթին Հաբեթ աղային հրամցնելով։

Հաբեթ աղան գավաթը առավ, շրթանցը դպցուց, վարանեցավ խմելու, բայց յուր վարանումը ջանաց ծածկել Թորոս աղայեն։

Թորոս աղան, որ սովոր էր մի ումպ պարպել ողիի գավաթը, մեկանց բերանը պարպեց ողին ու հազալով, քիթը բերանը ծմռտկելով, թքնելով պոռաց.

— Աս կազ է, կազ...

— Այո, ինձի ալ անանկ յեկավ, հարեց Հաբեթ աղան։

— Հասկցա, հասկցա, նետվեցավ մայրը, կարծեմ որ առջի որը կազի թենեքեն շիշերու մեջ պարպեցին, պինլիկին մեջ կտոր մը ողի կար, պզտիկ շիշի մը մեջ լցուցին ու ավելցած կազն ալ պինլիկին մեջ դրին, կարծեմ ան պինլիկեն լեցուցեր, բերեր է, սերսեմ աղջիկ... է կազը վնասակար բան մը չէ

յա... կուրծքի և հազի աղեկ է յեղեր կըսեն կոր բժիշկները։

Թորոս աղան հազալով, թքնելով դուրս վազած էր։

Թորոս աղային մայրը սպասուհին կանչեց, քիչ մը ջախեց։

Սպասուհին ինքզինքն արդարացուց ըսելով, թե մաքե չեր անցներ, որ ողիի շիշին մեջ կազ լեցուցած ըլլային։

— Դուն անանկ բաներու մի խառնվիր, պոռաց Թորոս աղային մայրը։

Հետո.

— Պզտիկ շիշին մեջ ողի կա, գնա՛, բեր։

Սպասուհին գնաց և շուտ մը դարձավ հայտնելով՝ թե շիշին մեջ արդարև կար քիչ մը ողի, բայց այն ողիով յերկու որ առաջ տղուն կռնակը շփեր էին պղպեղով,

— Քոնյաք բերե՛ք ուրեմն, հրամայեց Թորոս աղային մայրը։

— Քոնյաքը բերին։

Թորոս աղան ալ մտավ։

— Կոկորդս երեցավ, ըսավ, հազալով։

— Բան մը չէ, կանցնի, պատասխանեց Հաբեթ աղան քոնյաք մը խմելով։

Թորոս աղան և հյուրը քանի մը գավաթ քոնյաք խմեցին և տան տիկնոջ հրավերին վրա սրահն յելան, ուր դրված էր սեղանը։

Բազմեցան սեղանը, բայց Թորոս աղային տիկինն, որ նոր յելեր էր, և յերկու աղջիկները չեյին յերևար։

— Տիկի՛ն, պոռաց Թորոս աղան, ձեզի կսպասենք կոր, վար իջեք։

— Գլխարկս կը հանեմ կոր, կուգամ կոր... պոռաց տիկինը վերեն,

Լուսի՛կ, չգա՞ս։

— Պոթինիս կապը կը կապեմ կոր, կուգամ կոր... դուք սկսեցեք ուտելու։

— Աղավնի՛, ո՞ւր ես։

— Մխոս իւթիւ կընեմ կոր... լմնցա... կուգամ... ինձի մի սպասեք։

Թորոս աղան կը նեղանա, բայց հյուրին առջև չուզեր յուր

նեղությունը հայտնել, մանավանդ թե արդարացնել կը ջանար կինն ու աղջիկները ըսելով.

— Մեր տիկինը հագուստները մաքուր պահելու մասին մեկ հատիկ է, փողոցի հագուստները չաղտոտելու համար, տան մեջ ուրիշ հագուստ կը հագնի: Լուսիկն ալ ըսես նե՝ ճաշակով կը հագվի. անանկ սարքի աղջիկներեն չէ, աղեկ ալ կը վայլեցնե: Աղավնիին գալով՝ աշխատասեր աղջիկ մ'է, վայրկյան մը պարապ չմնար, քա աղջիկ, կըսեմ յերբեմն, նստե, քիչ մը շունչ առ, վորու կըսես, կաշխատի ու կաշխատի: Ի՞նչ պիտի ընես, ծնունդնին ասանկ է: Յես ալ կը նայիմ, վոր աղեկ հատկություններ են ասոնք, բերանս չեմ բանար:

— Իրավունք ունիս:

— Եյ, տիկի՛ն, շուտ ըրե, պոռաց նորեն Թորոս աղան, քիչ մ'ալ վերջը փոխվե, հագուստներդ չեն աղտոտիր, յեկո՛ւր:

— Շրջազգեստս կփոխեմ կոր, լմնցա...

— Սոֆի, Սոֆի...

— Վրաս ֆրչալամիշ կընեմ կոր... կուգամ կոր...

— Աղամի՛ր, հոգնեցար աղջիկս, հոգնեցար, մեղք ես, յեկո՛ւր...

— Լմնցա, հայրիկ, լմնցա, հիմա կուգամ:

— Չիյտեն վոր հյուր կա, անոր համար քիչ մ'ալ անհոգ կը վարվին կոր... հրամմեցեք, Հաբեթ աղա, հրամմեցե՛ք, մենք սկսինք ուտել, անոնք ալ կուգան:

— Շատ աղեկ:

Թորոս աղան, մայրը և հյուրը սկսան ուտել: Թորոս աղան յերբեմն յերբեմն բարձր ձայնով կը կանչեր կինն ու աղջիկներն, վորք մինույն պատասխանները կուտային: Կշտացան, սեղանեն յելան, լվացվեցան, սրբվեցան, ընդունելության սենյակը մտան:

Մեկ ժամեն սպասուհին խահվե բերավ:

Թորոս աղան սկսավ պոռալ.

— Տիկի՛ն, յեկուր խահվեդ խմե:

— Կերակուր կուտեմ կոր, հիմա կուգամ:

— Լուսիկ, խահվեդ պաղեցավ:

— Տեր վողորմյա, հիմա նստա սեղան:

-- Աղամի՛ր, խահվեդ չպիտի՞ խմես:

— Պատառ մը հաց չուտե՞մ, մեղա:

Հաբեթ աղան Թորոս աղային նեղվիլը զգալով, քիչ մ'ալ կը նստի ու կը մեկնի:

Թորոս աղան, վոր բարկության ժամանակ չուզեր կնոջը դիտողություն ընել՝ կերթա պառկելու միշտ պոռալով.

— Պառկելու ժամանակ է, յելե՛ք, պառկեցե՛ք:

— Խահվենիս չխմե՞նք:

Թորոս աղան կը պառկի: Առավոտուն յուր սովորական ժամուն կարթննա, քթին տակեն մռմռալով. տակավին կը քընանան կոր...

Մինչև կես օր կը քնանան տիկինն ու աղջիկները:

Ցերեկոյան տուն կը դառնա Թորոս աղան, կառանձնանա կնոջը հետ և կսկսի դիտողության:

— Ի՞նչ եր յերեկ գիշերվան խայտառակությունը, խաղք յեղա հյուրին առջև...

— Խաղք ըլլալու ի՞նչ կա:

— Հյուրի սենյակը տակն ու վրա յեր...

— Իմացա, կավլեր կոր, ուրիշ գործ յելավ, անանկ ձգեց... խաղք ըլլալու բան չկա ասոր մեջ:

— Բյուրկաթիվի շիշով ողի բերին:

— Ի՞նչ վնաս ունի յեղեր, հինտ յաղի կար ողիի շիշին մեջ, անոր մեջը դրեր են:

– Աղեկ ա, ինթիքանի մեջ լեցնեյիք գոնե և անով հրամցնեյիք:

— Կենե մի՛ պաշլայեր, աստվածդ սիրես:

— Բերածնին գոնե ողի՛ ըլլար, կազ բերին, կազ...

— Եյ, սխալմունք է, ամեն տունի մեջ կըլլա, պյություն պարապ խոսքեր են ասոնք:

— Այնուհետև կերակուրի կսպասենք, չեք գար:

— Գործ ունեյինք... կերե՛ք, կըսենք կոր ձեզի, ինչու կըսպասեք... մենք ալ անոթի չմնացինք ա, մենք ալ կերանք... ասանկ պարապ բաներու համար բարկանալու սիրտ ալ ունիս, կը զարմանամ:

— Խահվեյի սպասեցինք, չեկաք:

— Կերակուր կուտեյինք կոր:

— Պառկեցե՛ք, կըսեմ, չեք պառկիր:

— Խանվե կը խմեյինք կոր։
— Արթնցեք կըսեմ, չեք արթննար։
— Կը պառկեյինք կոր։
— Շատ աղեկ, իրավունք ունիք։
— Դուք իրավունք ունիք, դուք... հանցավորը միշտ մենք ենք։
— Խաղք ու խայտառակ յեղա։
— Բան մ'ալ չեղար...
— Գոնե հյուրը պատվելու համար, պարտավոր եյիք սեղանը նստիլ։
— Մեյ մ'ալ ծիվ պիտի տեսնե անոր յերեսը, հոգս հատեր ե։
— Կերակուրի ժամանակ խըթլի՞ կըլլա, կերակուրի ժամանակ շըջազգեստ բըռվա՞ կըլլա, կերակուրի ժամանակ հագվի՞լ կըլլա։
— Ամեն որ չե ա, տարին անգամ մը պատահեր ե։
— Մեյ մ'ալ չեմ ուզեր, վոր ասանկ անվայել բաներ ըլլան։

Թորոս աղան միևնույն դիտողությունները կընե նաև աղջիկներուն, վոր կը խոստանան ուրիշ անգամ չգտնվիլ նմանօրինակ թերությանց մեջ։

Տարակույս չկա, թե յերբ ամեն գործ ժամանակին կատարվի, ասանկ անտեղությանց տեղի չտրվիր։ Ամեն երիկ մարդ ունի իր ժամանակացույցը իրեն վաճառատանը մեջ, վորպես ամեն պզտիկ տղա վարժարանին մեջ, յուրաքանչյուր կինն ալ ուրեմն ունենալու յե յուր ժամանակացույցն, վորովհետև, ինչպես ըսինք, ամեն բանի ժամանակը կա. պզտիկ խոտորում մը մեծ խոտորումներու կը տանի զմեզ։ Զմոռնանք հիշելու, թե ինչպես վոր խնդալու ժամանակը կա, լալու ժամանակը կա, այնպես ալ հինտ յաղլի շիշը կա, ողիի շիշը կա և կաղի շիշը կա։ Ժամանակացույցին քովը կանայք պարտավոր են կախել նաև մեյ մեկ շիշացույց, վորովհետև ամեն բանին տեղն ալ կա, թեև ծուլվողն այս մասին լռությամբ անցած ե։

Թ·

Զոքանչն ու փեսան։

Ավաղիկ, տիկնայք, այս ավուր դասախոսության նյութը։

Պիտի ջանամ, վորքան կարելի յե, զգուշանալ ձեր փափուկ սիրտերը վիրավորելն, բայց մի՛ կարծեք, թե պիտի խայթեմ ճըշ-

մարտության փափկագույն սիրտը. ճշմարտության՝ զոր կը հարգեմ, վորքան կը հարգեմ գեղեցիկ սեռը. ճշմարտության՝ վոր ձեր սեռին կը պատկանի, վոր ձեր սեռին պատկանելուն համար գեղեցիկ ե, վոր գեղեցիկ ըլլալուն պատճառով հարգելի յե, սիրելի յե, պաշտելի յե։

Տիկնայք,

Փեսա մը պարտավոր ե կամ հարուստ ըլլալ, կամ փեսայութենե հրաժարիլ։ Ի բաց առնելով բացառությունները, ընդհանրապես կը սիրվին փեսաները, ցորչափ բարեկեցիկ վիճակ մ'ունենան։ Փեսաներն կը հարգվին իրենց վոսկիներուն թվույն համեմատ։ Հարուստ փեսաներն աշխարհիս ազնվականագույն անձնավորություններ կերևին իրենց զոքանչներուն աչքին։ Վոսկվո՝ տգեղություններ, տձևություններ ծածկելու հատկությունն հարուստ փեսաներու վրա դիտեցեք, կը խնդրեմ, յեթե ժամանակ ունենաք։ Հարուստ փեսա մը, վերջապես, պարծանք ե զոքանչին, մանավանդ այն զոքանչին, վոր բացի հարուստ փեսայե մը վոչինչ ունի պարծենալու։ Այս կարգի զոքանչ մը, այսինքն մանավանդյալ զոքանչ մը, հարուստ կամ բարձրաստիճան անձի մը քով յեթե գտնվի՝ բնավ առիթ չփախցներ յուր փեսան բարձրացնելու։ Ըսենք թե այդ հարուստ անձը սովորություն ունի կաթով թեյ խմել ամեն առավոտ. իմ փեսաս ալ, կըսե մանավանդյալ զոքանչը, կաթով թեյ կը խմե ամեն առտու։ Դիցուք թե այդ բարձրաստիճան անձն ամիսն անգամ մը կտրելու տա յուր մազերն. մեր եֆենտին ալ, կըսե, բնավ չախորժիր յերկար մազերեն, յեղբայր ըլլայիք՝ բնավորությամբ այսչափ չեյիք նմաներ իրարու։

Յենթադրենք, թե այդ մեծ մարդն ընթրիքեն առաջ գավաթ մ'ողի խմելու վարժված ե. ճիշտ իմ փեսիս պես, կըսե, մինչև վոր գավաթ մ'ողի չխմե՝ սեղան չնստիր իրիկունները։ Իսկ յերբ միջին աստիճանի մարդու մը քով գտնվի և տեսնե, թե այդ մարդն ալ կաթով թեյ կը խմե՝ իմ փեսաս, կըսե, կաթով թեյ չկրնար խմել, ստամոքսը շատ փափուկ ե։ Յեթե այդ մարդուն մազերն կարճ են՝ իմ փեսաս, կըսե, կարճ մազերեն չախորժիր։ Վա՜յ այն մարդուն ալ, յեթե ընթրիքեն առաջ գավաթ մ'ողի կը խմե. իմ փեսաս, կըսե, ողի չգներ բերանը, կերակու-

րեն յետքը քոնյաք մը կը խմե, քոնյաք մ'որուն շիշը կարծեմ քսան ֆրանք է։

Միշտ ի բաց առնելով բացառությունները, ընդհանրապես չեն սիրվիր այն փեսաներն, վոր մեծ դժվարությամբ կը հայթայթեն իրենց ավուր պարենը։ Գինով են ատոնք, ծույլ են, անհոգ են, կամակոր են, տգետ են, էշ են, ավանակ են, և, վերջապես, են ինչ վոր կընծայվի այն մարդուն, վոր վոսկի չունի։ Աղքատ փեսա մը ստորին դասու արարած մ'է ու նախատինք է զոքանչին, մանավանդ այն զոքանչին, վոր հույս ուներ յուր փեսայովը միայն պարծենալ։ Ասանկ զոքանչ մը, այս է մանավանդյալը, առիթներ կստեղծե փեսան բամբասելու համար։ Յերբ քիչ մը գինովության, անգործության, աղքատության վրա խոսվի՝ մեկն ալ իմ փեսաս չէ՞ մի, կըսե, ամեն իրիկուն խմելով տուն կը դառնա, անհոգ է, գործի յառաջ չէ, տգետ է, ձեռքեն բան մը չգար, «Տվե՛ք, ուտեմ, ծածկեցե՛ք, քնանամ, հրըկեցե՛ք, վոր հոգիս չելլայ»-ի գործն է. բարով խերով դեմերնիս չելլար։

Փեսաները, ըսինք, կը հարգվին իրենց վոսկիներուն թըվույն համեմատ. օրինակ մը տանք։

Յերևակայեցեք զոքանչ մ'որ ունենա չորս փեսաներ միենույն բնավորությամբ, բայց իրարմե մեյմեկ աստիճան ավելի հարուստ։ Արդ, այս զոքանչն առաջին աստիճանի փեսան ընդունելու համար վոտքի կելնե. յերկրորդն ընդունելու համար վոտքի յելնել կը պատրաստվի. յերրորդն ընդունելու համար կռնակի վրա ցավ կզգա, ըսելով. «Շատ բան, յեհլ մ'է մտեր կռնակս, չեմ կրնար կոր շարժիլ». իսկ չորրորդն ընդունելու համար «Ձեզ յերեվնար կոր» միայն կըսե։ Իսկ յերբ հարցվի իրեն, թե չորս փեսաներուն մեջ վորո՞ւն բնավորությանն ավելի հավնած է՝ կը պատասխանե. «Փեսաներես գոհ եմ, չորսն ալ աղեկ բնավորություն ունին, բայց Ա...ը—հարստության կարգավ—անուշ հոլ մ'ունի և շատ խելացի յե. Բ...ն ալ սիրուն է, բայց քիչ մը բարկացող է. Գ...ը վառվռուն է, բայց հաշիվը չիյտե. Դ...ին հետ խոսք չըլլար, շուտ մը կը բարկանա. Ա... ին բնավորությունն ամենեն աղեկն է, ինքզինքը կը սիրցունե»։

Ներկայացնենք հիմա զոքանչ մ'որու փեսան նախ շատ առատ կը շահեր և հետո սկսավ ապրելու չափ միայն վաստկիլ։

Այս փեսան թեև կնոջը հետ սիրով է, բայց արբեցող է, խարդախ է, ստախոս է, կամակոր է. այսուամենայնիվ դեռ հարուստ է, և վոչ վոք կը համարձակի ատոր վրա դիտողություններ ընել զոքանչին, վոր իսկույն կը հուզվի, կը փրփրի և կը հանդիմանե փեսային գանգատողներն. «Գոնե, կըսե, բերանը ողի դրած ըլլա փեսաս. յե՞րբ խարդախություն ըրած ունի, վորո՞ւ սուտ խոսեր է. վորո՞ւ հետ կավեր է. աս ի՞նչ զրպարտություններ են...»։ Իսկ յերբ արբյալ վիճակի մը մեջ բեռնակըրով մը բերեն փեսան. «Այսչա՞փն ալ չընե, կըսե, ասիկա՞ ալ շատ տեսաք, երիկ մարդ է, քանի մը հատ խմեր է, վարժված չէ խըմելու, գլուխը դարձեր է... ի՞նչ մեծ հանցանք... յես ալ կարծեցի, թե մեծ բան մ'է յեղեր, վորպես թե քյոր գինով յեղած ըլլար...»։

Այս փեսան ձախորդության մեջ կիյնա։ Բոլորովին կը փոխվի նա. արբեցողությունն, ստախոսությունն, խարդախությունն հետզհետե կանհետանան։ Աղքատությունը սոսկալի յերգիծաբան մ'է. Լուկիանոսեն[17]), Ովրատիոսեն[18]), Հոբնալեն[19]) շատ ավելի ազդու կը խոսի նա. կը խարազանե, կը հաղթե, և վերջապես կսպաննե այն ամեն մոլությունները, վոր յերգիծաբան գրիչներու շնորհիվ այսոր բազմածին կը լինին, կաճին, կը բազմանան և կը տարածվին։ Աղքատությունն վոչ միայն կսպաննե մոլությունները, այլ նաև չափազանց յերգիծաբան կընե մարդըս և մարդուս բնական և սովորական պետքերն իսկ մոլությանց ցուցակին մեջ կանցունե։ Այսպես, յերբ Դիոգինես[20]) անոթի մնաց՝ սնունդն վորկրամոլություն անվանեց, յերբ դրամ չունեցավ հանդուստ գնելու՝ մերկությունը պարզասիրություն կոչեց, և յերբ փիալե մը գնելու կարողությունն պակսեցավ իրեն՝ գորգն ամբարտավանություն հորջորջեց. մեկ խոսքով մոլություն հաչակեց այն բաները, զորս չեր կրնար վայելել։

Ils sont trop verts et bons pour des goujats.[21])։

Յեվ Դիոգինեսի պես շատ մարդիկ կան, վորոց վրա այժմ խոսիլ չներեր մեզ մեր նյութը։

Դառնանք ուրեմն մեր նյութին։

Փեսան, ըսինք, յուր բախտովը կորսնցուց յուր մոլությունները, բայց վորովհետև աղքատ է՝ մոլիներուն պարագլուխն է։ Զոքանչը գոհ չէ իրմե։

— Տիկին, ձեր փեսան թեև աղքատ, ոսկի չդներ բերանը։

— Տիրացու չի, անոր համար չխմեր, ո՛ւր եր թե խմեր ու կինն ու զավակները նայեր։

— Սուտ չխոսիր։

— Անոր համար կով է յա։

— Խարդախություն չունի։

— Միամիտ է, միամիտ, կատարյալ ապուշ մ'է, բերնին հացը ուրիշին կուտա և ինքն անոթի կմնա։

— Կռվասեր չէ։

— Խոսիլ չիյտե, վոր կռիվ ընե... Տըվոր ավանակ է ըսեք, մննա։ Ա՛հ... ուրիշներուն փեսաներուն կը նայիմ, տուն կը դառնամ կուլամ։

Անկեղծությունն աղքատ փեսայի մը վրա ավանակություն կը թարգմանվի, խոնարհությունն՝ կովություն։ Յեվ արդարև, շատ դժվար է աղքատի մ'ապացուցանել յուր խոնարհությունը, վորովհետև խոնարհությունը պարտավորիչ է կարծես աղքատաց. Նույնպես շատ դժվար է հարուստին հաստատել յուր հպարտությունը, վասնզի հպարտությունն ու հարստությունն յերկվորյակ են։ Հպարտությունն այն ատեն աչքի կը զարնե, յերբ աղքատ անձի մը վրա տեսնվի, վորպես խոնարհությունն հարուստի մը վրա։ Միևնույն դիտողությունը միևնույն չեշտով արտասանել տուր հարուստի մ'և աղքատի մը. պիտի ըսեն քեզի.

— Վ՛որչափ խոնարհ մարդ է յեղեր սա հարուստը։

— Սա աղքատին այսչափ հպարտ ըլլալը չեյի գիտեր։

Զոքանչներ ալ կան, վոր ավելի ծիծաղաշարժ են։

Ասոնք յերբ աղքատ փեսա մ'ունենան, բոլորովին տարբեր կերպով կը վարվին։

Ոտարական մը թող խոսի այս զոքանչներեն միույն, թե յուր փեսան, Անդրանիկ աղան, վողորմելի վիճակի մեջ կը տառապի։

— Քիչ մ'օգնեյիք սա մարդուն։

— Վո՞ր մարդուն։

— Անդրանիկ աղային։

— Վո՞ր Անդրանիկ աղան։

— Ձեր Անդրանիկ աղան։

— Մեր Անդրանիկ աղան ո՞վ կըլլա կոր։

— Ձեր ազգականը։

— Անանկ ազգական չունինք մենք։

— Ձեր փեսան։

— Հաա, սա Անդրանիկ աղան, հասկցա, կարծեմ հեռուեն հեռու ազգականություն ունինք անոր հետ քիչ մը... երկանս... աղջկանը երիկը...

— Աս հեռուեն հեռո՜ւ կը սեպվի։

— Անիկա մեր փեսան չէ, անանկ փեսա չենք ճանչնար մենք... անանկ փեսա ունենալը մեր պատիվույն չենք կերցներ։

— Ինչ վոր է, օգնեյիք քիչ մը խեղճին։

— Բան մ'ալ չենք կրնար ընել, թող սատկի։

— Քանի մը վոսկի տայիք, վոր տանեյի։

— Անոր խոսքը գոցե, մենք անիկա փեսա տեղի չենք ընդունիր, ըսինք ա։

Իսկ յերբ այս զոքանչն իմանա, թե յուր մեծ հորն յեղբորը զոքանչին քրոջը տալոջը աղջկան հորաքրոջը դրացվույն աղջիկը Բաբել անուն հարուստ մարդու մը հետ կարգվի՝ փողոցները կիյնա և ուր վոր յերթա՝ Բաբել աղային վրա կը խոսի.

— Մեր Բաբել աղան կը ճանչնա՞ք։

— Ո՞վ է ձեր Բաբել աղան։

— Տեր վողորմյա, չճանչնայիք մեր Բաբել աղան։

— Ո՞վ է։

— Սա, նոր կարգվեցավ նե։

— Եյ, ատիկա ի՞նչեն ձեր Բաբել աղան կըլլա կոր։

— Մեր փեսան է նե։

— Վո՞ր կողմեն ձեր փեսան է։

— Վոր կո՛ղմեն կուզես նե, մտմտա անգամ մը, իմ փեսաս չսե՞պվիր մի՛ յա...

— Ինչե՞ն ձեր փեսան պիտի սեպվի։

— Տեր վողորմյա, շատ մոտ են, փեսաս կը սեպվի, մտմտա անգամ մը, մեծ հորս...

— Այո՛։

— Յեղբորը...

— Այո՛։

— Զոքանչին...

— Այո՛։

— Քրոջը...
— Այո՛։
— Տալոջը...
— Այո՛։
— Աղջկան...
— Այո՛։
— Հօրաքրոջը...
— Այո՛։
— Դրացվույն աղջիկը չէ՞ բաներ մի յա, հեռու մի կը սեպ-վի ասիկա։ Այն դրացվույն հետ մենք գրեթե յեղբոր պես, քրոջ պես եղենք, շատ սիրով եղենք, խմած ջուրերնիս զատ չէր յեր-թար։
— Ի՞նչ է նա։
— Շատ պատվական մարդ է Բաբել աղան, ուր եր թե ամենքն ալ անանկ փեսա ունենային։ Մեզի շատ կուգա Բաբել աղան։
— Բարեկամությունը ուրիշ, ազգականությունը ուրիշ։
— Հիչ ալ ուրիշ չէ։
— Ձեր փեսան Անդրանիկ աղան չէ՞։
— Անդրանիկս ալ ո՞վ է։
— Ձեր փեսան։
— Սըվոր խոսքը մ'ըներ, կաղաչեմ, դուն կը վայլեցնես, որ ատ մարդը մեզի փեսա ըլլա։
— Ինչու՞ չպիտի վայլեցնեմ, աղքատ է, բայց աղեկ մարդ է։
— Աղքատին ալ աղեկը ձեզմե կիմանամ կոր։ Աղեկ է նե, դուք առեք։ Մնաք բարով։
Ցուր փեսային վրա խոսք բացվելուն պես՝ շատ չկրնար նստիլ, շուտ մը կը փախչի։
Ո՞վ աղքատ փեսաներ։
Բայց մի կարծեք, թե հարուստ փեսաներն յերջանիկ են, ասոնք ալ կը չարչարվին իրենց զոքանչներեն, հարուստ փեսա մը մայր, յեղբայրներ և քույրեր ունի՞, ամենեն չար մարդն է հաչս յուր զոքանչին, որ փեսային գլուխը կը ցավցնե միշտ.
«Մայրդ զավակները թող նայեն, դուն կարգված ես, կին ունիս, զավակ ունիս, պարտավոր չես մայրդ, յեղբայրներդ և քույրերդ հոգալու, յեղբայրներդ նայելու յեն իրենց մայրն և

իրենց քույրերը, դուն ինչու համար պիտի նայիս յեղեր անոնք... դուն աշխատե, որ կինդ աղեկ նայիս... ամառվան շրջազգեստ չունի... ֆօրսե չունի... կոշիկ չունի... գլխարկ չունի... գուլպա չունի... թաշկինակ չունի... տկար է... չկրնար աշխատիլ... սպա-սուհի չունի... կաթ տալու կարողություն չունի... ստնտու չու-նի... հապա պզտիկ տղադ... կանոնավոր որորոց մը չունի... ներոջը որորոցին մեջ կը պառկի... վարտիկ չունի... շոր չունի... վա՜հ յավրում... հրեշտակի պես ալ տղա՜ չըլլար պարի... քրոջդ գլխարկ առնելուդ՝ կնոջդ մեծկակ հայելի մ'առնեյիր, մորդ յե-րեսուն դրուշի սաթե համրիչ առնելուդ՝ տղուդ նոր փաթ-թոցներ շինեյիր... քանի կը տեսնամ այս ընթացքդ, կերեմ ու կերիմ»։
Բայց այս զոքանչներն շատ գոհ կըլլան, յեթե փեսաներն իրենց զոքանչներուն, աներձագներուն և քենիներուն ապրուստ ու կապուստը հոգան։ Ցեվ այս տեսակ փեսաները բուն փեսա յեն։
Ամփոփենք․
Զոքանչներն ուրեմն կը սիրեն հարուստ փեսաներն, որովհետև անոնցմե կախումն ունի իրենց աղջկանց յերջանկու-թյունը։
Չեն սիրեր աղքատ փեսաները՝ զորս պատճառ խել կը դնեն իրենց աղջկանց թշվառության, որովհետև չեն ուզեր ըմբռնել, թե աղքատության դունեն ալ յերջանկություն կը մտնե, յեթե քիչ մը ծուխ։
Հարուստ փեսաներուն մոլությունները, հաչս զոքանչնե-րուն, արանց հատուկ ամենապարզ սովորություններ են, որ անզոր են թշվառացնել իրենց կիները։
Աղքատ փեսաներուն առաքինությունները զոքանչներու համար գեղջկական պարզություններ են, որ բավական չեն յերջանիկ ընել իրենց կիները։
Զոքանչներու համար փեսա մ'անմիտ է, յուր ապագան պատրաստելու անփույթ է, յեթե յուր մորը, քույրերուն կամ յեղբայրներուն նյութապես նպաստե։ Տարին քսան և հինգ շըր-ջազգեստ շինե կնոջդ, զոքանչդ պիտի ըսե. «Ծանր փիստան մը չշինեցիր աղջկանս»։ Շրջազգեստ մը շինե քրոջդ չորս տարին մեկ անգամ. «Ի՞նչ շռայլություն... ինչու պարապ տեղը ծախքեր կընես, մեզք չե սատկիդ» կը պոռա զոքանչդ։

Այս զգացումներն ունին գրեթէ բոլոր զոքանչներն, վորոնցմէ վոմանք կը հայտնեն բանիվ բերանո իրենց սույն զգացումները, մինչդեռ վոմանք, ավելի խելացի կամ քաղաքավար, կը շատանան միայն զգալով։

Բայց ազնիվ զոքանչներ, վորք բացառություն կը կազմեն կըսեն.

«Ով վոր կը սիրէ դուստրը, կը սիրէ նաև փեսան, և ով վոր կատէ փեսան՝ կատէ նաև դուստրը»։

Այս կարգի զոքանչներն են, վոր կը սիրեն իրենց անգործ կամ գինով կամ աղքատ փեսաներն իսկ, կը հյուրընկալեն զանոնք, կը մխիթարեն, կը քաջալերեն, վորպես իրենց զավակները։

Այս կարգի զոքանչներն են, վոր կը հորդորեն հարուստ փեսաներն ոգնել իրենց ծնողաց։

Փափաքելի չէր ապաքէն, վոր բոլոր զոքանչներն այս կարգին մէջ մտնէյին և ամուսնոց մէջ անհամաձայնությանց պատճառ չտայէին, անհամաձայնությանց՝ վոր շատ անգամ տխուր հետևանքով կը վախճանին։

Այս դասախոսությամբս, վորպես հայտնի յէ, փեսաներու հարստության կամ աղքատության վերաբերությամբ զոքանչներու զգացումները ներկայացուցինք։ Ուրիշ դասախոսությամբ նորէն պիտի խոսինք զոքանչներու վրա։

Ժ

Տիկնայք,

Կուզեմ քիչ մը կռվիլ ձեր ամուսիններուն հետ։

Շատ կը սիրեմ հանդիսատես ըլլալ երիկ կնկան կռիվներուն, վորք հաշտությամբ կը վերջանան։

Հաշտությունն սպառնի կռվո մը նախադուռն է։

Կռվեցեք քիչ մը, կը խնդրեմ, բայց վոչ հագուստի, ուտեստի, պտույտի, զբոսանաց կամ ասոնց նման չնչին խնդրոց համար, այլ առարկայի մը համար, վորո կեսը ձեզի կը պատկանի և կեսը ձեր ամուսիններուն։ Կռվեցեք ձեր սիրո և ամուսնության պտղույն վրա։

Հայկանուշը չորս տարեկան է։ Ճերմակ և կլորիկ դեմքով, պզտիկ բերնով, փոքրիկ քիթով, կապույտ աչերով, խարտյաշ մազերով, գեղեցիկ և գրավիչ աղջիկ մ'է։ Շատ կրակոտ է, սակայն վայրկյան մը չկրնար հանդարտ մնալ։ Տունի դպրոց կերթա, ուր կը վազէ և կը խաղա պարտեզին մէջ մինչև վոր հոգնի և դեպի յերեկո պառկի քնանա քիչ մը։ Ամեն առավոտ մեծ աղմուկ կը հարուցանէ տան մէջ, յերբ մայրն ուզէ սանտրել անոր մազերը։

Առավոտ է։ Մայրը՝ նստած պատուհանին առջև, առջևը դրած ճերմակ լաթ մը՝ զոր Հայկանուշին ծոծրակն ի վար պիտի դնէ անոր մազերը սանտրած միջոցին՝ սանտր ի ձեռին կըսպասէ Հայկանուշին, վոր դա և առջևը նստի։ Հայկանուշ, վոր դեռ հագված ալ չէ, կը փախչի։ Մայրը կը կանչէ աղջիկն։ Հայկանուշ խնդալով սենյակին անկյունը կը փախչի։

— Յեկուր, սիրուն աղջիկս, հրեշտակս, կըսէ մայրը խանդաղատանոք։

Հայկանուշ մյուս անկյունը կը փախչի և ձեռներով վեր կառնէ մազերն, վոր ճակտին վրա ինկած էյին։

— Մի հոգնեցներ ինձի, Հայկանուշ, յեկուր կըսեմ կոր։

— Չէ, մայրիկ, չէ, կը պատասխանէ խնդալով և աչքին վրա ինկած մազի քանի մը թելերը ձեռքով դեպի վեր քշելով։

— Հիմա յելլեմ պիտի բռնեմ, հա։

Հայկանուշ սենյակեն դուրս կը փախչի։

— Յեկուր, հրեշտակս, յեկուր, մի հոգնեցներ ինձի։

Հայկանուշ ուրիշ սենյակի մը մէջ կը պահվտի։

— Յեկո՛ւր, կըսեմ կոր, մի՛ սկսիր նորէն, գործի պիտի յելլամ, սպասելու ժամանակ չունիմ։

Պատասխան չկա։

— Սիրտս հատավ նէ... յեկուր կըսեմ կոր, հիմա կելլեմ, կը ծեծեմ հա՛։

Հայկանուշ մորը կերևա սենյակին սեմին վրա և խնդալով նորէն կը փախչի։

— Ինձի հետ խաղի յելեր ես հէ՞... կեցիր, յես հիմա կը սորվեցնեմ քեզի... սատանա... ըլվոր նայէ մեյ մը... ինձի հետ ճուրճինայի յելեր ե։

Մայրը կելլէ և Հայկանուշին թևեն բռնելով կը բերէ առջևը կը նստեցնէ բազմոցին վրա։

— Նստէ նայիմ հոս։ Սա լաթը դնեմ։

Պզտիկը կը քաշէ լաթը։

— Հայկանո՜ւշ, կը ծեծեմ հա։

Մայրը կը հաջողի լաթը գտնել։ Պիտի սկսի սանտրել։ Սանտրը ո՞ւր է։ Բոլի սենյակը ձգած էր աղջիկը բերելու գնացած ժամանակը։

— Ասանկ նստէ, մ'երերար, որ սանտրը գտնեմ։

Սիրուն սատանան լաթը նորեն կը քաշե, մեկդի կը նետե և կսկսի սենյակին մեջ վազել։

— Դարձյա՜լ յելլար... հոս յեկո՞ւ նայիմ...

Մայրը բռնելու կաշխատի, աղջիկն որ վազած ժամանակ ոտքը դռան սեմին կը դպի, կիյնա և ծունկը կը ցավցնե քիչ մը։

— Ո՜խ ըլլա, ո՜խ ըլլա... յեկուր, կըսեմ կոր քեզի յերկու ժամե ի վեր։

Հայկանուշ բարձր ձայնով կսկսի լալ։

— Ի՞նչ կա, ի՞նչ յեղավ, աղջիկս ինչո՞ւ կուլա կոր, կը պոռա հայրն, որ վարի հարկեն աղջկանը լալյունը լսած ու վազելով իջած էր։

— Բան մ'ալ չկա, մի բրդկվիր... յեկուր կըսեմ՝ չգար։

— Ի՞նչ յեղավ։

— Հատա նե...

— Ի՞նչու կուլա կոր...

— Մաշեցա նե... մեռա նե...

— Ի՞նչ ըրի՛ք խեղճին, որ ասանկ կուլա կոր։

— Ո՞վ ինչ պիտի ընե, ճանըմ... չգար որ սանտրեմ, ամեն առտու յե աս... քաշվելու բան չէ...

— Ասո՞ր համար կուլա կոր։

— Չգար որ սանտրեմ, կը փախչի, բռնեմ ըսի, ան ալ չբռնվելու համար վազեց ինկավ... աս է յեղածը... մի վախնար ... չզարկինք... ոխ ըլլա, որ սորվի...

— Հիմա աս ոխը վայլե՞ց։

— Վայլեց, դուն յերես կուտաս կոր, ան ալ ասանկ շփացած կըլլա կոր։

— Քանի մը անգամներ ըսինք ձեզի, որ տղայոց ջուրին յերթալու յե քիչ մ'ալ։

— Քանի մը անգամներ մենք ալ ըսինք ձեզի, որ տղայոց ջուրին յերթալու չե, որովհետև տղայք շփացած կըլլան, յերբ տեսնեն, որ իրենց ջուրին կերթան։

Հայկանուշ յերեսի վրա գետինը պառկած, կուլա մեծ լալյունով։

— Ասանկ մայրություն չըլլար։

— Ասանկ հայրություն չըլլար։

— Վա՜խ, աղջիկս, վա՜խ...

— Քիչ մը լաց, կուգես նե։

— Վա՜խ, յավրում, վախ...

— Որչափ ալ փափուկ սիրտ ունիս։

— Յեկո՛ւր, աղջիկս, յեկո՛ւր, քեզի շաքար առնեմ։

— Ասոր համար է, որ մեզի չսեպեր ա՜։

— Խե՜ղճ աղջիկ։ Կեռաս առնեմ քեզի աղջիկս...

— Ա՛ռ, կը հեկեկա Հայկանուշ, գլուխը քիչ մը վերցնելով։

— Մարդ աստուծո, քիչ մը ցուցուր ինքզինքդ, քանի մը հատ զարկ... որ վախնա։ Յերես կուտաս կոր, վերջը մեզի կը բարկանաս կոր։

— Անիկա պզտիկ է տակավին։

— Սանկ չպոռա՜ս քիչ մը։

— Ի՞նչ պոռամ։

— Բարկացիր քիչ մը։

Այրը չպատասխաներ։ Վեր կելնե, բայց քանի մը վայրկյան հետո նորեն վար կիջնա լռեցնելու համար Հայկանուշն, որ կուլար դեռ։ Դռան սեմին վրա կը կայնի և բարձր ձայնով.

— Հա՛յկանուշ... Հա՛յկա՛նուշ... Հայկանո՜ւշ... հը՜ը՜ը՜ը՜... անզգամ քեզի... հմմմմմ... հոս յեկուր... քեզի կըսեմ կոր... մորդ ձեռքը պագ նայիմ... յերեսս կը նայի՞ս կոր... հիմա կը ծեծեմ հա՛... գետնե գետին կը զարնեմ հա՛...

Հայկանուշ դանդաղաշարժ կը փորձե նստիլ, կարմրած աչքերը կը շփե ձեռներով, որոք քիչ մը թրջված էին արտասուքով։

— Մորդ ձեռքը պա՛գ, մեղա ըսե, մեյ մ'ալ չպիտի ընեմ, ըսե։

Հայկանուշ ծուռ ծուռ մորն յերեսը կը նայի ու տեղեն չերերար։

— Անանկ է նե՝ յես ալ Մարգար աղային Մաննիկը կը սիրեմ, կըսե մայրը։

Դարձյալ գոռում, գոչում։ Հայկանուշ այս հայտարարության վրա ոտքերով գետինը կը ծեծե և բարձր ձայնով կսկսի լալ։

— Ինչո՞ւ պոռալ կուտաս...

— Դուն ալ թոհաֆ մարդ մ'ես, աղջկանդ բան մը չես ըսեր, միշտ ինծի հետ ես։

— (Պոռալով) Լսեցուցեք ասիկա... ո՞վ պիտի մտիկ ընե ատոր ձայնը։

— Մաննիկը չեմ սիրեր, յեկուր նայիմ։

Հայկանուշ միշտ կուլա։

— Ասոր վե՞րջը։

— Հայկանուշ, կը լսե՞ս, չե նե քովդ գամ մի... մի՛ կարծեր, վոր հորմեդ կը վախնամ։

Հայկանուշ գլուխը վեր կառնե և հորը կը դառնա կը նայի խեղճուկ նայվածքով մը, շարունակելով միշտ բարձրաձայն լալը։

— Աս յեղա՞վ մի հիմա, կը պոռա այրն։

— Շատ աղեկ ալ յեղավ։

Այրը կը սրդողի, վոտք կելնե և աղջկանը թևեն բռնելն ու քաշքշելով բազմոցին վրա նստելն մեկ կընե։

— Ի՞նչ կուզես կոր հիմա աղջիկես, կը պոռա կինը հուզված, թեր փրցուցիր նե... վա՜խ ճիյերս... վա՜խ աղջիկս։

Ցել կերթա աղջիկը գրկելու։

Հետո կը շարունակե.

— Ի՜նչ խըյանեթ մարդ ես յեղեր... թեր ցավցուցիր նե... սանկ անգթաբար քաշել կըլլա մի... և ինչ հանցանք ըրավ, վոր անանկ քաշեցիր, քաշքշեցիր աղջիկս... մի՛ լար, աղջիկս... մի լար, Հայկանուշս...

Մայրը կը հուզվի... կը ջանա արտասուքը զսպել, բայց չհաջողիր. աչքերը կը թրջվին արտասուքով։ Կուրծքին վրա կը սեղմե աղջիկն, կը համբուրե անոր թաց աչքերը և ձեռքով կը շտկե մազերը։

— Կնիկ չեն մի, ամենքն ալ անմիտ են, կըսե այրը, յեթե չը բարկանաս՝ կը բարկանան, թե ինչու չես բարկանար. յեթե բարկանաս՝ կը բարկանան, թե ինչու կը բարկանաս։

— Երիկ մարդիկ են անմիտները, երիկ մարդիկ... տղան հանցանք մը ըներ նե՝ պատժելու չե, կայնած տեղը անանկ ուժով թևեն կը քաշե՞ն մի... վա՜խ, խուշիկս, վախ...

— Քանի մը հատ զարկ, ըսիր նե։

— Ըսի նե՝ այն ատեն զարնելու եյիր... քանի մը հատ

զարկ ըսի տեյի, զահեր ամեն որ պիտի գայիր ու քանի մը հատ պիտի զարնեյիր... գնա բանդ, աստվածդ սիրես... Հայկանուշս, քեզի կեռաս առնե՞մ, աղջիկս...

— Ասանկ յերես կուտաք... վերջը...

— Վա՜խ, յավրուս, վախ...

— Չեն սեպեր նե...

— Վա՜խ, հրեշտակս, անմեղ զառնուկս...

— Կըսեք, վոր չե՞ն սեպեր կոր։

— Ճիյերս, իմին աղվորիկ աղջիկս... յես աղջկանս աղվոր ֆիստան մը պիտի շինեմ, քաբելո պիտի առնեմ, ըսքարբին պիտի առնեմ, մանթո պիտի ձևել տամ... հա՜ա՜ աղջիկս։

— Հա՛, կըսե Հայկանուշը։

— Իմ աղվորիկ աղջիկս։

— Հա... հա... հայ... բիկը առնե...

Հայրը կզգածվի. կերթա աղջիկը համբուրելու։

— Անանկ ուժով քաշե՛, վերջն ալ պագ... հապա թեր ցավցունեյիր նե...

— Բան մը չեղավ ա՛... իմ նոնոշիկ աղջիկս։

— Յերես մի՛ տար զարձյալ, վա՜խ աղջիկս... թևե՞դ քաշեց հայրդ։

— Դուն ալ կուտաս կոր յերես... գիրկս յեկուր աղջիկս։

— Յես չեմ տար կոր... իմ աղջիկս խելոք է... հա՞ աղջիկս... իմ աղջիկս յերես չառներ։

— Իմ գիրկս յեկուր, Հայկանուշ։

Հայրը կը գրկե աղջիկը։

Հետո.

— Թևդ ցավցուցի՞, աղջիկս։

Հայկանուշ գլուխը կը հայտնե թե, վոչ։

— Ինչո՞ւ թևդ ցավցուցի՞ կըսես... սանկ կրթություն չորվեր տղայոց։

— Իրավունք ունիս... բայց յերես չտալն ալ չըլլար կոր... ինչ գիտնամ։

— Ե՛... հա իրավունք ունիս... յես ալ յերբեմն, յերբեմն կուտամ կոր... բայց աշխատելու յե վոր...

— Դպրոցին մեջ կը կրթվի հետո։

— Իրավ է... տուր ինծի, վոր մազերը սանտրեմ։

— Մայրիկը, Հայկանուշիս մազերը սանտրե նայիմ։

Հայկանուշը կը հնազանդի, կերթա յուր մորն առջևը կը նստի և թույլ կուտա սանտրվիլ մորմեն։

— Տես, ինչ խելոք կը նստի իմ աղջիկս, կըսե հայրը։

— Իմ աղջիկս գառնուկ է, կավելցնե մայրը։

— Քիչ մ'առաջ լացողն, չար Հայկանուշն եր։

— Այո, ուրիշ Հայկանուշ մ'եր անիկա։

— Իմ աղջիկս չլար։

— Ի՞նչ ալ աղվոր կըլլա կոր։

— Ապրիս, աղջիկս, ապրիս… որհնյալ է աստված, վերջացուցինք խնդիրը… պարապ տեղ իրարու ծանր խոսքեր ըրինք։

— Ի՞նչ ծանր խոսքեր ըրինք, դո՛ւն ալ… տուն ըլլա, խոսք ըլլա… աստանկ բաներ վնաս չունի… իրարու աչք չհանեցինք ա։

— Նախաճաշս պատրաստ է։

— Այո, ներսն է։

Այրը կերթա նախաճաշը կընե և հետո ներս մտնելով.

— Ըսելիք մ'ունի՞ք։

— Ոչ, իրիկունը կողով մը յելակ բեր։

— Լավ։

Ամուսինը կը մեկնի։ Կես ժամ հետո Հայկանուշ ալ յուր վարպետին տունը կերթա։

Ավադիկ, տիկնա՛յք, տեսարան մը, վորու վրա կը ճանչնաք զձեզ ձեր ամուսիններով։

Առանց մանկավարժ ըլլալու յերկու յերեք դիտողություն միայն պիտի ընեմ։ Նախ՝ թե մայրն յուր ազդեցությունը կը կոտրե յուր զավկին առջև, յերբ անոր կըսե.

— Հորդ պիտի զրուցեմ, հորդ իմաց պիտի տամ։

Յերկրորդ՝ թե հորն ազդեցությունը կը տկարացնե զավկին առջև, յերբ զավկին կըսե.

— Հորդ կապավինիս կոր… յես հորմեդ ալ չեմ վախնար. անոր առջեն ալ կը ծեծեմ քեզի։

Յերրորդ՝ թե հայրն յեթե պատիժ մը չտնօրինե յուր զավկին՝ յերբ սա պատժո մը կսպասեր մորմեն նախապես ստացած ազդարարության համեմատ, տղան սա համոզումը կը գոյացնե մտքին մեջ, թե կամ մայրը ստախոս է, կամ հայրն անկարող է զինքն պատժելու։

Արդ, մայրը, գլխավոր դաստիարակ զավկին, պարտի թեթև պատիժներով զսպել և ուղղել յուր զավակն։

Հայրը զավկին առջև տարաձայն ըլլալու չե անոր մորը՝ նույն իսկ յեթե մայրն անիրավությամբ վարված ըլլա տղուն դեմ։ Այսպես վարվելու յե նաև մայրը։

Յերես տալու խնդրույն գալով՝ կը հիշեցնեմ ձեզ առակին կապիկն, վոր ձագն խեղդեց չափազանց սիրելով և սեղմելով։

Հարց վոմանց թռչունն ինձ իմաց տվավն ալ մեկդի դնելու յե, յեթե չեք ուզեր, վոր տղան ձեզի ըսե որ մը.

— Սուտ կը խոսիս կոր, հա՛յր։

Մեր նախնիք կըսեյին.

— Տղան քնացած ժամանակը համբուրելու և սիրելու յե։

Նախնիք իրավունք ունեյին։

Ավելի մանրամասնության համար Քալանթարյանցին 22) դիմեցեք։

ԺԱ.

Ձեր կենաց մեջ հանդիպած եք յերբեք չորս, կամ յերեք կամ յերկու յեղբարց, վոր կարգված ըլլան, այսինքն մեյ մեկ կին ունեցած ըլլան, և միևնույն հարկի տակ բնակած։ Յեթե հանդիպած եք՝ իմացած եք անշուշտ նաև այն ծիծաղաշարժ վեճերը, զորս ներերը հարուցած են. յեթե հանդիպած չեք՝ զգացած եք անշուշտ յերկու կամ յերեք ներերու մեկ տան մեջ ապրելու անկարելիությունը։

Մեր ընտանեկան կենաց մեջ ների խնդիրը սարսափելի խնդիր մ'է. ընտանեկան ներդաշնակությունը խանգարող խընդիրներուն առաջինն է. չորս կամ յերեք կամ յերկու յեղբարց մեջ անմիաբանության վորոմն ցանող մշակ մ'է։ Կին մը յերբ զոքանչ է, դյուրատար է, իսկ յերբ ներ է՝ անտանելի յե։

Յերկու ներերու մեջտեղ ներդաշնակությունն, յեթե կա, ամեն վայրկյան ավրվելու յենթակա յե. ամենափոքր, չնչին կայծ մը կրնա մեծ հրդեհներու պատճառ ըլլալ։ Աստված փրկե զձեզ ներերու փորձանքեն։

Առաջին ներն առավոտուն կարթննա և սպասուհվույն կը պոռա, վոր խահվեն բերե։ Յերկրորդ ներն կիմանա զայս և

նույնպես սպասուհիույն կը հրամայե, վոր շուտ խահվե բերե իրեն։ Սպասուհին ստացած հրամաններու կարգով խահվեն նախ առաջին. ներին կը տանի և հետո յերկրորդին։

ՏԵՍԱՐԱՆ Ա

Առաջին ծերը, յերկրորդ ծերը, զօքանչը, սպասուհին

Յերկրորդ ծերը

Յես աս տունին մեջ սպասուհի՞ յեմ, յես անոր ծառա՞ն եմ, վոր անկե յետքը խմեմ խահվեն, ինքն ապսպրեց վոր...

Սպասուհին

Չե, տիկին, չե, առաջ ան ուզած եր, յես ալ...

Յերկրորդ ծերը

Չեմ հավատար, չեմ հավատար, ինքը կուզե, վոր ինձմե միշտ բարձր ըլլա, իմին երիկս յուր երիկեն ավելի ծախք կընե կոր տունի մեջ, ամեն երեկուն ձեռքերը լեցուն տուն կուգա, յուր երիկը բան մ'առած չունի և ամենեն ավելի հրամայող ե տան մեջ, աս չքաշվիր։

Առաջին ծերը (սենյակեն դուրս յելնելով)

Ի՞նչ յեղավ դարձյալ, առտվանցով ինչու կը պոռաս կոր, ամոթ չե՞։

Յերկրորդ ծերը

Քեզի բան մ'ըսող յեղա՞վ, առտվանցով կռիվ կը փնտռես կոր, յես սպասուհիին հետ կը խոսիմ կոր, քեզի՞ ինչ։ Սենյակդ, գնա, սենյակդ, քեզի հետ խոսող չկա, առտվանցով կռիվ ընելու ժամանակ չունիմ։

Առաջին ծերը

Ձիս և երիկս ինչու կը բամբասես կոր։

Յերկրորդ ծերը

Բամբասեմ նե՝ ի՞նչ կըլլա յեղեր... ձեզմե վախնա՞մ պիտի։

Առաջին ծերը

Ամոթ ե, ամոթ։

Զօքանչը

Ի՞նչ կա, ի՞նչ յեղաք։

Յերկրորդ ծերը

Իրեն հարցուր։

Զօքանչը (առաջին ծերին)

Ի՞նչ յեղավ։

Առաջին ծերը

Անոր ըսե՛։

Զօքանչը (յերկրորդ ծերին)

Մեջերնիդ բա՞ն մը դարձավ։

Յերկրորդ ծերը

Անոր չհարցնե՞ս։

Զօքանչը (առաջին ծերին)

Չըսե՞ս։

Առաջին ծերը

Ինչու համար խահվեն առաջ յես խմեր եմ... ասոր համար բարկացեր ե, բերնեն յեկածը դուրս կուտա կոր։

Յերկրորդ ծերը

Գարե խահվեյի խո՞սք ըլլար։

Զօքանչը

Ատանկ պարապ բաներու համար ինչու իրարու սիրտ կը կոտրեք, աղջիկներս, դուք սիրով ապրելու յեք իրարու հետ, վոր ուրիշներուն ալ բարի որինակ ըլլաք, մեր տունին մեջ չվայլեր ատանկ կռիվներ։

Յերկրորդ ծերը

Բայց կուզե, վոր ամեն բանի մեջ ինձմե առաջ անցնի։

Զօքանչը

Վո՞ր բանի մեջ քեզմե առաջ անցնիլ ուզեր ե, ի՞նչ ըրած ունի աղջիկը... աստված կա վրանիս։

Յերկրորդ Ծեր

Դո՛ւն ալ միշտ անոր թեր կելլաս։

Ջոֆանչը

Ինչո՞ւ անոր թեր չելլամ, զավակս, յերկուքնիդ ալ աղջիկներս եք իմին։

Յերկրորդ Ծեր

Ան է քու աղջիկդ, յես չեմ։

Առաջին Ծեր

Յես եմ, ի՞նչ կրնաս ընել նայիմ։ Սըվոր նայե մեյ մը, ինքզինքը ի՞նչ կը կարծե կոր չիյտեմ։

Յերկրորդ Ծեր

Ի՞նչ պիտի կարծեմ, ալ հերիք են ըրածներդ, յերեկ առտու գիտմամբ այնքան լվացվեր եյիր, վոր մուսլուխին ջուրը հատուցած եյիր. առջի որն ալ առջի գիշերվընե մնացած ձմերուկները սենյակդ տարեր եյիր. պզտիկս կտոր մը անուշ ուզե նե՝ չես տար և քուկիններուդ բերանը կը թըմես, ամեն իրիկուն գիս բարկացնելու համար սեղանի վրա իմին ջուրի գավաթովս ջուր կը խմես, վո՞ր մեկն ըսեմ... մուխաձիր խումաշեն շրջազգեստ մը շինեցի, շաբաթներով երկանդ գլուխը տարիր, վոր քեզի ալ շինե. տունին բոլոր գործերը իմ վրաս կը թողուս և սենյակդ կը քաշվիս ու մինչև իրիկուն կը քնանաս, կարծես թե ասոնք չե՞մ տեսներ յես, բայց յես մարդու զավակ եմ, յերես չեմ տար։ Որ մ’ալ երկու ջուրերը տանիլ[23]) ուզեց զես, նախանձեցար և սուտ հիվանդ յեղար, վոր չերթանք. կարծես վոր մոռցա՞ծ եմ ասոնք։

Ջոֆանչը

Ի՛նչ անվայել խոսքեր են ասոնք։

Յերկրորդ Ծեր

Իմ խոսքերս անվայել են, բայց անոր ըրածները վայլուն են։

Առաջին Ծեր

Դուն չեյի՞ր, վոր գիշեր մը առիր պահեցիր երկանդ բերած նարինջները ու գոնե մեկ հատ մը չտվիր իմ զավակներուս. դուն չեյի՞ր, անցյալ տարի խատայիֆին ամենեն աղվոր կտորը երկանդ առջև դնողն, վոր երիկդ ալ բարկացավ և իմ ամուսնույս պնակին մեջ դրավ։ Տես, մինչև հիմա բերանս բացե՞ր եյի։

Ջոֆանչը

Ասանկ խոսքերեն չեմ ախորժիր, կը հասկնա՞ք։

Առաջին Ծեր

Կերածիս, հագածիս հետ է, ի՞նչ ըրած եմ իրեն, չիյտեմ։

Յերկրորդ Ծեր

Տակավին ի՞նչ ընել կուզես։

Ջոֆանչը

Ասանկ խոսքեր չեմ ուզեր, կը հասկնա՞ք։

Առաջին Ծեր

Հյուր մը գա նե՝ իզմե վեր նստիլ կուզե, յես ալ թող չեմ տար հարկավ, արժանապատվության խնդիր է աս, թող չեմ տար, թող չեմ տար։

Յերկրորդ Ծեր

Քեզմե վար նստելու պարտականություն մը չունիմ։

Ջոֆանչը

Տունիս մեջ ասանկ խոսքեր չեմ ուզեր, կը հասկնա՞ք։

Առաջին Ծեր

Յես քեզմե առաջ հարս յեկած եմ հոս և քեզմե մեծ կը սեպվիմ։

Յերկրորդ Ծեր

Յերկուքնիս ալ հարս ենք։

Ջոխանչը

Լմնցուցե՛ք ալ... վար իջե՛ք։

Երկրորդ Ծերը

Սպասուհիին սանկ հրամայելներ մ'ալ ունի, վոր կարծես թե Ռոչիլտի[24]) կինն ե։

Առաջին Ծերը

Հանցանքը երկանդ ե, վոր քեզի յերես տվեր ե ասանկ։ Անզգամ։

Երկրորդ Ծերը

Դուն ես անզգամ։

Ջոխանչը

Ասանկ խոսքեր չեմ ուզեր յես. կը հասկնա՞ք։

Առաջին Ծերը

Կը լսե՞ս, յեթե վոչ հիմա քուկին մազերդ կը փետտեմ, հա, համբերությունս կը հատնի կոր...

Երկրորդ Ծերը

Կուզես նե՝ մատովդ դպիր։

Ջոխանչը

Բայց ասանկ խոսքեր չեմ ուզեր յես, կը հասկնա՞ք։ Վար իջեք ու գործերնիդ տեսեք։ Սրահն ու սենյակներն շտկեցե՛ք և սա վարտիքներս կարեցե՛ք, լմնցուցեք այսոր, վոր մեջտեղեն վերնա։ Զորս ամիս ե, վոր կը քաշքշվին... ամենը յերկու վարտիք ե...

Առաջին Ծերը

Յես ինչու պիտի շտկեմ սենյակները, յերեկ յես շտկեցի։

Երկրորդ Ծերը

Յես բնավ պարտականություն չունիմ... Մեծ հարսին կիյնա շտկել սենյակները։

Առաջին Ծերը

Վորպեսզի պզտիկ հարսը յերթա տակն ու վրա ընե և իրիկվան երկանը ըսե, թե իրմե զատ աշխատող չկա տան մեջ, անանկ չե՞։

Ջոխանչը

Չեմ ախորժիր ըսի ձեզի ասանկ խոսքերեն։

Առաջին Ծերը

Այնուհետև իմ յեփած կերակուրներուս մեջ իզմե գաղտնի յերկու յերեք ափ աղ նետել, վոր իմ յեփածներս աղի ըլլան և դուն երկանդ աչքը մտնաս։

Երկրորդ Ծերը

Հապա դուն մեծ լամպան կոտրեցիր և իմ վրաս ձգեցիր։

Առաջին Ծերը

Ամենևին։

Ջոխանչը

Ասանկ խոսքերեն չեմ ախորժիր, ըսի ձեզի։

Երկրորդ Ծերը

Այո, ստախոսություն պետք չե։

Առաջին Ծերը

Քուկին գլուխդ գալիք կա, բայց աստված համբերություն կուտա կոր ինծի։

Երկրորդ Ծերը

Ասկից յետքը ձեռքս ջուրի մեջ չպիտի խոթեմ, բան մ'ալ չպիտի ընեմ. կտոր մը կերակուր կեփեմ յես երկանս ու զավկըներուս համար, մեր սենյակը քաշվինք կուտենք։

Առաջին Ծերը

Շատ աղեկ կընեք, իմ ընելիքս ալ արդեն ան ե։ Յես ձեր սպասուհին չեմ։

Ջոխանչը

Ասանկ ծանր խոսքերեն չեմ ախորժիր, ըսի ձեզի։ Հաշտվեցեք։

Յերկրորդ Ծերը

Սատանան տեսնե յերեսը (սենյակը կը մտնե):

Ջոխանչը

Չեք հասկնար կոր ըսածս, ասանկ խոսքերեն չեմ ախորժիր ըսի։

Վարագույրը կիջնա, յերեկո կըլլա:

ՏԵՍԱՐԱՆ Բ

Առաջին ծերը յեվ ամուսինը

Առաջին Ծերը

Այո, հոս, մեր սենյակին մեջ պիտի ուտենք կերակուրնիս ասկից յետքը։

Ամուսինը

Ինչու։

Առաջին Ծերը

Մի հարցներ. դուն բնավ ծախք չես ըներ յեղեր, տունին բոլոր ծախքը յեղբայրդ կընե յեղեր, ան կը նայի յեղեր մեզի, դուն ստակ չունիս յեղեր, յեղբայրդ մեր պատճառավ պիտի կործանի յեղեր, ինչ գիտնամ, դուն տունի մեջ շատ կը հրամայես յեղեր, վո՞ր մեկն ըսեմ։ Յեղբայրդ քույկին պարտքերդ կուտա յեղեր, թե վոր յեղբայրդ չըլլա նե՝ անոթութենե կը մեռնիս յեղեր... ունեցածդ չունեցածդ գումարի կուտաս յեղեր, անհոգ ես յեղեր... ամենը միտքս չգար, վոր ըսեմ... անանկ խոսքեր, անանկ խոսքեր, վորուն մեկ տրամն ուտողն կը կատղի։

Ամուսինը

Հանդարտե, յես կը խոսիմ յեղբորս հետ։

ՏԵՍԱՐԱՆ Գ

Յերկրորդ ծերն յեվ ամուսինը

Յերկրորդ Ծերը

Այս կերպով միայն կարելի յեղավ խաղաղություն հաստատել տան մեջ. ամեն մարդ յուր կերակուրը կեփե և կուտե։

Ամուսինը

Ի՞նչ դարձավ նորեն։

Յերկրորդ Ծերը

Բաշվելու բան չե վոր... առտուն սպասուհիին հետ կատակ կընեմ կոր յես, մեյ մ'ալ աս վրաս վազե ու բերնեն յեկածը դուրս տա. միտքս չգար վոր մեկիկ մեկիկ ըսեմ, անդգամը մի թողուց, անառակը մի... քիչ մնաց, վոր ծեծեր զիս, յեթե չփախչեյի։ Մինչև իրիկուն սրագմո բանեց։

Ամուսինը

Բանի մը խոսք կընեմ յեղբորս, մի՛ հուզվիր։

ՏԵՍԱՐԱՆ Դ

Յերկու յեղբայրները

Առաջին յեղբայրը

Ի՞նչ է աղբար, աս քույկին կնոջդ բռնած ճամբան։

Յերկրորդ յեղբայրը

Յես պիտի հարցնեյի, ի՞նչ է կնոջդ աս վարմունքը։

Առաջին յեղբայրը

Ծախք չեմ ըներ յեղեր...

Յերկրորդ յեղբայրը

Կինս անդգամ է յեղեր։

Առաջին յեղբայրը

Տունը դուն կը նայիս յեղեր...

Յերկրորդ յեղբայրը

Կի՜նս անառակ է յեղեր...

Առաջին յեղբայրը

Մեր պատճառավ պիտի կործանվիս յեղեր... տակավին անանկ խոսքեր, վոր միտքս չի գար հիմա։

Յերկրորդ յեղբայրը

Կինս ամբարիշտ է յեղեր... ամենը չեմ հիշեր վոր... կը վայլե՞ն աս խոսքերը։

Առաջին յեղբայրը

Ամոթ չէ՞։ Վախ, վախ, վախ...

Յերկրորդ յեղբայրը

Մեղք, մեղք, մեղք։

Առաջին յեղբայրը

Վաղը պետք է վոր բաժնվլինք։

Յերկրորդ յեղբայրը

Այո՛, յես ուրիշ տուն մը կը բռնեմ։

Յեվ իրոք շաբաթե մը հետո կը բաժնվլին։

Ա՜հ, սիրելի ամուսինս, կըսե յերկրորդ ներն յուր երկանը գետնին տակն անցնի ան ներս, վոր քեզի ծախքի տակ խոթեց։ Ի՜նչ կըլլար, կըսեր, առաջին ներն յուր ամուսնույն, յեթե ներս սիրով յերթար հետս և յերկու տեղ ծախք չըլլար. սատուծմե գտնա. հիմա քեզի ալ դժվար յեղավ, յեղբորդ ալ։ Մեղք սատակներուն։

Ամիս մը հետո յերկու ներեր փողոցի մեջ իրարու կը հանդիպին, կը գրկեն զիրար և կը համբուրեն։

— Խըյանեթ, ինչո՞ւ չես գար որ մը, կըսե յերկրորդ ները։

— Պիտի գամ, դուք ալ հրամմեցե՛ք։

— Եֆենտին ի՞նչպես է։

— Շատ աղեկ է։ Ջերի՞նը։

— Աղեկ է։

— Բարև ըրե՛ք։

— Դուք ալ ըրեք։

— Բայց հրամմեցեք որ մը, չիտեք վորչափ կարոտցած եմ ձեզի... պզտիկները ինտո՞ր են։

— Աղեկ են։

— Վախ յավրուներս։

— Բուլբուլնե՞րդ։

— Կը խաղան։

— Վախ հրեշտակներս։

— Պզտիկներուն յերեսներեն պագ, ինձի համար։

— Դուն ալ պագ իմ կողմես։

Հետևություն.

Յերկու ներեր զիրար կը խածնեն՝ յերբ մեկտեղ ապրին, զիրար կը համբուրեն՝ յերբ իրարմե հեռու ապրին։

Ասոր գաղտնիքը կրթության պակասության մեջ փնտռեցին վոմանք, բայց հոն ալ չկրցին գտնել։

ԺԲ

— Սիրելի յեղբայրս, ինչո՞ւ կերկարաձգես հարսնիքդ, յե՞րբ պիտի բերես հարսը... ա՜խ... չես գիտեր, վորքան կը սիրեմ զինքը. յեթե հոս ըլլար հիմա, կը շոյեյի, կը գգվեյի, կը գրկեյի, կուրծքիս վրա կը սեղմեյի, հետը կը խոսեյի, կը խնդայի, կը պտըտեյի...

— Քիչ մ՚ալ համբերե՛, սիրելի քույրս։

— Աս ի՞նչ անուշ բան է յեղեր հարսը, մտքես չեր անցներ բնավ, վոր այսչափ պիտի սիրեյի զինքը։

— Շնորհակալ եմ, սիրելի քույրս, ազնիվ զգացումներեդ։

— Շնորհակալություն չեմ ուզեր, հարսս կուզեմ։

— Կը բերեմ հարսդ։

Ամիսե մը հետո կը կատարվի հարսանեկան հանդեսը։

Շաբաթներ կանցնին և տալն ու հարսը սերտ սիրով կապված են իրարու հետ. ամեն առավոտ զիրար կը համբուրեն, ամեն գիշեր գրկախառնութենե մը հետո կը բաժնվլին իրարմե. երիկ կնիկ են կարծես, այնքան կը սիրեն մեկզմեկ։ Յեթե հարսին քիչ մը գլուխը ցավի՝ տալոջն ախորժակը կը գոցվի. յեթե տալն փոքր թեթև ցավ մ՚ունենա՝ հարսը չգար սեղան նստելու։

Յերկուքը միշտ քով քով կը նստին կերակուրի սեղանին առջեւ։ Ամեն որ մեկտեղ կը նախաճաշեն խոսելով, խնդալով և իրարու անմեղ կատակներ ընելով։ Յեթե հարսը մեկ ժամ առեղնագործե՝ յուր առջև արձանացյալ կը տեսնե տալն՝ վոր կըսե իրեն.

— Հոգիս, հերիք աշխատեցար, գլուխդ շատ ծռեցիր, հարբուխ պիտի ըլլաս, մեղք չե՞ս, քիչ մ'ալ վաղը աշխատե։

Նույնպես տալը կես ժամ ավելի չկրնար աշխատել գլխարկին ծաղիկները շակելու համար. կարգիլվի հարսեն, վոր կաղաչե զինքն վաղվան ձգել աշխատության մեկ մասը.

— Սիրուն տալս, ատ վո՛րքան աչքի լույս թափեցիր, քիչ մ'ալ հոգնություն առ... կամաց կամաց թող ըլլա... վաղը յես ալ կոգնեմ քեզի և շուտ մը կը լմնցնենք։

—Լեզո՛ւդ սիրեմ, հոգիս... ուրեմն պարտեզ իջնանք քիչ մը պտըտինք։

— Յերթանք։

Հարս և տալ թև թևի, ցատկելով պարտեզ կը վազեն, կը շրջին հոն, հետո գույնզգույն ծաղիկներ կը քաղեն և պզտիկ փունջեր կը կապեն։ Քիչ մը ծաղիկներուն գեղեցկության վրա կը խոսին և յետքը, վարպետ քրոնիկագիրներ, իրենց գեղեցկության կանցնին։ Տալը հարսին քիթը կը շողոքորթե, հարսը տալոջը շրթանցը վրա կզմայլի. սա նորա սևորակ աչքերը կը ներբողե, նա սորա յերկար ու խարտյաշ մազերուն վրա կը հիանա. ա՜խ, կըսե հարսը, բոլոր ունեցածս կուտայի, յեթե քու բարակ մեջքդ ունենայի, ա՜խ, կը կրկնե տալը, կյանքս կուտայի քու փոքրիկ վոտքերդ ունենալու համար։

Յեվ խոսակցությունը կը շարունակվի։

— Իմ վոտքերս այդքան պզտի՞կ են։

— Քու վոտքերուդ նմանը չկա, քու վոտքերդ աննման են։

(Կը հավատամ, վորովհետև շատ հետևողներ ունին)։

— Հապա քուկի՞ն մե՞ջքդ։

— Ի՞նչ... իմին մեջքս բարա՛կ կը սեպվի։

— Սքանչելի մեջք մը։

— Աղվոր մեջք ունենալս այսոր կիմանամ... բայց մեջքեն ի՞նչ կըլլա։

— Մեջքն ամենեն ազդու և զորավոր միջոց մ'ե յերիտասարդաց նայվածքը հրավիրելու համար։

— Վոչ, երիկ մարդիկ պզտիկ վոտքերու համար կը խենթենան։

— Բարակ մեջքերը չե՞ն սիրեր։

— Չեն սիրեր, հապա։

— Պարապ խոսքեր։

— Վերջապես դուն քիմե աղվոր ես։

— Կը մերժեմ։

— Ամեն աղվորներ ատանկ կըսեն։

— Թողունք այս խոսքերը... քեզի հետ մեյ մեկ խահվե խմենք, սիրուն հարսս։

— Խմենք։

— Յերթամ, յեփեմ, բերեմ։

— Վոչ, յես կերթամ կը բերեմ։

— Չըլլար։

— Կը բարկանամ։

— Մեկտեղ յեփենք ու խմենք ուրեմն։

— Շատ լավ։

Հարս ու տալ՝ ձեռք ձեռքի՝ ներս կը վազեն, կեփեն խահվեն, և վերստին պարտեզ կիջնան, կը նստին և կը խմեն իրենց խահվեն, միշտ խոսելով, խնդալով։ Այս տնենական գործողությունը կը լմնա և խոսակցությունը կսկսի ուրիշ նյութի մը վրա, հագուստի վրա։ Կը խորհրդակցին և դաշն կը դնեն, վոր այնուհետև միևնույն կերպասե և միևնույն ձևով հագուստներ հագնին իբրև արտաքին նշան իրենց ներքին սիրույն և մտերմության։ Շաբաթներ կանցնին և հարսն ու տալը կը հարատևեն այս սիրալիր հարաբերության մեջ։ Ի՜նչ ճաշակ վոսկեղեն դարու սիրո[5])... Բայց վոսկեղեն դարերը յերկարաձիգ չեն դժբախտաբար, արծաթի, պղնձի ու յերկաթի դարերն են, վոր շատ կը տևեն։ Մտածեցե՛ք անգամ մը, այս ավուր մարդն յուր կենաց մեջ քանի՞ րոպե կապրի վոսկեղեն դարու մեջ... Անիրավությունն չե՞ ուրեմն պահանջել հարսեն ու տալեն, վոր միշտ վոսկեղեն դարու մեջ ապրին, մանավանդ յերբ կը փայլի վոսկին... յուր բացակայությամբը։

Այո, շաբաթներ կանցնին և հարսն ու տալն սիրով կապրին, յերբ որ մը, տալն տան համար ներքին կանոնագիր մը կառաջարկե հարսին.

— Սիրուն հարսս, կըսե, վորպեսզի տան գործերը շուտ լըմըննան. սրահն որ մը դուն ավլե, որ մ'ալ յես։

Հարսին արյունը գլուխը կը ցատկե. պատասխան չտար, հրացայտ աչերով կը հեռանա։

Տալը հարսին այս վարմունքին մեջ իրեն դեմ անարգանք մը կը նկատե։

Հարաբերությունները կը խզվին։

Պարտուց և իրավանց խնդիր մ'ե, վոր կը հուզվի այդ առաջարկության մեջ։

Հարս մը, ընդհանրապես, պարտականություն չզգար ավլել այն տեղերն, ուր կը կոխեն վոտքեր, վոր յուր ամուսնույն չեն։ Հարս մը, միշտ ընդհանրապես, կը ճանչնա թե յուր պարտքն ե ավլել սրահին այն կեսերը միայն, վորոց վրա կոխած ե ամուսինն սրահեն անցած ժամանակը. մնացյալ մասերն ավլելու հոգն տալոջը կամ կեսուրին կը պատկանի։ Ամեն հարս, քիչ բացառությամբ, ասանկ օրինագիրք մը շինած ե իրեն համար։

— Սուտ ե, սուտ ե, պիտի պոռան կիները, հարսերը կը զրպարտե Խիկար[26]), մինչև չկա՞ն հարսեր, վոր ամբողջ տունը կավլեն. լաթ կը լվան, կերակուր կեփեն, կար կը կարեն և այլն և այլն։

Տիկնայք, խոսքս չլմնցուցի տակավին։

Հարս մը կը խորհի, թե յուր անձն նվիրած ե ամուսնույն, վորուն համար միայն պարտավոր ե աշխատիլ, վորուն միայն պարտի ծառայել, վորուն հանգստության ու բարօրությանը համար միայն գործածել յուր բազուկներուն ույժը. կենթադրե ինքզինքը վաճառատան սպասավոր մ'որ տիրոջը հրամանները միայն կատարել գիտե՝ և յերբ ուրիշ մը հրաման մը տա՝ կը պատասխանե.

— Ամսականս դուն չես տար կոր։

Այս սկզբունքով ե, վոր հարսը չուզեր ստանձնել տան ամբողջ աշխատությունները, այս սկզբունքով ե, վոր հարսը չուզեր գավաթ մը դեղ խմցնել յուր հիվանդ տալոջը, այս սկզբունքով ե, վոր հարսը կը համոզե ամուսինը թողուլ յուր քույրն, վոր յերկու տարիե ի վեր՝ անդամալույծ կը պառկի և ուրիշ տուն մը վարձել։

Կան հարսեր և թվով բավական մեծ, վորք կընդունիմ, տան

բոլոր աշխատությունները իրենց վրա կառնեն, բայց այս աշխատությունները կը կատարեն իբրև շնորհք և վոչ իբրև պարտք։ Իսկ յերբ աշխատություններն իբրև պարտք դնել ուզեն իրենց վրա՝ այն ատեն իրավանց բռնաբարում կը տեսնեն խնդրույն մեջ և անմիջապես բողոք կը բառնան։

Հարս մ'որ ինքնաբերաբար ամեն ու ամբողջ տունն կավլեր, որ մը սենյակ մը միայն մոռցած եր ավլելու։ Տալն հարցուց հարսին։

— Սենյակը չե՞ս ավլեր։

Այս հարցումեն յետքը հարսը մեյ մ'ալ ավել չառավ ձեռքը։

Վորովհետև հարսը չուզեց, վոր նվերն իբրև տուրք նկատվի։

Զմոռնանք նաև հիշել, թե հարսը տալոջ գերիշխանությունը չընդունիր բնավ։ Այս ճշմարտությունը այնքան զգալի յե, վոր կեսուրներն իսկ շատ անգամ իրենց հարսերուն հրամայելու համար միջոցներ կը խորհին, շարժումներ կստեղծեն, հրամաններն իրենց աղջիկներուն ականջներով հարսներուն կուղղեն, ուսկից ծագում առած ե այն առածն՝ վոր կըսե, աղջիկս քեզ ասեմ, հարսնուկ դու լսիր։

Տարակույս չկա, թե հարսերուն այն օրինագրքին մեծ մասըն ավազի վրա դրված ե. վասնզի նավ մը չհառաջանար յերբ ամեն ճանըորդ, հարսերուն պես խորհելով, յուր հովանոցն իբրև առագաստ բանա և ըսե.

— Հովանոցս զիս կընա վարել։

Հարսի վրա այսչափն բավ համարելով, յերկու խոսք ալ տալոջ վրա ընենք։

Ամեն տալ մեկ քառորդ կեսուր ե միշտ, կես կեսուր ե հաճախ, յերեք քառորդ կեսուր ե յերբեմն և տալ չե բնավ յերբեք։

Տալերուն կեսրային քանակության աճումը և նվազումն կախումն ունի այն պաշտպանութենեն կամ լքումեն, զորս կը տեսնեն իրենց յեղբայրներեն։

Տալ մը կը խորհի թե՝ պարտական ե յուր յեղբայրը հոգալ, ուստի իրեն պարտ կը համարի կրթել հարսն, աշխատցնել զայն, սակավապետության վարժեցնել, պարզասիրություն ուսուցանել, վերջապես զգուշացնել հարսն այն բաներե, վոր կրնան հարվածել անոր ամուսնույն սիրտն ու քսակը։ Այս նախանձախնդրու-

Թյամբ ուրեմն, գերիշխանության իրավունք ունենալ կը կարծե հարսին վրա։ Ուստի կը վիրավորվի յերբ հարսի կողմեն աննշանագանդության ամենափոքր նշան մը տեսնե, աննշնազանդություն, զոր յուր յեղբորը դեմ իբրև բուռն հարված մը կընդունի։

Դառնանք պատմելու։

— Գեշ խո՞սք մ՛ըսի, կըսե ինքն իրեն տալը, ,առաջարկելով վոր որ մը ան ալլե որ մը յես, քիթը կախելու ի՞նչ իրավունք ունի... այսօրվան որս անոր տալն եմ, խոսքս մտիկ ընելու յե... ինծի համար չե, յես յեղբայրս կը ցավիմ, վոր խեղճ պիտի ըլլա որ մը, կինն ավել մը բանել չիյտե, բոլոր որը կը քնանա... գոնե աղվոր մ՛ըլլար...

— Ինծի հրամայելու ի՞նչ իրավունք ունի, կը խոսի յուր սենյակին մեջ հարսն ինքն իրեն, յես անոր սպասուհին եմ. անոր հարսն եմ, յես չե՞մ ալլեր կոր, իմ երիկս է նե՝ իրեն ալ յեղբայրն է, յեղբորը համար թող քիչ մ՛ավելի աշխատի, ի՞նչ կըլլա յեղեր, վախ սիրելի ամուսինս, ասանկ քույր մ՛ունենալուն համար է, վոր տարի մ՛առաջ Բերայի[27]) յերկու տուները ծախեց... մեկն ալ չըլլար կոր, վոր գլուխը փաթթենք, կորսվի, յերթա։

Հետևյալ առավոտուն հարսն և տալն ալ չեն համբուրեր զիրար, յերկու վարդագույն շրթունք այլ ևս չեն դպչիր իրարու։ Աչքանիր կը սրվին այժմ մեկմեկու դեմ։ Չեն խոսիր իրարու հետ. առանձինն կը խոսին մեկզմեկ նախատելու համար։ Տալն մորը կը պատմե յեղելությունը։ Մայրը կը կանչե աղջիկն ու հարսն և խոսքն աղջկանն ուղղելով կսկսի առենաբանության։

— Աղջիկս, կը տեսնեմ, վոր քանի մ՛որե ի վեր դուն ալ թեթևցեր ես, խելքդ փախուցեր ես, ծանրություն ըսված բանը չեմ տեսներ վրադ, կը վայլե՞ քեզի, վոր չնչին, տղայական, մանկական, յերեխայական խոսքի մը համար հարսիդ հետ չխոսիս, իրավ վոր չվայելցուցի քեզի։ Հարսս քիթը կախեր է յեղեր, քեզի անանկ յերեցեր է, ինչու քիթը կախե հարսը, իմ հարսս անանկ հարսներեն չե, և ի՞նչ ըսեր ես, վոր քիթը կախե, որ մը յես ավլեմ, որ մը դուն ավլե, ըսեր ես, քիթ կախելու բան կա՞ ասոր մեջ, հարկավ դուն ալ պիտի աշխատիս, ան ալ, հարսս չեմ ալլեր ըսած ունի՞... քանի մը անգամներ չավլե՞ց, դուն չե-

յե՞ր ըսողը, վոր հոգնեցար, հարսս, ա՛լ մի ավլեր, ասանկ պարապ բաներուն կարևորություն տալ և իրարու հետ չխոսիլ շիտակը դժվարս յեկավ, դուք իբրև յերկու քույրեր զիրար հոտվըտալով պիտի սիրեք, ինչպես վոր ալ կը սիրեք, ասանկ մանր մունր բաներու համար ինչու իրարու սիրտ կը կոտրեք. պագտվեցեք նայիմ։

Հարսն ու տալը կը պագտվին, բայց առենաբանությունն աղեկ տպավորություն չըներ հարսին վրա, վոր բոլորովին կը դադրի տան աշխատության մասնակցելե։

Քանի մ՛ամիսներ ևս այսպես կանցնին։ Որ մը հարսն՝ վոր Բերա գնացած եր ինչ ինչ գնումներ ընելու համար՝ տուն դարձած միջոցին ժամացույցը չգտներ վրան։ Գողցված եր։

—Ի՞նչպես յեղավ վոր կորցուցիր, կըսե տալն, մեղք չե՞ ժամացույցիդ, յեղբայրս քսան վոսկիի առած եր ան ժամացույցը, ի՞նչ ալ աղվոր ժամացույց եր... քսան վոսկի վաստկիլը դյուրի՞ն բան է այսօր, ինչու ուշադրություն չըրիր, վո՞ր կողմդ անցուցեր եյիր, վոր գողերն կրցան առնել, գրպանդ թող դնեյիր, կամ վրադ չառնեյիր... վա՛խ, վա՛խ, վա՛խ։

— Բան մ՛է յեղավ։

— Բան մ՛է յեղավով կը լմննա՞, մեղք չե՞ յեղբորս, աչքին բիբին պես կը սիրեր ան ժամացույցը, իմանա նե՝ ի՞նչ պիտի ըսե։

— Ինծի պիտի ըսե։

— Քեզի պիտի ըսե, բայց ինչու կորսվեր, քսան վոսկի յետ...

— Յես կորսնցուցի։

— Դուն կորսնցուցիր, բայց ստակն յեղբայրս տվավ։

— Յեղբայրդ տվավ, բայց ինծի համար տվավ։

— Այո, քեզի համար տվավ, բայց գողցնելու համար չտվավ, մի՛ իմացներ իրեն, դող կելլա, հիվանդ կըլլա։

— Քուկին յեղբայրդ է նե՝ իմ ալ երիկս է, քեզմե ավելի կը հոգամ յես զինքը։

— Կը հոգա՞ս։

— Շատ խոսք չեմ ուզեր յես։

— Յես ալ կը մարեյի կոր քեզի հետ խոսելու... բյուֆ... քեզի պես կնոջ վոսկի ժամացույց...

Շաբաթ մը հետո տալն այսպես կը խոսեր յեղբորը.

— Քուկին կնիկդ է նե՝ իմին ալ հարսս է, բերանս չորնա, յեթե բամբասելու մտոք կը խոսիմ կոր նե… տես, մինչև այսոր բերանս չբացի, վոր տան մեջ խաղաղությունը չխանգարվի, ըսելիքներուս վրա չբարկանաս սակայն։ Աս քուկին կնիկդ ձեռքերը ջուր չխոթեր բնավ, ամենևին չաշխատիր, յես ալ չեմ ուզեր, վոր աշխատի, թող չհոգնի, հարսս է, չհոգնի, բայց գոնե անուշ լեզու մ'ունենա. լեզուս բռնվի, թե վոր բամբասանք ընելու համար կըսեմ կոր նե։ Ըսենք, թե բնավորությունն ասանկ է, անուշ լեզու չունի, վորովհետև կան մարդիկ, վոր սիրտերնին բարի չէ, բայց անուշ լեզու չունին, գոնե բարի սիրտ մ'ունենա, ան ալ չունի. քեզի ասանկ խոսքեր ընել չեմ ուզեր ամա, սիրտս կերի, չեմ կրնար դիմանալ ու կըսեմ։ Ան ալ մեկդի թողունք, թող բարի սիրտ չունենա, արդեն ամենքնիս ալ բարեսիրտ չենք կրնար ըլլալ ա, բարի սիրտերը մատի վրա կը համրվին այսոր, գեթ հնազանդություն մ'ունենա. զղջացա այս խոսքերը քեզի բանալուս, բայց անգամ մը բացի և պետք է, վոր շարունակեմ։ Հնազանդություն ըսված բանը բնավ չգիտեր կոր, իմ վրաս իշխել կուզե կոր. թող իշխե, յեղբորս սիրույն համար աս ալ ընդունիմ, բայց թափթփածություն մ'ունի, վոր դիմանալու բան չէ, դու յելիր Բերա գնա, չիտեմ ինչ առնելու, ժամացույցդ գողցնել տուր և ապուշ, ապուշ յետ դարձիր…

Յեղբայրն, վոր, հանդարտությամբ մտիկ կըներ քույրն և անոր արտասանած խոսքերը մաքին մեջ արձանագրել կը թվեր, մեկեն ի մեկ հուզվեցավ, յերբ լսեց, թե ժամացույցն գողցված եր. կանգնեցավ և.

— Կատա՞կ կընես, հարցուց քրոջը զարմացմամբ։

— Ի՞նչպես կատակ, իմացա նե՝ սրտես արյուն վազեց, կատակն ալ խո՞սք է։

— Յես կը հասկնամ գործը։

Յեվ բարկությամբ կը մտնե յուր սենյակն, ուր կը գըտնըվեր կինն.

— Տիկի՛ն, ժամացույցդ ո՞ւր է։

— Շուտ մը ականջդ դրի՞ն։

— Ժամացույցդ ի՞նչ ըրիր, տիկի՛ն։

— Արդյոք ուրիշ ի՞նչ բաներ ալ ըսին։

— Տիկի՛ն, իրա՞վ է, վոր ժամացույցդ գողցուցած ըլլաս։

— Իրավ է, վրայես առեր են։

— Աս ի՞նչ ապուշություն է։

— Ամեն ատեն չէ՛ ա, չիտեմ ինչպես գողցուցեր եմ։

— Քսան վոսկիի ժամացույց եր…

Տալը ներս կը մտնե և.

— Ի՞նչ կա, ինչո՞ւ կը պոռաք, կըսե։

— Չգիտցածի պես ալ կը հարցնես, կը պատասխանե հարսը… ժամացույցս գողցուցի, անոր համար կը պոռանք։

— Գողցուցիր նե՝ գողցուցիր, ի՞նչ ընենք, մեռնելու չենք ա, յեղբայրս վողջ ըլլա, ուրիշ մը կառնե… յես ալ կարծեցի, թե ուրիշ դժբախտություն մը…

— Ուրիշ մ'առնեմ… ի՞նչ դյուրին է առնելը։

— Աստված վողորմած է, ժամացույցի մը համար կնոջդ յերեսը պոռալ կը վայլե՞, տեր վողորմյա։

— Ո՞ւր գողցուցիր։

— Բերա գնացի ու…

— Ի՞նչպես գողցուցիր…

— Գլխարկ մը կապել տվի…

— Ո՞վ գողցավ…

— Ի՞նչ գիտնամ։

— Գոցեցեք ալ խոսքը, կըսե տալն ու յեղբայրն վար կը տանի։

Յերկու որ յետքն տալն յեղբորն հետ վերստին կը խոսակցեր.

— Սիրելի յեղբայրս, քեզի բան մը պիտի ըսեմ, բայց խոսք տուր, վոր չպիտի բարկանաս։

— Չեմ բարկանար։

— Պիտի աղաչեմ քեզի, վոր սպասուհի մը բռնես. վորովհետև մինակս չեմ կրնար հասնիլ. հարսն ըսես նե՝ ի՞նչ ընե ան ալ, չկրնար կոր աշխատիլ, հիմակվան հարսերն արդեն գործ չեն տեսներ, իրենց սենյակը միայն կը շտկեն, կը հագվին և կը նստին, կամ գիրք կը կարդան կամ նորավեպ կը գրեն կամ դաշնակ կը զարնեն, դպրոցներու մեջ ասոնք միայն կը սորվին կոր, յես իմ հարսես գոհ եմ, ուսյալ հարս մ'է, բայց դաշնա-

կահար ձեռները սոխ չեն կրնար սրբել, դաշնակն ալ չուտվեր, վոր իրիկունները սեղանի վրա դնենք։

— Սպասուհի բռնելու ժամանակը չէ։

— Ժամանակ չէ, բայց յես ալ չեմ կրնար աշխատիլ, առա քեզի բացե ի բաց ըսեմ։

— Յես կը խոսիմ կնոջս հետ ու կարգի կը դնեմ։

— Դուն գիտես։

Այրն բարեպատեհ առթիվ մը կը պատվիրե կնոջ մասնակցիլ տան աշխատությանց։ Կինն կը պատասխանե, թե տալոջմեն պաղած ըլլալուն համար է, վոր չաշխատիր, թե տալը կը հրամայե իրեն։

Այրը կերթա հետևյալ յերեկոյին քրոջը հետ խորհրդակցելու.

— Դուն ալ մի հրամայեր իրեն, վոր աշխատի։

— Յես չհրամայեմ։

— Մի հրամայեր, հապա։

— Յեթե չհրամայեմ՝ չաշխատիր։

— Հրամայելուդ համար է, վոր չաշխատիր։

— Հրամայեմ նե՝ ի՞նչ կըլլա յեղեր, տալն եմ։

— Մի հրամայեր։

— Կը նայիմ, վոր դուն ալ կնոջդ խելքեն ես... վախ, վոր երեկ մարդ պիտի ըլլաս։

Յեղբորն արժանապատվությունը կը վիրավորվի և կերթա կնոջը քով սպեղանի գտնել։

— Հրամայե նե՝ ի՞նչ կըլլա յեղեր, տալդ է։

— Տալս ըլլալով։

— Յեթե չը հրամայե՝ չես աշխատիր։

— Ի՞նքն ըսավ։

— Վոչ, յես անանկ կը կարծեմ կոր։

Յես քեզի բան մ՚ըսեմ, յես կելլամ մորս տունը կերթամ, խնդիրը կը վերջանա։

Յեվ իրոք, հետևյալ օրը մորը տունը կերթա հարսը։

Այրը կը սրդողի, շաբաթ մը չերթար կնոջը քովը։

Բայց տալն ու կեսուրը չեն կրնար համբերել, հարսին տունը կերթան և աղաչելով, պաղատելով հարսը վերստին տուն կը բերեն և խաղաղությունը կը վերահաստատվի։

Այս հոդվածը գրած լմնցուցած եյինք, յերբ այս մասին հետըզհետե հասան մեզ ուրիշ տեղեկություններ, զորս նույնությամբ կը հրատարակենք, վորպեսզի պատմությունն թերակատար չմնա։

Ոգ. 22—Յերկու որ յետքը տալը փախավ հորեղբորը տունը։

Ոգ. 24—Տալն յերեկ յեկավ, այս առտու հալան աներևույթ յեղավ։

Ոգ. 25—Հալան մորը տունն է, ուր սոսկալի կռիվ մ՚ունեցավ տալոջը հետ։

Ոգ. 26—Այս առավոտ հաշտվեցան։

Ոգ. 26.—Յերեկ սոսկալի կռիվ մը առն և կնոջ մեջտեղ։ Այրը փախավ։

Ոգ. 27—Տալն յուր մորը հետ կռվի բռնված է, մորը քիթեն կտոր մը փրցուց։

Ոգ. 28—Խնդիրը Դատաստանական խորհրդո[38]) պիտի ներկայանա. այրը չուզեր կնոջը հետ ապրիլ։

Ոգ. 29—Կինը Նորման կեղանակե դաշնակի վրա։

Ոգ. 30—Կինն ալ չուզեր կենակցիլ երկանը հետ, բայց երեկը կուզե հիմա կնոջը հետ մեկտեղ ըլլալ. տալը հաշտություն կառաջարկե։ Կեսուրը քիթը առեր նստեր է։

ԱՌՏՆԻՆ ԿՌԻՎՆԵՐ

— Այս ժամուս կուգան տունը, կերակուրը քանի անգամ կրակի վրա դրի, քառասուն անգամ վար առի։

— Լաւ, կնիկ, իմ հոգերս ինծի հերիք են։

— Ի՞նչ հոգ ունիս, մեյխանեն գնա, ժամերով խմե, անկե յետքն ալ հոգեր ունիս յեղեր։

— Կնի՛կ, լա՛, կըսեմ կոր։

— Բերանը տակառ կը հոտի կոր... լսելու չեմ յեղեր... երեկ մարդոց ամենն ալ սասնէկ են... գինովնալու համար միշտ պատճառ կը գտնեն... Կերակոս աղան ամեն գիշեր գլտորելով տուն կը դառնա, ինչու... վորովհետեւ խեղճը տասը զավակաց հայր է և հուսահատ վիճակի մեջ է։ Թորոս աղան գրեթե ամեն օր գինով է... պատճառը հարցնես նե՝ խեղճը չորս ամիսե ի վեր պարապ կը պտըտի կոր... գինի խմե նե՝ գործ կը գտնի յեղեր... Ղուկաս աղան ուխտ ըրած է ընավ ջուր չխմել, ինչու, վորովհետեւ կնկանը հետ տըրլիս չունի յեղեր... Ինչ գիտնամ, քաշվելու բան չէ սա... դուն ինչու համար կը խմես կոր հինգ ամիսէ ի վեր։

— Այս գիշեր կռի՞վ ընել կուզես կոր։

— Այո՛, կռիվ ընել կուզեմ կոր, ի՞նչ պիտի ըսես։

— Անգամ մը հարցուցի՞ր ինծի՝ թե այսօր քանի՞ բարա վաստկեցար։

— Դուն ալ ինծի հարցուցի՞ր մի այսօր, վորչափ հոգնեցար, բարա վաստկելդ չվաստկելդ ալ յե՞ս պիտի մտմտամ, բարա չես կրնար վաստկել նե՝ ինչու համար կարգվեցար, յես քուկին ձեռքե՞դ քաշեցի, աղաչեցի՞, վոր գաս հետս կարգվիս... Թող չկարգըվեյիր... ինչու համար իմ ու զավակներուդ թշվառությանը պատճառ յեղար...

— Մի՛ բարկացներ զիս։

— Բարա չես կրնար կոր վաստկել յեղեր... բարան ալ թե

վոր յես վաստկիմ նե՝ տունին գործերը յես նայիմ նե՝ ան ատեն ի՞նչ պետք պիտի ունենայի քեզի։

— Գոնե սա վշտերուս մեջ տան խաղաղությունը պահել աշխատինք։

— Կանուխ չեկա՞ր ուրեմն։

— Գործի համար ուշ մնացի։

— Սուտ է…

— Լավ։

— Չպիտի լռեմ, քեզի շիտակ խոսք մ՚ըսեմ, բարա չվաստըկող երկան խոսքը չանցնիր, հասկցա՞ր մի. խոսքդ քալեցնելու համար բարա վաստկելու ես, ժամանակին տունդ գալու ես, չոլուխդ, չոճուխդ քովը նստելու ես, տունի մուհապեթը ասանկ կըլլա, հեմ անոթի, հեմ ալ պեպյուրլենմիշ ըլլալ… աս չեմ կլլեր յես… բան մ՚ալ ըսեմ քեզի, թե վոր ինքզինքդ չըշըլակես՝ որ մը տունեն կը վռնտեմ քեզի։

— Կը վռնտե՞ս մի։

— Կը հարցունե՞ս մի… յես իմ բարայովս կրնամ չոճուխներս ապրեցնել։

— Կնիկ, կերևա, վոր ծեծ ուտել կուզես կոր դուն այսոր։

— Կուզես նե՝ սանկ դպիր։

— Դպչիմ նե՝ ինչ կըլլա յեղեր։

— Չեմ գիտեր։

— Աստված համբերություն տա ինձի։

— Հարկավ պիտի տա… քյոր գինով տուն գալ, անկե վերջն ալ անկյուն մը քաշվիլ, լրագիր կարդալ… բոլշևիկայի վրա հավատխներ սորվիլ… Պիզմարքը[29]) սանկ է ըսեր, Կեերը[30]) նանկ է պատասխաներ… Սալիզպըրի[31]) գինի խմած ժամանակ չիյտեմ ի՞նչ ճառ է խոսեր, թամամ… հաց չունինք ուտելու… բոլշեվիկայի յետևեն ենք ընկեր… աս բոլոր պարապ պտըտողներըն են, վոր ղազեթա կը կարդան ու աշխարհիս գործերը շտկել կուզեն… ձեզի ի՞նչ… դուք ձեր որվան հացը ճարելու նայեցեք, պե մարդիկ։

— Լրագիր կը կարդամ նե՝ գործ գտնալու համար է ինձի։ Աշխարհիս գործերը շտկվելու յեն, վոր մենք ալ շտկվինք։

— Ո՜հ, կել, քեֆիմ, կել…

— Բու խելքդ չհասնիր, գիտցած չգիտցած բանիդ մի խառնվիր, յեթե դուն իմ վիճակս գիտնայիր, պիտի ըսեյիր ինձ, վնաս չունի, սիրելի երիկս, յերկու ժամ ուշ յեկուր, չորս գավաթ ավելի խմե։

— Դուն ալ իմ վիճակս գիտնայիր նե…

— Առտվանց տունեն դուրս յելա չելա՝ մսավաճառը դեմս կայնեցավ։

— Իրավունք ունի մարդը, վեց ամիսե ի վեր կը խաբես կոր խեղճը…

— Հազիվ թե համոզեցի, խոսք տալով, վոր քանի մ՚որեն պիտի վճարեմ պարտքս և փողոցը դարձա՝ նպարավաճառը թևես քաշեց։

— Շատ աղեկ է ըրեր… աղեկ վոր յերեսդ ապտակ մը չե հաներ… շատ քիպար մարդ է յեղեր… տարի մը կա, վոր մարդուն խոսք կուտաս պարտքդ վճարելու և մինչև այսոր մանղըր մը տված չես… շատ զատե մարդ է յեղեր…

— Աս ալ լոլոզեցինք։

— Աղոթք ըրե, վոր լոլոզվեր է։

— Յեվ ահա հացագործն ոձիքես քաշեց։

— Պիտի քաշե յա… անոր տեղն յես ըլլայի նե՝ ականջեդ կը քաշեյի…

— Սանկ կըլլա, նանկ կըլլա, քանի մ՚որ ալ համբերե, բան մը կընենք, Ալլահ քերիմ, մենք մեր պարտքը կը ճանչնանք, ըսելով ճամբեցինք։

— Շատ աղեկ մարդ է յեղեր, վոր խոսքիդ հավատացեր է։

— Վերջը չեկավ վոր ասոնց… կոշկակարը դեմս յելավ։

— Կոշկակարին ստակները մինչև հիմա չե՞ս տվեր…

— Ըսավ վոր…

— Յերկու տարիյե ի վեր մարդը չոլուխներուդ, չոճուխներուդ, ինձի, քեզի հիսուն չիֆթ բոթին շինեց… անոնց բարան չտվի՞ր.

— Ճանըմ, բարա չըլլա նե՝ ինչպե՞ս կը տրվի։

— Աստուծմե գտնաս.

— Ըսի վոր, սա Պիզմարքին ճառին վրա տեսնենք գործերը ինչպես պիտի ըլլան ու գալ շաբթու քեզի մեճիտիյե մը կուտամ։

— Աս ի՞նչ քերազեյություն է… վախ, վախ, վախ…

— Անկէց կ'ելլս դըրս, խանութս գացի և մինչև իրիկուն տասը բարայի առուտուր չըրի, ո՛չ միս կրցի առնել, ո՛չ հաց, ո՛չ ալ պանիր. բարեկամներուս գնացի քանի մը մեճիտեյե փոխ ուզեցի, բարեկամներս ալ չունեյին, որ տային, ասոր վրա գեշութիւն յեկավ վրաս, մարելու պես յեղա և գնացի ծովեզերյա խահվե մը նստա, նարկիլե մը խմեցի: Հասկցա՞ր հիմա ուշ գալուս պատճառը:

— Հասկցա:

Ճամբան գալնիքեն, կըսեյի որ, կնիկս խնդում յերեսով դեմս պիտի յելնե, թևս պիտի մտնե և գլխ վերը պիտի նստեցնե, դէմացս պիտի նստի, ինծի պիտի մխիթարե...

— Հոգս հատեր եր... ինծի ո՛վ մխիթարե պիտի... դուն ինծի մխիթարելու յես, դուն իմին խեղճութեանս պատճառ յեղար, բոլոր որ աշխատե՛, հոգիդ հանե՛, իրիկվան ալ աղան մխիթարե... ույտուրտուք... աս ի՞նչ պելայի հանդիպեցանք... քեշկե չկարգվեյի, տունը նստեյի:

— Մտքես կըսեյի, որ կնիկս դժբախտութեան կեսը վրան պիտի առնե և ասանկով տերտս քիչ մը պիտի թեթևնա:

— Արդեն բոլոր դժբախտութիւնը իմ վրաս ե, դժբախտութիւն մ'ալ դուն ես...

— Յեվ մինչև որ աս գործերը շտկվին, քիչ մը նեղութիւն պիտի քաշենք, կըսե՛յի, բայց գործերը շտկվելուն պես հանգիստ կյանք պիտի անցունեյինք:

— Անդիի աշխարհը:

— Այս մյուլհազաներով տուն կուգայի... բայց մեր խորհածին հակառակը տեսանք:

— Յես ալ կըսեյի, որ երիկս կանուխ պիտի գա...

— Եյ...

— Մեկ ձեռքը միս, մյուս ձեռքը ձուկ, կռնակը հաց, մեկ թևին տակը պտուղ, մյուս թևին տակը գինի... մեկ թևին վրա սիպիր յաղը... մյուս թևին վրա մոտա շալլա մը...

— Ե՛յ...

— Տունեն ներս պիտի մտնե, գլխ քովը պիտի հրամցնե ու պիտի մխիթարե ըսելով «ի՞նչ ընենք, դուն ալ շատ կը հոգնիս կոր խուշիկս, ամա, առաջ աստված յես քեզի մեկ յերկու պեսլեմե պիտի բանեմ, յերկու աչքի պիտի բերեմ, քիչ մ'ալ ակռադ սղմե» ի՞նչ գիտնամ, ասոր պես խոսքեր կսպասեյի:

— Կնիկ, իրարու խոսք չպիտի կրնանք հասկնալ:

— Հասկնալ չես ուզեր կոր քի հասկնաս:

— Յեվ կարծեմ թե որ մը չենե որ մը գլուխս առնեմ պիտի յերթամ:

— Յես քեզմե առաջ պիտի յերթամ:

— Բայց այն ատեն պիտի գիտնաս խըզմեթս:

— Դուն ալ ան ժամանակ պիտի զգաս կնկանդ արժեքը:

— Պիտի զղջաս:

— Պիտի աղաչես, բայց սատկ չըներ:

— Անոր համար խելքդ գլուխդ ժողվե՛ ու մի՛ փախցներ գլխ:

— Դուն ալ իրիկուններ կանուխ յեկո՛ւր, որ չպոռամ:

— Կանուխ գալը բան մը չե:

— Սա ողին ալ մի խմեր դուրսը, հոս յեկուր մեկտեղ խմենք, մեկ յերկու գավաթ ալ յես կը խմեմ:

— Շատ աղեկ ճանըմ, ուրիշ ըսելիք ունի՞ս:

— Զունիմ:

— Հաշտվեցա՞նք ուրեմն:

— Այո՛:

— Սա խոսքերը չըլլային նե՝ ավելի աղեկ չե՞ր ըլլար:

— Ի՞նչ վնաս ունի, տուն ըլլա, որ խոսք չըլլա, ամեն տուն այսչափ խոսք կըլլա:

— Ինչու՞ համար գլխար վիրավորենք:

— Ամեն որ չե յա, ո՛վ իմացավ: Քիչ մը րախի կա վերը, խմե՞նք:

— Բեր խմենք:

(Տիկինը կերթա ողին կը բերե):

— Հրամմեցե՛ք, տիկին:

— Շնորհակալ եմ, դուք ալ խմեցե՛ք:

— Միշտ ասանկ սիրով ապրինք, որ մեր տղաքներն ալ մեզմե որինակ առնեն:

— Մենք ալ իրարու գլուխ չպատռեցենք ա՛: Սիրելի երիկս, սա շալպաս չես մոռնար յա առնելու վաղը, հացագործին մի՛ նայիր դուն. ան կսպասե, չսպասեր տե՝ ի՞նչ պիտի ընե, մտա-

վաճառն ալ բաթալամիշ չեղավ յա, նպաբավաճառին յես խոսք կը հասկցնեմ, բայց նայե, վոր շապղային քորտելանելին բաց կապույտ ըլլան։

— Եոֆ... հատ մ'ալ տուր խմեմ տե, վաղը առտու կը խոսինք։

— Գոնե այս գիշեր ոլուխով չոճուխով մասխարա ըլլանք ու պալօ յերթանք, սիրելի եղիկս։

— Պոշ բան է, կնիկ։

— Վոտքդ պագնեմ։

— Ուրիշ գիշեր մը կերթանք։

— Ձե մըսեր, քառասուն տարին անգամ մը բան մը աղաչեցի քեզի։

— Այս գիշեր մոմտուք ունիմ կնիկ, վաղը առտու ալ կանուխ պիտի յերթամ։

— Աղջիկները հիչ տեսած չունին պալօ, քանի որ է, վոր գլուխս կը տանին, չոճուխները բան մը տեսած չունին, քյոր կը մնան կոր։

-- Գալ շաբթու մեջ տանելու խոսք կուտամ։

— Վո՛չ, սիրելի եղիկս, խաթերս համար այս գիշեր տար. սըկեց շուտ մը չորս հինգ հատ մասքե առ ու յերթանք. շատ ծախք չուզեր։

— Այս գիշեր ժամանակ չունիմ, կըսեմ նե, հասկնալու յեք, վոր ժամանակ չունիմ, հասկցա՞ք... յաթախս պատրաստ է։

— Ամեն ատեն ժամանակ չունիմ կըսես։

— Այո՛, և ժամանակ չունենալու ալ պատճառներ ունիմ։

— Ի՞նչ պատճառներ։

— Յես կնիկս ու աղջիկներս պալօ չեմ տանիր։ Հասկցա՞ր... սանկ ընտանեկան պալօ մը ըլլա նե՝ մեր մեջ ան ուրիշ խընդիր։ Լրագիրները կը կարդա՞ք կոր, պալօներուն համար ինչ կըսեն կոր նե՝ կիմանա՞ք կոր։

— Աս խտար ֆամիլյաներ կերթան կոր նե՝ ինչ յեղեր են։

— Ի՞նչ ըլլան նե՝ ըլլան, ատիկա մեր գիտնալու բանը չէ։ Սա յաթախս ձգեցե՛ք։

— Ջնայի՛ս, ալթըլե բոլոր աշխարհ ագետ է տե, մենք խելացի յենք միայն։

— Այո՛, մենք խելացի յենք միայն, սա յաթախս...

— Յաթախդ, յաթախդ, կերթաս կը պառկիս, պայղուշի պես կը նստինք հոս։

— Դուք ալ Յեկեսցե ի վրա իմ[32]) մը կարդացեք ու պառկեցեք։ Պատվավոր ընտանյաց համար չէ պալօն։

— Գայօղներն պատվավոր չե՞ն ուրեմն։

— Ան ալ չեմ գիտեր։ Յաթախս...

— Իմ բախտես է, վոր քեզի պես մարդուն ընկա. որ ցցուցած չես ինձի, տեղ մը տարած չես.. Մոսեո Միհրանին կինը ամեն գիշեր կը պտըտի։

— Յես Մոսեո Միհրան չեմ։

— Գոնե աղջիկներուդ խաթերը համար որ մ'ալ մա մեզի տե, պալօ տար, ամեն որ չէ յա։

— Կնիկ, պալօ չեմ տանիր յես կնիկս ու աղջիկներս։

— Թեատրօ տար։

— Հոն ալ չեմ տանիր։

— Թեատրոյին համար դպրոց է կըսեն, հոն ինչու չես տանիր։

— Եոֆ...

— Եոֆ յա, մեղք չե՞ չոճուխներուդ։

— Կնի՛կ, կաղաչեմ, գլուխս մի ցավցներ։

— Վահ, վոր եկած եմ, վահ, ինձի...

— Յերկար կընես կոր, կնիկ։

— Յերկարը կարճը աս է, աս գիշեր պալօ պիտի տանիմ յես աղջիկներս։

— Վո՛չ, չպիտի տանիս։

— Պիտի տանիմ, վոր քիչ մը աշխարհ տեսնեն։ Պատուհանին առջև մի նստիք, փողոցը մ'ելնեք, թեատրօ մ'երթաք, աղջիկներդ թուրշի՞ պիտի դնես։ Հարսնցու աղջիկներ յեղած են, թող տուր վոր քիչ մը ցցունեն ինքզինքնին, վոր մեյ մեկ երիկ գտնեն։

— Սանկ ըսե, աղջկներուդ երիկ գտնելու համար կուզես պալօ տանիլ։

— Այո։

— Կարգված կիներն պալոյի մեջ իրենց երիկը կը թողուն կոր, դուն կերթաս հոն փեսա փնտռելու, խելքդ սիրեմ։ Պալոյի մեջ երիկ չեն ծախեր, կնիկ, խելքդ գլուխդ ժողվէ։

— Յես ըրածս շատ աղեկ գիտեմ. արդեն յես փեսացու մը գտած եմ, որ այս գիշեր մեզի պիտի սպասե պալոն։

— Ի՞նչ կըսես։

— Ըսածս կըսեմ, քեզի սպասելու եկինք, որ աղջիկներդ հիսուն տարեկան ըլլան ու վերջը կարգվին։

— Յես աստնկ խայտառակ բաներե չեմ ախորժիր, հասկըցա՞ր, հիմա ոտքիս տակը կը ճզմեմ աղջիկս ալ...

— Բարկանալ պետք չէ, յես որոշած եմ ընելիքս, հայտեցէ՛ք աղջիկներ։

— Յերեսուն տարիէն ի վեր սիրով ապրեցանք ու հիմա պալոյի պատճառավ կռիվ ընենք, կնիկ... այդ պալոն իճաս-բնոյն աստուծմե գտնիա...

— Փեսացուս այս գիշեր պալոն պիտի գա և աղջկանս հետ պիտի տեսնվի անոր բնավորութիւնը հասկնալու համար։

— Մի՛ հավատաք, լիրբին մեկն ըլլալու յե այդ։

— Ընդհակառակն, շատ ալ քիբար տղա մ'է, մեզմե ավելի քիպար է,

— Խոսք չէ՞ս հասկնար կոր դուն։

— Շատ ալ աղեկ կը հասկնամ կոր։

— Թող այն յերիտասարդը հոս գա, առաջ յես տեսնեմ զինքը, նայիմ որո՞ւ տղան է, ի՞նչ գործ կընե, քանի՞ փարա ունի։

— Գոշ խոսքեր են անոնք, տղան շատ ազնիվ տղա յէ, աղջիկս ալ կը խենդենա կոր անոր համար։

— Կը խենդենա՞ կոր մի։

— Կը խենդենա կոր յա, դուն վաթսուն տարեկան յեղած ես և կուզես կոր, որ ամենքն ալ վաթսուն տարեկան ըլլան, այսինքն քեզի պես զգան, քեզի պես խորհին։ Դուն կենճությանըդ պալո գացած չէ՞ս։

— Բնավ գացած չունիմ։

— Ամեն մարդ քեզի պես չէ։

— Շատ խոսք չեմ ուզեր, պալո յերթալ չըլլար։

— Այս գիշեր չերթանք նե՝ չըլլար, մեղք կըլլա աղջիկներուս։ Հասկցա՞ր։

— Ճանըմ, յես կը գտնամ անոր երիկ մը։

— Վո՛չ, մենք կերթանք կոր իշտե...

— Ո՞ւր կերթաք կոր։

— Պալո։

— Չեմ բանար վերջը դուռը։

— Դուն գիտես։

— Վերջը գեշ կըլլա։

— Ինչ ուզե նե՝ թող ըլլա։

— Կնիկ տեղի չեմ ընդունիր քեզի։

— Յես ալ քեզի չեմ ընդունիր։

— Կեցէ՛ք։

— Մնաք բարով։

— Հոս յեկէ՛ք։

— Չպիտի գամ։

— (Պոռալով) Հոս յեկէ՛ք։

— Ճանըմ, ամոթ է, ինչո՞ւ կը պոռաս կոր։

— Յեկէ՛ք, յես ալ պիտի գամ մեկտեղ։

— Շուտ ըրէ՛։

— Կեցէ՛ք, սա վրաս փոխեմ։

— Փոխէ՛, փողոցի մեջ սպասեցնել մի՛ տար մեզի։

(Քանի մը վայրկյանեն վար կիջնա երիկն շալվար մը հագած և նարկիլե մը բռնած)։

— Ճա՛նըմ, աս ի՞նչ խայտառակութիւն է։

— Ինչո՞ւ խայտառակութիւն ըլլա։

— Մասքե պիտի անցունե՞ս յերեսդ։

— Վո՛չ։

— Անանկ է նե՝ չըլլար. մենք քեզի հետ չենք յերթար։

— Յես ալ ձեզմե չեմ բաժնվիր։

— Ամոթ է ճանըմ, տեսնողը ի՞նչ կըսե։

— Ինչ կուզե նե անի ըսե... իմ խըյաֆեթս աս է։

— Մենակ գնա դուն։

— Չըլլար, ձեզի մենակ չեմ թողուր։

— Որթալըխը մեր վրա խնդացնե՞լ կուզես կոր։

— Թող խնդան, ի՞նչ վնաս ունի։

— Աստուծմե գտնաս մարդ... հայտե, քա աղջիկներ, դառնանք, այս գիշեր չիյտեմ ինչ յեղեր է... հայտե, տուններնիս դառնանք...

— Ինչո՞ւ դառնանք, ճանըմ... պալը յերթանք, հայտէ...

— Քեզի ըլլա պալըն։

— Ցերթանք սա փեսացուն տեսնենք, նայինք ի՞նչպես մարդ է։

— Զուգեր։

— Աղջկնուս մեղք կըլլա։

— Լաւ։

— Ատ աղջիկները թուաջի՞ պիտի դնենք, հայտէ, յերթանք։

— Ջհաննիս ըլլալու։

— Պալըն աղեկ բան է։

— Ցումուրճախ, սա դուռը բաց ներս մտնենք։ Փողոցի մեջ չկայնինք, դրացինները կը խնդան կոր վրանիս։

— Խնդալու ի՞նչ կա, մտեք նայիմ։

— Ցես ալ քեզի խաղ մը խաղամ տե՝ դուն ալ սորվիս։

— Դուք չուզեցիք յերթալ, յես ի՞նչ ըրի։

— Ատ շալվարը կը տեսնե՞ս դուն, նարկիլեյիդ ալ կտորնե-րը կը ժողվես վաղը։

Այրն՝ որ հասած է նպատակին, լռութիւն կը պահե, և խնդիրը անուշ տեղը կը կապե։

Երիկներն ուրեմն կրնան նմանօրինակ միջոցներով դիմա-դրել իրենց կնոջ վնասակար փափաքանաց։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ա

ՊՃՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Աւ տիկին Բ.....

Անցյալ գիշեր կանանց պճնասիրության մասին իմ ըրած ինչ ինչ անմեղ և անկեղծ դիտողությանց ձեր կողմեն, մանավանդ իմ մեկնելես հետո, չար դիտում վերագրվելուն չափազանց վշտացուց զիս, տիկին։ Բնավ չեյի հուսար, տիկին, ձեր անձին վրա գտնել թարգման մ'որ այնքան սխալ մեկնե սրտիս զգացումները։ Սովորությանս համաձայն թեև պարտավոր եյի անպատասխանի թողուլ ձեր խոսքերն, որ կարեվեր խոցեցին սիրտս, բայց վորովհետև խնդիրն լոկ անձնական չէ, պատշաճ դատեցի յերկու տող պատասխան մը գրել ձեզ, վստահ լինելով, թե բոլորովին ապարդյուն չը մնար այն և թե կրնաք դուք և ուրիշ կիներ և աղջիկներ օգտվիլ անկե։

Տիկին, ըստ ձեզ, յես պարզամոլ եմ յեղեր, գեղեցկին վրա բնավ գաղափար չունիմ յեղեր, կը փափաքիմ յեղեր, որ կանայք Նոյ Նահապետին[33] ժամանակին զգեստներն հագնին, կանանց անհաշտ թշնամին եմ յեղեր և չեմ ուզեր յեղեր, որ անոնք գեղեցկությամբ երբեկ մարդոց ուշադրությունն գրավեն, չեմ սիրեր յեղեր կիներն. կիներն ալ զիս չեն սիրեր յեղեր. այն գիշեր կիներեն և աղջիկներեն և վոչ մին իմ քովս չնստելուն պատճառավ է յեղեր, որ կանանց հագուստներն խածներ եմ յեղեր, բարձր ընկերության մեջ մտնելու արժանի չեմ յեղեր, գյուղ մը քաշվելու և գեղջկական կյանք վարելու համար ծնած եմ յեղեր, կանանց հետ վարվելու որինաց դեմ ըմբոստ եմ յեղեր, կուզեմ յեղեր, որ բոլոր կանայք իրենց գլուխն ի վայր ալյուրի պարկ մ'անցունեն իբրև շրջազգեստ, յերբեմն յերբեմն կիներն խածնելե հաճույք կզգամ յեղեր, հանուն բարոյախոսության կանանց

դեմ անիրավ հարձակումներ կընեմ յեղեր, բարոյախոս լինելե շատ հեռու յեմ յեղեր, կիներուն գործոց խառնվելու իրավունք չունիմ յեղեր... վո՞ր մեկն հիշեմ... կիներեն յերես չգտնելուս համար անոնց յետևեն ինկեր եմ յեղեր և այլն և այլն և այլն, և այս բոլոր անվայել խոսքերն արտասանած եք ի ներկայության յերեսուն կանանց և ի բացակայության այս նամակին գրողին։

Կիները չե՞մ սիրե՞ր յեղե՞ր... այսպիսի անլուր հայհոյություն մ'առաջին անգամ է, վոր կը լսեմ աշխարհիս վրա։ Յեթե ներողամիտ չլինեյի, տիկին, դատ կը բանայի ձեզի դեմ և անհերքելի և հզոր փաստերով ապացուցանելեն հետո, թե կը սիրեմ կիները, քանի մ'ոսկվո տուգանաց դատապարտել կուտայի զձեզ։ Բայց առանց կրոնավոր լինելու, ներողամիտ գոլով կը հրաժարիմ այդպիսի խիստ միջոցներու դիմելե, մանավանդ ի վնաս կնոջ մ'որ քիչ մը խենթ է և բարկության միջոցին հաճեր է նախատել զիս։ Աղոթք ըրեք դարձյալ, տիկին, վոր աշխարհականի մը հետ է ձեր գործն, յեթե իմ տեղս կուսակրոն մը լիներ, ձուն կը բերեր ձեր գլխուն այդ մեկ զրպարտությանդ համար։

Բայց ինչո՞ւ չսիրեմ կիներն, ինչո՞ւ կիներն չսիրեն զիս, միթե անոնց ավելության համար չե՞, վոր սիրտ, միտք և հոգի կը մաշեցնեմ այսքան տարիներե ի վեր, միթե անոնց բռնած ընթացքին վրա խորհելուս համար չե՞, վոր շատ գիշերներ կը տըքնիմ։ Ավա՜ղ, այսքան աշխատությանցս և խնամոցս ի վարձատրություն թշնամանք պիտի ընդունիմ յեղեր...

Տիկին, ներեցեք ինձ ըսել, թե դուք իմ միտքս չեք հասկըցեր, ուստի թույլ տվեք, վոր հասկցնեմ։

Շինծու գեղեցկութենե զզվելն գեղեցիկն սիրել ու պաշտել է։ Յես մահու չափ թշնամի յեմ կեղծ գեղեցկության, վորով փայլել կուզե ձեր Ազնվությունը։ Անշուշտ տարբեր յեղանակավ պիտի վարվեյիք հետս, յեթե նույն գիշեր ձեր քովս նստեյի և պաշտեյի զձեզ ըսելով. «վո՜րքան գեղեցիկ եք, տիկին... ինչ սև մազեր, մարգրիտի պես ակռաներ և վարդագեղ դեմք ունիք»։ Կընդունիմ, թե այս խոսքերն չըսի ձեզ, բայց դուք ալ ընդունեցեք, թե ներկված են ձեր մազերը, շինծու յեն ձեր ակռաներն, և վորդան ծիրանիով[34]) ծեփված է ձեր դեմքը։ Դուք, տիկին, պարտավոր եք, ձեր ճերմակ մազերով, թափված ակռաներով և թոռմած յերեսներով ներկայանալ ընկերության, յեթե կուզեք կոկիկ, գեղեցիկ և սիրուն յերևալ։ Բնական տգեղությունն արվեստակյալ գեղեցկութենե ավելի, շատ ավելի գեղեցիկ է։ Տգեղություն մը ծածկվելով չ'անհետիր, ընդհակառակն՝ անոր, վոր ներկերու ներքև ծածկել կը ջանա յուր դեմքին ինչ ինչ թերություններն, տգեղությունն ավելի զզալի կերպով դուրս կուտա։ Մոռցա ըսելու, թե նույն գիշերը ձեռներուդ տգեղությունն ծածկելու համար ընավ չհանեցիր ձեռնոցներդ, և կարծեցիր թերևս, թե վոչ վոք նշմարեց այդ կարծեցյալ ճարպիկությունդ։ Ամենքն խնդացին քու վրա, յես միայն ցավեցա տեսնելով, թե ծաղու նշավակ կըլլա վաթսուն տարեկան կին մ'որ պատկառանք ազդելու դյուրություններ ունի։ Այս տողերն կարդացած ատենդ պիտի սրդողիս, գիտեմ, և պիտի ըսես. «ինչո՞ւ վրաս պիտի խնդան, ինչ ունեյի ծիծաղ շարժելու, միթե քիչ մը ավելի գեղեցիկ ըլլալու փափաքն հանցա՞նք է կնոջ մը»։ Գեղեցիկ ըլլալու ջանքով տգեղնալն հանցանք է, տիկին, և դուք տգեղցեր եյիք նույն գիշերն։ Ծեր կամ տգեղ կնոջ մը չափազանց զարդն, կըսե որիորդ տը Սոմերի, կիմացնե, թե այդ կինն թե տգեղության զրկանաց և թե ծերության ավերանաց վերա կը բարդե նաև խենդության այլանդակություններն։ Որ. տը Սոմերին և դուք եք խենդ, պիտի պոռաս, սակայն, յեթե պաղ արյամբ խորհիս, պիտի տեսնես, վոր խենդը դուն ես։— Ինչու չպիտի զարդարվիմ յեղեր, միթե յերեսուն և ինն տարեկան ըլլալով աշխարհիս զվարճություններեն և վայելքներեն ձե՞ռք քաշելու պարտավոր եմ. ինչո՞ւ ինձի հարմար ամուսին մը գտնելու չաշխատիմ, յերեսունն անցած կիներուն վոտքը քար մը կապելով ծո՞վ նետելու յե զանոնք։ Ներե, վոր խնդամ այս հարցումներուդ վրա, տիկին։ Յեն կիներ, կըսե Բոշպրյուն, վորոց անհրաժեշտ է զարդն. անոնք այն միսերու պես են, վոր շատկեկ համեմվելու կարոտ են ախորժակ բանալու համար։ Սակայն դուք ախորժակ գոցելու չափ համեմված եյիք։— Լա՛ճ, անպիտան, պապանձե՛, անառակ, կը վայլե՞ բարոյախոսի մը կնկան մը հետ այսպես վարվիլ... ախորժակ կը գոցեմ յեղեր... կնկան մը ըսվելու խո՞սք է ասիկա։— Մի սրդողիր, կաղաչեմ, խնդիրն անձնականի տեսությամբ մի դիտեր, ազգային տեսակետով քննե, և պիտի համոզվիս, թե վորքան իրավունք ունիմ այսպես խոսելու։ Դուն, տիկին, այդ անվայել վարմունքովդ չար որինակ կուտաս նորատի աղջկանց և կանանց, դու և քեզի նման

տիկիններն են, վոր պիտի առաջնորդեն նոր սերունդին պարզասիրության մեջ, և յեթե դուն և քեզի նման տիկիններն այսպես խենդությամբ վարվին, նորատիներն շղթայով կապել հարկ կըլլա։ Ա՛հ, տիկին, յեթե պճնասիրության վնասներն մի միայն այլոց ծիծաղն շարժելու մեջ կայանային, ձանձրություն չեյի առներ այս նամակն քեզի գրելու, բայց պճնասիրության գործած վնասներն, նախճիրներն այնքան դժնդակ և այնքան շատ են, վոր ինծի պես մարդ մը կամ ուրիշներու պես մարդ մը չկրնար զանոնք ի լուր աշխարհի չհրատարակել և անոնց դարմանն չխորհիլ։

— Դուն ես միայն այս վնասներն ու նախճիրներն տեսնող, քեզմե ուրիշ մարդ չտեսներ զանոնք. և ինչ վնասներ կրնա պատճառել պճնասիրությունն, վոր բոլոր քաղաքակիրթ ազգերե ընդունված ե։ — Ի՞նչ ըրած ունի պճնասիրությունն, առաջնորդ փոխած ե, կեդրոնական վարժարանի[35]) բացման դեմ արգելքներ հարուցած ե, կրոնավորի մորուքեն քաշեր ե, հանուն անձնանըվիրության աղքատին ստակն կոկորդն անցուցած ե... — Մի հուզվիր. տիկին, համառոտիվ պիտի պատմեմ քեզ այս ախտին վնասներն և դուն ալ պիտի համոզվիս ինծի, և իմ վրա ունեցած սխալ կարծիքդ պիտի ուղղես։

Ամենեն սիրելի բարեկամներես մին, վորու հետ յերկու տարեն հազիվ մի անգամ կը տեսնվիմ — վորովհետև կը վախնամ, վոր հաճախ տեսակցությունն մեր սերն կը պաղեցնե — օր մը տունը հրավիրեց թանգարանն ցույց տալու համար։ Ընդունեցի հրավերն և գնացի զինքն տեսնելու, վոր սենյակի մը մեջ առանձնացած Սողոմոն իմաստունը կը կարդար։ Զիս տեսնելուն պես վոտք յելավ և բազմոցին անկյունն հրամցուց զիս։ Շնորհակալությամբ նստեցա ինծ ցույց տրված տեղն։ Բարեկամս Սողոմոն իմաստունին կենաց վրա քանի մը վայրկյան խոսելեն յետքը ըսավ. «խահվեդ խմե, և հետո յերթանք գլատունս տեսնելու»։ Շատ աղեկ, պատասխանեցի։ Փլորա, Փլորա, կանչեց։ — Ի՞նչ կուզես հայր, հարցուց աղջիկն վերեն, — Խահվե մը բեր, — Սպասե քիչ մը, կը հագվիմ կոր։ Բարեկամիս յերեսին գույնը շրջեցավ, բայց համբերող մարդ լինելով ծածկել ուզեց յուր այլայլությունն և «աղջիկս դեռ չե հագվեր» ըսելով՝ սկսավ կինը կանչել. Ռոզա, Ռոզա. — Ինչու կը պոռաս, մարդ, թող չես տար, վոր շապիկ մը փոխեմ, պատասխանեց Ռոզան, վոր աղջկան պես չեր գիտեր, թե հյուր մը կը գտնվեր վարը։ Բարեկամս այս յերկրորդ պատասխանին վրա քիչ մ'ավելի կարմրեցավ։ Յուր կարմրությունն բարեխառնելու համար փութացի հայտնել, թե հանցանքն իմս եր, թե շատ կանուխ յեկած եյի (կես ուրեն մեկ ժամ յետքը)։ Բարեկամս դուրս յելնել ուզեց, կամ յուր կնոջն ու աղջկանն իմացնելու համար, թե վարը հյուր կար, և կամ խահվեյին առաքումը փութացնելու համար։ Խելացի ըլլալով՝ անմիջապես կռահեցի զայս և թույլ չտվի, վոր դուրս յելնե. — Խահվեյի սիրահարներեն չեմ, ըսի, կաղաչեմ, վոր աշխատություն չառնեք դուրս յելնելու։ Նըստեցավ։ Քանի մը վայրկենեն յետք նորեն պոռաց. Փլորա, տակավին չհագվեցա՞ր. — Մազերս կը սանտրեմ կոր։ — Ռոզա, չը պատրաստվեցա՞ր դեռ. — Խոսք մը փախցնել պիտի տայիր բերնես, վոր... տեր վողորմյա. աս ինչ տեսակ մարդ ե, թող չտար, վոր հագվիմ։ Տիկիններն և օրիորդներն քիչ մը ծանր կզգեստավորվին, կը խնդրեմ, վոր չնեղանաք, յես օտար չեմ գրեթե յես ալ ձեր յեղբայրն եմ, ըսի։ Շնորհակալ եմ, պատասխանեց բարեկամս։ Այլ և այլ նյութերու վրա խոսք յեղավ, կես ժամ անցավ և բարեկամս սկսավ դարձյալ կանչել Ռոզան և Փլորան։ — Ռոզա, խահվեն ո՞ւր ե. — Գուլպաներս կը հագնիմ կոր, հիմա կուգամ։ Փլորա, ո՞ւր ես. — Ֆորֆեգաներս կը դնեմ կոր։ Կանանց վրա խոսք բացվեցավ և մեկ ժամ տևեց։ Բարեկամս, վոր սույն խոսակցության միջոցին քանի մ'անգամներ նորեն պոռացած եր, վոր՝ խահվե բերեն, ավելի բարձր ձայնով աղաղակեց. — Փլորա, ինչու չես բերեր խահվեն. — Լավանեսա կը քսվիմ կոր։ Վրայեն մեկ ու կես ժամ ալ անցավ և այս միջոցին առնված պատասխաններն հետևյալներն եյին. — Մազերս կը ժողվեմ կոր, հիմա կուգամ, կոշիկներս կը հագնիմ կոր, լմնցավ, քորսես կը սղմեմ կոր, օղերս կը դնեմ կոր, պիտի գամ, շրջազգեստս կը շտկեմ կոր և ասոնց նման հազարավոր պատասխաններ։ Վերջապես յերեք ժամեն հետո բարեհաճեցան վար իջնալ, և օրիորդն ներումն խընդրելեն յետքը՝ թե քանի մը վայրկյան ուշացուցեր են խահվես բերելու, դուրս յելավ ինծ խահվե յեփելու համար։ Տիկինն վեր յելավ նորեն, կարծեմ շտկելու համար ճակտին վրա ցցված քանի մը թել մազերն, ուր կը տաներ միշտ յուր ձեռքը մեր քովը գտնված միջոցին։ Օրիորդն, վոր խահվեն պատրաստելու խոստ-

մամբ յելած եր սենյակեն, դարձյալ յուր հայելվույն առջին ե, վորովհետև յերբ բարեկամս կանչեց զինքն, պատասխան տվավ, թե քորսեյին կապը բրդած ե և զայն վերակարելու զբաղած ե։ Հուսկ ուրեմն, և հակառակ թախանձանացս, բարեկամս գնաց խահվես յեփելու։ Սենյակեն դուրս յելավ և քանի մը վայրկենե մտնելով՝ ակամա ծիծաղով մը ըսավ. — Վոչ խահվե ունինք և վոչ շաքար, մոռցած են ինձ ըսել, վոր գնեյի. — Արդեն սովորություն չունիմ, ըսի, խահվե խմելու, հանգիստ յեղեք. յերթանք գրադարանն աչքե անցունելու։

Մեր գտնված սենյակեն մեկնեցանք դեպի գրադարանն, վոր հինգերորդ դստիկոնին վրա մեծ սենյակի մը մեջ կը գտնվեր։ Վորքան նոր բաներ տեսա այս ճամբորդության մեջ... ասդին կը տեսնես գուլպա մը ձգված, անդին յերկու շապիկ, քիչ մ'անդին վարտիքներ, քանի մը քայլ ասդին կաթսա մը դրված լվացվելու համար, հոս գլխարկ մը, հոն կոշիկներ, ասդին հովանոց մը, անդին լավանտայի պարապ շիշեր, քիչ մը հեռու հացի փշրանքներ, սանդուխին աստիճաններուն վրա հում վոսկորներ, վորոնց միսն կատուներն կերած են, ասդին մուկ մը սատկած, անոր քով բուտրայի թուփ մը ձգված։ Յեվ ահա այս բաները տեսնելով հասանք գրատունն, ուր մեկ ժամու չափ մնալեն յետքը ինքզինքս դուրս նետեցի այս տունեն, ուր մազ մնաց պիտի ճաթեյի։

Դուն, տիկին, պիտի ըսես հիմա, թե կը չափազանցեմ իրերն, բայց սպասե վախճանին, վոր համոզվիս։

Այս ճամբորդութենե գրեթե յերկու շաբաթ վերջն այս աղջիկն նշանվեցավ և յերկու ամիսեն յետքը կարգվեցավ. Կար և կարողություն մաղթեցի այս կնոջ առն և մտադիր յեղա իրաց տեսնելու համար, թե խեղճ երիկն ինչպես պիտի տանի այս բեռն։ Հարսնիքեն յերեք շաբաթ հետո լսեցի, թե այրն ճամբեր ե կնիկն, վոր յուր մորը քով կը գտնվի այժմ։ Հայրն կուլա, կողբա, կը կոծի և ամոթեն չկրնար տունեն դուրս յելնել։ Յուր աղջիկն ամենուն բերանն ե, կանայք՝ վորոնց որակարգն ե այս խնդիրն, իրենց ուզածին պես կը մեկնեն այս բաժանումն. ինչպես կըսեն, մեկը վար կը քաշե, մյուսը վեր, մեկն ասդին, մյուսն անդին։ Մայրն հայելիեն ավելցած ժամերն կը զոհե թաղը պտըտելու և թաղեցիներն համոզելու, թե փեսան դրամոժիտ ուզեր ե և չորվելուն համար վռնտեր ե կինն, թե փեսան գեշ մարդ ե յեղեր, կոպիտ ե յեղեր, ավանակ ե յեղեր, անանկ թերություններ ունի յեղեր, վորք չեն գրուցվիր յեղեր և այլն և այլն։ Իսկ աղջիկն այժմ վոչ թե միայն չզարդարվիր, այլ հազիվ թե կը հագվի. գիշերազգեստովն կը նստի մինչև իրիկուն, սենյակի մը մեջ առանձնացած, չկրնար աչքերն վեր վերցնել, ամոթեն չուզեր և վոչ մեկուն յերեսը նայիլ, ականջներն կը խփե, զի մի յուր վրայոք խոսք մը լսե։ Կը հասկնա, ավաղ, դառն փորձե մը հետո, թե ինքզինքն գեղեցկացնելու համար միայն ժրաջան աղջիկներն ամենեն ավելի ծույլերն են. կզգա, թե այրերն իրենց կնիկեն միայն զարդարանք և գեղեցկություն չեն պահանջեր, կը համոզվի վերջապես, թե արվեստակյալ գեղեցկությունը վորքան զզվելի կընե կինն։

Պատասխան տուր ինձ այժմ, տիկին, ինչ բանի ծառայեց այս աղջկան այսքան զարդարանքն, յեթե վոչ յուր դժբախտության՝ վոր պիտի շարունակվի յուր կենաց մինչև վերջին որերը, դառն ցավ պատճառելով նաև իր հորն, վոր դեռ յերեկ մեծ հույսեր ուներ յուր դստեր վրա։ Քու պատասխանդ գիտեմ, տիկին, աղախինդ պիտի հրամայես, վոր այս նամակն պատռե, նետե, ու հայելիդ ու լավանտադ բերե քեզի։ Բայց մի աճապարեր, խոսքըս չլմնցուցի տակավին։ Յեթե ասոնք միայն ըլլային պճնասիրության վնասներն՝ բերանս անգամ չեյի բանար, ուրիշ հարվածներ ալ ունի ան, և անոնց վրա ալ պիտի խոսիմ։

Լալու տրամադրություն չունենալով հանդերձ, չեմ կրնար արտասուքս զսպել այն վողբալի տեսարանին առջև, ուր պճնասիրության զոհվեցան ընտանյաց հայր մը, զոր ի մոտո ճանչնալու պատիվն ունիմ, և մայր մ'որուն անունն միայն լսած եմ։ Այս մարդը բարի յեր — չեմ կարծեր, վոր բարի ըլլա այսոր, ըստ վորում կորուսած ե յուր բոլոր ինչքն, վոր մեծ բան մը չեր — և կը ջանար գոհացնել յուր կնոջ, զոր չափազանց կը սիրեր, ամեն պահանջումներն, վորքան ալ անհեթեթ և այլանդակ ըլլային անոնք։

Այս կինն շատ կը սիրեր և կը սիրե դեռ զարդարանց մեջ լողալ։ Նորաձևության լրագիր մը Լոնդրայեն կընդուներ, յերկու հատ Փարիզեն բերել կուտար, հատ մ'Իտալիայեն, որինակ մը Գերմանիայեն, յերկու թերթ Ավստրիայեն։ Ամեն շաբաթ թարգ-

մանել կուտար այս պատկերազարդ թերթերն և անոնց մեջ տեսնըւած նոր ձևերու համեմատ հագուստ շինել կուտար: Յուր բոլոր ժամերն կը վատներ անձին չափն տալու դերձակուհյաց. յուր բոլոր խոսակցութիւնն լաթային եր, հագուստներու մեջ սահմանափակված եր:

Յերբ յեկեղեցի յերթար՝ աստուծո արքայութիւնն չեր խնդրեր, այլ նորաձև շրջազգեստ կը խնդրեր. հագուստի համար մոմ կը վառեր, աղոթագրքին մեջ ալ հագուստի համար աղոթք մ՚աւելցուցած եր գրաբառ լեզվով և միշտ զայն կը կրկներ: Յուր տանն դռներն կը բացվեյին և կը գոցվեյին միայն դերձակուհյաց համար, վորք որը հազար անգամ կուգային չափ և փորձ առնելու: Ամենեն հարուստ դրամատերներու և վաճառականներու տիկիններուն հետ կը մրցեր, անոնց հետ համազարդ ըլլալ կուզեր: Խեղճ երիկն ամեն շաբաթ վոսկիներ կը համրեր դերձակներուն: Յեթե յերբեմն պզտիկ դիտողութիւն մ՚ըներ՝ կինն կսկսեր լալ և կստիպեր երիկն՝ յետ առնել յուր դիտողութիւնն: Յեթե արցունքն չբավեր՝ կինն պարզապես կը խոստովաներ, թե հին լաթերով պտտելու վարժված չեր և թե անկարելի յեր հագնիլ յերկու որվան հինցած լաթեր.— Նորաձևութեան սիրահարներու համար ամենեն հաստ կտավով և խնամով կարված հագուստ մ՚որ մը միայն կը դիմանա, հետևյալ որն կը հիննա, կը պատռի, այնպես վոր այդ հագուստով անհնար ե ընկերութեան մեջ մտնել առանց պատշաճից օրինաց դեմ մեղանչելու: Երիկն, կամ տան պատիվը պահպանելու նպատակավ, կամ յուր անճարակութեան պատճառավ՝ կնկան հետ համաձայնելու միջոցներ կորոներ և գտնելու կստիպվեր: Հասավ վերջապես ժամն ուր միջոցներն սպառեցան: Ընտանեկան գժտութիւնն անոնց դուռն զարկավ, կամ դուռն բանալու յե, կամ այս վնասակար հյուրն վռնտելու յե, վորովհետև դրան առջև սպասել տալն շատ վտանգավոր ե: Խեղճ երիկն արյուն քրտինք կը թափե համոզելու համար կինն, թե լաթերով կործանած ե զինքն և թե ժամանակ չունի այլես դիմագրավել լաթերուն... Քանի՞ անհարկու և սարսափելի յե կանանց լաթեղեն ճակատամարտն... Կինն կը սաստե երկանն, ըսելով, թե կարգվելու չեր, յեթե կարողութիւն չուներ կնկան շրջազգեստ մը շինելու. կաղաչեմ, ուշադրութիւն ըրեք այս մը լին, տեսած ունի՞ք ձեր կյանքին մեջ ասանկ մը մը, տարօրինակ չե՞ քիչ մը,

կնկան մը մ՚ե: Այրն ապագային մեջ յուր առևտրական գործոց բարվոքումն յերևակայելու կը հարկադրվի և կսկսի փոխառութեան: Տարի մ՚ալ փոխառութեամբ կը զարդարե կինն: Հաջորդ տարին գժտութիւնն նորեն ափ կառնե իրենց դուռն: Այս անգամ կը բացվի դուռն և հյուրն պատվով կընդունվի: Կինն յուր հագուստներու սնտուկներով չգիտեմ ուր կերթա բնակելու և ինչ ընելու. երիկն որե որ կը թշվառանա, պարտատերներուն պատասխան պատրաստելու համար կաշխատի գիշեր ցերեկ. բարեկամներն չեն ուզեր ճանաչել զայն: Ամենուն կաղաչե, վոր փոքրիկ ամսականավ գործ մը գտնեն իրեն. չհաջողիր: Վորոշում կուտա լուբիա յեփել և կաթսա ի գլուխ[36]) շուկայի մեջ ծախել, ձեռքեն չգար: Որական հացն ճարելու համար մուրացկանութեան կը ձեռնարկե — արդարև մեծ ձեռնարկութիւն — մուրալու արհեստն ու գիտութիւնը չգիտեր: Վերջապես քանի մը տարիներ առաջ փողոցի մը մեջ կաթվածահար կիյնա կը մնա:

Մյուս կողմեն կինն անառակութեան մեջ լողալեն յետքը — վորովհետև պճնասեր կինն մերկ կը պտտի, յեթե ուզածին պես չկարենա հագվիլ — կը խղդվի որ մը: Տարի մ՚առաջ տաժանելի ցավերով կը մեռնի ան ալ և կը զարդարվի պատանքով, միշտ ամենեն վերջին և ամենեն նոր ձև ունեցող շրջազգեստով...

Այս խոսքերն իմ ականջս չեն մտներ, կըսես դուն, այդ պատմածներդ սուտ են և միայն քու յերևակայութեանդ մեջ գոյութիւն ունին: Կինն հարկավ պիտի հագվի ալ, պիտի շքվի ալ, պիտի զարդարվի ալ, պիտի պարե ալ, պիտի յերգե ալ, պիտի ցատքե ալ, պիտի խմե ալ. մեղմ, ինչո՞ւ համար աշխարհք յեկեր ենք, պիտի զվարճանանք ալ, պիտի զբոսնունք ալ... չե՞ վոր պիտի մեռնինք որ մը:

Միևնույն առարկութիւններն կընեն ընդհանրապես ամեն կանայք, յերբ պարզասիրութեան հրավիրվին: Կանայք կը կարծեն, թե միմիայն զարդարվելու համար ստեղծված են, մինչդեռ, ըստ սուրբ գրոց, մարդու ընկեր, ոգնական և աջակից լինելու համար յեղած են Ադամա[37]) կողեն: Յեվ արդարև ինչ վոր մարդ ե, չկրնար առանց կնկան ապրիլ.— ի բաց առյալ կուսակրոններն — բայց ամեն մարդ կրնա ապրիլ առանց շրջազգեստի, կոշիկի, գըլխարկի, ձեռնոցի, գուլպայի և այլն ծախուց աջակցութեան: Յեվ ես կը համարձակի հավատալ, վոր աստված Ադամա կողեն

պճնասիրութիւն քաշած ըլլա։ Այլ սակայն կանայք իրենց զարդասիրութեամբն կարծեն զմեզ հաւատալու թե Ադամա կողին բացվելովն սոսկալի ծակոց դուռ մը բացվեցավ երիկ մարդոց առջև, դուռ մ՚որուն փակումը բազում ժամանակի կարոտ կը թվի։ Ա՛հ, տիկին, յեթե գրարար աստվածաշունչս քովս ունենայի, Սողոմոն իմաստունեն քանի մը հատվածներ մեջ կը բերեյի, հասկըցնելու համար քեզ, թե ինչ և կնոջ պաշտոնն և ինչպես պետք է լինել կին մը։ Զեմ ուզեր շատախոսութիւն ընել և կը դառնամ պզտիկ դեպք մ՚ալ պատմելով, կնքել նամակս, վոր քիչ մ՚երկար յեղավ։

Տասնեութն տարեկան աղջիկ մը մոլութիւն ուներ բնավ չմսելու և յուր մեջքն շատ բարակ ցույց տալու, այնպես վոր ձմրան ամենեն ցուրտ օրերն առանց թիկնոցի կը պտտեր։ Այս աղջիկն գիշեր մը պարահանդես կերթա, կը պարե, կը քրտնի և տուն կը դառնա դողալով։ Հետևյալ օրն անկողինեն չ՚ելներ. ըղժիշկ կուգա և ծնողացը կիմացնե, թե հիվանդը դարմանի կարոտ է։ Հիվանդն անկողնո մեջ իսկ կը մերժե կռնակն բուրդե թիկնոց մ՚առնել։ Հիվանդութիւնն օրըստօրե կը հառաջանա, հազ, թուք, գլխու ցավ, կռնակի ցավ, կուրծքի ցավ, ջերմութիւն, փոխ առփոխ կզբաղցնեն գինքն, վոր չուզեր ֆորսեն հանել նույնիսկ մահվան անկողնույն մեջ։ Բժիշկը խստիվ կը պատվիրե ծնողացն, վոր հիվանդն տաք պահեն, զգուշացնեն ցուրտեն և ընչառութիւն արգիլող զարդերեն պահպանեն։ Հիվանդն մեծ դժվարութեամբ կը հավանի ֆորսեն հանել և ան ալ սա պայմանավ, վոր թավշյա լայն շըջազգեստ մը կարվի և սամույրե մուշտակ մը շինվի իրեն համար։ Հայրը չմերժեր աղջկան խնդիրքը և գաղտնի հանգանակութիւն մ՚ընելով կը հաջողի կատարել աղջկան կամքն։

Ախտն, վոր համառ է, կը շարունակե յուր ճանրան. ցավերն յերթալով կաճին և կը սաստկանան։ Հիվանդն կը պնդե, թե քորսեն հանելեն և մուշտակ հագնելեն ի վեր հիվանդութիւնն սաստկացած է և կըսե, թե բռնի պիտի մեռցնեն գինքն, յեթե թույլ չտրվի իրեն դարձյալ ֆորսե դնել և մուշտակ չհագնիլ։ Վերջապես այս խեղճ աղջիկն ցավերու տակ յերկար օրեր տանջվելեն և չարչարվելեն յետքը կը վախճանի։ Մեռնելեն չորս օր առաջ կը պատվիրե ծնողացն, վոր ֆորսեով թաղեն գինքն, վոր չմոռնան գունավոր գուլպաներն հագցնել վոտքերուն, վոր մազերն հյուսելով

գլխուն վրա ամփոփեն, վոր յերեսներուն վրա քիչ մը բուտոն ցանեն, վոր դագաղն չգոցեն հուղարկավորութեան ժամանակ, վոր լավանտա քսեն դագաղին չորս կողմը, վոր դագաղակիրներուն մեկն հովանոց մը բռնե գլխուն վերևը, վոր շրթանցը վրա քիչ մը կարմիր քսեն, վոր թաղին մեծ փողոցներուն մեջ պտտցնեն դագաղն, վոր ծաղկանց փունջեր նետվին պատուհաններեն դագաղին վրա, վոր գեղեցիկ տապանաքար մը դրվի գերեզմանին վրա, վոր վարդի տունկեր տնկվին գերեզմանին շուրջն, վոր... բայց վ՞ր մեկն ըսեմ, տիկին, յիթե հանգուցելույն մեն մի պատվերն արձանագրել ուզեմ՝ նամակս տարվան մը մեջ չեմ կրնար ավարտել։

Ահա, տիկին, այս ցավալի դեպքերուն աղդեցութեան ներքև խոսեցա նույն գիշերն պճնասիրութեան դեմ, կարծելով, թե կը հաջողիմ, պարզասիրութիւն քարոզելով, ազատել կործանումեն շատ մ՚ընտանիքներ և մահվան ճիրաններեն բազում աղջիկներ և կիներ։

Պճնասիրութիւնն ընկերութիւններ կազմելով չքարձվիր, վորովհետև ընկերութիւններ կազմելով հաստատված չէ։ Մեկ կողմեն պճնասիրութեան բազմադիմի վնասներն աղջկանց միտքն մտցնելու յե վարժարանաց մեջ, և մյուս կողմեն քեզի պես հարուստ տիկիններ և կուսակրոնք վոմանք պարզասիրութեան օրինակ հանդիսանալու յեն, վորպեսզի կարենանք փրկել մեր ազգն այս սարսափելի և համաճարակ ախտեն։

Կը հուսամ, թե կարդալով սույն գրութիւնս կը բարեհաճիք ինչ ինչ փոփոխութիւններ ընել ձեր դեմքին վրա, կարևոր բարենորոգումներ ներմուծել ձեր բերանն. իրավունք տալ իմ արդար դիտողութեանցս, և ընդունիլ իմ խորին հարգանացս հավաստիքն, վորով կը մնան ընդհանրապես ամեն նամակագիրք։

Բ

ՊԶՏԻԿ ՔԻԹ ՑԵՎ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ

Համեստափայլ տիկին Ե...

Կ. Պոլիս

Գեղեցիկ, խելացի և հարուստ յերիտասարդ մը փափաք հայտներ է ձեզ ձեր աղջկանը նշանվելու։ Ըստ տիրող սովորու-

թյան քանի մ'անգամներ յուր ներկայությամբ պատվեր ե ձեր տունն։ Որիորդին հասակին բարձրությանն ու լայնությանը հավներ ե. Նորա ձեռքեն, կայնվածքն ու շարժվածքն հափըշտակվեր ե, մանավանդ քթին պզտիկության վրա ապշեր, հիացեր մնացեր ե։ Սակայն քանի մ'որ առաջ, ցավոք սրտի հայտներ ե ձեզ նամակով մը, թե կարելի չպիտի լինի իրեն ձեր աղջկան խոսք տալ, առարկելով, թե որիորդը ֆրանսերեն չգիտեր։

Այս հայտնության վրա աղաղակ մը բրցուցեր եք, լացեր վողբացեր եք, ամբողջ գիշերներ տքներ եք, և վերջապես վորոշեր եք, ֆրանսերենի դասատու մը բերել ձեր աղջկան՝ վորուն քիթեն կախյալ կը կարծեյիք յուր ապագան, քիթ մ'որ ձեր գերդաստանին փառքն ու պարծանքն ե։

Այս ե կարծեմ, տիկին, հավատարիմ ամփոփումն ձեր առ իս ուղղած նամակին՝ վորով այս մասին ինձմե խորհուրդ հարցնելու խոնարհամտությունն ևս ունեցած եյիք։

Կը ցավիմ, տիկին, թե ձեր վերջնական վորոշումն տալեն յետքը իմ կարծիքս իմանալ ուզեր եք, այսուամենայնիվ կը փութամ անարժանաբար հաղորդել ձեզ իմ թվիքս։

Նշանվելիք յերիտասարդաց պահանջումներն մեծ, բազմադիմի և տարորինակ են։ Չեմ մեղադրեր յերիտասարդներն. քավ լիցի, անոնք անմեղ են, սերն ե մեղավորը. սերն՝ վոր յերբեմն պզտիկ քիթ կուզե և շատ անգամ ալ կուզե վոր բնավ քիթ չունենանք. սերն ե կըսեմ, վոր մերթ կապուտակ աչերեն կախորժի, մերթ սևորականներեն. սերն, վոր առավոտուն սպիտակ գույնն կը սիրե, միջօրեյին թուխը կուզե և յերեկոյին կարմիրն կը փնտռե, այո, միշտ այն սերն ե, վոր այսոր գեր կուզե, վաղը նիհար. նա յե, վոր յերեկ հունարենն նախամեծար կը համարեր, և այսոր ֆրանսերենն կը նախապատվե։ Խեղճ յերիտասարդներն սիրո կամակատար և հլու գործիքներն են, վոր չեն գիտեր զոր ինչ կուզեն։ Ուստի վշտանալու չե, յեթե ձեր ապառնի փեսան պզտիկ քիթով ֆրանսերեն կուզե։ Պզտիկ քիթ ունիք արդեն. փառք աստուծո. ուրեմն կը մնա ձեզ մեկ կողմեն ֆրանսերեն սորվեցնել ձեր աղջկան և մյուս կողմեն հսկել, վոր որիորդին քիթը չմեծնա։ Միայն թե խոսկապի պայմանագիր մը կնքել հարկ ե ձեր փեսացույին հետ. զի մի որ մ'ալ յելնե և քիչ մը գերմաներենով, կամ մ'անգլիերեն և քիթ մ'ալ ավելի ուզե, վորովհետև

ինչպես ըսինք, սերն վորոշ և հաստատ սկզբունք չունի։ Իսկ յեթե փեսայուն դժկամակի կնքել այսպիսի պայմանագիր մը, դադրեցուր ուսումն ֆրանսերենի, զոր գուցե չուզեր ուրիշ յերիտասարդ մը. և ազատ ձգե քիթն ալ, վորուն պզտիկը թերևս հաճո չթվի յերրորդի մը։ Չմոռնամ հիշեցնելու նաև, թե Բերա քանի մը քարուկիր տուներ կառուցանելու ջանա և աղջկանդ համար տասն հազար վոսկվո գումար մը պատրաստելու հետամուտ յեղիր, վորովհետև սերն շատ անգամ տուն, խանութ կը փնտռե և աղջիկն տեսնելու չերթար բնավ. աղջիկ—տեսի տեղ՝ տուն—տեսի, խանութ—տեսի կը պտըտի. տուներն և խանութներն են, վոր շատ անգամ կը պսակվին և կը կարգվին... յերիտասարդ մը կը ճանչնամ ,վորու մայրն տիկին քարուկիր գինետուն մ'ե։

Այս տողերեն կը հետևի ուրեմն, թե սիրո օրակարգին մեջ անցած աղջիկն օժտված լինելու յե այն ամեն հանգամանքներով, վորք կրնան գոհացնել սիրո ամեն պահանջումները։ Մտքե հանելու չե նաև, թե արդի սերն աղջիկներեն կը պահանջեն ընդհանրապես ինչ վոր չունին անոնք։ Փորձը տեսաք նույնիսկ ձեր աղջկան վրա՝ վորմե ֆրանսերեն կուզվի. յեթե ֆրանսերեն գիտնար՝ «Վորքան աղեկ պիտի ըլլար, յեթե քիչ մը անգլիերեն խոսեր» պիտի առարկեր սերը. յեթե անգլիերեն խոսեր «Լեզվագիտությունն ինչ ընեմ, պիտի դիտողություն ըներ սերն, լավագույն եր քիչ մը դաշնակահարություն գիտնար». յեթե դաշնակ զարնել գիտնար՝ «Հասակը յեթե քիչ մ'ալ բարձր ըլլար, պիտի ըսեր սերն, ինձի համար դաշնակեն նախապատիվ եր». յեթե հասակն բարձր ըլլար՝ «Մահմուտ փաշայի կողմերը սանկ փոքրիկ խանութ մ'ալ չունի, պիտի հարցներ սերն»։ Կը տեսնեք, տիկին, թե այս բոլոր հարցմանց համապատասխանող վիճակի մեջ աղջիկ մ'ունենալն գրեթե անհնար ե։ Իմ խոնարհ կարծյացս համեմատ, աղջիկ մ'ունենալու յե վոչ թե խենդ ու շահավետ սերե մը պահաջելի տարօրինակ պայմաններն, այլ յուր եությունն պաշտպանելու, յուր պատիվը պահպանելու համար ոգտակար յեղած բաները։ Նախ ուսանելու յե յուր մայրենի լեզուն և յուր ազգային պատմությունն, հետո քիչ մը թվագիտություն և աշխարհագրություն, ապա բարոյագիտություն, ձեռագործ և առտնին տնտեսություն։ Անոնք ձեռք բերելեն յետքը կրնա և ազատ ե մշակել, ինչ վոր յուր կոչման և ճաշակին հա-

մաճայն կը գտնե։ Սակայն ցավալի յե, թե ամեն մայր այսպես չխորհիր, և այսպես չխորհելուն համար կը պատժվի։ Ֆրանսերեն, դաշնակ և պարն մեր աղջկանց ուսմանց ծրագիրն ու վկայականն կը կազմեն այսօր։ Մայրերն կը կարծեն, թե աղջիկ մը սիրվելու համար ֆրանսերեն, դաշնակ և պար գիտնալ հարկավոր ե. հայերեն լեզվով սիրվելու յեղանակն անցած ե, ըստ նոցա կարծյաց. ձեռագործով ամուսին գտնելն անհնար ե, և տարնին տնտեսությունն տանջանք, դժոխք ե աղջկանց համար, վոր իրենց ծաղիկ հասակին մեջ զվարճանալու, յերգելու և պարելու յեն յեղեր։

Յես այս կարծիքին չեմ, տիկին, սակայն չեմ ալ պնդեր, վոր աղջիկդ ֆրանսերեն չսորվի. մանավանդ կը փափաքիմ, վոր դուն ալ սորվիս ֆրանսերեն, վորովհետև քու քիթդ ալ պզտիկ ե և երիկ մ՚ալ դուն գտնես։ Բայց դուք ալ հավատացեք, թե խոհեմ և պատվավոր յերիտասարդ մը շատ չսիրեր այն աղջիկներն, վորոնց հանճարն անոնց կամ ձեռաց մեջն ե կամ վոտից վրա. և յես պետի սոսկայի իմ զավկիս անանկ ընկեր մ՚առնելե։

Կը կնքեմ նամակս, ազնիվ տիկին, վորովհետև թղթատարն մեկնելու վրա յե։ Սակայն կը խոստանամ այս նյութին վրա յերկար նամակ մը գրել ձեզ, յեթե անձնական զբաղումներըս ներեն։

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ ԱՌ ՈՐԻՈՐԴ ԿԱՄ ՏԻԿԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ներեցեք, նայելաշուք և համեստուհի Պատմություն, և թույլ տվեք ինձ, վոր քանի մը խոսք ըսեմ ձեզ։

Ապագա սերունդնե՛ր, դուք ալ խոնարհեցուցե՛ք ձեր ականջըն և յերկյուղածությամբ լվարուք ինձ, ինձ վոր ձեր նախահայրերեն մին ըլլալու պատիվն ունիմ, ինձ, վոր ձեր բարորությանը համար աշխատողներեն մին եմ։

Մի հուսար բնավ, վ՛ո ազնվաշուք Պատմություն, թե հավատարմաբար պիտի կարենաս արձանագրել այն անցքերն և դեպքերն, վոր կանցնին ներկա ժամանակիս մեջ։

Տեղեկություններ քաղելու համար անշուշտ լրագիրներու պիտի դիմես։

Սա լրագիրներուն չդիմելու համար հնարք մը, ի սեր աստուծո, ճար մը չե՞ս կրնար գտնել։

Շատ պիտի հոգնիս և պիտի ձանձրանաս և վոչինչ պիտի կրնաս ստուգել թերթերեն, վորոնց ամենուն ալ հավատարիմ աղբյուրը տարբեր կերպով կը ներկայե միևնույն դեպքը։ Վորու՞ն պիտի հավատաս, վորու՞ն չպիտի հավատաս։

Ահ, ապագա սերունդներ, վստահ եմ, վոր աղեկ համարում պիտի չունենաք ձեր նախահարց վրա, վորոց, կարծեմ ըսի, մին ըլլալու պատիվը ունիմ, թեև չեմ կարծեր, թե դուք ալ ձեր նախահայրերուն չհավնելու չափ աղեկ ըլլաք, թերևս պիտի փընտռեք զմեզ, ինչպես մենք մեր նախահայրերը։

Վ՛ո Պատմություն, ի բաց առյալ իրերն ճշտությամբ ավանդող գրիչներն, վոր խիստ սակավաթիվ են, բազում գրիչներ դեպքերն խեղաթյուրելն բավական չհամարելով, կը հանդգնին իրենց ստությանց ներքև գրել. Այս տողերն պատմության կավանդենք... քող պատմությունն դատե... քող ապագան յուր վճիռը տա։

Ո՛հ, որիորդ կամ տիկին Պատմություն, մի խաբվիք այս սուտակասպաններու շողոքորթությունեն, կերդվընցնեմ զձեզ,

մի զգաք շողոքորթվելու հաճույքը, և դեպքերն իմաստասիրելով դատեցեք անաչառաբար։

Հասարակաց կարծիք, ազգին շահ, արդարություն և ուրիշ գեղեցիկ բառերու ականջ մի կախեք. մեր Ձայն բազմաց ձայն Աստուծոյին ալ մի հավատաք, վորովհետև աչքովս տեսա, վոր մեր մեջ յերկու հոգի կարող են Աստուծո ձայն մը կազմելու, ինչպես անհատ մը շատ խոկ և ժողովուրդ հանդիսանալու համար։

Ի տեսություն։

Ապագա սերունդներ, ընդունեցեք իմ, ձեր նախահարց միության որհնությունները։

ԱՌ ՏԻԿԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սիրելի տիկին.

Կը հուսամ թե ժամանակին ստացած եք առաջին թուղթս։

Վորոշած եմ ձեզ գրել շարունակ այն ամեն դեպքերու վրա, վոր ձեզ միայն կը վերաբերին, հնազանդելով միշտ այն հրամանին, վորով կը պատվիրվի ինձ և քեզ անձերն իրենց անունով չկոչել։

Չեմ հասկնար Իսոկրատն[38]) յերբ կը պոռա. «δοζα Χρηματων οῦΧ ὠνητη»։ Կարծեմ չհասկցաք՝ Իսոկրատին այս խոսքը։ Իմ ուզածս ալ այս էր։ Գոհ և ուրախ եմ, սիրելի տիկին, վոր հունարեն չեք հասկնար և սուխթ կընծայեք ինձ Իսոկրատեն այդ վճիռն հայերենի թարգմանելով հաճույք զգալու։ Մեր գրագետք, մեծ մասամբ իրենց գրվածոց գլուխն յեվրոպական լեզուներե պարբերություններ կը դնեն,—և այս յերևակայել կուտա ինձ շալվար հագած մարդու մը գլուխը յեվրոպական յերկար գլխարկ—և շատ անգամ չեն թարգմաներ զանոնք, զի մի գուցե ընթերցողք հասկընան, և ընթերցողք կարծելով, թե գրողն գաղտնի պահել կուզե իրենցմե այդ պարբերության իմաստն, հետաքրքիր չեն ըլլար հասկնալու։

Յես ալ յերբ գրագետի մը կոտորակ՝ պարտավոր եմ հետևիլ մինչև աստիճան մը՝ այս նորության, կամ, ավելի ճիշտը խոսելով՝ հնության։ Ուրեմն, սիրելի տիկին, այս Իսոկրատ ըսված պարոնը, կըսե, թե փառքը ստակով չգնվիր, սակայն պատվելի աթենացին կը մոռնա մեզ ըսել, թե ինչ բանով կըստացվի այն, վորպեսզի մենք ալ մեյ մեկ կտոր առնեյինք։ Յեթե Իսոկրատին նկատմամբ գոհացուցիչ տեղեկություններ առած չըլլայի, անմիջապես պիտի վճռեյի, թե այս անձն կամ Եջմիածին յերթալու կը պատրաստվի, կամ հարուստներուն շողոքորթության սպաս արկանելու պետք ունի, կամ Տփղիս դերասանուհի մը տանելու դիտավորություն ունի, կամ յուր բաժանորդներուն ալ չկորսնցնելու համար կեղծելու կարոտություն

ունի, կամ յեպիսկոպոս ձեռնադրվելու փափաք ունի, կամ վաճառականի մը հովանավորության ներքև ամեն ստություն խոսելու արտոնություն ունի, կամ յերեսփոխանական աթոռի մը վրա բազմելու իղձ ունի, կամ վոտանավոր մը գրելով մեկե մ'երկու յերեք վոսկի փրցնելու նպատակ ունի, կամ յուր թեթևությունն հարգող կրոնավորի մը համակրությունն ունի, կամ հարուստի մ'աղջկան հետ նշանվելու հույս ունի, կամ... կամ... այս ամենն միանգամայն ունի, բայց անվանի ատենախոսին նկատմամբ ինձ տրված նպաստավոր վկայությունները սա համոզման կածեն զիս, թե Իսոկրատին ապրած կամ մեռած դարուն մեջ փառքն ստակով չեր գնվեր։ Յերջանիկդ Իսոկրատ, արեգ սիրեմ Իսոկրատ, ինչ գեղեցիկ և սքանչելի դար ե այն, ուր փառքն ստակով ծախու չառնվիր։ Իսոկրատ, այն դարուն մեջ, ուր մենք մեռնելու կաշխատինք, ամեն բան դրամով կը գնվի, փառաց առևտուրի համար հատկապես խանութներ շինված են և ազատ ես այն խանութներն յերթալով հարյուր տրամ, կես օխա փառք առնել ու յերթալ։

Պանիրի պես փառքին ալ աղեկ կամ գեշ տեսակը կա, սակայն աղեկ փառքը, բուն փառքը հազվագյուտ ե։ Պիտի ըսես, թե ստակով գնված փառաց կյանքն կարճատև ե, ինչ ֆաս ունի, բավական ե, վոր ներկային մեջ մեր բարորության նպաստե, պատանքն հագնելեն վերջը յեկող փառքն ինչ կարժե. անմահություն գերեզմանեն անդին կսկսի յեղեր... հա, հա, հա... մեռնելեն յետքը անմահանալ... ինչ հակասություն, ինչ հիմարություն... ասանկ խոսքերու կարևորություն տվողներն լավ կընեն, յեթե գյուղ մը քաշվին և խրճիթի մը մեջ ճգնին, այսպիսյաց համար չե յերկրիս արքայությունը։ Այո, սիրելի Իսոկրատ. ստակ չունեցողն չկրնար փառք ունենալ, հարուստ չեղողի մը կենաց համար վոչ թե միայն բաժակ չառաջարկվիր, այլ գինիին վրա կտոր մը մեզե իսկ չուտվիր։ Զես կարծեր. մտիկ ըրե և հավատա։ Դեռ վերջերս խնջույք մը տեղի ունեցավ։ Այս խնջույքը կը կազմեյին հարուստ վաճառականներ և սեղանավորներ, վորք միմյանց կենաց յերկարության համար հարյուր հիսունի չափ բաժակներ պարպեցին։ Զգիտեմ այս մարդիկ գինիով գինովցած, փառաց արբշիռ,—վորովհետև գինիին վրա ջուրի տեղ գովեստներ կը պարպեյին— ինչպես կրցին առանց

գլտորելու դառնալ իրենց բնակարանն։ Ի՞նչ չարիք կը հասներ, յեթե այս հարյուր հիսուն բաժակներեն մին դաստիարակի մը, վիպասանի մը, բանաստեղծի մը, գրագետի մը կամ խմբագրի մը յերկարությանը համար խմվեր. կախվելու արժանի մարդիկ եյին ասոնք, ինչ ե ասոնց հանցանքն, պիտի հարցնես բնականաբար։ Ասոնց հանցանքն այն ե, վոր, սիրելի Իսոկրատ, վոսկի չունեին, և վոսկի չունեցողն ատանկ բարձր հացկերույթներու մեջ հիշվելու արժանի չե։ Փառքն վոսկիով կը գնվի, սիրելիս, և փառք ստանալեն յետքը, վոսկի վաստկելն շատ դյուրին ե։ Նույն իսկ յես, յեթե քիչ մը հետամուտ ըլլայի փառաց՝ մեկ օրվան մեջ կը թունավորվեյի, կը հիվանդանայի, կը մեռնեյի, կը թաղվեյի, հարություն կառնեյի, կանմահանայի, կաստվածանայի, կը գերաստվածանայի և գերաստվածանալես յետքը գիտե՞ս ինչ կընեյի, արդո Իսոկրատ, յերկինք և յերկիր չեյի ըներ, մարդալ չեյի ստեղծեր, գործս քալեցնելեն յետքը, կարևորություն չեյի տար լուսինին ալ, այլ նախ և առաջ յերկու մատներովս քու աչքերդ կը փորեյի, բերանդ քիչ մը մեղր կը քսեյի, յետեվես յեկուր կըսեյի և տասը տարի դքեզ կը պտըտցնեյի առանց տեղ մը տանելու, քեզի համար զոհվելու խոսք կուտայի, և դքեզ կը մորթեյի, դաստիարակության բնավ հոգ չեյի տաներ, վանական և տնտեսական գործերն[39]) վատթարագույն վիճակի մը կը հասնեյին իմ անհոգությամբս, վողջամտաց դեմ, վոր թվով քիչ են ընդհանրապես, միամիտ հարուստներու և պարզամիտ ժողովըրդյան զայրույթն և ցասումն կը գրգռեյի, յուր հմտությամբն և յուր գրական յերկերովը ազգին գրականությունն ծաղկեցունող, ազգին պարծանքն յեղող խմբագրի մը թերթին ընկալագիրն պատռել կուտայի թեթևի մը, արդարությունն դեմս հանողներն իբրև վատ ազգատյաց և գազանաբարո մարդիկ կը ներկայացնեյի զիս շողոքորթող և ինձմե շողոքորթվող հարուստներուն, լրագրաց գրել կուտայի, թե հակառակորդներս և թշնամիներս թույլ չեն տար ինձ գործել, կը համարձակեյի նույնիսկ ամենուն ծանոթ անաչառ, արդարախոս դաստիարակի մը դիակը ձաղկել տալ, այս ամենը կընեյի և դարձյալ բարի, առաքինի, ներողամիտ, գթած, անկեղծ, աննենգ, աստվածատիպ և այլն կը հորջորջվեյի և ամենքն ի բաց առյալ ճշմարիտ ազգասերներն, վոչ միամիտներն և այն անձերն, վոր անկախ են և կարող են ապրիլ

տանց հայուստներու քննելու— յերկինք կը պագնեյին ինձի, ըստ վորում յերկրիս վրա ալ գործ չեյի ունենար։ Այս ամենը կընեյի, սակայն յեկու տես, վոր կազմվածքս տրամադրություն և հարմարություն չունի այս տեսակ անկեղծության։ Թերևս հարցնես ինձ, թե ով բերավ իրեն այս վիճակին։ Կը պատասխանեմ՝ թե Լրագիրք վոմանք՝ վոր իրենց սեղանն կը ճոխացնեն հայուստին սեղանեն ինկած փշրանքներով։ Միշտ ըսած եմ իրենց, թե ձեր չափազանց և անիրավ գովեստներով կապականեյի անձերն և գործերն։ Ո՞վ մտիկ ըրած ունի. գովեստը հակերով վաճառեցին և այնքան շատ վաճառեցին, վոր գովեստի գինը շատ ինկած է այսոր։ Մյուս կողմեն, յուրաքանչյուր վոք արժանյացը համեմատ գովեստեն կը վիրավորվի, խոհարարը կուզե, վոր Պեղճյանի[40]) քով թաղվի, մեղքերու հավաքածույն հայուստ սրբոց դասը կարգվիլ կուզե, և այս իրարանցումին մեջ ձայն ունիս մարե՛, յեթե սիրտ ունիս մաշե՛։ Լավագույն ճամբան, վոր առողջապահական ալ է, ընավ միտք չես հոգնեցներ, սիրտ չես հատցըներ, մեկդի կը քաշվիս, իբերն ի հեռուստ կը դիտես և կարձանագրես։ Դեռ յերեկ, սիրելի Իսոկրատ, տեսա խմբագիր մը, վոր հայուստին յետևեն կերթար՝ ուսն առած յուր շողոքորթության կողովը։ Արդեն ամեն մեծատուն սկսած է խոհարարի, մատակարարի կամ սպասավորի պես մեյ մեկ խմբագիր կամ դասատու վարձել ամսականով։ Թո՛ղ հրճվի այն անձն, վոր խարազան ի ձեռին հալածեց և կը հալածե դեռ դասատուներն և գրագետներն։ Գալով դասատվաց և խմբագրաց՝ տարակույս չկա, թե իրաց այս վիճակին մեջ չեն կարող ազգին ծառայություններ մատուցանել. ուստի կամ քիչ մը վեր վերնալու են, կամ բոլորովին վերնալու յեն։

Ի՞նչ կարծիք ունիս մեր ազգային վրա։ Կը հուսա՛ս, վոր մարդ ըլլանք որ մը։ Մեր նախահարց արժանի թոռնե՛ր ենք։ Մեր թոռանց արժանի նախահայրե՛ք ենք։ Կը հավնի՞ք այն ուղղության, վորուն կը հետևինք ազգային գործոց մեջ։ Կը խընդա՞ս քիչ մը, յերբ տեսնես մեր իրարու գլուխ պատռելը վիճաբանությամբ և յերբեմն ալ փաստով։ Վորո՞ւ իրավունք կուտաս,

վորո՞ւ իրավունք չես տար. կարծեմ և վոչ մեկուն, յեթե եք՞ վորպես պարտիք ըլլալ. ի քեզ, տիկին, միայն հուսացած ենք։ Ամեն բան քեզի կը հանձնեն ամեն որ, անոնք, վոր չկրնալով իրենց կարծյաց հաղթությունը տեսնել՝ կը պոռան հուսաբեկ. «Պատմությունը թո՛ղ դատե»։ Իսկ անոնք, վոր մեծամասնություն կը կազմեն և իրենց բաղձանացը համաձայն կը կարգադրեն ամեն բան, վոչ միայն ընավ յերկյուղ չունին քեզմե, այլ նաև յերբեմն կը ծաղրեն ալ զքեզ. ըսելով իրենց հակառակորդաց. «Դուք ալ պատմության հանձնեցեք ձեր դատը» Իսկ դու, Տիկին, վոր անաչառաբար կը դատես մարդերը, չեմ կարծեր, վոր իզմե և իմ ժամանորդներես ավելի աղեկ մարդիկ կարենաս գտնել։ Այս է իմ հավատքս և հավատքիս մեջ սխալած չեմ ցարդ։ Ուստի ներեցե՛ք ինձ, յերբեմն յերբեմն գրել ձեզ մեր ազգային գործոց մասին և իմ խոնարհ կարծիքներս հայտնել անոնց վրա։

Այս անգամ յեթե կը հաճիս, բանաստեղծներե սկսինք։

Ցեվ մեծ բանաստեղծին [41]) գալուստն եր այսպես։ Կուզակոր, յեկավ։

Տեսա անոր աստղը հարեվելս և գնացի հարցնել.

— Ո՞ւր է, վոր յեկավ հայոց բանաստեղծը։

— Այսոր Բերա կը նախաճաշե։

Բերա կը վազեմ, վորպեսզի տեսնեմ զինքն ու վոսկի և կնդրուկ և զմուռս մատուցանեմ իրեն։

— Հիմա ճաշելու գնաց Վոսփոր[42])։

Վոսփոր կը ճանապարհորդեմ և կը հարցնեմ.

— Ո՞ւր է, վոր կը ճաշե։

— Իշխանաց կղզին[43]) պիտի ընթրե այսոր։

Հետևյալ որն շոգենավ կը մտնեմ, կղզին կերթամ ու կը հարցնեմ միշտ.

— Ո՞ւր է, վոր կուտե և կը խմե։

— Քաղկեդոն[44]) անցավ ճաշելու։

— Կերակուր ուտելու համար յեկավ մայրաքաղաքս։

— Վո՛չ, բայց հայուստները թող չեն տար զինքը։

Քաղկեդոն կանցնիմ և կը հարցնեմ շարունակ.

— Ո՞ւր է, վոր չեկավ։

— Հիմա Բերա գնաց, կերակուրի հրավիրված է։ Վաղը կը մեկնի կոր... մեկնեցավ։

Չերկվեցա, տիկին, բանաստեղծը տեսնելու բախտեն, սակայն ուրախացա տեսնելով, թե ազգային մեծատունները կամաց կամաց կը վարժվին քերթողները հյուրասիրելու և կշտացնելու, թեև տեղական բանաստեղծներն անոթի չեն։ Կը ցավիմ միայն, թե չկրցի դասատուներե, հեղինակներե և խմբագիրներե շրջապատված սեղան մը տալ և ցույց տալ իրեն հոն, որպես ի ջինջ հայելվոջ, ազգային կենաց պատկերը։ Կը հուսամ սակայն, որ յերբ որ մը հաճի մայրաքաղաքս գալ — այս անգամ յեկած չը համարվիր — պիտի բարեհաճի հագուրդ տալ մեր փափաքանաց։ Այս անգամ մեծ բանաստեղծն հագուրդ տվավ միայն յուր որովայնին, անոթի պահելով մեր փափաքներն և մեկնեցավ ուսումնասիրելով ազգային խոհարարները։

Մեկնեցավ փուշերե և գափնիներե հյուսված պսակով մը։

Յերանյալ է բանաստեղծն, որուն պսակին մեջ քիչ մը գափնի կը գտնվի... մեր տեղական բանաստեղծներն պատսե պըսակ... կուտեն, որպեսզի լցցի բանն թե մարգարե ի գավառի յուրում պատիվ ոչ ունի[45]) բայց տեղական բանաստեղծներն չեն միայն, որ այս բանջարեղեն պսակաց կարժանանան, այլ ամեն անոնք, որ սկզբունքի մը ծառայելու հիմար սկզբունքն ունին, իրենց խղճին ձայնին անսալու տկարությունն ունին։ Զգուշացիր, ով տիկին, խիղճ ունենալե, պաշտոնանկ կընեն զքեզ. որպես ըրած են գյուղի մ'առաջնորդը, որ վերջին կաթողիկոսական ընտրության մեջ ձեռնպահ մնացած եր։ Պաշտոնանկ ըլլալեն յետքը՝ չըլլա որ խոսիս, այսինքն ապտակ առնելե հետո չըլլա որ լաս, յեթե չես ուզեր որ դատափետվիս լրագրաց մեջ։ Գիտեք, ով տիկին, յես ալ ձեռնպահ մնացած եմ կաթողիկոսական վերջին ընտրության[46]) մեջ և ցարդ ոչինչ խոսած եմ այդ մասին, որովհետև մայրաքաղաքես տարակայությանս պատճառավ անծանոթ եյի խնդրույն մանրամասն պարագաներուն։ Այսօր ես չպիտի խոսիմ, թե ինչ կը նշանակե յերկու ընտրելի[47]) ցույց տալը, թե օրենքի մը դեմ բողոքելն այդ օրենքին գոյությունն և գործադրության մեջ ըլլալն կը հաստատե, թե, որպես կը պնդեն նույն իսկ հակամակարյանք[48]) Մատթեոս[49]) և Գեորգ կաթողիկոսներն[50]) ևս ընտրելիներն եյին անոր, որուն դեմ կը բողոքենք այսօր, թե ինչ, յեթե ոչ ազգին ընդհանրության հավանությունն, կը նշանակեյին այն պաշտոնական և մասնավոր շնորհավորական գիրերն, զորս թըղ-

թարերն և հեռագիրն ի ծագաց աշխարհի կը բերեր Զմյուռնիո գերապատիվ առաջնորդին[51]) գիրկը կը լեցներ. միայն պիտի ըսեմ, թե մեծ և աններելի հանցանք մը գործած է ազգին ներկայացուցիչ ժողովն ընտրության մեջ բացառաբար մակրայն գնելով, մակրայ մ'որ մակրայներուն սարսափելին է և կը նշանակե «Սխալ գործել զգալով և զայն պաշտոնապես հայտարարելով հանդերձ».

Ժողովուրդը բնականաբար կը հարցնե, ինչու բացառական և ոչ ուղղական, և գոհացուցիչ պատասխան մը չկրնալով գտնել կը հակի ուղղականին[54]), որուն ի նպաստ ցույցեր կընե յերբ առիթն ներկայանա ու չներկայանա իսկ, ինչպես որ ըրավ յերկարաձիգ ծափահարությամբ հայկական կրթարանի մրցանակաց բաշխման հանդեսին մեջ, յերբ քարոզիչ մը գերապատիվի մ'ատենաբանության մեկ պարբերությունն ընդլայնել ուզելով հիշեց կաթողիկոսական ընտրության առթիվ յուր կրած հալածանքը։ Գոնե բացառական կաթողիկոս ընտրելեն յետքը անոր հիշատակության մեջ փոփոխություն մը մուծանեյին և սա բանաձևն ընդունեյին. «Յեվս առավել զբացառիկ հայրապետն բացառական հայոց» որպեսզի խիղճերը քիչ մը հանդարտեյին խնդիրը փակվեր։ Առեք ձեզի բացառական կաթողիկոս մ'ըսել և քթի տակեն խնդալ ոչ ազգասիրության և ոչ ալ դիվանագիտության գործ է։ Այս բացառությանց վախճանն յերբ պիտի տեսնենք։ Մեր թոռներն իսկ չպիտի կրնան տեսնել զայն։ Քառասուն հազար ոսկվո պարտքով ազգին ներկայացող վանք մը[53]) կարտոնենք, որ ուզածին չափ պարտք ընե նորեն։ Այդ փոխառության սահման դնելն վանուց վարկին վնասաբեր է յեղեր, գործադրությունն այն իրավանց, զոր ազգն ունի հսկելու վանուց գործառնությանց վրա, կը սղմե յեղեր Միաբանությունն, Յերուսաղեմ յերթալու յե յեղեր այդ վանուց վրա կատարյալ գաղափար կազմելու համար... ուխտավորներն յերբեմն յերբեմն քննելու յեն յեղեր վանուց հաշիվները... զորն ասեմ, զորն խոստովանիմ։ Յեթե նույն որն իբրև ունկնդիր գտնված ըլլայի յերեսփոխանական ժողովո մեջ, պիտի առաջարկեյի, որ բացառիկ յերեսփոխան մ'ընդունեյին գեթ քանի մը վայրկենի համար և համբերություն ունենային ինձի մտիկ ընելու քիչ մը։ Կընդու-

նային։ Այո, յեթե կաթողիկոս ըլլայի։ Չեյին ընդունիր, բայց յեթե ընդունեյին, ցանկեն ներս կը ցատկեյի և կըսեյի.

«Տյարք և տիկնայք,

Վոչ ուխտավոր ըլլալու և վոչ ալ Յերուսաղեմ տեսնելու հարկ կա, վորպեսզի ազգն գիտնա, թե ինչ յեղանակավ կարող է հսկել այդ վանուց հաշվոց վրա։

Կառաջարկեմ.

Վանուց միաբանությունն, յեթե վոչ ամեն ամիս, գեթ յերեք ամիսը անգամ մը պարտավոր է հոս կեդրոնին ղրկել,

Ա. Սնտուկին հաշվույն մեկ օրինակն ստորագրյալ գանձապետեն, համարակալեն և ամեն. վանահայրեն։ Ավելի օրինավոր է, յեթե կարելի յե, ծախքերն հաստատող թուղթերն ևս միասին ղրկել։

Բ. Սնտուկին ամփոփումն, այն է այլ և այլ ծախուց—թղթատան, կարասիքի, ալյուրի, փոխադրության և այլն—ամբողջ գումարներն աղյուսակի մը մեջ ներկայացնող թուղթ մը։

Գ. Մթերատետրին մեկ օրինակն, վորո մեջ ցույց պիտի տրվի, թե յերեք ամսո միջոցին մեջ ինչ մտած է մթերանոց, ինչ սպառած է և հետևապես ինչ մնացած է։

Դ. Այս տետրակին մեջ կրնա գրվիլ նաև կարասյաց, գործիքներու և այլն մուտքն ու յելքն։

Մի հավատաք, յեթե ըսեն ձեզ, թե դժվար է այս յեղանակին գործադրությունը։ Առ առավելն յերկու ավուր գործ է, յեթե կանոնավոր տումար կը բռնվի հոն։

Այս յեղանակավ ազգն կարող է տեսնել վանքին ամենօրյա գործողությունները և հարկ յեղած ժամանակն բացատրություն պահանջել։ Կեդրոնն, յեթե արժան դատե, կրնա ամեն տարի քննիչ մ'ալ ղրկել։

Այս յեղանակին մեջ վանուց վարկին վնասաբեր կետ մը կա։ Կը փափաքեյի տեսնել զայն։

Պատահական ծախուց համար վարկ մը տալ վանուց և արտոնել զայն, վոր, յեթե բավական չհամարի այն վարկն, նոր վարկ մ'ալ պահանջե կեդրոնեն հեռագրով յեթե նեղն է. իսկ յեթե հեռագիրն ալ դանդաղաշարժ թվի իրեն՝ ընել այն փոխառությունն և զայն կեդրոնին ծանուցանել։

Մենք կը կարծենք, թե վանքին վարկն ու պատիվն այն

ատեն ավելի կը բարձրանա, յերբ կեդրոնին հսկողության ներքև է վանքը։

Բնականաբար այս առաջարկությունները կը ներկայացնեմ ի գործադրություն, յեթե վանքն ազգին է. իսկ յեթե ազգին չէ, շարունակելու յե հիմակվան ընթացքը»։

Կըսեմ և ցանկեն դուրս կը նետեմ ինքզինքս։

Չեմ պնդեր, վորովհետև քաջ գիտեմ, թե յերեսփոխանաց մեջ մաս մը կա, վոր կանխավ վորոշած է հերքել ինչ առաջարկություն վոր ներկայանա իրեն հակառակ կուսակցութենե, գիտությամբ հակառակասիրի նկարագիրն կզգենու. և յես այս վտանգուկ ու կարճատև կենաց մեջ հիմարություն կը համարիմ խոսք հասկցնելու ջանալ այն անձին, վոր նախապես պատվույն վրա յերդում ըրած է խոսք չհասկնալու համար։ Միայն ազգասիրական պարտք կը համարիմ հայտնել, թե Ազգային ժողովն[54]) զգուշանա կարծելե, թե յուր ամեն վորոշումներն ծափահարությամբ կընդունվին ժողովրդյան խելահաս մասեն, վոր սկսած է խըրտիլ և ստիպված է յուր դատը պաշտպանել այն միջոցներով, վոր կեդրոնին իրավասությունն վտանգելու հանգամանքըն ունին դժբախտաբար։ Խիզանու[55]) Ուսումնասիրաց ընկերությունն ևս, վորպես կը լսենք, վորոշած է Կայսերական բարեխընամ կառավարության դիմել պահպանելու համար յուր գոյությունն, վոր մասնավորաց անձնանվեր ջանյուք և զոհողությամբ կը շարունակվի տասն տարիներե հետե և զոր կեդրոնն կը փորձե խափանել։ Այդ ընկերության հաշիվներն աչքե անցունողն կը տեսնե, թե ընկերությունն շռայլությամբ վարված չե բնավ, շաբաթը քսան և հինգ դահեկան միայն վճարած է դրագիր—համարակալի մը, ամիսը վաթսուն դահեկան վճարած է դրասենյակի վարձք։ Սուտ է հրատարակել թե դասատվաց տասնական դահեկան ամսական տրված է։ Յեթե մեր ընկերությանց հասույթի ազդյուրներն խղճի մտոք քննենք՝ դյուրավ կրնանք հասկընալ, թե ինչու համար քառասուն վոսկվո հասույթեն քսան վոսկի տրված է դասատվաց։ Ներկայացում մը կը տրվի, վորո քառասուն վոսկվո հասույթին հինգը թատրոնի, տասներկուքը դերասանաց, յերեքն տպագրական ծախուց, ցրվիչին, թուղթին, և թատրոնի ուրիշ ծախուց համար վճարվի՝ բնականաբար քսան վոսկի կը մնա ընկերության։ Այս ամենը, գիտնալով հանդերձ

այդ ընկերության խափանմանը աշխատելն բնական է, որ զայրացնե վողջամիտ դասն և հարկադրե զայն չեզոքացնելու աշխատիլ կեդրոնին ջանքերն նույնիսկ այն միջոցներով, որ հաճելի չեն թվիր կեդրոնին։ Մաղթենք ուրեմն, որ ապագային մեջ չկրկնվին նմանօրինակ անպատեհություններ և կեդրոնն հաճի անուշ տեղը կապել գոնե այն խնդիրներն, որոց մեջ չափազանց տաք արյամբ վարված է։

Մնաք բարյավ, վո՛ տիկին Պատմություն, աջդ կը համբուրեմ սիրով, հատկապես կաղաչեմ, որ հաճիք ամենախորին հարգանացս հավաստիքն մատուցանել տիկին Անկողմնակալության։

Ուրիշները լավ թող, մենք խնդանք, տիկին, խնդանք մինչև որ արտասուք հոսեն մեր աչքերեն։ Նպատակը կարդարացնե միջոցը։ Վո՞չ ապաքեն ժպիտն արտասվաց պզտիկ քույրն է, որպես կատակերգությունն ողբերգության։ Կարդացած եք անշուշտ Մոլիեռ[56]) Սերը բժիշկ է կատակերգությունն, այսու ամենայնիվ ներեցեք ինձ անոր առաջին տեսարանն ամփոփել հոս։ «Հայրն յուր աղջկան մելամաղձոտությունը փարատելու նպատակավ կը փափաքի անոր տխրության պատճառներն իմանալ. ուստի կը դիմե յուր յեղբորը դստեր, դրացուհվույն և բարեկամաց խորհուրդ հարցնելու համար անոնցմե։ Բարեկամներեն մին՝ որ ակնավաճառ է՝ խորհուրդ կուտա, թե աղջկան մը տխրությունը փարատելու միակ միջոցն է անոր ադամանդ և գոհար գնել։ Մյուսն՝ որ գորգ կը վաճառե՝ կը խրատե, որ աղջկանը սենյակը կանաչագույն գորգերով զարդարե, որպեսզի աղջկան սիրտը բացվի և մոռնա ցավերը։ Դրացուհին՝ որ կուզե կարգվիլ յերիտասարդի մը հետ, որ մասնավոր սեր մը կը հայտնե ծանուցյալ մելամաղձոտ աղջկան համար՝ կը հորդորե, որ աղջիկն անմիջապես կարգե ուրիշ յերիտասարդի մը հետ, որ կնության ուզած եր զայն։ Յեղբորը դուստրը՝ որ նպատակ ունի ժառանգել հորեղբորն հարստությունը՝ կը հակառակի ամուսնության և համոզել կը ջանա հորեղբայրն, որ վանք մը դնե յուր աղջիկն։ Հայրն ուշադրությամբ լսելե հետո այս խրատներուն՝ կըսե. «Թեև ձեր խրատները շատ լավ են, հավանեցեք յեթե կը հաճիք, որ անոնց և վոչ մեկուն հետևիմ»։ Այս տեսարանը կը հիշեմ ամեն անգամ, որ ազգային կենսական խըն-

դիր մը կը ծագի և այլ և այլ անհեթեթ կարծիքներ յերևան կուգան։ Զորս, հինգ խավարադեմներ, մին՝ հագուրդ տալու համար յուր փառասիրության, մյուսն՝ գոհացում տալու համար յուր անձնական կրից, մեկը՝ ժողովրդականություն ձեռք բերելու համար, մեկալը՝ աթոռի վրա բազմելու առաջադրությամբ՝ արդեն բազմողը հրաժարեցնելու համար, խաղալիկ ըրած են կրոնքըն իրենց ձեռաց մեջ և կը տանին զայն ուր որ կամին։ Կրոնքը կը հակառակի, կըսեն, փոխադրության խնդրույն, այսու ամենայնիվ կաշխատինք կրոնքին հավանությունն առնելու յեթե, յեթե... մեր պայմաններն ընդունին։ Չեն գիտեր, թե այդ յեղանակավ կաշառակերության մուր կը քսեն այն կրոնքին, որուն պաշտպանները կը ձևանան, և դայթակղության որոմն կը ցանեն ժողովրդյան մեջ։ Կարնեցիք ալ վորոշած են, յեթե ստույգ է մեր առած տեղեկությունները, գրել հոս, որ Կարնո առաջնորդությունն ընդունելու կանխավ հավանություն տված ընտրելյաց ցանկ մը ղրկվի իրենց։ Իրավունք ունին, բավական ժամանակե հետե հարս կընտրեն և կը մերժվին։

— Որիորդ, կը հաճի՞ք ձեր ձեռքը մեզի տալ։

— Տասը տարի առաջ խոստացած եմ զայն Ռումանիո հայոց։

— Ինչո՞ւ չեք տար ուրեմն անոնց։

— Թրաքումայի խնդիրն կարգադրված չէ դեռ։

— Դուք ուրիշներու ալ խոստացած եք յերբեմն բայց...

— Այո՛, Թրաքումայի խնդիրը միշտ...

Հովիվ մ'որ կորսված հայերը գտնելու պիտի յերթա և ինքըն ալ անոնց հետ պիտի կորսվի։

Ուրիշ որիորդի մը դիմենք։

— Հրամմեցե՛ք, որիորդ։

— Դուրս, դո՛ւրս, դուրս...

— Ինչո՞ւ կը վռնտեք։

— Դուրս...

— Միթե հանցա՞նք է որ...

— Դուրս... հիմա ծեծել կուտամ հա՛... անզգամներ...

— Ի՞նչ ըրինք...

— Կրկնամուսնություն հե է՞...

— Ի՞նչ կրկնամուսնություն...

— Դուք արդեն ունիք ձեր հարսն, որ այժմ աստվածաբանություն դաս կուտա Եջմիածին[57]... յերկու կնիկ առնել չըներեր մեր կրոնքը:

(Դարձյալ կրոնքը խաղալիկ):

Յեվ այս հարսն՝ որ ռուպլիներ շարելու վարժված, յերկու բառ շարելու անկարող է վոչ բերնով և վոչ մաքով, Եջմիածնեն յեկեր է հոս մեզի կրոնագիտության դաս տալու[58]:

Ասա ինձ, վո կեղրոն, ինչ տեսակ միջնորդություն է այս. սա հարսերեն մին առեք կըսես և չես տար, յերբ առնել ուզեն:

Ի՞նչպես մեկնենք ձեր այս տկարությունը: Բայց ինչ վոր ըսենք, անօգուտ է, իրերը կը հետևին իրենց բնական ընթացքին: Խմբագիր մ'որպես յերեսփոխան մը բերան բանալու չէ, յեթե առնվազն չունի հիսուն հազար վոսկի: Ականջը խոսի Մեծ. Մինաս եփենտի Քափամաճյանին[59]: Քանի մ'որ առաջ պատիվ ունեցա տեսնվելու իրեն հետ: Աղնվացնելու յէ, բարձրացնելու յէ, ըսավ, խմբագրական ասպարեզը և քիչ մ'ալ մեղադրեց այն խմբագիրներն, վոր իրենց անվայել ընթացքով ստորնացուցին և մուրացկանության վիճակին բերին հասուցին խմբագրությունն: Իրավունք ունի նմա. քաջալերեցի զինքն մխիթարական խոսքերով և մեկնեցավ, գնաց յուր Պասկերը[60] գրելու: Այո, Կիրակնօրյա Հայրենիքի խմբագիրն սկսած է հրատարակել շաբաթական թերթ մը զավեշտական: Պասկեր անուն, վորո մեկ յերկու թիվերն տեսնելու պատիվը ունեցանք: Պասկերի խմբագիրն ծանոթ է արդեն մերազնեյից յուր այնքան լուրջ, ծանր, տրամաբանական և շրջահայաց տեսություններով, վորքան նուրբ, զավեշտական և ծիծաղաշարժ հոդվածներով: Այն գրական ծառայությունները՝ վորովք իբր քառորդ դարե հետե սպասավորած է ազգին՝ իրավունք տված են իրեն ստանալու ազգին քաջալերության մենաշնորհը: Հարկ է խրախուսել և քաջալերել Պասկերն: Հաջողություն կը մաղթենք մեր պաշտոնակցին ինչպես նաև հարատևություն յուր թերթին և սկզբանց, վորովհետև այնպիսի ժամանակի մը մեջ ուր կապրինք, յերկար ատեն մեկ սկզբունքի ծառայելը, իբրև միօրինակություն ձանձրույթ ալ սկսած է խմբագրաց վոմանց: Տեսե՛ք, Արեւելքի անպատասխանատու յերեսը—յերըորդը—Կայծռիկ, Ա.Ճռաչաղ, Ն. Վ. Թ. Հրանտ[61] ի՞նչ գեղեցիկ և փայլուն լեզվով խոսելու հետ կը

խոսին: Ի՞նչպես կծու ակնարկություններ կընեն իրարու յեվրոպական վոճով.—յես չկրցա յեվրոպական վոճով հայհոյել սորվիլ.—Դիտելի յէ սակայն թե այդ կծու ակնարկություններն յերբեմն կանցնին պատասխանատու յերեսին վերջին սյունյակն ալ, վոր պատասխանատու սյունակ է: Բայց ո՞վ է մեր մեջ պատասխանատուն, ունի՞նք անանկ մարմին մը, ունեցա՞ծ ենք անցյալին մեջ, ունենա՞նք պիտի ապագային մեջ: Բերանդ ժողվե՛, ամոթ է: Մեր մեջ կարելի յէ ամեն զեղծում գործել, ազգին ամենեն նվիրական իրավունքներն վաճառել և հանուն կրոնի ամենապարզ խնդիր մը կնճռոտել և հետո արդարանալ: Ահա արդարացուցիչ փաստերը:

— Գիտությամբ չրավ ա—Թոշակավոր պաշտոնյա չեր ա—Անձնվիրաբար աշխատեցան, չվայլեր, վոր անոնց սիրտը կոտրենք—Ուրիշ ինչ կրնային ընել:

Յեթե պատասխանատվություն չըլլար մեր մեջ՝ մեր կրոնական յեղբայրներեն վոմանք մեծ սխալ մը չպիտի գործեյին կամ պիտի իյնային՝ յեթե գործեյին: Վստահ ենք սակայն, թե պիտի իյնա որ մը անոնց շապիկն, վորպես ինկավ Խիկար[62] իմաստունույն: Կը պատմվի թե Խիկար իմաստունն որ մը պատուհանեն փողոցը կիյնա: Անկումը բարձրեն էր, բնականաբար անոր ձայնն ալ բարձր պիտի ըլլար: Դրացիները փողոց կելնեն և կը հարցնեն Խիկարի.

— Ի՞նչ ձայն եր աս:

— Շապիկս վար ինկավ:

— Շապիկ մը այնքան ձայն չհաներ:

— Յես ալ մեջն եյի, կը պատասխանե Խիկար իմաստունը:

Մի կարծեք թե պարապ կը նստինք, ամեն օր, հավատացե՛ք, առավոտե մինչև յերեկո կը գործենք... սխալներ, զորս պիտի ուղղենք ապագային, ինչպես այժմ քավելու պարապած ենք անցյալին սխալներն, վորք ժամանակին նուրբ դիվանագիտություններ կարծված եյին և ծափահարված: Գիտե՞ք թե Կրոնական ժողովն[63] ինչու մայրաքաղաքս բերել տվավ Շահպաղյան արժանապատիվ Հակոբոս վարդապետն, վոր լրագրաց մեջ այնքան հալածվեցավ, չարչարվեցավ, թաղվեցավ և... հար-

յավ։ Զեք գիտեր։ Յես ալ չեմ գիտեր, և, ինչ վոր բերկրալի յե, կրոնական ժողովն ալ չգիտեր։ Ի՞նչ եր անոր հանցանքը, կրոնական ժողովը հրամայեց Նորին արժանապատվության, վոր տեղեկագրով մը ժողովույն ներկայացնե յուր... հանցանքներն։ Շահպազյանն տեղեկագրեց յուր հանցանքներն—հանցանք ըսելով պետք ե իմանալ Հայաստանյայց ս. յեկեղեցվո դարավոր իրավանց պաշտպանության նախանձախնդրություն—կրոնական ժողովույն՝ վոր տեղեկագիրն առավ ու հրաժարեցավ, հաջորդին կտակելով վոր քննե այդ հանցավոր անմեղությունները կամ անմեղության անպատեհությունները, կարդացե այդ տեղեկագիրն Ճերիտեյի-Տարգիյեի[64]) մեջ։ Նորին արժանապատվությունը կը տեղեկագրե սա իմաստով թե «Հայտնած եյի ձեզ, վոր պատրաստ եյի գալ մայրաքաղաքս, յերբ կոչվիմ, ինչպես վոր ժողովույդ նամակն ընդունելուս պես յելա, յեկա»։ Ավաղիկ ըմբոստությունը։ Նորին արժանապատվությունը կը հաստատե յուր հանցանաց մեջ, թե վերջին կաթողիկոսական ընտրությունն[65]) ամենևին հակառակ ե Հայաստանյայց յեկեղեցվո և օրինաց և ավանդության, և այս մասին իրեն համամիտ կը ներկայացնե կրոնական ժողովո անդամ գերապատիվ Դիմաքսյան յեպիսկոպոսը։ Ահա յուր գլխավոր հանցանքը։

Հարկ ե ուրեմն դատապարտել զինքն հետևյալ վճռագրով.

«Նկատելով, վոր Շահպազյանն Հայաստանյայց յեկեղեցվո իրավունքները պահպանելու ջերմ նախանձախնդիր ե,

«Նկատելով, վոր այսպիսի ընթացք մը մեր մյուս յեկեղեցական հայրերն ալ գայթակղեցնելու հանգամանք ունի,

«Նկատելով, վոր կրոնական ժողովն ասանկ գայթակղեցուցիչ վարմունք մը չկրնար ներել և վոչ մեկ կրոնականի,

«Կրոնական ժողովն կը վճռե.

Շահպազյան Հակոբ վարդապետին փիլոնն առնել և հեռացնել զայն կրոնական դասեն»։

Այո, անպատճառ հարկ ե դատապարտել, վորովհետև զայն անպարտ արձակելն պատիվ չբերեր կեդրոնին, վոր այնքան զրպարտության և հալածանաց մատնեց զայն. պետք ե ուրեմն պատժել Շահպազյանն, նույնիսկ յեթե հանցանք չունենա։ Հանցանք չունենալն արդեն մեծ հանցանք մ'ե. հանցանք չունենալուն համար պատժվելու յե, վորպեսզի փրկվի կրոնական

ժողովո պատիվը, վոր ուրիշ՝ պարագաններու մեջ ալ շատ սուղի նստավ ազգին։ Մեր այս ավուր բոլոր առկախ խնդրոց վրա հայեցվածք մը նետելով կրնանք ըսել.

«Փնտռեցե՛ք կրոնական ժողովո պատիվը»։

Իսկ մեր Ս. Հայրերեն շատեր ազգին այս վիճակին բոլորովին անտարբեր՝ տարբեր խնդիրներով կզբաղին։ Ասոնցմե մին Հայուհյաց ընկերության[66]) յերկար թուղթ մը գրելու զբաղած ե։ Այս թուղթն տասն անգամ մեծ ե այն թուղթեն, զոր Պողոս առաքյալ գրած ե առ Հռովմայեցիս։ Գատը գյուղի[67]) ազգայիններեն վոմանք այնքան հավնած են, կըսեն, այս թուղթին, վոր կը փափաքին զայն Նոր Կտակարանի[68]) մեջ անցունել։ Այս վարդապետն, ծառա Հիսուսի (*) և Թաղական խորհրդո[69]) վարդապետ կամոքն (*) Աստուծո և գերապատիվ Խորեն յեպիսկոպոս Աշըգյանի[70]) առաքյալ շնորհոքն (**) Տյառն մերո՝ յուր նշանավոր թուղթին մեջ Հայուհյաց ընկերության պաշտոնին բարձրությունն ու վսեմությունը ցույց տալու համար «Անօթի եյի՝ կըշտացուցիք զիս, ծարավի եյի, ջուր տվիք ինձի, մերկ եյի՝ հագվեցուցիք զիս»—են շատ բարձր ե կըսե ձեր պաշտոնն, վոր նպատակ ունի անոթությունը, ծարավությունը և մերկությունը բնաջինջ ընել իսպառ։ Ավետարանին այդ խոսքերուն վրա ավելցնելու յե ուրեմն հետևյալները. «Աղքատ եյի՝ և Հայուհյաց ընկերություն յեղաք ինձի, անոթի եյի՝ և սանդով բուրդ տվիք ինձի, մերկ եյի՝ մատնի մը տվիք ինձի, բանտն եյի՝ դաշնակ մը ղրկեցիք ինձի, անդամալույծ եյի՝ պարի դասատու ղրկեցիք ինձի»։ Ըստ մեր վարդապետին կարծյաց՝ մարդասիրության պետք չը պիտի մնա այլևս, դաստիարակությունն անհետ պիտի ընե ամեն թշվառություն։ Ցավալի յե միայն, թե տերն մեր Հիսուս Քրիստոս այս կետը կանխատեսած չե։ Վարդապետն յուր թղթին մեջ, զոր հրատարակած ե Արևելք, կը խոսի նաև կանանց ազատության վրա, ինչպես նաև արգիլյալ պտղույն[71]) վրա այնքան հոգեշունչ ավյունով և անկեղծությամբ, վորով աշխարհական մը պիտի կարմրեր խոսելու։ Ահա, տիկին, իգական խնդրով կզբաղին մեր Ս. Հայրերեն վոմանք։

*) Թվեյի զնենք։
**) Վոր պիտի իջնա։

Յեպիսկոպոսներուն գալով՝ ասոնք այժմ գլխավորապես կզբաղին պատրիարքական խնդրով. վորովհետև, ինչպես գիտեք, Ամենապատիվ Ս. Պատրիարք Հայրը[72]) կը հրաժարի յուր ծանուցյալ ծերության պատճառավ։ Պատրիարքության անարժան յեպիսկոպոսաց ցուցակ մը հրատարակվեր ու անմիջապես հասկնայինք, թե ով ունինք պատրիարքության արժանի։ Այսոր քանի մը անձինք տեղ մը հավաքված ընտրելի մը կը փնտրեյին։

— Աղեկ մ, ըսավ մեկը, ըսենք թե պատրիարքը հրաժարեցավ, ով պիտի դնենք տեղը։

Հետո քանի մը ժամեր չատ յեպիսկոպոսներու անուններ տվին, չափեցին, ձևեցին, կտրեցին և վոչ մին հարմարեցավ պատրիարքական աթոռին և հարկ յեղավ, կարծեմ, աթոռին վոտքերեն մեյ մեկ թիզ ալ կտրել, վորպեսզի աթոռն համաձայնի յուր բեռան արժանյացը հետ։

Շատ հավանական է, վոր մոտերս այս խնդրով զբաղի Ընդհանուր ժողովը[73]), վորուն 1888 ամի բացումն տեղի ունեցավ յերեկ։ Այս անգամ առաջին ատենապետը բժիշկ է և այն բժիշկներեն, վոր այս կամ այն կուսակցության հարելով, այս կամ այն յերեսփոխանն լռեցնելով յուր պաշտոնին հակառակ վարվելու պատճառ մը չունի։ Նա փորձով իսկ ցույց տված է, թե ատենապետի մը պարտքն է հարգել ներքին կանոնագիրը, անկողմնակալությամբ ընթանալ, ատենախոսներու կարգավ խոսք տալ, խնդիրներն ամփոփելով քվեարկության դնել և քիչ խոսիլ։ Յեղած են նիստեր՝ հորս ատենապետը միայն խոսած է։ Չենք կարծեր, վոր այս նիստերը վերականգնին։ Նաև վստահ ենք, թե նորընտիր ատենապետն յուր ծանուցյալ անաչառությամբն, վոր զարմանալի չէ, վոչ զոք կը վիրավորե, ի կարգ պիտի հրավիրե նույնիսկ այն հիվանդ յերեսփոխանները, վոր յուր խնամոց հանձնված են։ Արդեն հայ բժիշկներն՝ վոր ազգային գործոց մեջ մտած են՝ մեծ ծառայություններ մատուցած են ազգին. Վսեմ. Սերվիչեն[74]) եֆենտի, Բարունակ պեյ[75]), Ստեփան փաշա[76]) և Փեշտմալճյան[77]) եֆ, ծանոթ են ազգին այն առավելությամբը, զոր ունին ուրիշ յերեսփոխանաց վրա խորհելու և գործելու մեջ։ Վողբացյալ Բյաթիպյանն[78]) եր վոր դեր չունեցավ ազգային ժողովո մեջ, այնքան զբաղած եր բարեգործություններով։ Սակայն քանի մը անգամներ յերեսփոխան ընտրվեցավ.

Ընդունեց բայց բան մը չխոսեցավ ժողովույն մեջ։ Ով մը յերբ հարցվեցավ իրեն, թե ինչու չեր խոսեր, պատասխանեց.

— Մեր խոսելու ժամանակը չեկավ տակավին։

Քանի մ'ամիս վերջը հրաժարեցավ։

Ըսին իրեն.

— Խոսելու ժամանակը յեկած չէ կըսեյիք և հիմա կիմանանք, վոր հրաժարած եք։

Պատասխանեց.

— Մեր խոսելու ժամանակը անցավ։

Գործելու ժամանակն է ուրեմն, մանավանդ Ընդհ. ժողովո համար, վոր բազում խնդիրներ ունի քննելու և լուծելու։ Պարտ է յերեսփոխանաց ուժ տալ իրենց նորընտիր ատենապետին, մեծ. Թիրյաքյան եֆենտիին, և անոր հետ աշխատիլ այն կարևոր խընդրոց մեջ, վորք կը պատրաստվին մոտերս ներկայանալ Ընդհ. ժողովույն, վորուն լիուլի իշխանություն տված ենք մեր բոլոր գործերը վարելու, այսինքն, մեզի համար ստորագրելու, մեզի համար գրելու, մեր անշարժ պահանջքները գանձելու, մեր շարժական իրավունքները բացառաբար ծախելու, խախուտ աթոռները վերանորոգելու, մեր պարտքերը վճարելու, մեր հրամանին քաշված ամեն փոխանակագիրները գանձելու, մեր վրա քաշված ամեն փոխանակագիրները չընդունելու, մեր դատերը կարգադրելու՝ յեթե հարկ ըլլա՝ իրավախոհությամբ, մեզի համար խոսելու, ատենաբանելու, յերբեմն ալ լռելու, ծրագիր պատրաստելու, ընդունելու, մերժելու, հանձնաժողովներ կազմելու, մասնաժողովներ կարգելու, զանոնք հրաժարեցնելու, վերստին ընտրելու և վերջապես մեր շահուց համաձայն յելնելու, նստելու, խորհելու, խոսելու և յեթե ժամանակ ունենա՝ գործելու։ Ահա պաշտոն մ'որ խղճմտանքի և զորավոր ուղեղի պետք ունի։

Այս տարի բնությունը քիչ մը հետաձգեց գարունը, Մարտը Հունիսի մեջ յեկավ։ Իցիվ թե բնավ չգար... լավ եր յերբեք քան ուշ։ Բարձր լերանց ձյունով ծածկված կատարներն, վորք պատկառելի յերևույթ մ'ունեյին, դալարյոք ծածկվեցան և նսեմացան, մերկ ծառերն կանաչ տերևներով հագվեցան և տըգեղացան կորուսանելով իրենց բնական գեղեցկությունը, շաղակրատ սոխակն գլխացավ պատճառեց յուր կարկաչովը։ Հակակիր

եմ գարնան, վորուն չեմ ուզեր տեսնել յերեսը։ Կը սիրեմ վարդըն՝ յերբ կոկոն թոռոմի, կը պաշտեմ սոխակն՝ յերբ պապանձի։ Ամեն տարի գարուն... Ինչ կը նշանակե այս, յեթե վոչ հուզել, գրգռել վողորմելի մարդն, վոր չգարնանար վերստին և, ավելի ցավալին՝ աշնանալեն յետքը կզգա թե գարնացած եր յերբեմն, ինչպես ձմեռնանալեն հետո կիմանա, թե անցած ե աշնան սահմաններեն։ Ցեվ կենաց ձմեռեն յետքը ունինք նոր որացույց, ինչու համար ներել գարնան, վոր անցյալն՝ վորուն թշվառագույնն իսկ յերջանկություն ե ներկային՝ ամեն տարի մեզ ներկայացնելու անկրթությունն ընե։ Ինչու մանավանդ ներդաշնակ բառերով յերգեր հյուսելով յեղանակել այս յեղանակն, վոր տըխրություն կը լցնե մեր սրտերուն մեջ։ Ինչու կըսեմ, գարունը տեսնելու համար դաշտեր, լեռներ, ձորեր վազել։ Վո՛ մարդիկ, ձեր զավակներուն նայեցեք, յեթե կուզեք տեսնել ձեր մանկությունը. միթե սոխակն անոնց ձայնով չ՞գեղգեղեր, միթե գեփյուռն անոնց շունչով չ՞փչեր, միթե վարդն անոնց այտերուն վրա չ՞բացվիր։ Այլափոխություն կուզեք ընել, դարձյալ անոնց նայեցեք։ Իսկ անոնք, վոր գարուն չունին, մինչև վոր իրենց մանկությունը տեսնեն՝ շատանան իրենց ձմեռը տեսնելով իրենց հայրերուն վրա։ Այս մտածումներն արգիլեցին զիս գարունը տեսնելե։

Գարունը չտեսնելու նպատակավ իսկ եր, վոր չուզեցի ներկա գտնվիլ Սահմանադրության տարեդարձի[79]) հանդիսին, զոր կատարեցինք այս տարի ալ վորպես լուսավորյալ ազգերն կը կատարեն ամեն տարի, յերբ նշանավոր անձնավորություն մը վախճանի։ Ըստ բանին՝ թե հավատք առանց գործոց մեռյալ ե՝ Ս. Փրկչյան մատրան[80]) մեջ հոգեհանգիստ ալ կատարվեցավ։ Բայց ժողովուրդն, վոր չպահանջեր յուր ընտրողական պահանջքըն և չհատուցաներ յուր ընտրելական պարտքն՝ վազելով կերթար նույն որը մասնակցիլ տարեդարձին զվարճությանց։ Սահմանադրությունն այն ատեն կը գրկենք, յերբ ոգիով և գինիով ներկայանա։ Զարմանալի չե ուրեմն, յեթե յերկաթուղվո կառքերեն գերար հրելով, մղելով կիջնային և իրավունք կուտային հիմարանոցի խենդերուն ըսել միմյանց. «Այս ինչ խենդ մարդիկ են»։ Պետք ե խոստովանիլ, թե ատոնց մեջ կը գտնվեյին նաև բազմաթիվ ազգայինք, վոր, վորպես կիմանանք, սահ-

մանադրասիրության վոգիեն առաջնորդված եյին դեպի հանդիսավայրը։ Այն ազգն, վոր յուր վարժարանաց նպաստելու նպատակավ տարին քանի մ'անգամ կը պարե, բնական ե, վոր սահմանադրության հիշատակն անմոռաց պահելու համար տարին անգամ մ'ալ յերգե ոգիով և գինիով զվարթացած։ Առանց յերգելու, առանց պարելու՝ դժվար ե այս ազգին հառաջադիմել։ Հետևաբար յերբ նպատակն սուրբ ե, միջոցներուն աչք գոցելու յե։ Բայց կարելի չե աչք գոցել մանավանդ պարահանդեսի մեջ. ուստի աշխատելու յե, վոր այս տեսակ հանդեսներն ազգային դրոշմ կրեն և վստահ ենք, թե ապագա տարեդարձներուն մեջ ավելի սահմանադրություն պիտի յերևնա և նվազ ոգի, առանց վնասելու սակայն հիվանդանոցի շահուց։

Կարդացիք անշուշտ Արևելքի խմբագրապետին, մեծ. Բյուզանդ եֆ Քեչյանին[81]) հորինած Ազգային հիվանդանոցի պատմությունը, լի ճոխ տեղեկություններով։ Ստվար հատոր մը, ավելի մեծ քան մեր ազգային պատմությունը։ Վոմանք դիտեցին, թե հիվանդանոցի պատմությունն մեր ազգային պատմության մեկ մասը կը կազմե, իսկ յես դիտել կուտամ, թե ազգային պատմությունն ե, վոր հիվանդանոցի պատմության մեկ մասը կը կազմե։ Ինչ վոր ալ ըլլա՝ կը շնորհավորենք ազգային Հիվանդանոցի բարեջան և պատվարժան Հոգաբարձությունն, ինչպես նաև հանրածանոթ հրապարակագիրն, այսինքն դրամն և տաղանդը, վոր Հիվանդանոցի Պատմություն անվամբ ժամանակակից ազգային պատմություն մ'ի լույս ընծայեցին։ Ազգային պատմիչներու կը մնա դիմել Քեչյան եֆենտիյե աշխատասիրյալ պատմության և քաղելով անոր մեջեն ինչ վոր հիվանդանոցի կը վերաբերի, մնացածն հավաքել և ազգային պատմության հանձնել։

Բայց ազգային պատմիչներու թիվն խիստ փոքր ե այսոր, յերիտասարդությունը ինքզինքը Նորավեպի տված ե։ Վարժապետին աղջիկը[82]) մեծ փոթորիկ հարույց հրապարակի վրա։ Ազգ. լրագիրներեն մին առիթ չփախցներ հարվածել այն վեպն, վոր դեռ շարունակության մեջ ե, և չարչարել անոր հեղինակն և հեղինակին հայրն։— Հեղինակին բարեկամներն, դրացիներն, դերձակն, սափրիչն զերծ են այս հալածանքե—և հեղինակն համբերատար վոգով կը դառնա հորն և կըսե. «Հայր, թող սոցա, զի

վոչ գիտեն զինչ գործենս։ Մենք տակավին ժամանակ չունե-
ցանք կարդալու այդ վեպին հրատարակված մասերը, բայց յեթե կարդացած իսկ ըլլայինք՝ վողջամտությունը պիտի հարկադրեր զմեզ սպասել, մեր կարծիքն հայտնելու համար, վոր ամբողջ գործը ծնաներ։ «Ուստի Մանզումեյի Եֆքյար[83]), վորուն հաբատեությանը համար հաջողություն կը մաղթենք՝ իրավունք չունի մեղադիր լինել այն թերթերուն, վոր լռություն կը պահեն Վարժապետին աղջիկը-ին վրա, վոր ինչպես ըսինք, կը շարունակվի տակավին։

Բայց վոչ, նախ պատիժ և ապա քննություն. այս է մեր դրությունը։ Տահպաղլյան կը պատժվի ստիպվելով թողուլ յուր ժողովուրդն և մայրաքաղաքիս մեջ դեգերիլ։ Վորպես ըսինք մեր վերջին թվույն մեջ, նա տեղեկագրեց յուր հանցանքներն։ Արդ, պատժելու յե զինքն։ Վոչ վոք կը խորհի այս մասին։ Շատ հավանական է, վոր Կրոնական ժողովը հրամայե անոր, վոր յուր հանցանաց համար հաճի պատիժն ալ ինք տնօրինել։ Կը լսենք նաև, թե չորս տարի առաջ Կրոնական ժողովը վորոշած է վանք մը ղրկել Տահպաղլյանն յուր ծանուցյալ նամակին համար, վորով կը բողոքեր կաթողիկոսական հակազգային ընտրության դեմ։ Մենք, ինչպես ամեն հայու զավակ, կը փափաքինք, վոր Կրոնական ժողովը պաշտոնապես հրատարակե Տահպաղլյանի հանցանքն և պատժե զինքն այն պատժով, վորուն արժանի յե։ Իսկ յեթե անմեղ է՝ պետք է վոր դառնա յուր ժողովրդյան քով, վորովհետև գյուղ մը ժողովուրդ անձնական կրից զոհելու հանդըգնությունը չկրնար ներվիլ աշխարհականներեն՝ վոր բուսային չեն։

Յերկու յերեք որ առաջ պատիվ ունեցա ծանոթանալ այն մարդուն, վոր շատերուն զարմանք կը պատճառե։ Ազգային Թղթավաճառներեն, Մեծ. Ա. Բոռանյան եֆենտի այն մարդը ներկայացուց ինձ։ Ապշեցա, թեև լուսանկար պատկերը տեսած և կենսագրությունը կարդացած եյի լրագրաց մեջ։ Նիհար կազմ մ՚ունի, այսու ամենայնիվ շատ սիրուն յուր բարակ թելերովը և քնքուշ մազերովն, դեմքը ձուաձև է և համակրելի փոքրիկ աչերով և պզտիկ քթով, թեև վոչ հունական — հին հունական անշուշտ — շուրթերն այնքան իրարու կպած են, վոր կարծես սև գիծ մը կը բաժնե վերին շուրթը վարինեն։ Մորուքը շատ յերկար չե։ Տխուր է. քանի մը հարցումներ ուղղեցի, պատասխան չավավ։ Պիտի զարմանաք անշուշտ, յերբ ըսեմ ձեզ, թե այդ մարդը ուներ նաև ընկեր մը, զոր գրկած եր։ Աղաչեցի բարեկամես, վոր թույլ տա ինձ հյուրընկալել այն մարդն և ընկերն ու ներկայացնել բարեկամացս։ Բոռանյան եֆենտին մերժեց խընդիրքս, առավ ձեռքես մարդն ու ընկերն, թուղթի մը մեջ փաթթելով գրպանը դրավ, վորովհետև շատ դյուրատար են, իրենց հասակին յերկայնությունը հազիվ կը հավասարի հասարակ մահկանացվաց վոմանց քիթերուն։ Այս մարդն ու ընկերն, վորոց անունըն լոշտակ է, մտքիս մեջ այլ և այլ խորհուրդներու ծնունդ տվին։ Մարդու կերպարանքով արմատ, ծառ... արդյոք մեր նախահայրերը պտուղներու պես ծառերե՞ն փրցված են հին ժամանակաց մեջ և հետզհետե, քաղաքակրթության շնորհիվ, յերկրագործությամբ մարդ հասցնելու սովորությունը մեկդի թողված է։ Արդյոք մենք ալ գետնե՞ն բուսած ենք այս բուսեղեն մարդուն պես, վոր, չեմ համարձակիր հայտնելու, հնդեվրոպականին կը պատկանի, թեպետ և չխոսիր։ Յեվ չխոսելովը կը դադրի՞ մարդ ըլլալե, միթե մարդկության ախտանիշը խոսքն է։ — Բծախնդրություն պետք չե, ախտանիշը բուն բառն է, մարդկությունը փոխաբերաբար հիվանդություն կը նշանակե — կարելի չե՞ արդյոք այս բուսեղեն մարդուն կենդանի շունչ փչել։ Բայց ինչ հարկ կա, այս վիճակին մեջ ավելի յերջանիկ չե՞, ինչո՞ւ բաժանորդ ընել զայն աշխարհիս ցավոց և տառապանաց, վո՞չ ապաքեն ան ալ պիտի ստիպվի որ մը Նորավեպ մը հրատարակել և հարձակում կրել։ Զմեզ բուսացնելու, այսինքն բույսի փոխելու կարելիություն չկա՞ արդյոք, յեթե արդեն բույսի պես չենք ապրիր արդեն ...բայց ինչո՞ւ այսքան մելամաղձոտություն։ Վո՜, գիտուններ, կենդանաբանության մեջ տեսանք մարդը, բուսաբանության մեջ ալ հանդիպեցանք մարդուն, ձեզ անկ է ցույց տալ մեզ նաև հանքային մարդը... հարուստը չհասկնաք։

Գիտությունն ալ սկսավ չափն անցունել։ Ամեն անգամ վոր խահվե կը խմեմ, կը նայիմ վոր խմած խահվեիս մեջ վարտիքի կտոր մը չգտնվի, վորովհետև գիտությունը հինցած վարտիքներեն ու շապիկներեն ալ սկսած է շաքար հանել։ Շաքարեն ալ պաղեցա, վորովհետև ամեն բանեն կելնե, յեղբայր, կոշիկներդ ցույց տուր գիտունին, առնցմե պատվական շաքար կելնե, կըսե։

Լաթեն շաքար, կոշիկներեն շաքար, աղտոտ գլխարկներեն շաքար, փայտի կտորներեն շաքար, ծննդական գործարաններեն շաքար, ի՞նչ գիտնամ, չկա բան մ'որու մեջ քիչ մը շաքար չտեսնե գիտությունը — միայն շաքարի յեղեգեն և վոր շաքար չեն հաներ — շաքարեղեն դարու մեջ կապրենք, բայց հակառակ շաքարին այս առատության, անուշությունն որ ըստ որե կը նվազի։ Պետք չէ շփոթել շաքարն անուշության հետ։ Խահվեյի մը մեջ վորքան շատ շաքար դրվի, խահվեն այնքան նվազ անուշ կըլլա։ Բնական է ուրեմն, վոր պակսին մեր մեջ այսոր անուշ խահվեներ և, հետևաբար, անուշ մարդեր։ Բնավ չեմ պնդեր, բայց կրնամ բոլոր ուժովս կարծել, թե մեղուներն ալ քանի մը տարիներե ի վեր թողած են ծաղիկներե նյութ քաղելու սովորությունը։ Կերևի թե ասոնք ալ՝ գիտության մեջ հառաջանալով՝ սկսած են բիթ բազարի խանութներեն կախված հին ու աղտոտ հագուստներեն մեղր քաղել, վորովհետև վերջերս մեղրիս մեջ գտա պզտիկ կտոր մ'այն կտորներեն, վոր ճյուպպեճիներու թևերուն կը կարվին ընդհանրապես։

Կեցցե՛, կեցցե՛, բուռն ծափահարություն, բաժակ մը գինի և վրան պատառ մը խլիւֆեր կասկարայի վրա յեփած։

Ավաղի՜կ մեր պաշտոնական և վոչ պաշտոնական մարմնոց զբաղմունքը տասն որե ի վեր։

Ամեն սրտի մեջ խնդություն, ամեն բերնի մեջ խլիւֆեր, ամեն ստամոքսի մեջ գինի։

Ո՞ւր են կուսակցության վոգիները։

Մարեցան... գինիով, մանավանդ քոնյաքով։ Վոգի մը, վոր կը մարե ուրիշ վոգի մը... վոգին կուսակցության։ Նմանաբուժական չե՞ քիչ մը։

Արդար ըլլալու չդադրինք սակայն և համարձակությամբ խոստովանինք սա ճշմարտությունը՝ թե մեր ազգին անմիաբանության գլխավոր աղբյուրներուն մեկն ալ ջուրն է։ Ջուրն է, վոր կուսակցական վոգի կստեղծե մեր մեջ և, ինչ վոր անհավատալի յե, կարծարծե կուսակցական հուրը։

Բազմամյա փորձառությամբս քաջ գիտեմ, թե մեր ազգայինք իրարու հակառակ կարծիք չեն հայտներ՝ յերբ գտնվին սեղանի մը շուրջն, վորու վրա դրված ըլլան համադամ խորտիկներ և վոգելից պատվական ըմպելիքներ։ Կը միաբանին, իբրև յեղբայր զիրար կը գգվեն, կը շոյեն, կը համբուրեն տակավին շրջանակին մեջ։ Վերցուր գինին և ահա տարաձայնությունը կը նի անմիջապես։ Այս ճշմարտութենեն մեկնելով կրնանք սա յեզրի մեջ խարիսխ նետել, թե մենք այն ատեն միայն կը հաճինք մեր մեջ կարծյաց համաձայնություն գոյացնել, յերբ ամենքս ալ հավասարապես կշտանանք։ Անոթությո՜ւն, մայր չարյաց... Ինքնին կը հասկցվի ուրեմն, թե մեր Ազգային ժողովո մեջ յեթե համեղ կերակուրներով բեռնավորված սեղանի մը բոլորտիքը նստեյին տյարք յերեսփոխանք և կշտանային հետո բարեհաճեյին ատենաբանել, ամեն վորոշում միաձայն հավանությամբ պիտի տրվեր... ա՜հ, յեթե բեմը յելնող ատենաբաններու առջև բաժակ մը ջուր դրվելու տեղ — անկցի՜ ջուրը — բաժակ մը գինի դրվեր, — կեցցե՜ գինին — վոչ այսքան կուսակցություններ կը հարուցանեյինք, վոչ ալ այս կուսակցությունները ջնջելու համար նոր կուսակցություններ ստեղծելու հարկին մեջ կը գտնըվեյինք, վոչ ալ այս նոր կուսակցությունները մարելու համար զանոնք գինիի տակառի մեջ կը մկրտեյինք։

Ի բաց հինեն առել գինին. յես ալ Նոյ Նահապետին զավակներեն եմ[84]), մանավանդ թե կտոր մ'ալ Քամ եմ. -- միայն թե անոր պես հանդուգն չեմ և շատ անգամ գայթակղեցուցիչ տեսարաններու վրա կեղծուկ մը կը ձգեմ[85])։ Այո, յես ալ կը հարգեմ գինին։ Գինին խնդության խորհրդանշանն է. գինին զվարթության մականունն է. գինին ծիծաղի յերեսփոխանն է. գինին հեղուկ հույս մ'է և յես, ապրելու համար՝ պետք ունիմ տակավին խնդության, զվարթության, հույսի և ծիծաղի։ Բացի ասկից, ազգասիրական տեսակետով ալ պարտավոր եմ հարգել գինին, վոր մեր ազգին խաղաղության հրեշտակն է, կուսակցությանց միացման գիծն... կաթիլն է։ Աջակցինք ուրեմն իրեն, վոր միշտ զորավոր մնա. և վորպեսզի միշտ ուժով ըլլա, կաղաչեմ զձեզ, պատվական յեղբարք իմ, մեր խաղաղության հրեշտակին մեջ ջուր չխառնենք, վորպես կը խառնենք մեր զգացմանց մեջ։ Գինիին հրեշտակն անջինջ պահենք մեր ստամոքսին մեջ և յերբ ազգային կուսակցությունք յերևան գան, բոլորվինք մեր ատենապետին՝ գինվո տակառին շուրջն և միաբանինք։

Բայց կուսակցություններ պիտի ունենանք վերստին։ Չեմ գիտեր. միայն կրնամ վստահեցնել զձեզ, թե այսոր մարդու կուսակից ըլլալու չափ վտանգավոր ե կուսակցության մարդ ըլլալը։

Ի՞նչ ըլլալու չե ուրեմն։

Այս կետին վրա պիտի խորհինք հարկավ որ մը։

Յեթե կուսակցության մարդ ես, ասպարեզիդ մեջ հառաջադիմելու հույսը կորե. յեթե մարդու կուսակից ես, զքեզ մոռնալ ընել տալու, ճշմարտությունը լսելի ընել տալու հիմարության վերջին վողջույնդ տուր, սիրելի յեղբայրս, պարապ տեղը մի՛ հոգնիր, վորովհետև ճշմարտությունն իսկ մեր մեջ կը հալածվի յերբ կուսակցության մարդ. ե։

Նոր դրությունն այս ե։ Յերբ կուսակցություն մը կը պնդե, թե մեկ մեկ ալ յերկու կընեն, և ուրիշ կուսակցություն մը կուզե վոր մեկ մեկ ալ յերեք ընեն, այս յերկու կուսակցություններն ալ կը մերժվին և կսկսին փնտռել անանկ կուսակցություն մ'որուն մեկ մեկը ինչ վոր ուզեն թող ընեն, բավական ե, վոր յերկու կամ յերեք չընեն, միայն թե այս վերջին կուսակցությունը պետք ե վոր զորավոր ըլլա։ Վորովհետև գիտեք անշուշտ, ապորինավորություն մ'երբ փոքրամասնության կողմե գործվի, պարսավանաց արժանի չե, իսկ յերբ մեծամասնությամբ կատարվի՝ գովեստնիրու կարժանանա։ Մոլությանց և զեղծմանց համար ալ այսպես ե. վերջապես աշխարհի ընթացքն ե այս։ Որինակի համար, յերբ գինով մը տեսնես փողոցի մեջ պառկած, կը զզվիս և կը հեռանաս. իսկ յերբ խումբ մը գինովներ տեսնես, նույնպես պառկած փողոցի մեջ, վոր կերգեն, կը պոռան, կը կանչեն, ուրախությամբ կը դիտես զանոնք... Թերևս կըսես իսկ. «Ինչ անմեղ մարդիկ»։ Ձայն գինովներու, ձայն աստուծո։ Յեզակիի և հոգնակիի խնդիր մը պարզապես։

Յես իսկ սկսա խորհիլ, թե ինչ ընթացք բռնեմ, վոր Խիկար վոչ կուսակցության թերթ կարծվի, վոչ ալ մարդու կուսակից։ Յեթե ազատորեն կարծիքներս հայտնեմ և միևնույն բարեմասնությունները գովեմ — թեև գովելու ճյուղին վրա չթառիր Խիկար — պիտի վախնամ թե ինձի, վոր մարդու կուսակից պիտի համարվիմ և թե գոված անձիս, վոր կուսակցության մարդ պիտի նկատվի։ Չխոսելեն ուրիշ ճար չկա։ Չմոռնանք հայտնել, թե այս դրությամբ վոչ վոք աշխարհականներե կամ կրոնականներե պիտի ջնա այսու-

հետև գովեստից արժանի գործեր ընելու, վախնալով, զի մի գուցե գովաբանվելով զրկվին այն պաշտոններեն՝ վորոց պիտի կոչվեին, յեթե գովեստի արժանի գործ մը չկատարեին։ Չարամիտք վոմանք ալ այս դրութենեն ոգտվելով շարունակ պիտի գովեն և պիտի աշխատին իբրև կուսակցության մարդ կարծել տալ այն անձերն՝ վորոց վնասել կուզեն։ Ծառ մը ինչպես պիտի ճանչցվի ուրեմն։ Թողի ծառերուն պտուղներեն։ Բնական ե՝ թե այսպիսի տրամաբանություններ ներելի չեն այն ազգաց, վորք բարոյական ուժով կապրին։ Ուղղությամբ ընթանալու յեն մեր պաշտոնական մարմինները՝ վոր գավառաց բարի որինակ տան։ Մեր Ազգային ժողովն ուղղության մասին Գավառական ժողովներեն[86]) առաջնորդվելու պետք ունի դժբախտաբար։ Այս ե մեր միակ ցավը՝ զոր զգացինք համեմատականի ընտրման վրա։

Բարեբախտաբար այս ցավն շուտ դարմանվեցավ ընտրությամբ ամենապատիվ Տ. Խորեն Սրբազան Աշըգյան Հոր, վոր համակրելի, հեզահամբույր, ճշմարիտ ազգասեր, քաջ կրոնագետ, հմուտ աստվածաբան և լեզվագետ յեկեղեցական մ'ե։ Ամենքս ալ միաբան ենք ճանաչելու Նորին ամենապատվության այս գովելի հատկությունները։

Այժմ Նորին ամենապատվության կը մնա հաստատել՝ թե ինքը վարչական կարողությամբ ալ ոժտված ե։ Արդեն Նորին ամենապատվությունը ցույց տվավ, այն ատենաբանության մեջ՝ զոր արտասանեց Ընդհանուր ժողովո մեջ, հետ ուխտելո Սահմանադրության վրա, թե ի մոտո գիտե ազգին պետքերը և կը ճանաչե սահմանադրական պարտիքն և իրավունքը։

Կը շնորհավորենք ուրեմն Նորին ամենապատվությունն և մի հույսով ենք, թե յուր անձին նկատմամբ արտահայտված ժողովրդային համակրությունն արդյունավոր և արգասաբեր պիտի լինի։

Հ. Գ. Բացի ասկից պետք չե պահանջել՝ վոր մեր նորընտիր պատրիարքներն անմիջապես վարչական մարդիկ ըլլան։ Բավական ե, վոր զգան ազգին պետքերն և հետզհետե փորձառությամբ գործեն։ Մեք մանկանացուներս Արամազդա[87]) ուղեղեն ծնած Աթենասներ չենք։ Գիտեք անշուշտ, թե Հեփեստոս որ մը կացինով Արամազդա ճակտին զարկավ և աստվածոց հոր ուղեղեն ծնավ Աթենաս[88])։ Դիցաբանք վոմանք կը պնդեն, թե Հեփեստոս[89]) աս-

տակ մ'իջեցուց Արամազդա քթին բերնին։ Ցես այս վերջնոց կարծիքեն եմ և կը հավատամ, թե բարի և իմաստուն է այն, վոր ապտակեն կը ծնի։

Խոնավ հարկի մը մեջ տրված վորոշումները բաղդատած եք յերբեք չոր հարկերու տակ տրված վորոշմանց հետ։ Վորոշում մը, ուղիղ և արդար ըլլալու համար խոնավությա՞ն կը կարոտի, թե չորության։ Ասոնց վորե՞ն կը կարոտի միտքը, պարզ, հստակ, ուղիղ և տրամաբանական ըլլալու համար։ Ցեթե ճիշտ է այն առածն, թե առողջ միտքն առողջ մարմնո մեջ միայն կը գտնվի, ճիշտ համարվելու յե նաև, թե առողջ վորոշումներն առողջ հարկերու մեջ միայն կրնան տրվիլ։

Արդո հասարակությունը խիստ աղեկ ըմբռնած է արդեն, թե առողջ դատողությունները կովու միսեն կը բխին, թե պակլայի տրամաբանությունները վատառողջ են միշտ, թե սոխեն հառաջ յեկած խորհրդածությունները սխալ են հաճախ, թե վերջապես մարդ արարածը պարտավոր է յուր ստամոքսին մեջ ամեն որ առնվազն կես ոխա կով իջեցնել, վորպեսզի ստամոքսը կարենա քաջ տրամաբանել և ուղիղ յեզրակացության հանգիլ։

Ձեր ստամոքսն ի՞նչ կարծիք ունի այս մասին։

Իմ ստամոքսս պատիվ ունի կարծելու, թե քիչ մը վորկրամոլություն կը նշմարվի մտքին գործողությունները միայն ստամոքսի վերագրող փիլիսոփայության մեջ։

Ի՞նչ ըսել է։

— Աղեկ կշտացուր գլխ, վոր աղեկ տրամաբան ըլլամ։

Քանի մը ստամոքսներ ալ կը կարծեն մինչև իսկ, թե մարդուս բարի հատկությունններն ալ պիֆթեքեն հառաջ կուգան։

— Աղեկ կշտացուր ինձի, վոր հավատարիմ մնամ և գողություն չընեմ։

Այս տեսությամբ հանճարն ալ կովու միս է, ազնվությունն ալ կովու միս է, առողջությունն ալ կովու միս է, մեկ խոսքով մարդուս միտքն ալ, սիրտն ալ, մա՛րմինն ալ կովու միս են։ Անդին ի՞նչ մնաց։

Ի՜նչ վորկրամոլություն մարդու, վոր ամեն պարագայի մեջ նախ և առաջ յուր փորը գոհացնել կը ջանա և յերբ անիրավություն մը պաշտպանե կամ գողություն մ'ընե, կաշխատի ինքզինքն արդարացնել սա փաստաբանությամբ.

— Լավ կշտացած չեյի, սխալ խորհեցա, կովու միս կերած չեյի ու կարծեցի՝ թե գողությունը վեհանձնություն է։

Ցեվ որենքն ալ պատրաստ է այս պատասխանն իբրև մեղմացուցիչ պարագա ընդունիլ։

Մարդակազմության գիտության համաձայն, ցարդ մարդու դեմքը կը քննեյինք անոր մտքի և սրտի կարողությունները հասկնալու համար, այսուհետև անոր փորին պիտի զարնենք իմանալու համար, թե բանաստեղծությա՞ն կոչում ունի, թե իմաստասիրության. աստվածաբանությա՞ն, թե պյուխներաբանության[90]), ճշմարտախոսությա՞ն, թե ստախոսության։ Վոչ միայն անոր փորին պիտի զարնենք, այլ նաև պիտի քննենք անոր բընակությունն ալ, վորովհետև, ինչպես ըսի, առողջ վորոշումներն առողջ հարկերու մեջ միայն կրնան տրվիլ։

Ա՛րդ, քննելու շատ բաներ ունինք այսոր։

Այսոր ամեն տեղ կը խոսվի մեր ազգային Պատրիարքարանի վրա, այսինքն անոր հնության և խոնավության վրա։ Ցեթե կուզեք հասկնալ, թե ինչու յերեկ չեր խոսվեր և այսոր կը խոսվի Պատրիարքարանի շենքի հնության վրա, պատճառն այն է՝ թե նախ Մասեըո[91]) միշտ կը խոսեր անոր վրա, յերկրորդ՝ յերեկ չեյինք գիտեր, թե Պատրիարքարանի շենքն այնքան հին, այնքան խոնավ է։ Շատ ազգայիններ այն ատեն Պատրիարքարան կը տեսնեն, յերբ քեզինե մ'առնելու հարկին մեջ գտնվին — ազգային տուրք չվճարելու լավագույն ճանրաններեն չե Պատրիարքարանի ճանբան։ — Ազգայնոց մեկ մասն ալ այն ատեն կը տեսնեն Պատրիարքարանն, յերբ նորընտիր Պատրիարքը տեսնելու փափաք ունենան։

Արդ, անոնք, վոր վերջին որերս Ամենապատիվ Ս. Պատրիարքին այջն համբուրելու համար բարեհաճեցան Պատրիարքարան յերթալ, տեսան անոր շենքին հնությունն և սկսան փափաքներ այտնել անոր ի հիմանե կործանման և ի հիմանե կառուցման համար։ Ըստ մեզ, գործն ավելի ապահովյալ կը լիներ, յեթե նախ անոր ի հիմանե կառուցման սկսեյին և հետո ի հիմանե կործանման։

Այո, այս փափաքները հայտնվեցան Պատրիարքարանի մեջ։

Չգիտեմ՝ թե Պատրիարքարանե դուրս ալ կրկնվեցա՞ն նույն փափաքները։

Բայց ինչ վոր ալ ըլլա, հայտնի է, թե մեր Պատրիարքարանի շենքը տպավորություն չունի առողջ վորոշումներ արտադրելու և ամեն հայ կը փափաքի, Պատրիարքարանի մեջ, կամ Պատրիարքարանեն դուրս, վոր նորոգվի այդ շենքը։

Այս փափաքը շատ բանավոր է, թեև մեր մեջ բանավորություն չփնտռվեր փափաքներու մեջ։ Ազգային մեռելոց համար ունինք Բերա, վորպես կը հաստատեն, սքանչելի գերեզմանատուն մ'որ ոտար մեռյալներու նախանձը կը շարժե։ Մեր մեռյալները մեր կենդանիներեն շատ ավելի յերջանիկ յեն։ Վողջ ըլլան։ Աստուծմեն ազգայնոց շնորհիվ քանի մը տարիեն պիտի ունենանք նաև ազգային հիմարներու, ապուշներու, անառակներու, հիվանդներու և ծերերու համար ընդարձակ և յեվրոպական ճաշակով կառուցված հոյակապ շենքեր՝ վորու բնակիչներն՝ ևս, քաջառողջներու հետ բաղդատմամբ, նախանձելի վիճակ մը պիտի ունենան։ Այնպես վոր, յերբ ոտարի մը մեր հառաջադիմության վրա գաղափար մը տալ ուզենք՝ անոր ձեռքեն պիտի բռնենք, նախ պիտի առաջնորդենք իրեն Բերա և պիտի ներկայացնենք մեր մեռյալները, հետո Յեդիգուլե տանելով զինքն՝ կարգավ պիտի ներկայացնենք իրեն մեր խենդերը, մեր ապուշները, մեր անառակները, մեր հիվանդներն և մեր ծերերը. բնական է, վոր մեր խենդերն ալ, մեր ապուշներն ալ, մեր անառակներն ալ ի պատիվ ազգին քիչ մը խենդություն քիչ մ'ալ անառակություն պիտի ընեն այն ոտարին, վորպես վարժարանի մ'աշակերտները սովոր են իրենց լավագույն շարադրությունները ցույց տալ իրենց այցելող հյուրերուն։ Ոտարն ալ անշուշտ պիտի հրճվի, յեթե հայասեր է, յուր տեսած մեռելության, հիմարության և անառակության վրա, գոհ սրտով պիտի մեկնի։

Իսկ այս ոտարն յեթե անքաղաքավարությամբ հարցնե մեզ.

— Տեսա ձեր մեռյալները, ձեր հիմարներն և ձեր անառակներն. ուրիշ բան չունի՞ք դուք. ո՞ւր են ձեր կենդանիները, խելացիները և զգաստները. ասոնք ալ մեռյալներու, հիմարներու և անառակներու հե՞տ կը բնակին։ Ո՞ւր է այս գեղեցիկ վայրերն ու հաստատությունները վարող և անոնց վրա տիրող մարմինը։ Ո՞ւր է ձեր կեդրոնը... Այն ատեն պիտի տխրինք քիչ մը. վորովհետև պիտի ստիպվինք իրեն ներկայացնել ծառ մ'որուն արմատը փտած է և ճյուղերը ծլած ծաղկած։ Կարելի՞ յե յերևակայել ասանկ ծառ մը բնության մեջ։ Ասանկ բնական ծառ մ'երևակայելն առողջ մտքի գործ չե, բայց ասանկ արվեստական ծառեր շատ կը բուսնին մեր ազգին մեջ։

Ուրիշի ոգնելու փափաքը գթութենե կը ծնի։ Հիվանդ մը, ծեր մը, մեռյալ մը, հիմար մը, աղքատ մը գութ և կարեկցություն կը շարժեն, բայց Պատրիարքարանի խարխուլ շենքն վո՛չ սիրտ կը շարժե և վո՛չ միույն խղճին կը դպչի։ Գթասիրտ անձ մը հիվանդին, աղքատին ոգնելով կատարյալ գոհացում կուտա յուր խղճին և յերկնից արքայությունը ժառանգելու իրավունք կստանա, բայց Պատրիարքարան մը կառուցանելու մեջ մարդասիրական բան մը չտեսներ։

Կրցե՞ Պատրիարքարանի շենքին այսպես խարխուլ մնալուն գաղտնիքը հայտնել քիչ մը։

Բայց ազգ մ'որ հառաջադիմության ճամբուն մեջ է, ամեն բան գթութենե սպասելու չե։ Յեթե գթությունը կըսե մեզ, թե «Ձեր Պատրիարքարանի շենքը կրնա տակավին քանի տարի դիմանալ» Ազգային պատիվն ալ կը պոռա, թե «Այդ շենքն ամիսե մ'ավելի չերթար»։

Բայց այս նկատումներն ալ կը կորուսանեն իրենց կարևորությունն, յերբ հիշենք, թե առողջ վորոշումներ արտադրելու պետքն, վորուն այնքան պետք ունինք, կատիպե զմեզ հնութենե և խոնավութենե փրկել այդ կեդրոնը։ Յեթե հարկ ըլլա՝ նույն իսկ անոր կլիման ալ փոխել պետք է, վորպեսզի խոնավ վիճաբանություններե, դատողություններե և վորոշումներե փրկվինք։

Ժամ է, վոր Ազգային ժողովը հայտնի քվեարկությամբ յուր վորոշումը տա այս մասին. վորովհետև ինչ վոր ԱՅՈ է հայտնի քվեարկությամբ, ՎՈՉԻ կը փոխվի գաղտնիով։

Ն Ե Տ

Խ. Հ. Դերձակյան ստորագրությամբ նամակ մը ստացանք Իզմիրեն... Դժբախտաբար։ Արդ նամակագիրն զմեզ լիրբ, համարձակ, ապերախտ, խարդախ, վատ անվանելեն յետքը՝ կը հավելու, թե ինձի պես մարդու հետ գործ ընել չուզեր։ Նամակըն կարդալեն հետո քիչ մը մտմտալով սա համոզումը գոյացուցինք, թե Մեծապատիվ նամակագիրն զմեզ ուրիշ մեկու մը նմանցուցած է անպատճառ։

Ալֆոնս Քարի վողջմտությանը վրա վոչ վոք կը կասկածի։ Այս Ալֆոնս Քարը լավ չեմ հիշեր, բայց կը կարծեմ, թե նմանորինակ լեզվով իրեն նամակ գրողի մը ըսած է առենոք. «Հաճեցեք, պարոն, ուղարկել ինձ ձեր ականջներուն հասցեն»։

Խիկար[92]) վոր արտոնություն չունի անանկ խոսքեր ընելու՝ խոնարհաբար կը խնդրե Իզմիրի բարեկամ և պերճախոս առաջնորդեն, վոր քիչ մ'ավելի ուժ տա յուր քարոզներուն։

Աղաչելով Մեծ. Խ. Հ. Դերձակյան եֆենտին, վոր շնորհ ընե ընդունիլ մեր ամենախոնարհ հարգանաց հավաստիքն, կը խնդրենք, վոր ուշադրություն ընե քիչ մը հետևյալ տողերուն։

Խիկարի ամբողջ թերթերն հրատարակված են և գործակալաց ղրկված են։

Մեր Իզմիրի նախորդ գործակալեն չունեցանք ցարդ նամակ մ'որ հայտնե, թե Խիկարին այսինչ թիվը ստացած չէ։

Խիկար 100 մեճիտիյեյի փոխարեն 10 վոսկի միայն ընդունած է շնորհիվ յուր գործակալին ազգասիրության, ինչպես ըսած ենք արդեն։

Արդ, անոնք, վոր կուզեն ստանալ Խիկարի նախորդ շրջանի թիվերն՝ դիմելու յեն մեր Իզմիրի նախորդ գործակալին։ Իսկ անոնք, վոր չեն ուզեր՝ իրենց ընդունած թիվերն յետ դարձնելու իրավունքն լիուլի կը վայելեն։

Զորավոր ապացույցներ կան, վոր կը հաստատեն, թե Խիկարի ամբողջ թիվերն հասած են Իզմիր։

Արդ, իրողությունն այսպես ըլլալով, կը խնդրեմ, վոր յերկու բարեկամաց կարդաք ձեր ինձ գրած նամակն և անոնց կարծիքն ինձ հաղորդել հաճիք։

Գալով այդ կետին, թե այսուհետև չեք ուզեր Խիկար ստանալ, համամիտ չեմ ձեզի։ Պետք է վոր կարդաք դուք Խիկար, և յես պիտի ղրկեմ ձեզի, ամեն միջոց ի գործ պիտի դնեմ, վոր կարդաք զայն, մինչև իսկ բռնի պիտի կարդալ տամ, առանց ստակ մ'ուզելու սակայն։ Դուք, յեղբա՛յր, կարոտ եք Խիկարին, վոր ձեր քաղաքավարական յեղանակն կրնա բարեփոխել, և, հետևապես, որ մը փրկել զձեզ թուքե մը կամ ծեծե մը, վորովհետև քիչ մը դժվար է ամեն տեղ Պարոնյաններու պես մարդոց հանդիպել։

Այս առթիվ կաղաչենք մեր Իզմիրի Մեծ. գործակալն, վոր հաճի հինգ օրինակ Խիկար ղրկել ձրիաբար առ Մեծ. Խ. Հ. Դերձակյան եֆենտի։ Միայն թե ամեն անգամ ստացագիր մ'առնելի իրմե սապես. «Ստացա հինգ օրինակ Խիկար (այնինչ) ամսո»։

Միտք ունինք Դերձակյան եֆենտիի նամակն ամբողջ հրատարակել, յեթե հաջողինք Միարիթեն[93]) արտոնություն առնուլ։

— Ծաշակի[94]) մեջ կարդացի՞ր Տելմաքա[95]) նոր թարգմանությունը։

— Երկրագունտի[96]) մեջ անոր քննադատությունը կարդացի միայն։

— Ի՞նչպես գտաք։

— Ինչպես վոր արժան է գտնել։

— Թարգմանիչը գիտե՞ք։

— Վո՛չ։

— Ս. Գ. ստորագրությամբ մեկն ի հայ հաներ է։

— Ի խաչ հաներ է, ըսե սըվոր։ Հյուրմյուզի[97]) թարգմանության վրա քննադատություն մ'ավելի բանավոր եր։

Աղեքսանդրիայեն նամակ մ'առինք Գ. Ա. ստորագրությամբ։

Հարգելի նամակագիրն Տյուզենճյանի համարակալության մասին մեր ըրած դիտողությունները գրեթե ամբողջապես կընդունի և միայն յերկու կետի մեջ տարբեր կարծիք կը հայտնե։

Հակառակ մեզ յեղած հանձնարարականի չկրցինք հրատարակել այդ նամակը, վորովհետև յուր հայտնած յերկու դիտողությունները դպրոցական գրասեղանի վրա հերքվելու արժանի յեն և վոչ թե հրապարակի վրա։

Վիեննայի Մխիթարյան[98]) վանքեն հրատարակվեցավ թերթ մ'Ամսօրյա Հանդես անուն, վորուն առաջին թիվը ստացանք և կարդացինք, թե հավը ինչպես կելնե հավկիթեն։

Մխիթարության արժանի թերթ մ'է սա. և տարակույս չկա, թե ավելի շատ համբավ կը գտներ, յեթե Վարնայի գյուղերեն մեկուն մեջ լույս տեսներ։

Կը վախնանք, վոր Վիեննայի Մխիթարյան վանուց համբավը պիտի նսեմացնե այս հանդեսն, յեթե սա չարատավորե հիշյալ վանուց հռչակն։

Մեր բարեկամներեն մին կիմացունե մեզ, թե գյուղի մը պանդուխտ քահանան յեկեղեցվո մեջ հետևյալ կերպով հիշատակեր է նոր տարին.

«Յեշ. դկ. գ. որ պահոց Ծննդյան և Կաղանդ. Հն. Տոն անվանակոչության Տյառն, Լտ. Հունվ. 13։ Տոմ. Բաղոցի Իգ։ Հայսըմ Բաղոցի Իգ. Ս. Արամա ժե։ Տճ. ըսպիլ ախըրի տասնեինը և Գասըմի վաթսունևութն։ Հր. Թեպեթի տասնյոթն, վորոց այսօր է հիշատակ և այլն[99])»։

Մենք չհավատացինք, այսու ամենայնիվ ուզողը կրնա հավատալ։

Ցավ մենք խեղճ արարածքս կը կարծենք, թե վերջացավ բարեկենդանը.

Տասնիններորդ լուսավորյալ դարուս մեջ դիմակի գործածությունն սովորություն մը, պետք մը դարձած է։ Մարդիկ սորված են ա՛լ իրենց դեմքը դիմակ անցունել, ինչպես վարժված են իրենց վոտքը գուլպա և իրենց ձեռքը ձեռնոց անցունելու։ Ընկերության մեջ, խորհրդարանաց մեջ առանց դիմակի մտնելն, բոկոտն և բոբիկ ձեռքով մտնելու չափ ծաղրելի յե։ Ուստի անոնք, վոր անդիմակ են՝ ըմբռնած չեն տակավին դարուս քաղաքակրթության վոգին, անկիրթ են, հանձնապաստան են, տիրացու յեն, դասատու յեն, տնտես են, ժամկոչ են, մեռելաթաղ են, ննջեցյալ են, և իբր այն՝ արժանի դիմակավորաց կարեկցության։

Աստվա՛ծ իմ, յե՞րբ պատիվ պիտի ունենանք տեսնելու մարդ մ'ըստ պատկերի ձերում։ Չմեռած գոնե անգամ մը բնական դեմք մը տեսնելու բարեբախտությունը պիտի չունենա՞նք։ Դիմակներու բաղխումեն դեմք մը չպի՛տի ծագի բնավ։

Տասնյոթը տարիներե հետե կաղաչեմ բազմանուն կղերականի մ'որ հաճի վայրկյան մը վար առնուլ յուր դիմակն և ցույց տալ ինձ յուր դեմքը։ Բոլոր աղաչանքս ու պաղատանքս ապարդյուն կը մնան, կը մերժե խնդիրքս և,

— Չըլլար, ամոթ է, պատասխանը կուտա ինձ միշտ։

Ո՜հ... ամչնալն ամոթ է այսոր։

Վա՜յ անոնց, վոր սորված են ամչնալու։

Յերանի՜ քեզ վո՛ Բ... պիտի ապրիս դու։

Խիկար շատոնց կորուսած է բնական դեմքեր տեսնելու հույսը, վորովհետև համոզված է, թե վորքան հարգվի դիմակներու ազատությունն՝ այնքան ավելի պիտի ծածկվի ճշմարտությունը։ Խիկարին այս համոզումն՝ որ ըստ որե ավելի կը հաստատեն այն խնդիրներն, վորք իրարու կը հաջորդեն ազգային շրջանակին մեջ։

Ազգային լրագրաց մեջ...

Չմոռնանք ըսել, թե ազգային լրագիրներն ալ դիմակավոր են։

Ազգային լրագրաց մեջ խնդիր մը կը հրատարակվի։

Այժմյան խնդիրներն, ինչպես հայտնի յե, դիմակավոր կը մտնեն ու կը պարեն լրագրաց մեջ։

Ընթերցողն կաշխատի, վոր այդ խնդրույն խորը քննե, ուսումնասիրե և հետո իրեն համար համոզում մը գոյացնե։ Հազիվ թե համոզում մը գոյացնել կը կարծե և ահա լրագիրն ու խնդիրն կը փոխեն իրենց դիմակը։ Ընթերցողը կսկսի խընդիրն անոր ստացած նոր դիմակեն քննել, և խնդրույն վրա գաղափար մը կազմելու պահուն, ուրիշ լրագրի մը մեջ խնդիրն բոլորովին տարբեր կաշիով դիմակավորյալ կը տեսնե։ Կը կործանին, հիմն ի վեր կը տապալին յուր յենթադրությունները, դատողությունները և հետևությունները։ Հետաքրքիր է, սակայն կուզե հասկնալ։ Ծանոթներեն տեղեկություն առնուլ կորոշե։ Որը տասը բարեկամե տեղեկություն կը հարցնե. անոնք ալ կուտան։ Այս տասը տեղեկություններն ալ իրարու հակառակ են, այնպես վոր մեկ որվան մեջ տասն անգամ տարբեր պատասխաններ տալու կստիպվի բարեկամաց.

— Անանկ է նե՝ կը դպչի, ինձի ուրիշ կերպով հասկցուցին։

— Անանկ է նե՝ չդպչիր, ինձի տարբեր կերպով պատմեցին։

— Գործն ասանկ է նե՝ ասոնք իրավունք ունին։

— Գործն ատանկ է նե՝ ատոնք իրավունք ունին։

— Գործն անանկ է նե՝ անոնք իրավունք ունին։

— Այո՛, այո՛, ասանկ ըլլա նե՝ տալու յե։

— Ատ ուրիշ խնդիր, անանկ է նե՝ հարկավ տալու չէ։

— Յեթե ըսածդ ստույգ է՝ յես ըլլամ նե՝ կուտամ։

— Տակեն այն խնդիրը կը ծագի կոր նե՝ չեմ տար։

— Վրայեն ատ խնդիրը կուգա կոր նե՝ կուտամ։

Այսչափ դիմակներու մեջ կարելի՞ յե միթե դիմակավոր համոզում չունենալ։

Հատ մ'ալ։

Այս անգամ ալ Աղեքսանդրիայեն ստացանք նամակ մը լի հայհոյությամբք և սպառնալյոք։

Այս անգամ նամակին ստորագրությունն է Գ. Արշավիր։

Գ. Արշավիր քա՛ջ համարակալ մ'է, ըստ յուր վկայության։

Յուր տոմարագիտական պատվույն խնայելու համար միայն չհրատարակեցինք Խիկարի վերջին թերթին մեջ յուր նա–

մակն, վոր զմեզ գովելով կսկսեր և կը վերջանար ընդունելով Տյուզենճյանի համարակալության ասթիվ մեր քննադատությունն, միայն յերկու դիտողություններ ընելով, դիտողություններ՝ վորոց հրատարակությունն յուր հաշվագիտական տաղանդին—Գ. Արշավիր հաշվագիտական տաղանդ ունի, միշտ ըստ յուր վկայության—վնասակար դատվելով չհրատարակվեցան Խիկարի *մեջ։*

Գ. Արշավիրի հիշյալ դիտողությունները, վոր մեծ արժեք ունին՝ դարձյալ ըստ յուր վկայության, չհրատարակվեցան, վորովհետև անոնք, ինչպես հասկցուցած ենք մեր վերջին թերթին մեջ, դպրոցական գրասեղանի վրա միայն կրնան ներկայացվիլ տկար աշակերտաց կողմե։

Կարծիքներն ազատ են, հետևաբար Գ. Արշավիր ազատ և հայհոյել, ինչպես նաև ուրիշ թերթի մը մեջ հրատարակել յուր դիտողություններն ու քննադատությունները, բայց իրավունք չունի ստիպել Խիկարն, *վոր իմաստակաց հետ վիճաբանության մտնե։*

Գ. Արշավիր, գիտցեք, թե Խիկար ալ կրնա բարկանալ, և թե՝ խնդիրն յերբ հայհոյության վրա յե՝ առաջ ատված կրնա զքեզ հայհոյությանց մեջ խեղդել իբրև ազգային թերթ, այնքան հաչակ ու համբավ ունի ազգային մամուլն պերճախոսության այս գլուխին մեջ։

Գործդ գնա, ուրեմն։

Այս անգամ աղով ազատեցար, ուրիշ անգամ զգուշացիր սպունգե[100])։

Ամենապատիվ Ս. Պատրիարք հայրն հրաժարական տված ե։
Խիկար *վստահ ե, թե նորին ամենապատվությունն պիտի հաճի հրաժարականն յետ առնուլ։*

— Ցրվի՛չ, գնա սըկե համրիչ մ’առ ինձի համար[101])։

Ժեռոտելի բասթիյլները... *ամեն որ կը կարդամ ազգային հրագրաց մեջ։ Զմեռը բաց կառքով պտըտե՛, չես հիվանդանար, բավական, և վոր* ժեռոտելի բասթիյլներեն *մեկ յերկու հատ ուտես։ Բազանիքեն յե՞լ, շաբաթ մը առանց հագուստի պտըտե՛, բան մը չես ըլլար, միայն թե* ժեռոտելի բասթիյլներեն *հատ մը կլլե՛։*

Կուրծքդ տկար ե, կը հազաս, գիշերները չես քնանար։ Մի՛ վախնար, ժեռոտելի բասթիյլներեն *յերկու հատ ծամե՛։ Կուրծքդ յերկաթյա յե, չես հազար, քաջառողջ ես,* ժեռոտելի բասթիյլներեն *ճաշակե՛, վոր... հազաս։ Բեմբասաց ես,* ժեռոտելի բասթիյլներեն *կեր, վոր բեմբասացությանդ մեջտեղին հազե չբռնվիս։ Գլխու ցավ ունիս. բան մը չե, անմիջապես կանցնի, քանի մը հատ* ժեռոտելի բասթիյլներեն *առ։ Փորդ կը ցավի, թանջք ունիս, տենդ ունիս, մոմառուք ունիս,* ժեռոտելի բասթիյլներեն *մի՛ անցնիր։ Ծախք ունիս, անգործ ես, դրամի կարոտություն ունիս, կը տանջվիս. ժամանակ մի՛ անցուներ,* ժեռոտելի բասթիյլներեն *գործածե՛։*

Այդպես կը ծանուցանեն ազգային լրագիրներն, վորոց ճշմարտախոսության վրա չկասկածիր Խիկար։

Ցեվ ի՜նչ ծանուցումներ ժեռոտելի բասթիյլներուն *օգտակարությունն զգացնելու համար հասարակության. վո՜րքան խոռագիրներ, վո՜րքան ճիգեր... գրականության բոլոր ճյուղերուն մեջ մտան* ժեռոտելի բասթիյլները: *Բանաստեղծ մը* ժեռոտելի բասթիյլներեն *վոտանավոր մը շինեց, բայց, շիտակը խոսելով, համով չեր։ Ուրիշ մը բեմբասացություն մը շինեց, ան ալ չեր հաջողած։ Ըստ մեզ,* ժեռոտելի բասթիյլներուն բոլոր մազուրքան *ամենեն աղեկն եր։* ժեռոտելի բասթիյլներուն *նորավեպն ալ գեշ չեր, թեև չենք ուրանար, թե ազգային խառն ժողովն՝ վոր քանի մը շաբաթե ի վեր կը հազա՝ կրնա օգտվիլ* ժեռոտելի բասթիյլներեն:

Հապա Սինկերի *կարի մեքենաներուն ի՜նչ կըսեք։*

Բնավ աչքես չհեռանար տեսարանն, վորուն որ մը ներկա գտնվեցա յես ու մխամտությունը։

— Ի՞նչու տխուր ես։

— Գործս ավրվեցավ։ Տարի ու կես ե, վոր թշվառության մեջ կապրիմ... կինս ալ մեռավ... վերջապես դժբախտ եմ։

— Կուզե՞ս յերջանիկ ըլլալ։

— Ո՞վ չուզեր։

— Գնա, շուտ մը Սինկերի *կարի մեքենա մ’առ։* ժեռոտելի բասթիյլներն *ալ փորձե՛ անգամ մը։*

Քառասուն անգամ պատվիրած եմ ժամկոչներուն և լուսարարներուն, վոր յեկեղեցվո արարողության ժամանակ, կամ մանավանդ քահանայից աղոթք, մաղթանք կամ տաղ կարդացած ժամանակը չերթան դասին յետեւեն քահանայից ականջին ի վար փսփսալու, անոնց հետ խոսելու և աղոթքն, շարականն և այլն ընդմիջելու։

Քառասուն անգամ ըսած եմ զայս և քառասուն անգամ յես միայն լսած եմ։ Քահանայք և ժամկոչք, կերևի թե շատ ընտանեցած են աստուծո հետ և չեն զգար, թե կը զլանան աստուծո այն հարգանքն, վորուն իրավունք ունի նա։ Չեն խորհիր անոնք, վոր իրենց անվայել ընթացքով գայթակղություն կը պատճառեն բարեպաշտ ժողովրդյան։ Ի՞նչ մեղքս պահեմ, քանի անգամ վոր յեկեղեցի գնացած եմ, բարկությամբ դուրս յելած եմ։

Աղնվապետական գյուղի մը մեջ ենք։

Յեկեղեցվույն դռները կը բացվին ժամը տասներկուքին (կարծեմ). Սրբազանը պիտի յերգե։

Քահանան կսկսի.

— Հարևելից մինչ ի մուտս...

— Ժամկոչը (դասին յետևեն) տեր հայր... տեր հայր...

— Ի հյուսիսո... ի՞նչ կա.

— Փսըփսըփսը...

— Յեվ ի հարավո... կեցիր...

— Փսըփսըփսըփսըփսըփսըփսըփսըփսըփսըփսը։

— Հասկցա ճանըմ... ամենայն ազգ և...

— Փսըփսըփսըփսըփսըփսըփսըփսը։

— Կյումիշ պալըղը։

— Փսըփսըփսըփսըփսըփսըփսը։

— Ժամը չորսին կերթամ։

— Փսըփսըփսը...

— Շատ աղեկ, շատ աղեկ...

— Հասկցա պապամ... ազինք... հորհնություն նոր որհնեցեք... Թո՛ղ սպասե քիչ մը... զարարիչն արա... Պողոսին խաբար զրկեցեք... բարածոց վոր ծագյաց գլուխ... բազարըլըն ինձի ձգեցեք.. արեգականն այսոր հաչխարհս... հայտե, յերթանք։

Մեծ ցավ է մեզ յեկեղեցվո սեմեն ներս տանիլ Խիկարն․ և յեթե ստիպվեցանք այսոր սույն տողերը գրել՝ մեր միակ նպատակն եր և է ցույց տալ ընթերցողաց, թե վորքան կը նսեմանա մեր յեկեղեցվո յերգեցողությանց վսեմությունն նմանորինակ պարագաներու մեջ։

Բայց ավելի մեծ ցավ է մեզ հայտնել, թե քառասուն անգամներեն ավելի ներկա գտնված ենք այսպիսի տեսարաններուն՝ վորք շատ գեշ տպավորություն ըրած են բարեպաշտ ժողովրդյան վրա, վորուն մեկ անգամն ըլլալու պատիվը ունինք և մենք անարժանաբար։

Վո՛ պաշտոնյայք յեկեղեցվո, մեր ուզածն մեծ բան մը չե։

Յերբ յեկեղեցի մտնեք, կայնեցեք այնպես, վորպես պիտի կայնեյիք աստուծո առջև կամ պարտատերի մը առջև... գոնե։

Վերջին յերկու ամիսներու մեջ մեր կրոնքն ալ քիչ մը չարչարվեցավ։

Կրոնական ժողովը[102]) կը հանձնարարե Գեր. Մանկունի յեպիսկոպոսին[103]) քահանա ձեռնադրել Ս... եֆենտին։

Գեր. Մանկունի յեպիսկոպոսն կը մերժե, առարկելով, թե Մաշտոցը թույլ չտար քահանա ձեռնադրել Մեծ պահոց մեջ։

Կրոնական ժողովը կը հրավիրե Գեր. Մանկունի յեպիսկոպոսն, վոր փաստերով արդարացնե յուր առարկությունը,

Գեր. Մանկունի յեպիսկոպոս վախըք չունիմ, Եջմիածին հարցուցեք, կը պատասխանե։

Խնդիրը կը վերջանա... դարձյալ գայթակղություն ժողովըրդյան մեջ։

Աւիթն ներկայած է, կարծեմ, հարցնելու, թե արդյոք Մաշտոցը թույլ կուտա՞, վոր մեկը, որինակի համար, վանքե մը, ըսենք, քանի մը սնտուկ բուրըլի վերցնե, և, միշտ որինակի համար, գյուղերու մեջ խանութներ գնե և, որինակի համար, Գ... գյուղի մեջ տուներ շինել տա Մեծ պահոց մեջ։

Ներեցեք համարձակության... խոսքին կարգն յեկավ ու չկրցի ինքզինքս բռնել։

Ասոր համար ալ Եջմիածին դիմելու յե...

Հեղինակք վոմանք սկսած են քանի մը ժամանակե հետե ի պետս յուրյանց դասագիրքեր հրատարակել։

Տեսանք, Ուսումն բարոյականի անուն գրքույկն, աշխատասիրյալ Հ. Յեղիշե վարդապետ Այվազյանե։

Պ. Հրազդան[104]) կը փափաքի, վոր յուր վրա խոսին, միշտ խոսին, աղեկ կամ գեշ խոսին վերջապես։

Պ. Հրազդան այս անգամ ալ զմեզ խոսել տալու փափաք կը հայտնե, յուր սրտաճմլիկ Որվան կյանքով[105]) ուզելով ճմլել նաև մեր... վոտքը, մոռնալով սակայն, թե հեծնելու արհեստը շատ հառաջ գնացած ե այսոր և չե ինչ, վոր եր Բաղդամու որով։ Բնական ե ուրեմն, վոր թույլ չտանք իրեն շիտակ ճամբան թողուլ ու պատերուն քսվիլ։ Բնական ե նաև, վոր իրմե ճմլվելու ընավ յերկյուղ չունենանք, վորքան ալ յերերածուփ տատանի նա, վորովհետև զՊարոնյան բարձյալ տանի[106])։

Պ. Հրազդան ազատ ե յերիտասարդ խմբագրի մը մահեն և յեպիսկոպոսի մը գերեզմանեն ծաղու նյութ քաղել, ինչպես նաև ազատ ե մեկու մը մահվան վրա կատակերգություն մ'արտասանել իբրև դամբանական. այս յուր գրական ճաշակն ե, վորուն ընկեր չունինք։ Բայց յերբ դեպքերը կը խեղաթյուրե, կամ սուտն իբրև ճշմարիտ կլլեցնել կուզե՝ կապացուցանե, թե կը վախնա կամ ճշմարտութենե կամ հրեշտակե։ Յեվ այս մասին ընկեր ունինք։

«Ծաղկազարդի իրիկուն մը, կըսե Հրազդան, քարոզիչ յեպիսկոպոս մը ժողովրդյան կըսեր. «ավանակներ եք, եշեր եք... բայց իմ եշերս չեք, բայց իմ ավանակներս չեք, հապա Քրիստոսին եշերն եք, Քրիստոսին ավանակներն եք»։

Վորքան տող այնքան սխալ։

Անհավասիկ բուն յեղելությունը։

Մեծ. Արփիար եֆենտի Արփիարյան Վարդավառի շաբթուն մեջ որ մը հիշյալ լուսահոգի յեպիսկոպոսին տունը կերթա մեկ բարեկամովս։ Խոսակցության միջոցին Արփիար եֆենտին լուսահոգիին արժանապատվությունը կը վիրավորե։ Լուսահոգին՝ վոր ազատամիտ մեկն եր՝ այն ատեն կը պոռա Արփիար եֆենտիին «Դուք ավանակներ եք, եշեր եք... բայց իմ եշերս չեք, իմ ավանակներս չեք, հապա... յան եֆենտիի եշերն եք...»

Լուսահոգին ճշմարտախոսության համար հոգի կուտար։

Մասնավոր տեսակցություն մ'իբր յեկեղեցվո բեմին վրա կատարված իրողություն մը նկարագրել և Քրիստոսի եշն... յան եֆենտիի իշուն հետ շփոթել պարզապես աչք գոցել ե կամ ճշմարտության առջև կամ գայլի մ'առջև։

Պ. Հրազդան կը շարունակե.

«Յեպիսկոպոսի ձայնը զարհուրելի տեսակեն վորոտընդոստ եր և նույն շաբթուն Պարոնյան, Թատրոնի[107]) մեջ կը գրեր, թե Որթագյուղի քարոզիչին ձայնը կը լսվեր մինչև Նավամատույցեն, վոր յեկեղեցիեն բավական հեռու յե։ Յեվ յեպիսկոպոսն հաջորդ կիրակին կը պատասխաներ—միշտ սեղանին վրայեն—յես ինչ ընեմ, վոր այդ զաղեթաճիին ականջներն այնքան յերկայն են, վոր այնքան հեռու տեղեն ձայնս կը լսե»։

Դարձյալ սխալ։ Լուսահոգին պատասխանեց վոչ թե բեմին վրայեն՝ այլ յուր տանը մեջ, վոչ թե ժողովրդյան՝ այլ Թատրոնի խմբագրին։ Անհավասիկ յուր պատասխանը.

«Ձեզի խաբար բերողին ականջները քիչ մը յերկար ըլլալու յեն»։

Այն թվականին Մեծ. Արփիար եֆենտի Արփիարյան եր մեզի ասանկ լուրեր տվողը։ Քանի մ'որ յետքը տեսանք Արփիարյան եֆենտին հիշյալ Նավամատույցին վրա և ցավ հայտնեցինք իրեն, ըսելով՝ թե սուտ տեղեկություններ կը հաղորդեր մեզ։ Արփիարյան եֆենտի պատվույն վրա յերդում ըրավ, թե Նավամատույցեն ականջովը լսած եր լուսահոգիին ձայնը։ Յեվ մենք ալ հավատացինք, վոչ թե վստահելով միայն յուր ականջներուն յերկայնության, այլ նաև փորձառությամբ համոզված լինելով արդեն, թե որ մը որանց սուտ լուր մը հաղորդած չեր մեզ։

Նույն համոզումն և կարծիքն ունինք նաև այսոր Մեծ. Արփիարյան եֆենտիի վրա և լիահույս ենք, թե պիտի փութա գայթակղյալ միտքերն բուժել, ուղղելով սխալն Հրազդանի՝ Միդասա[108]) թոռան, վորուն մնամ հարգանոք խոնարհ համեստագործ։

Ավետիս Սուրենյան, վկայալ փաստաբան Գաղղիո իրավագի-տության համալսարանի, Պահճե քարու[109]), Շեյխ-Իսլամ խան, յերկրորդ հարկ, թիվ 6 ստորագրությամբ քննադատական նա-մակ մը հրատարակվեցավ Ճերիտեյի Նարգիյեյի[110]) մեջ ընդդեմ քանի մը կետերու Մեկնութիւնք վաճառականական որինաց հոդ-վածին, զոր միևնույն թերթին մեջ կը հրատարակե Մեծ. Սիմոն եֆենտի Թընկըրյան։

Մեծ. Սիմոն եֆենտի Թընկըրյան փոխանակ հստակ և ա-մեն մահականացվաց հպելի լեզվով պատասխանելու յուր քըն-նադատ Մեծ. Ավետիս եֆ. Սուրենյան, վկայալ փաստաբան Գաղ-ղիո իրավագիտության համալսարանի, Պահճե Քարու, Շեյխ Իս-լամ խան, յերկրորդ հարկ, թիվ 6 ին, բավական շնչարգելու-թյուն պատճառող և առատ քրտինք բերող ոճով մը խնդիրը կը շփոթե. հետո քիչ մը Պոսխեն[111]) կը կողոպտե և լատիներե-նը կորսնցնելով սաբիենս քիսիմորում ֆոնսիլիա Ֆաքուա Երուեդ[112]) մը կարձակե. պետք չէ, վոր միլիքեմուս այլ լապոռեմուս կըսե առանց ինվիքտա Միներվայի[113])։ Հետո բերնուց կը գրուցե «Բոմ լա դեդ տր Մեսյուզ. մասամ սը մեռո, մասամ է մուդ, ժը նը մը սան քու են պլեսե»[114])։

Voila justemen ce qui fait que votre fille est muett[115])։

Յեթե Մեծ. Սիմոն եֆ. Թընկըրյան այս ոճով և վեցլեզվյան բարբառով պիտի խոսի Մեծ. Ավետիս եֆենտի Սուրենյան վկա-յալ փաստաբան Գաղղիո իրավագիտության համալսարանի, Պահճե Քարու, Շեյխ Իսլամ խան, յերրորդ հարկ, թիվ 6-ի հետ, դժվար չէ գուշակել այժմեն, թե հաղթանակը տանելու հույս չը-տար։ Իսկ յեթե ինքն ևս համոզված է, թե խոսքն արծաթ է իսկ լռությունն վոսկի, վորպես հիշած ենք հունարեն, բոլորով սրտիվ կը բարեմաղթենք, վոր քիչ մ'ավելի վոսկի ունենա։

Վերջացնելով մեր խոսքն՝ մայրաքաղաքիս առողջապահա-կան ժողովույն ուշադրությունը կը հրավիրենք Մեծ Սիմոն ե-ֆենտի Թընկըրյանի հիշյալ հոդվածին վրա։

Կուզե՞ք տունի մը տեր ըլլալ։

Շաբաթը տասը դահեկան վճարեցեք և տունի մը տեր կըլ-լաք։

Ծիկմ՞ր առնենք։

Վո՜չ, Տնտեսական միության գրասենյակը գնացե՛ք, տասը դահեկան վճարեցեք և ընկալագիր մ'առեք։ Ընկալագիր առնելով տուն մ'առած կըլլաք, տասը տարի յետքը, Ազգային հիվանդա-նոցի[116]) կողմերը, ուր գյուղ մը պիտի շինե Մեծ. Հ. Արշակ եֆեն-տին, Տնտեսական միության հիմնադիրն, վոր գործե քաշված, ինքզինքն մարդկության նվիրած է և անոր բարեկեցիկ վիճակ մը պատրաստելու կաշխատի „անդուլ, անդադար։

Տնտեսական Միությունն ունի այսոր իբր հինգ հարյուր անդամներ՝ վորոց թիվը կարճ ժամանակի մեջ կը բազմապատկ-վեր, յեթե հիշյալ Միությունն կառավարութենե վավերացված, և գյուղաշինության արտոնագիրն կառավարութենե ստացված ըլլար։

Այս վավերացման և արտոնագրույն փութացում[illegible] վոչ միայն կը նպաստե անդամոց թվույն հավելման, այլ նաև ազդուապես կը պատասխանե հետևյալ հարցումներուն.

Այն պարագային մեջ. ուր գյուղաշինության արտոնագիրն չստացվի, Մեծ Արշակ եֆենտին պիտի հաճի՞ յետ դարձնել այն գումարներն, զորս ամեն մեկ բաժնին վրա ստացած է և կստա-նա իբրև նախնական ծախք գյուղաշինության.

Անդամոց թիվը վորքան ավելնա կամ պակսի, գյուղաշինու-թյան նախնական ծախքն ալ այն համեմատությամբ պիտի ա-վելնա, պիտի պակսի՞.

Թե այս նախնական ծախուց գումարն նախապես քննված, հաստատված և սահմանված է.

Ի՞նչ ապահովություն և յերաշխավորություն տրված է անդամոց, վորպեսզի վստահ ըլլան, թե պիտի կրնան իրենց ստակներն յետ առնել, յերբ, աստված մի՛ արասցե, լուծվի ընկե-րությունը։ (Զենք հիշեր Ազգ. ընկերություն մ'որ կազմված ըլլա և լուծված չըլլա, բաց ի Միացյալ ընկերութենե[117]), թեև Տնտե-սական միությունն ունի յուր մեջ ոտար անդամներ, բայց ա-նոնց թիվը խիստ փոքր է)։

Ներելի՞ յե ժողովուրդեն ստակ հավաքել գետնի մը համար, վոր գնված չէ դեռ, գյուղաշինության համար, վորո հրամանն առնված չէ դեռ, ընկերության մը համար, վոր պաշտոնապես ճանչված չէ դեռ։ Յեթե այս գործողություններն դյուրին են՝ ին-

չու կը հապաղին կատարվելու. յեթե դժվար են, ինչու... չենք կրնար այս ինչուին պատասխանները գրել, վորովհետև մեր թերթը շատ պզտիկ է զանոնք պարունակելու համար։

Անհամբեր կսպասենք ուրեմն կարդալ Տնտեսի[118]) մեջ, թե այս գործողությունները կատարված են, վորպեսզի մենք ևս փութանք անդամակցիլ և տասը տարիեն տունի մը տեր ըլլալ գյուղի մը մեջ, վորուն անունը չենք ներեր սակայն, վոր Արշակավան[119]) ըլլա։

Հետևյալ նամակներն ստացանք.

Խոստմանս համեմատ յերեկ ժամը ութնին ձեզի պիտի գայի, բայց Սուլթան Համամի[120]) առջև կառք մ'ոտքս կոտրած ըլլալով չկրցի գալ։ Ներողություն։

Բույդ
Ճ. Գ.

Ներեցեք։

Յերեկ կամուրջին գլուխը[121]), ինչպես յեղավ չգիտեմ, վար ձգեցին զիս և կառք մը ծանրապես վիրավորեց գլուխս։ Բժշկվելուս պես կուգամ ձեզի. վողջ կեցեք։

Ձերդ
Մ. Թ.

Չկրցի խոսքս պահել։

Զախմաճըլար յոգուշույեն[122]) կանցնեյի, բեռնակիրին մեկը սավուշ ըսելով անանկ ուժով մը զարկավ քթիս բերնիս, վոր հոն մարեցա ինկա։

Բանի մ'օրեն կուգամ ձեզի տեսնելու։

Դ. Բ.

Առջի օր Վոսփոր[123]) բանող շոգենավերուն մեկեն դիպվածով մարդ մ'ընկավ ծով, սակայն առանց ուրիշներու օգնության կրցավ ինքզինքն ազատել, առանց լողալ գիտնալու։

ժեռոտելի բասրիլ ունի յեղեր գրպանը։

Թեև վոմանք կը պնդեն, թե թելերուն տակը մեյ մեկ Մասիս[124]) կապած ունի յեղեր։

Թերահավատության պատճառ չունինք։

Դող մ'ելլար, Հրազդան։

Այդ ծառայությունն վերագրելի յե Փանոսյանին[125]), վոր քանի մը ժամանակե հետե բերեվ բանաստեղծություններ կը գրե Մասիսի մեջ։

Ազգ. լրագիրներեն մին ծանուցանելով Ալեք եֆենտիեն վերջին օրերս հրատարակված տնտեսական ու յիմտական շաբաթաթերթը հետևյալ բարեմաղթությամբ կողջունե զայն։

«Հարատևություն ու հաջողություն կը մաղթենք այս օգտակար ձեռնարկին»։

Բարեմաղթությունն ավելի ազդու, ավելի զորավոր, ավելի հոգնակի կըլլար յեթե գրվեր սա պես.

«Հարատևությունք եք հաջողությունք կըք բարեմաղթենք այսք օգտակարք ձեռնարկինք»։

Բարի լույսք, վո՛ շաբաթաթերթ յիմտական։

Պարտանանաչություն կամ ճանաչումն պարտուց։

Այս տիտղոսով տետրակ մը հրատարակված է այս օրերս։

Ջուր կամ ջուր

Արդյոք տետրակին պարունակության մեջ ալ ասանկ կամներ կա՞ն. յեթե կան կաղաչեմ ինձի ղրկեցեք զանոնք, վոր տեսնամ անգամ մը։

Բժիշկը հիվանդաց այցելությունները կընդունի։

Սրահն լի յե հիվանդներով, վոր կարգավ կը մտնեն բժիշկին սենյակը։

Կարգը գավառացի հիվանդի մ'ե։

Ներս կը մտնե։

— Ի՞նչ ունիք։

— Գանկս կը ցավի, վոտքերս կը կտրին և ստամոքսիս վրա ծանրություն մը կա։

— Ասոնց վո՞րը նայիլ պիտի տաս այսոր։

— Չեմ հասկնար։

— Մեկ վիզիթայով յերեքը մեկեն կը նայվի՞ մի յա, քիչ մը ինսաֆ պետք ե։

— Յերբ վոր մեկ վիզիթայով նայվելիք հիվանդ ըլլամ նե՝ ան ատեն կուգամ ձեզի, կըսե հիվանդն ու կը մեկնի։

Ազգային լրագիրներն Ամերիկայեն յերկար թղթակցություններ կը հրատարակեն շարունակ և բան մը չեն խոսիր հայաբնակ գավառներուն վրա, այնպես վոր մեր ազգայինք այսոր ավելի տեղեկություն և ծանոթություն կստանան ամերիկացոց բարուց և սովորությանց վրա, քան թե հայաբնակ գավառաց հայոց վիճակին վրա։

Պատճառ։

Վորովհետև Ամերիկայեն Կ. Պոլիս քանի փարա յե նամակի մը փոխադրության ծախքը։

Յես ալ այսուհետև բոլոր նամակներս Ամերիկա պիտի ղըրկեմ։

Հակառակ մեր կամաց հարկադրված ենք դարձյալ ավանակը հոլովել... բայց վոչ Հ...[126]) ի վրա, այլ Լեզվի մեկ հոդվածին վրա։

Այս բանասիրական հանդեսն, վորպես կերևի, մեծ կարևորություն կուտա այս կենդանվույն ստուգաբանության։

Անոր արժանապատիվ խմբագիրն, այսինքն Լեզվի և վոչ թե ավանակին—քանի մը տարիներ առաջ Մասիսի մեջ հրատարակած եր հոդված մ'որուն խորագիրն եր Ավանակը հա՞յ ե։

Այն ատեն բերանացի հասկցուցին իրեն թե—այսինքն խմբագրին և վոչ թե ավանակին—Հայն ավանակ չե և միանգամայն խրատեցին նորին արժանապատվությունն, վոր Հայոց արժանապատվությունն վիրավորելու հանգամանք ունեցող բացատրություններե կամ բառախաղերե զգուշանա։ Յիվ խնդիրը

գոցվեցավ։ Բայց մեծ յեղավ մեր զարմանքն, յերբ Լեզվի վերջին թերթին մեջ կարդացինք անասուններու վրա լեզվաբանական հոդված մ'որուն մեջ ըսված եր Հայ եշը։

Այս կատակը, վո՜ Լեզու, ծանր ե, և չե այն կատակներեն, զոր յերբեմն կընե Ծիծաղ[127])—ընթերցողք գիտեն արդեն, թե Ծիծաղը թերթիս խմբագրին շունն ե— ձեր կատակը մարդ կը վախցնե և յեթե Լաֆոնթեն[128]) վողջ ըլլար՝ փայտե բազում հարվածներ կը շալկեյինք։

Արդ, կը խնդրենք, վո՜ Լեզու, ջանացեք, վոր ձեր լեզուն այնպես համեմատին ձեր ականջներուն, վորպես ձեր ականջները կը համեմատին...

Գտիր նայիմ անծանոթը...

Համեմատությունն աղեկ բան ե. Յերից կանոնը պետք ե նույնիսկ լեզվաբանական ախոռին մեջ։

Ազգային լրագիրներն ապշելով ու զարմանալով հրատարակեցին ծնունդն տղու մ'որ մեկ մարդու գլուխ և մեկ հատ ալ ձկան գլուխ ունի յեղեր։

Ի՞նչ կա զարմանալու, մայրն հղության ժամանակ ձուկերու շատ նայած կըլլա և տղան ալ ձկան գլխով կը ծնի։

Միթե հոս չկա՞ն իշու գլուխով մարդեր, կամ մարդու գլուխով ավանակներ։

Ասոր համար քվեարկություն պետք չե կարծեմ։

Ի՞նչ պիտի ընենք Հիպոկրատա[129]) աշակերտաց հետ։

Ասոնք սկսան շատ արագ վազել և մանավանդ վոստոստելով ընթանալ սկզբունք փոխելու մեջ։

Բժիշկները մինչև հիմա կըսեյին մեզ, թե մարդս պառկած ժամանակը գլխուն տակը բարձ մը դնելու յե, զի մի՛ արյունն գլուխը վազե։

Բժիշկ մ'ելեր այժմ կըսե, թե վոտքերն գլուխեն ավելի բարձըր ըլլալու յեն, վորպեսզի արյունն վար չվազե։

(Այս անիծյալ արյան հետ փորձանքի հանդիպած ենք ար-

դեն ամենքս ալ, նույնիսկ արյունն ալ այսօր չգիտեր, թե ուր վաղե… բժշկաց ձեռքեն)։

Յեվ շատերն սկսած են արդեն բարձի վրա դնել իրենց վոտքերը։ Ուստի շատ կռիվներ և վեճեր սկսած են հառաջ գալ։ Տարակույս չկա, թե այս մասին յերկու հակակարծիք անձերուն միույն վոտքերը մյուսին գլխուն կողմը պիտի գտնվին և փոխադարձաբար։ Վոմանք ալ սին վեճերու տեղի չտալու համար ստիպված են վոտքի բարձն գլխու բարձեն ավելի բարձր շինել։ Շատերն ալ իրենց վոտքերը չվանով պատեն կը կախեն և այնպես կը պառկին։

Բայց մի կարծեք, թե այս դրությունն յերկար տևե, գալ շաբթու ուրիշ բժիշկ մը կելնե ու կը պոռա.

— Վերցուցեք բարձը ձեր գլխուն տակեն, նետեցեք նաև ձեր վոտքի բարձը, այդ դրությունն վնասակար է առողջության. բարձր բարձ մ'առեք միայն և ձեր մեջքին տակը դրեք, վորպեսզի արյունն անարգել կատարե յուր շրջանն։

Յեվ այն ատեն ճիշտ կշխուի դիրք կունենանք։ Բայց գիտելի յե, թե մեր քնացած ժամանակը կրնա՞նք մեր հավասարակշռությունը պահել։ Խնդիրը կը փոխվի յերբ արթուն ենք։ Կանայք կը դնեն արդեն այդ բարձն յերբ փողոց յելնեն Ո՞վ գիտե, թերևս առողջապահական տեսակետով է, վոր դուռնյուռ կը գործածեն։

Այս խնդրույն մեջ մտնելն վեր է մեր վոտնահասութենե, հետևապես կուրորեն հնազանդելով, պարտավոր ենք քիչ մը ժամանակ մեր վոտքերուն տակն ալ բարձ մը դնել, տեսնենք ինչ պիտի ընե սա արյունը։

Զենք ուզեր անցնիլ սակայն առանց հանձնարարելու Յերուսաղեմու վանուց միաբանության, վոր չմոռնա բարձ մը դնել յուր յեկմտացույցին պարտուց տակը[130]), վորպեսզի արյունը հոն չվազե և չակարացնե պահանջքի կողմը։ Մեկ յերկու ամիսն անգամ մը հաշվեցույց հանելով, անոր մեջքին տակն ալ դնելու յե բարձ մը, տեսնելու համար, թե հավասարակշիռ է, թե վոչ։

Ավանակը ճա՞յ է հարցնող և իշուն Հայ ածականը տվող Լեզուն, վոր յերբ Հայ կաթոլիկ ազգայնոց վրա խոսի կաթոլիկ ազգիս բառերը կը գործածե, հունիսի թերթին մեջ ջանացեր յեղած է պաշտպանել ինքզինքն խիստ ձախող կերպիվ։

Խիկար չպիտի գիջանի պատասխանել իրեն։

Լեզուն թող ներե մեզի, այս խոնարհ հպարտությունը։

Ձերիտեյի Տարգիյեյի չեմ հիշեր վոր թիվույն մեջ խոսելով փաստաբան Հակոբյանի վրա՝ գոված եյինք անոր գլխարկը։

Զարամիտներն մեր այն տողերեն սա յեզրակացությունն հաներ են, թե Հակոբյան գլխարկեն ուրիշ համակրելի բան մը չունի, մինչդեռ մենք պարունակողն պարունակյալին տեղ դնելու ճարտասանական ձևն վարել ուզած եյինք մեր խելքով։

Ադրիանուպոլսո գավառական[131]) ժողովն ալ ընտրվեցավ տեղվույն գավառական ժողովեն։

Այո, գավառական ժողովո անդամներն իրենք զիրենք ընտրած են, յեթե լավ ըմբռնած եմ այս մասին լրագրաց մեջ յեղած հրատարակության իմաստը։ Կերևի թե ընտրող չկա հոն։

Այս դրությունն կը դյուրացնե ընտրության գործն այն գավառաց մեջ, ուր ընտրողք կը պակսին։

Ընտրելոց անվանց հետ հրատարակված են նաև անոնց դավանանքը։ Խնդիրը Յեվրոպական ձև առած է. միայն թե փոխանակ պահպանողական ըլլալու՝ պեզազ ըլլած է, ազատականի տեղ՝ վուկերիչ գրված է, ձախակողմյանի տեղ ֆեռեռբենի և աջակողմյանի տեղ՝ աեղաճավոր. և ընտրվածներու ցուցակն արհեստներու Ֆաքուրա մը դարձած է, այնպես վոր չարամիտ մը կրնա խնդալ անոր վրա ըսելով.

«Ադրիանուպոլսո գավառական ժողովո ընտրությունք կատարվեցան հետևյալ կերպով.

Չորս	յերեսփոխան	Պեզազյան	կուսակցութենե
Հինգ	»	Բաղադյան	»
Յերկու	»	Սարաճյան	»
Յերեք	»	Բույումճյան	»

Վեց	յերեսփոխան	Տողրամաճյան կուսակցութենե	
Յոթը	»	Բերեստեճյան	»
Ութը	»	Չիլինկիրյան	»
Ինը	»	Բյուրքճյան	»

Փափաքելի յե, վոր այդ նամակներն հրատարակության տըրվող թղթակիցն մեր քաղաքակից ազգայնոց ոգտակար նյութեր ընտրեր հրատարակության համար։

Յերկու որն անգամ մը լրագրաց մեջ կը կարդամ.

Ազգային վարչությունն[132]) յուր համարատվությունն պատրաստելու վրա յե։

Ազգային վարչության համարատվության պատրաստությունը մեծ փութով հառաջ կը տարվի։

Մեծ պատրաստություններ կըլլան Ազգային վարչության համարատվության համար։

Ազգային վարչությունն վորևե աշխատություն չխնայեր յուր համարատվությունն փութով պատրաստելու համար։

Վերջապես բացատրության ձև չմնաց հայտնելու համար, թե Ազգ. վարչությունն կաշխատի պատրաստել յուր համարատըվությունն, մինչդեռ ցարդ հարկ եր պատրաստված և Ազգ. ժողովո[133]) ներկայացված լինել, վորպեսզի նոր վարչությունն ընտրըվեր և գործի գլուխ անցներ։ Մենք գոհ կը լինեյինք, յեթե Ազգ. վարչությունն ավելի քանի մը շաբաթեն պատրաստեր յուր համարատվությունն. մենք քիչ մը կասկածոտ ենք և կը վախնանք, վոր քանի մ'ամիս ալ չկարդանք լրագրաց մեջ։

Ազգային վարչությունն Ընդհ. ժողովո հառաջիկա նիստին պիտի ներկայացնե յուր համարատվությունն։

Ազգային վարչությունն կը պատրաստվի Ընդհ. ժողովո հաջորդ նիստին ներկայացնել յուր համարատվությունը։

Համարատվությունը լմնցած ե, միայն ստորագրված չե։

Համարատվությունն ստորագրված ե, բայց կազմարարի քով ըլլալուն պատճառավ չպիտի կրնա հառաջիկա նիստին ներկայացվիլ։

Մաղթենք ուրեմն միաբերան, վոր ամենակարողն աստված,

վոր վոչնչե գոյացուց աշխարհս՝ ոգնե Ազգ. վարչության, վորպեսզի սա ևս կարող լինի վերջապես պատրաստել, ինչ վոր պատրաստված պետք եր լինել ավելի յերկու ամիս առաջ։

Նշմարած ե՞ք արդյոք, վոր անասնոց ալ բարոյականության մեծ անկում կա։

Վոսկեղեն դարու գազանները պատվավոր եյին, ուրիշին իրավունքը չեյին ուտեր. արդի կենդանիները գող, ավազակ են։

Կատուներու վրա մասնավորելով խոսքս՝ կրնամ ըսել, թե ասոնք բնավ արժանապատվություն չունին։

Արժանապատվությունն ալ խոսք ե, բնավ խիղճ չունին և այլոց իրավունքն կուտեն այն համարձակությամբ՝ վորով պիտի վայլեյին իրենցը։ Գող են, հափշտակիչ են, բայց վարպետ են։ Ի՞նչպես վորակեմ չգիտեմ, կարծես տեսակ մը պանքայի տնօրեններ են։

Գիշեր չանցնիր, ուր սեղանի վրա քանի մը պատառ միս թույլ չտան կատուներու հափշտակել։ Հեզությամբ և քաղաքավարությամբ կը մոտենան և սեղանեն միս կը հափշտակեն կերթան։ Իմ սեղանս Յերուսաղեմի վանք կը կարծեն արդյոք այս անպիտանները։

Ուսումնասիրելու համար, թե ջերմությունն, լույսն ու խոնավությունն ինչ ազդեցություն ունին լրագրաց ուղղության վրա, պետք ե քննել ուղղությունն քանի մը լրագրաց, վոր լուսավոր կամ խոնավ կամ ջերմ տեղեր կը խմբագրվին։

Լուսավոր սենյակներու մեջ խմբագրված հոդված մը հըստակությամբ կը փայլի։

Տաք սենյակներու մեջ խմբագրվածն թույլ կը լինի։

Խոնավ սենյակներու մեջ շարադրվածն անհոգի մարմին կը դառնա։

Շատոնց փորձված ե, թե տեղը մեծ ազդեցություն ունի խմբագրի մը կարծիքներուն վրա։

Ընդհանրապես հակասություն կը գտնվի այն հոդվածին մեջ, վորուն կեսը մեկ սենյակի մեջ և կեսն ուրիշ սենյակի մեջ շարադրված ե։

Այս իսկ է պատճառ, որ ազգ. Ընդհ. ժողովո Ղալաթիո[134]) մեջ տված որոշումներն Քումքափույի[135]) մեջ տված որոշումներուն ծուռ աչոք կը նային շատ անգամ և բարև չեն տար անոնց։

Ազգ. ժողովները տեղ փոխելու չեն։

Հապա յեղանակնե՞րը...

Ամեն գրագետ կրնա յուր անձին վրա փորձել բաղդատելով յուր ամառվան յեղանակին արտադրությունները գարնան յեղանակին արտադրությանց հետ։

Սկզբանց մեջ ամենեն ավելի համառ կարծվածն տարին չորս անգամ սկզբունք կը փոխե.

Գարնան սկզբունք,

Ամառվան սկզբունք,

Աշնան սկզբունք,

Ձմեռվան սկզբունք։

Յեվ որ պիտի գա, հորում ամեն մարդ առանց քաշվելու պիտի ըսե.

— Այս է իմ ամառվան սկզբունքս. այս է ամառվան բանթալոնս ըսելու պես։

Յեվ այն որն հեռու չէ։

Յերիտասարդության սրտին մեջ ազգասիրության հուրն արծարծելու համար շատ ջանքեր յեղած են ցարդ, բայց այդ ջանքերն ապարդյուն մնացած են։

Յեվրոպայի լուսավորյալ ազգերն ազգասիրության հուրն արծարծելու համար իրենց զավակաց մեջ՝ հաջողած են գտնել միջոց մ'որով միշտ վառ կը պահեն այդ հուրն։ Յեթե մարած ըլլա իսկ՝ քանի մը րոպեյի մեջ կը հրանա։

Յեվ այս միջոցն՝ որ մեծ ծախուց չկարոտիր՝ հետևյալն է.

Ընկուզի մեծությամբ չամ սաֆրզի (ռետինի խեժ) առնել և մարած սիրտերու մեջ ձգել. քանի մը րոպեյի մեջ այդ սիրտերն կսկսին վառիլ։

Ի հաստատություն մեր ըսածին Ամսօրյա հանդեսեն[136]) կը քաղենք հետևյալ տողերը։

«Ռետինի խեժը մի միակ միջոց է ակայծյալ հուրն արծարծելու, կես մարած ածուխն հրաշեկ ընելու, և ամեն կարգավորյալ տուն պետք է այս թեթևագին նյութն ունենալ։ Ընկուզի չափ կտոր մը յեթե մարող կրակի մեջ ձգվի, քանի մը րոպեյի մեջ ածուխը հրաշեկ կըլլա. ռետինի խեժը կը հալի և ածխո մեջ այնպես կը տարածվի կերթա՝ որ շուտ մը բոցն ու հուրը կը սաստկանա»։

Այս միջոցն յեթե վոչ սրտերու գեթ Խաս—գյուղի[137]) շոգենավներու համար կրնա գործածվիլ, վորոց հուրն միշտ կը մարի։

Նույն հանդեսեն կընդօրինակենք նաև գորգ մաքրելու միջոցը, «թե գորգի մեջ ժողոված փոշին սենյակի օդը կրնա ապականել և առողջության վնասել, հայտնի բան մ'է. անոր համար պետք է հաճախ՝ գեթ շաբաթն անգամ մը, լավ մաքրել։ Ասոր մի միակ կերպն է հաջորդը։ Բաց օդո մեջ աղնիվ ավելով մը — մենք աս տեղը ազնիվ ածականը սիրտի հատկացուցած ենք — փոշին թոթվելեն յետև կաղամբի տերևով շփելու յէ գորգն, վորով փոշին բոլորովին կելլե և գույնը կենդանություն կառնու։ Այնուհետև մեկ մ'ալ կը թոթվվի, վորպեսզի կաղամբի կտորվանքը թափի, յերթա։

Տարակույս չկա, թե այն յեղանակներուն մեջ, ուր կաղամբ չգտնվիր՝ կաղամբի թուրշիով պետք է շփել գորգը։

Կարելի չէ՞ արդյոք այս միջոցավ մաքրել նաև պարաքեր, յեթե վոչ շաբաթը՝ գեթ տարին անգամ մը, վորովհետև վոչ նվազ հայտնի բան է՝ թե պարաքի մեջ ժողոված փոշին ալ սենյակի օդը — տան օդն անգամ — կապականե և առողջության կը վնասե։

Բայց, ի՞նչ գիտեմ, յանանտ Թուրշուսիյով պարաք կը վըճարվի՞։

Պարաքը թուրշի դնելն ըստ իս ամենեն դյուրին միջոցն է պարաք վճարելու։

Յեվ պարաքի թուրշին թուրշիներուն լավագույնն է։

Զրույց կը պտըտի, թե կզզիները բանող նուսխեթլյե շոգենավուն փողոցները կազով պիտի լուսավորվին, վորպեսզի ճանբորդները կարենան քալել։ Նույնպես յուրաքանչյուր ճանբոր-

դին պիտի տրվի հիշյալ շոգենավին մեկ տեղագրական քարտեսը, վոր պիտի հայտնե, թե ուր պետք է նստիլ, ուր պետք է թրջիլ, ուր պետք է վոտքի վրա մնալ, ուսկից պետք է անցնիլ և ուր կը գտնվի աթոռ դնելու տեղ։ Նույն քարտեսը վորոշ կերպով ցույց պիտի տա նաև հիշյալ շոգենավին լեռները, ձորերը և լճերը։

Կըսվի, թե հիշյալ շոգենավը ժամանակավ կուլակիր է յեղեր Մանշի ծովուն մեջ։

Մրցանա՞կ, թե նվեր։

Վոմանք մրցանակ կըսեն։

Վոմանք նվեր կըսեն։

Յես վոչ մին կըսեմ և վոչ մյուսն, այլ պարզապես վողորմություն կըսեմ և իմ խնդակցությունս կը հայտնեմ Միրախորյան և Ալլահվերտյան եֆենտիներուն, վոր հաջողած են Իզմիրյանցի կտակին[138]) գութը շարժել իրենց անձին վրա։

Կարեկցության արժանացած են իրենց գործերն, յեթե պետք է հավատալ քննիչներու վկայության, վորք վոչ թե մրցանակի, այլ քաջալերության արժանի կը գտնեն այդ յերկասիրությունները։

Քանի մը բացատրություններ կան, վորք տկարություն կը նշանակեն և այս բացատրություններն են.

Քաջալերության արժանի յե.

Տակավին պզտիկ է.

Առաջին գործն է.

Փորձառու չէ տակավին.

Ապագային համար հույս կուտա.

Այս բացատրության ամենեն զորավորն առաջինն է, վորովհետև տկարներն են արժանի քաջալերության։ Յեվ տակավին կըսեն, թե կտակն անբռնաբարելի յե։

Տկարներին քաջալերելն քաջերին վհատեցնել չէ՞,

Յերկու առագաստավոր կը մրցին։

Մին յետ կը մնա և կերթա մրցանակը կառնե։

— Ինչու։

— Յետ մնացած ըլլալուն համար։

— Յե՞տ մնացողներու խոստացված է մրցանակ։

— Վո՞չ։

— Ինչու՞ ուրեմն կառնե։

— Վորպեսզի քաջալերվի և ապագային մեջ ավելի արագ ընթանա։

Տեսակ մը բարեգործություն է այս, և ուրախ ենք, թե այդ յերկասիրությանց հեղինակներն մասամբ դարմանեցին վնասն, վոր այդ գործոց տպագրության ծախքեն հառաջ յեկած եր. այսուամենայնիվ ազգային արժանապատվության տեսակետով կը տրտմինք, տեսնելով՝ վոր այդ կտակի միայն հանձնաժողովո առաջին գործողությունն արժանի չե մրցանակի։

Տար աստված, վոր ոտար լրագիրներն հետաքրքրություն չունենային մրցանակի արժանացած այդ գործերն թարգմանել տալու, թեև վստահ ենք, թե վոչ մեկ հայ մ'որ ազգային արժանապատվության նախանձախնդիր է՝ պիտի հոժարի թարգմանության սույն տխուր պաշտոնն ընդունելու։

Բազմահմուտն Բարաքաշյան[139]) Հ. Տերվիշյանի[140]) Հնդեվրոպական նախալեզվի վրա դիտողությունններն հայտնելով ըսած եր.

«Ասոր կըսեն նույնը նույնով հաստատել»։

Բարեկամներես մին, վոր զվարճախոս է՝ լրագրին մեջ այս տողը կարդալով՝ ըսավ.

— Աղեկ ա, ոմեոբաթիհի[141]) դրության հետևեր ե։

Խիկար ես պատիվ ունիմ բանալ մրցանակի ասպարեզ մը, և հրավիրել հետևյալներն, վոր մրցին իրարու հետ։

Խմբագիրներն՝ ստախոսության ճյուղին մեջ.

Յերեսփոխաններն՝[142]) իրարու խոսք չհասկնալու մեջ.

Հոգաբարձություններն՝[143]) դասատվաց ամսականները չը վճարելու ճյուղին մեջ.

Գրագետներն՝ անոթության դիմանալու կարողության մեջ.

Լեզվաբաններն՝ հայերեն բառերն իրենց ուզածին պես մեկնելու մեջ.

Կիներն՝ նորաձևություն ստեղծելու մասնագիտության մեջ.

Երիկներն՝ կանանց պճնասիրության ծախուց համբերելու մեջ.

Երկաթուղվո պաշտոնյաներն՝ ճամբորդներու հետ նման քաղաքավարությամբ վարվելու մեջ.

Տպարանապետներն՝ զիրար կործանելու չափ աժան դասագրքեր հրատարակելու մեջ.

Հարուստներն՝ հիվանդանոցի շինության համար իրենց քըսակին բերանը գոցելու մեջ.

Պատվելի միսիոնարներն՝ ի դիմաց ոսկոյ՝ գավառաց մեջ քրիստոնյաներն ի քրիստոնեության դարձնելու մեջ.

Փաստաբաններն՝ ճշմարտությունը հալածելու մեջ.

Բժիշկներն՝ հիվանդներ մեռցնելու մեջ.

Բեռնակիրներն անցորդներու գլուխը պատռելու մեջ.

Թրամվայի քոնտյուքթորներն՝ անցորդները գծեն հեռացնելու համար ուժով հրելու և անոնց քիթը բերանը արյունոտելու մեջ.

Սրճարանապետներն՝ գարիով խահվե յեփելու մեջ, և այլն և այլն և այլն։

Մրցանակաց բաշխումը հանդիսավոր կերպով տեղի պիտի ունենա 1888 օգոստոսի վերջը։

Մարդ հանձնարարելու նոր յեղանակ մը.

— Կաղաչեմ, կրնա՞ք ըսել ինձ, թե ի՞նչ տեսակ մարդ է սա ձեր դրացին։

— Աղեկ մարդ է... բայց ինձի մի հարցներ։

— Խոսքին կը հավատացվի՞։

— Կը հավատացվի... բայց մի՛ ստիպեր զիս, որ խոսիմ անոր վրա։

— Վստահելի՞ մարդ է։

— Վստահելի յե... պատասխանատվություն չեմ առներ վրաս։

— Ինչո՞ւ։

— Խոսիլ մի՛ տար զիս։

— Խաբեբա՞ յե։

— Ես մարդ ավրելու բնություն չունիմ... ինչուս պետք իմին... բարի մարդ է, վեսելամ։

— Հետը գործ կրնամ ընել։

— Ձեր գիտնալու բանն է... այն մարդը իմ բարեկամս է... թող որ բարեկամս չըլլար ալ նե՝ յես սովորություն չունիմ մարդու յետևեն խոսելու։ Անոր ըրածներն բոլոր աշխարհ գիտե արդեն, քանի քանի հոգիներու հետ ընկեր յեղավ ու վնաս տվավ... բայց ինչո՞ւս պետք իմին։

— Ըսել է, որ զգուշանամ։

— Բուկլին գործդ դուն գիտես, աղբար, այդ մարդուն ստակ տվե՞ր մի, գնաց, ալ չես կրնար յետ առնել... բայց իզմե իմացած մի՛ ըլլար... Չեմ ուզեր յես մարդ ավրել... բարի մարդ է, բարի։

— Ընկեր ըլլա՞մ հետը

— Դու գիտես... պաթմիշ ըլլալ կուզես նե՝ յեղիր... կը ցավիմ, որ զիս խոսելու կստիպես կոր... Աղեկ մարդ է, աղբար, աղեկ... յես կը սիրեմ ան մարդը...

— Շնորհակալ եմ ձեր տեղեկություններեն։

— Պապա մարդ է, պապա, անանկ անուշ կերպով կը խաբե, որ կը զարմանաս... այսուամենայնիվ ինչո՞ւս պետք իմին... չեմ ախորժիր մարդ բամբասելե, գեշ բան է, անանկ չէ՞ մի...

— Անանկ է, շնորհակալ եմ։

Ժերոտեյեն յետքը Տր. Ուսթմանի մաքրողական դեղը...

Կարդացեք Արեվելքի[144]) վերջին յերեսը.

Կաթված, փախուստ, ստամոքսի ցավ, խիթ, շնչահեղձություն, խոհանոցի գործիներ, լոգարան, գինվո մամուլներ, ջղաձգությունք, լուսնոտություն, արգանդախեղդ, սառույցի գործիներ, գլխու պտույտ, ծորակներ, խցադիր մեքենա, ջղային տագնապ, Եճիրշըն շոգենավ, Ալճերիան, Ալգասիան, քնատություն, ուղեղային բորբոքում, դեղնություն և այլն և այլն վայրկենի մը մեջ կը չքանան։

Արյուներթության դեմ մեկ հատիկ է այս դեղը. մտիկ ըրեք Արևելքը.

«Արյուներթություն.— Սրբանի մը մեջ կը խոթեն քիչ մը բամբակ, որ թաթխված լինի Ջրախառն մաքրողականի մեջ — ամբողջ ժամ մը օրը յերկու անգամ —»։

Մեր բարեկամներեն մին փորձած է այս դեղն արյուներրության դեմ և կատարելապես հաջողած է, միայն թե քովը բամբակ չունենալով ծոցեն Տ...... թյան[145]) ընկալագիր մը հաներ է և կտոր մը փրցնելով բամբակի տեղ գործածեր է։ Մեր բարեկամն յուր այս դիպվածական գյուտն հանձնարարեր է բոլոր բարեկամաց, վորոնցմե շատերը կը հաստատեն, թե այդ թուղթն առանց մաքրողականի մեջ թաթխվելու իսկ կրնա արյուներթության առաջքն առնել։

Զարմանալի բան... բնության մեջ կան տակավին գաղտնիքներ... անթափանցելի բժշկական գիտութենե ըստ Զախչախյանի[146]), գիտության ըստ Հյուրմիզյանի[147]), ի գիտութենե ըստ Գ. Ս. Ի և գիտութենեն ըստ, Հ. Թ. Ի.[148])։

Ահա քեզի քառյակ թարգմանություն մ՚ալ։ Վոսկեղեն դարն ալ չմոռնանք... վոսկեղեն դա՜ր[149])։

Դժբախտաբար գրոց մեջ. յե՞րբ պիտի ունենանք վոսկեղեն դար յուր բուն նշանակությամբ, այսինքն առատ վոսկիներ... մեր լեզուն մեր ձեռներեն ավելի զորավո՞ր պիտի ըլլա միշտ...

Նախալեզվի վրա Բարաքաշյանի դատաստանն զայրացուցած է Տերվիշյանն, վոր յուր հուլիսի և պատշաճից որինաց հակառակ լեզվով կը հարձակի Բարաքաշյանի վրա։

Բարաքաշյան պիտի պատասխանե անշուշտ Տերվիշյանի։

Լեզուն արժան դատած է նաև նախատել Հյունքյարպեյենտյան քահանան, վորու միակ հանցանքն է յուր ծերությունը։

Յեթե Հյունքյարպեյենտյան կարգվելու համար աղջիկ փընտռելու յելներ՝ կըմբռնեյի, թե հարկ եր հայտնել անոր ծերությունը. բայց քանի վոր խնդիրը լեզվաքննության վրա յե՝ չեմ հասկնար, թե ամուսնության վերաբերյալ կետերն ինչո՞ւ կը շոշափե նախալեզվի հեղինակը։

Հյունքյարպեյենտյանն յետքը ծնած ըլլալուն համար յերախտագիտությո՞ւն կը հայտնե արդյոք յուր ծնողաց։

Արժանապատիվ և գերապատիվ հարց առողջության չվնասող քաղաք մը չկրցանք գտնալ տակավին։

Տիգրանակերտի կլիման կը դպչի մեր Ս. Հարց առողջության։

Ս. Հայրերը Վոսփորի կլիմայեն միայն կախորժին, գավառաց կլիմային հետ հաշտ չեն։

Ս. Հայրերը կըսեն.

«Ժողովուրդ, յեթե կուզես վոր արածենք զքեզ, Պոլիս յեկուր։ Գավառաց օդը, ջուրը, հացը, միսը կը վնասեն մեզի»։

Ըստ մեզ կտրուկ միջոց մը կա այս անպատեհության առաջքն առնելու համար։

Գավառաց մեջ առաջնորդություն չընդունող յեկեղեցականաց առողջությունն քննել տալ բժշկի մը ձեռամբ և քաջառողջներուն պաշտոն առաջարկել գավառաց մեջ. և չընդունողները պատժել այն պատժով, զոր Հայաստանյայց ուղղափառ յեկեղեցին կը տրամադրե։

Այնուհետև սա յերկու հոդվածներն ավելցնելու յե որենագըրքի մը մեջ յեթե ունինք։

Ա. Գավառաց մեջ առնվազն տասը տարի առաջնորդություն ընողն միայն իրավունք կստանա յեպիսկոպոսանալու։

Բ. Գավառաց մեջ առնվազն տասնհինգ տարի առաջնորդություն ընող յեպիսկոպոսն կրնա պատրիարքական ընտրելյաց ցանկին մեջ մտնելու։

Սույն յերկու հոդվածոց շնորհիվ վոչ միայն գավառներն առանց առաջնորդի կը մնան, այլ նաև ապագային մեջ ավելի բանիբուն և ավելի փորձառու պատրիարքներ տեսնելու բախտը կունենանք։

Հովիվ քաջ դնե (յեղեր) զանձն յուր ի վերա վոչխարաց յուրոց, յեթե Տիգրանակերտ չը գտնվին։

Անցյալ շաբթու պատիվ ունեցա ներկա գտնվելու աճպարարի մը ձեռնադրությանց։

Շիտակը խոսելով յուր խաղերը սովորական բաներ եյին։

Օրինակի համար. նախ և առաջ տասնեչորս խաղի թուղթեր ցույց տվավ հանդիսականաց։ Այս թուղթերն, ըսավ, ժողովո մ՚անդամներն են։ Հետո ուրիշ քսան և ութը թուղթեր ցուցնելով հանդիսականաց՝ ըսավ, ահա ձեզի յերկպատիկ ընտրելյաց ցանկ

մը. ձեզմե յուրաքանչյուրն ազատ է յուր ընտրած թուղթն առնել և քովը պահել։ Քսան և ութ հանդիսականներ մեկ մեկ թուղթ առին, հետո, ձեռնածույին առաջարկությանը վրա, տարին տեսարանի վրա դրված սեղանի վրա ձգեցին զանոնք։

Քսան և ութը թուղթերը սեղանին վրա նվազելով՝ տասն և չորսի վերածվեցան և այդ տասն և չորս թուղթերն առաջին անգամ ցույց տված թուղթերն էին՝ վոր ժողովը մ'անգամ էին։

Ա՜խ, ըսի մտքես, մեր ատենապետաց դիվանն ավելի վարպետությամբ կը կատարե այս խաղն, նամանավանդ ոչ թե խաղի թղթերով, այլ խաղի մարդերով։

Այս խաղեն յետքը քանի մը մեծխոյեներ անհայտացուց ձեռայը մեջ և հետո հանդիսականի մը գրպանեն հանեց։

Եթե աղքատի մը կամ աղահի մը գրպանեն հաներ այդ մեծխոյեներն՝ այն ատեն միայն ծափահարության արժանի բան մը ըրած կըլլար։

Կանանց ազատագրության գաղափարն որ ըստ օրե կը տարածվի և դուցե քիչ ժամանակի մեջ իրականություն գտնե։

Արդեն Յեվրոպիո չգիտեմ վո՛ր կողմը, կանայք արանց հավասար իրավունք վայելելու համար սկսած են երիկ մարդու հագուստ հագնիլ։

Ըստ մեզ, լավ եր, վոր երիկ մարդիկ կնկան հագուստ հագնեյին, սակայն մեր կարծիքն հեռի յե կուսակիցներ ունենալե, վորովհետև նույնիսկ մայրաքաղաքիս մեջ տեսանք օրիորդներ, վոր սկսած են երիկ մարդու շապիկ հագնիլ ու փողկապ գործածել։

Այս օրիորդներեն մին անցյալ շաբթու կյուրակե առավոտ մը առանց գիտնալու սիրահարություն կըներ աղջկան մը հետ։

Օրիորդն, վոր հազիվ հագած եր երիկ մարդու շապիկն, կըստիպվի գլուխը սենեկին պատուհանեն դուրս հանել։ Նույն միջոցին փողոցեն անցնող աղջիկ մը բարև մը կը թռցնե։ Օրիորդն ալ կարծելով, թե իրեն անծանոթ ծանոթներեն մին կը բարևե զինքն, բարևը կառնե։ Աղջիկը կը ժպտի։ Օրիորդը հարգանքներ կընե նշանացի։ Աղջիկն ուրախ է ասանկ գեղեցիկ սիրահար մ'այսքան դյուրությամբ գտած ըլլալուն վրա։ Օրիորդը չկրնար հիշել, թե

ով է այս աղջիկը։ Աղջիկը նշանացի կիմացնե, թե յեկեղեցին կըսպասե իրեն։

Օրիորդը յեկեղեցի կերթա և հոն կը տեսնե աղջիկը։ Աղջիկն ամոթահար, չհամարձակիր օրիորդին յերեսը նայելու։ Օրիորդը հետաքրքիր է, կուզե գիտնալ, թե ով է այդ աղջիկն. ուստի ժամերգության ավարտումեն հետո կը մոտենա աղջկան.

— Արդյոք կրնամ պատիվ ունենալ զձեզ ճանչնալու, կըսե։

— . . . .

— Վո՞ր ընտանիքեն եք։

— Ներեցեք, ձեր պզտիկ յեղբայրը կարծեցի զձեզ։

Քանի մ'օր յետքը օրիորդին յեղբայրը կիմանա յեղելությունը և խստիվ կը պատվիրե քրոջը, վոր մեյ մ'ալ յուր շապիկները չը հագնի։

Ա՜խ, շատ զվարճալի և հետաքրքրաշարժ պիտի ըլլա այն օրն, ուր արք և կանայք երիկ մարդու կերպարանքով պիտի սիրեն զիրար։ Վո՜րչափ դժվարություններ պիտի քաշենք արդյոք երիկը կնիկեն վորոշելու համար. յերբ խորհինք, վոր նույնիսկ այսօր՝ ուր այրերն ու կիներն հագուստով կը զանազանին իրարմե՝ շատ անգամ չենք կրնար վորոշել, թե կնիկն է երիկն, թե երիկն է երիկն։

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՔ ՄԵՌԵԼՈՑ

Ա

ԽԻՂՃ ՅԵՎ ԳՈՒԹ

Խ ի ղ ճ.— Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս վրա, սիրելի քույր իմ։ Յերեկ աչք պիտի ըներ ձեզ, վորպեսզի այսօր բարեհաճեյիք ինձ գալ և օգնել ցերակլի օշարակ յեփելու համար։ Չունիմ անուշեղեն մը հյուրերուն հրամցնելու և այսօր անդին աշխարհեն ստացա գիր մ'որ կը ծանուցանե, թե մեր դյուցազնուհի քույրը, ճշմարտախոսությունն անոթութենե մեռած ե և քանի մ'օրեն անոթութենեն դեպի մեզ կուղևորի։ Շաքարն ու ցերակը պատրաստ են. կարծեմ մեկ մաս ցերակին յերկու մաս շաքար կը դրվի։

Գ ո ւ թ.— Ճշմարտությունը վո՞ղջ եր...

Խ ի ղ ճ.— Կը շնչեր միայն խեղճը։ Պզտիկ կաթսա մ'ալ անկեղծութենեն փոխ առի, ածուխ ալ ունիմ...

Գ ո ւ թ.— Անկեղծությո՞ւնն ալ հոս ե։

Խ ի ղ ճ.— Անկեղծությունն շատոնց ի վեր հոս կը բնակի։

Գ ո ւ թ.— Միասնանք ուրեմն, սիրելի քույր իմ, խոսակցենք և մխիթարվինք իրարու հետ. բանանք միմյանց մեր սրտերը, սփոփվինք—վորովհետև այս կյանքես ալ գոհ չեմ յես և կուզեմ անգամ մ'ալ մեռնիլ—։ Հոս ալ չգտա ծանոթ մը, բարեկամ մը, հոս ալ ամենքն ընդ ակամբ կը նային ինձի։ Ինչո՞ւ այսքան հակակրություն ազդեմ անոնց՝ վորոց հետ կապրիմ։

Խ ի ղ ճ.— Կը սխալիք, սիրելի քույր իմ, ամենքը կը հարգեն ու կը պատվեն զձեզ, թե հոս և թե հոն։ Ամենուրեք պատկառանոք կարտասանվի քու անունդ, ամեն սրահներու մեջ պատերը զուրգուրանոք կը կրեն քու պատկերդ։

Գ ո ւ թ։— Ի՞մ պատկերս, բնավ յերբեք։ Վո՞չ կենդանագիրս հանել տված ունիմ յես և վոչ լուսանկար պատկերս...

Խիղճ.—Ի՞նչ են ուրեմն այն շրջանակված պատկերներն, որոնց տակ գութ գրված է։

Գութ.—Խայտառակություն։

Խիղճ.—Ի՞նչ հարկ խայտառակություն կախել պատեն մեծ սրահներու մեջ։

Գութ.—Ի՞նչ կուզեյիր, որ դնվեր շատ մը մեծատանց սրահներու մեջ...

Խիղճ.—Կը խնդրեմ, շատ առաջ կերթաք։

Գութ.—Կաղաչեմ, շատ յետ մնացած եմ։ Յես ալ տեսած եմ յերբեմն այդ պատկերներն, որոնց դեմ բողոք բարձած եմ և բողոքս անլսելի մնացած է։ Այդ պատկերն՝ որու տակը գութ գրված է՝ կը ներկայացնե կին մ՚որ յոթը սիրական ունի և մեկ ամուսին։

Խիղճ.—Ի՞նչ կը լսեմ։

Գութ.—Նույնպես կին մը յուր լուսանկար պատկերը հանել կուտա Յեվայի դարու տեքոլթեյով[150]) և այդ պատկերին տակը գրել կուտա Աստղիկ[151])։ Մեծատուններն կառնեն այդ պատկերներեն և իրենց ալպոմին առաջին յերեսը կանցունեն։ Մրգավաճառ Ավրամին լուսանկարը կը հանեն, գլուխն յերկու յեղջյուր կը դնեն և պատկերին տակը կը գրեն Մովսես Մարգարե[152])։ Մեր ձկնորս Աբրահամը կը նստեցնեն ի խելս նավակի՝ ուր կը մտցունեն նաև քանի մը թափառաշրջիկ և գինով թիավարներ, Աբրահամ մեջը դատարկ ուռկան մը կը քաշե։ Լուսանկար մը այս դիրքով պատկեր մը կը հանե և տակը կը գրե Առաքյալներուն ձուկ բռնելը[153])։ Թաղական խորհրդո անդամ մ՚որ խեղճ մարդիկը ծեծելով կամ ծեծել տալով միայն կզբաղի, պատկերը քաշել կուտա և տակը Արամազդ[154]) գրել կուտա։ Ինչո՞ւ հեռուն յերթանք, խոհարար Յովկին լուսանկարը հանել կուտա կարճ բայց ազդու սփածանելիով մը միայն, մեկ ձեռքը գավաթ մը Կիպրոսի գինի և մյուս ձեռքը կտոր մը վահանաձուկ բռնած և պատկերին տակը կը գրե Մահ Սոկրատա[155])։ Յեվ պատկերը տեսնողները կըսեն, խեղճ մարդ։ Ավելի մի խոսեցներ զիս, սիրելի քույր իմ։ Ինչպես կը տեսնես՝ մարդիկ կան, որ շողոքորթութենե չկշտանալով՝ իրենք զիրենք աստվածացնել կուզեն, մարդիկ ալ կան, որ շահու համար ուրիշները կանմահացնեն։ Գութ չէ ուրեմն պատկերն, զոր տեսած ես, այլ անբարոյականություն։ Անգլի աշխարհ չեմ գտնվիր յես, ոչ ալ իմ պատկերս։

Խիղճ.—Յեթե օր մը հարություն առնեք՝ կը փափաքի՞ք անգամ մ՚ալ յերթալ անգլի աշխարհ։

Գութ.—Բնավ յերբեք, որովհետև շատ հալածվեցա, տանջվեցա և չարչարվեցա հոն։

Խիղճ.—Սիրտդ չվիրավորվի, սիրելի քույր իմ, ներե ինձ, որ անաչառաբար խոսիմ քիչ մը։ Կարծեմ թե շատ տուներ կործանած ես անգլի աշխարհին մեջ։ Սնանկացուցած ես այն սեղանավորներն ու վաճառականներն, որոնց քով ապրած ես։ Այնքան գթասիրտ ըրած ես զանոնք, որ միշտ օգնելով որբերին, աղքատին, տնանկին, հեղինակներուն, լրագրապետներուն, գրագետներուն, սովյալներուն, հրկիզյալներուն, աղքատ գյուղացներուն, թատրոններուն, հիվանդանոցներուն, կորուսած են իրենց դրամարկղին հավասարակշռությունն և ինքյանք օգնության կարոտ մնացած են։

Գութ.—Այո, այո, և ո՞վ կըսե, թե գութն զոհ չպահանջեր, զոհել միայն հարստությունն հարյուրավորներու յերջանկության։

Խիղճ.—Խոսքը մեր մեջ մնա, քանի մը կանանց ալ անբարոյականության պատճառ յեղած ես։ Հիսուն տարեկանեն վար կանանց սրտին մեջ գործ չունեյիր դուն, ներե համարձակության։

Գութ.—Չեմ հասկնար ինչ ըսել կուզես։ Բայց դուն ալ քու ծառայություններդ պատմե։

Խիղճ.—Յես խիստ քիչ ժամանակ մնացի անգլի աշխարհ, քանի մը անգամ միայն ուզեցի խոսքի մեջ մտնել. «Դու մեր գործին մի խառնվիր» ըսին ինձ, յես ալ քաշվեցա։ Տարակույս չկա, թե բավական տուներ ալ յես պիտի կործանեյի, յեթե քեզի պես զեղծում գործեյի պաշտոնիս մեջ։ Տնտեսագիտությունն գթո՝ ինչպես նաև խղճի մեջ, սիրելի քույր իմ, գթո և խղճի շռայլությունն վնասակար է։ Այժմ յերթանք յեփելու ոշարակն և ուրիշ անգամվան թողունք մեր խոսակցության շարունակությունը։

Գութ.—Շատ լավ։ Յերթանք։ Բայց ո՞վ է դա, որ մեզի կը մոտենա։

Խիղճ.—Բան, յերթանք հիմա, օր մը քեզի կը ներկայացնեմ անոր։

Բ

ԳՈՒԹ ՅԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Գութ։—Ո՞վ եք դուք։

Ճշմարտություն.—Ականջներս ծանր են, քիչ մը բարձր խոսե։

Գութ.— Վողորմությո՞ւն կուզեք։

Ճշմարտություն.—Վո՛չ, Ճշմարտություն եմ յես...

Գութ.—Ճշմարտությո՞ւն... Ի՜նչ կերպարանափոխություն... Թոռմած դեմք, ատամնազուրկ լինդեր, կունտ գլուխ, մեկ թևը կտրված, փայտյա վոտքեր, գաճե ականջներ, թղթե քիթ... Ի՜նչ վիճակ է այս, վո՛վ ճշմարտություն։

Ճշմարտություն.—Թող տվեք ինձ, հանգչիլ քիչ մը։

Գութ.—Հանգչեցեք։ Ո՞վ կը համարձակեր կարծել, թե Ճշմարտությունն վոր անմահ եր, պիտի ծերանար որ մը և հաշմանդամ պիտի յըլլեր անդիլի աշխարհեն մուրացկանի մը վիճակի մեջ։

Ճշմարտություն.—Այո՛, թեև անհավատալի՝ բայց ճշմարիտ է, թե մեռա։ Մահվանս օրը մարդոց մեծագույն մասը կաքավեց, յերգեց, կերավ և խմեց. մեռնելուս համար հոբելյան կատարեց։ Իրավունք ունեին։

Գութ.—Իրավո՞ւնք ունեին։

Ճշմարտություն.—Այո։ Յես իսկ զգացի վերջին որերուս մեջ, թե իմ դարս անցած եր, թե պարզապես շաղակրատ ու[illegible]յնդած կին մը դարձած եյի, թե ամենուն գլխու ցավ կը պատճառեյի, թե բազմաց համակրությունն կորուսած եյի, թե գոյության պատճառ չունեյի այլևս, թե շատ իսկ ապրած եյի, թե անհնար եր ինձ այլևս իշխանություն վարել անդ։

Բազումք կըսեյին ինձ. «Վո՛ ճշմարտություն, ծերացած ես դուն, ամեն գործի մեջ մի մտներ, ամեն խոսքի մեջ մի՛ նետվիր, մեկուսացի՛ր և աշխատե՛ միայն խաղաղ կյանք վարելու։ Աշխարհս փոխված է, տասնևիններորդ դարու մեջ չկրնար յերջանիկ կյանք վարել Ճշմարտությունն յեթե խոսի, Ճշմարտությունն լռելու յե այլևս, վորովհետև մարդիկ՝ հացի խնդրով զբաղած՝ ժամանակ չունին առասպելներ մտիկ ընելու»։

Գութ.—Առասպե՞լ...

Ճշմարտություն.—Մեռա և... դուրսը մա՞րդ կա...

Գութ.—Վո՛չ, առանձին ենք։

Ճշմարտություն.—Յեվ անոթութենե մեռա. մարդիկներու մեկ մասն անոթութենե մեռցնելե հետո հետին թշվառության մեջ թողլով մյուս մասն ալ, վոր կը շարունակե մեռնիլ սովալլուկ։ Յետևես յեկող բոլոր ընտանիքները կործանեցան և մոխիրի վրա նստեցան, առջևես գնացողները կանգնեցան և հոյակապ շենքերու մեջ կապրին։ Աչոքս իսկ տեսա մարդկանց վողբալի դժբախտությունն։

Գութ.—Վո՞րքան փոխված է աշխարհ...

Ճշմարտություն.—Անոթութենե մեռա, յերկար ժամանակ հալածվելե ու բազում տարիներ անդամալուծյալ վիճակի մեջ չարչարվելե հետո։

Գութ.—Բժիշկ մը չդարմանե՞ց զձեզ։

Ճշմարտություն.—Բժիշկ մ'այցելեց։ Որ մը շողոքորթության վոգևով շփեց չորս կողմս։ Որ մ'ալ կեղծավորության բույն յեփեց ու մեջը ստություն խառնեց ու տվավ վոր խմեմ. խմեցի, օգուտ մը չտեսա։ Ուրիշ մ'ալ յեկավ ու պատվիրեց, վոր ստության ցուրտ ջուրին մեջ լվացվիմ. լվացվեցա և ցավերս սաստկացան։ Կը տանջվեյի և կը չարչարվեյի ցավոցս մեջ։

Գութ.—Հիվանդության պատճառավ եր ուրեմն, վոր դուրս չեյիք կրնար յելնել, վորովհետև քանի մը ժամանակե ի վեր ձեր անունը չեր լսվեր հրապարակի վրա։

Ճշմարտություն.—Չեյի համարձակեր դուրս յելնել, կը վախնայի փաստաբաններեն, վորոց մին որ մը քաղաքավարությամբ վոտքս վիրավորեց և սենյակիս մեջ բանտարկեց, մինչև վոր բժիշկ մ'եկավ և բժշկեց զիս, վոտքս կտրելով։

Գութ.—Մյուս վոտքդ ո՞վ կտրեց հապա։

Ճշմարտություն.—Մյուս վոտքս ալ բանաստեղծ մը կտրեց, վորպեսզի ներդաշնակություն գոյանա վոտքերուս մեջ, վորոց մին կարճ ըլլալով, տաղաչափական աչաց հաճելի չեր յերևնար։

Գութ.—Ամեն կողմեն հալածանք...

Ճշմարտություն.—Հետո յերկու կտոր փայտ բերին և

ըսին. «Վոտքերուդ պաշտոնն ասոնք պիտի վարեն փոխանորդաբար»։

Գութ.— Ի՞նչ ընտրություն։

Ճշմարտություն.— Զրկվելով վոտքերես, զրկվեցա նաև ուժես։ Չեյի կարող վազել և ժամանակին հասնիլ հոն, ուր հրավիրված եյի։ Ստությունն արծվի թևերով կը սլանար և կայծակի արագությամբ կիջներ ամենուրեք, մինչդեռ իմ կառացս լծված եյին յերկու ցնդած կրիաներ։ Յեվ ստությունն կստանար մրցանակը։

Գութ.— Դժբախտությո՜ւն։

Ճշմարտություն.— Պիտի գոհանայի յեթե վոտքերես միայն զրկված ըլլայի և ականջներս չկորսնցնեյի օր մը յեղափոխական ժողովի մեջ, ուր յեղափոխական մը՝ չուզելով վոր լսեյի յուր անիրավությունները և պատասխանեյի անոնց՝ հանդգնեցավ յերկու ականջներս մեկեն կտրել։ Այս հարվածը սոսկալի յեր։ Բարկությամբ տուն կվերադառնայի՝ յերբ փոխանորդ վոտքս քարի զարնվելով՝ ինկա թևս կոտրեցի և քիթս ջախջախեցի։

Գութ.— Խե՜ղճ Ճշմարտություն։

Ճշմարտություն.— Յերկար է իմ պատմությունս, սակայն պիտի աշխատիմ համառոտել զայն։ Չպիտի հիշեմ մասնավորներե կրած հալածանքս, որինակի համար, իրենց դրամագլուխը մեկ միլիոնի բարձրացնելու համար գիս ամեն վայրկյան ուրացող վաճառականներն, աշխարհիս բոլոր վոսկիներն իրենց սնտուկին մեջ բանտարկելու համար հետս անիրավությամբ վարվող դրամատերերն, բոլոր անշարժ ստացվածքները տիրանալու համար գիս անպատվող կալվածատերերը, իրենց ցանկությունը հագեցնելու համար գիս հալածողները, իրենց ամուսինը խաբելու համար գիս վռնտող կիները, մեկ խոսքով գիս իրենց կրից, տափանաց ու շահուն զոհող մասնավորները, պիտի հիշեմ միայն զանոնք, վոր գիս պաշտպանելու պաշտոնն ստանձնած են, իմ ընդհանուր դատախազներուս վրա պիտի խոսիմ համառոտիվ։ Նախ և առաջ պիտի ըսեմ, թե փաստաբան չգտնված տեղերը Ճշմարտությունն շատ յերջանիկ է։ Ճշմարտությունն կատարելապես կպակսի հոն՝ ուր իրավագետ կա։ Յերկրորդ՝ պիտի հայտնեմ, թե լրագիրներն ևս վոչ նվազ կը նպաստեն ճշմարտության բարձրացման։ Յերրորդ՝ չպիտի մոռնամ ազգային ժողովն

ուր շատ զանակոծված է ճշմարտությունը և վոչ վոք բողոքած է, մինչդեռ վարժարանի մեջ յեթե տղա մը ծեծվի՝ ամեն կողմե բողոքի ձայներ կը բարձրանան։

Գութ.— Ի՞նչ է այս հալածանաց շարժառիթը։

Ճշմարտություն.— Շահը։ Փաստաբան մը ճշմարտության դեմ զինվելով է, վոր պերճախոսության համբավ կստանա, դատ կը շահի և յուր ապագան կը պատրաստե։ Խմբագիր մը ճշմարտության դեմ մարտնչելով է, վոր յուր բաժանորդաց թիվը կը բազմապատկե և յուր զավակաց ապագան կապահովե. յեղափոխական մը ճշմարտությունն ուրանալով է, վոր հառաջ կերթա յուր... ասպարեզին մեջ։

Գութ.— Ո՞ւյք են ուրեմն ճշմարտության կուսակիցները, կաղաչեմ, ըսեք ինձ։

Ճշմարտություն.— Անոնք՝ վոր վոչ հարստություն ունին և վոչ հարստանալու հույս։ Ճշմարտությունն ամենեն ավելի հարգողներն գինովներն են. յեթե անոնք ալ չըլլային՝ շատոնց մեռած եյի յես։

Գութ.— Գինովությունը քաջալերել պետք է ուրեմն։

Ճշմարտություն.— Յեվ այն ատեն միայն կրնամ վերադառնալ աշխարհ։

Գութ.— Ճշմարտությունը գինիի բաժակի մեջ...

Ճշմարտություն.— Այս է ճշմարտությունը. գինի և ճշմարտություն։

Գ

ԳՈՒԹ ՅԵՎ 8/10 ԿՐՈՆՔ

Գութ.— Ի՞նչ կը տեսնեմ... կրոնքի բեկորներ... բայց ասոնք ամբողջություն չեն կազմեր, ութ մասը միայն մնացած է, յերկու մասն ո՞ւր է... կապրի՞ արդյոք... կարելի՞ յե... Ով գիտե քանի չարչարված է և տակավին ինչ անհնարին ցավոց մեջ կը տառապի այսպես մաս մաս մեռնելով։ Վո՜վ մահ, գիտես վորքան ատելի յեն կոտորակներդ, թեև ամբողջությունդ ալ հանձնարարելի բան մը չե։ Մոտենանք սա մահվան տասնորդականներու և հարցաքննենք զանոնք մի ըստ միոջե։ Ըսե՛ք ինձ, վո՜ տասնորդներ, ո՞վ բաժնեց զձեզ ամբողջեն։

Ա. Տասնորդ.—Մարդուն մեկն յեկավ և խնդրեց մեր ամբողջեն, վոր դրամատան մը մեջ գանձապետի պաշտոն տրվեր իրեն։ Զկրցանք կատարել խնդիրն, ուստի հարված մը տվավ ամբողջին և սպաննեց զիս։

Բ. Տասնորդ.—Պակշոտ մը ներկայացավ որ մը, արտոնություն խնդրեց, վոր թույլ տրվեր իրեն ամուսնանալ քրոջն աղջկան հետ, վոր հինգ հազար վոսկիո օժիտ մը պիտի բերեր։ Մեր ամբողջը հրաման չտվավ։ Պակշոտն բարկացավ, թշնամի յեմ այն կրոնքին, վոր սիրածս ինձի չտար ըսավ, քաշեց փըրցուց զիս ամբողջեն և գնաց գրկել այն կրոնքն, վոր թույլ կուտար իրեն գրկել քրոջն աղջիկն։

Գ. Տասնորդ.—Յես բոլորովին պարապ տեղը մեռա։ Աղքատ վաճառական մ'եկավ և ուզեց, վոր յերկու հազար վոսկիո վարկ մը բանայինք իրեն վաճառականի մը վրա Ամերիկա, ուրկից վառարաններ, մահճակալներ, հայելիներ և այլն պիտի բերել տար վաճառելու համար։ Ի՞նչ ըներ խեղճ ամբողջն, հայտնեց, վոր կարողություննեն վեր եր այդ գործը։ Վաճառականն սըրդողեցավ, և գործ չունիմ այդ կրոնքին հետ, վոր վաճառականները չքաջալերեր ըսավ. զիս մեռցուց և գնաց ուրիշ կրոնքի մը հարեցավ՝ հետը տանելով հարյուրի չափ ընտանիք։

Դ. Տասնորդ.—Յես ալ զոհվեցա անիրավության մը։ Սընանկացած սեղանավոր մը յեկավ հազար վոսկի ուզեց, վոր արժեթուղթի գործով կզբաղեր։ Կրոնքն ուսկի՞ց գտներ սատկն, չունիմ ըսավ։ Զունի՞ս, ապա ուրեմն ի՞նչ բանի կը ծառայես դուն, ըսավ և սպաննեց զիս։

Ե. Տասնորդ.—Իմ մահվանս պատճառն ալ քիչ մը ծիծաղելի յե։ Տրամաբան մ'որ չեր կրնար յուր ասպարեզին մեջ հառաջդիմել, փաստաբանելով սա յեզրակացության հանգեցավ, թե մեր ամբողջն և յեղեր պատճառ յուր ուղեղին տկարության. ուստի անքաղաքավարությամբ հարձակվեցավ ամբողջին դեմ և զիս սպաննեց։

Զ. Տասնորդ.—Իմ մեռնելուս պատճառը շատ պարզ և. անոթութենե մեռա։

Է. Տասնորդ.—Քառասնի չափ աղքատներ ներկայացան և ձմեռվան փայտ և ածուխ ուզեցին։ Կրոնքը փայտի և ածուխի վաճառակա՞ն եր, ի՞նչպես ունենար, թող վոր ինքն ալ կը մսեր.

տղաներս, չունիմ ըսավ։ Փայտ և ածուխ չունեցող կրոնքին լեզուն ալ կարճ ըլլալու յե ըսին և կտրեցին զիս։

Ը. Տասնորդ.—Կրո՛նք, դուն ես պատճառ սովին, յեթե քիչ մ'անձրևել տայիր, առատ հունձք կունենայինք։ Յեթե հիմա անձրևել չտաս՝ գնա քերթել մեր անունները քու տոմարեդ, պոռացին քաղաքի մը բնակիչները և ուրիշ կրոնքի մ'առաջնորդությամբ ամբողջովին վրա հարձակեցան և սպաննեցին զիս։

Գութ.—Այսպես պետք եր ըլլալ։ Այո՛։ Դուք ալ ինձի մտիկ ըրեք այժմ, դուք վոր կրոնքին յեթե վոչ ամբողջությունն՝ գեթ մեծամասնությունն կը կազմեք, թեև խոսք հասկցող մասն անդին է, բայց վնաս չունի, վորովհետև ըստ սահմանադրության՝ [156]) մեծամասնությունն վերադասելի յե փոքրամասնության, այսինքն խոսք չհասկցող ութը հոգի խոսք հասկցող յերկու հոգիեն նախապատիվ են։ Տյարք իմ կոտորակք մահվան, ձեր տեղեկություններեն սա ճշմարտությունն քաղեցի, թե ձեր ժողովրդյան ուսյալ՝ ինչպես նաև անուս մասին մեջ կրոնքն ներքին համոզում մը չե, այլ պարզապես վաճառականություն. այսինքն նա կը հարի այն կրոնքին, վոր շահավոր կը թվի իրեն և զոր կը թողու, յեթե շահավորագույնը գտնե, թեև ամեն կրոնափոխ ներքին համոզմամբ մեկ կրոնքեն մյուսը գաղթել կը ձևանա։ Բայց ով թուլացուց և ուծացուց այդ ժողովուրդն կրոնասիրութենե։ Դուք։

$^{8}/_{10}$ Կրոնք.—Մե՞նք։

Գութ.—Այո՛, ո՞ւր է այժմ այն ժպիտն, վոր ձեր դեմքին վրա կը փայլեր, յերբ խեղճ մարդոց քթեն բռնած կը խաղցնեյիք զանոնք, ո՞ւր այն պսակներն, վորովք անմիտներու խումբը ճակատդ կը բոլորեր, յերբ կնոջ մ'որ տասը տարիներ անբարոյականության տղմին մեջ թաթավյալ եր՝ ամուսինն կը հալածեյիր և հրաման չեյիր տար անոր վերստին կարգվելու, մինչդեռ անբարոյականության ովկիանոսին մեջ լողացող կրոնավորի մը թույլ կուտայիր զքեզ քարոզելու։

$^{8}/_{10}$ Կրոնք.—Մե՞նք։

Գութ.—Յերբ աղքատ ննջեցյալները թաղելու կը դժկամակեյիր, մինչև վոր անոնց ճանապարհի ծախքը կանխավ չստանայիր և մյուս կողմե սիրահոժար կամոք կը թաղեյիր հարուստներն քանի մ'անգամներ, յերբ փողդ պարարելու և քսակդ գիրցնելու համար հարուստներն կը շողոմեյիր և թույլ կուտա-

յէր անոնց՝ ինչ վոր կարգիլեյէր աղքատներուն, յերբ առաջնորդություններն ու վանահայրություններն աճուրդով ի վաճառ կը հանեյիր և առատագունին կը հանձնեյիր զանոնք. յերբ պաշտպաններուդ՝ վոր հարուստ չէյին՝ բերանը կը խփեյիր և հալածանք կը հարուցանեյիր անոնց դեմ, հալածանք՝ զոր սուրբ կը կոչեյիր. յերբ հառաչանաց ու վողբոց ձայներ կը լսեյիր, վորք հաց կաղաղակեյին և դուն սեղանին առջև անցած՝ կես վոչխար կուլ կուտայիր հին գինիով. մերկ ենք կը պոռային և դու շքեղ ու փառավոր հագուստներու մեջ փաթթված ու ծրարված Ամերիկայի լուրեր կը կարդայիր. բանտն ենք, կը հառաչեյին, և դու հոյակապ տան մը մեջ ոլխորդներու հետ թուղթ կը խաղայիր, և ինչ վոր զարմանալի յե. կամ բնավ զարմանալի չե, սխրաբանություն կընեյիր, վո կրոնք, կամ մեծամասնություն կրոնքի։

$^{8}/_{10}$ Կրոնք.— Ի՞նչ կը լսեմ... ձունը գլխուս...

Գութ.— Գայլեր կը մտնեյին հոտիդ մեջ և վոչխարներդ կը փարատեյին, և դու անտարբեր աչոք կը դիտեյիր գառնուկներուդ արյան մեջ խայտալը, ու կըսեյիր. «Այդ քաղաքին կլիման վնասակար ե առողջության»։ Ծեծ մ'ալ յես քաշեմ քեզի։

$^{8}/_{10}$ Կրոնք.—Պատասխանատու չեմ այն անհոգության և անտարբերության, վոր ներկայացուցչացս վոմանց կողմե ցույց կը տրվին. սեր, գթություն և յեղբայրություն քարոզած եմ միշտ։

Գութ.—Ներկայացուցիչներդ զո՞վ կը ներկայացնեն ուրեմն յեթե վոչ զքեզ։

$^{8}/_{10}$ Կրոնք.—Զիս կը ներկայացնեն, բայց վոչ ամեն պարագայի մեջ։

Գութ.—Ի՞նչպես վորոշեր ժողովուրդդ՝ թե այս ինչ պարագային մեջ զքեզ կը ներկայացնեն և այն պարագային մեջ իրենք զիրենք, մանավանդ թե ժողովուրդն գիտե—և ներկայացուցիչներեդ ուսած ե—թե դու և ներկայացուցիչներդ մի յեք.

$^{8}/_{10}$ Կրոնք.—Սխալ։

Գութ.—Գնացե՛ք այսուհետև, յեթե կարելի յե յերթալ ուղղել այն սխալն, պատժել անտարբեր և միայն իրենց վորովայնովն զբաղող պաշտոնյաներն և ըսել իրենց՝ թե քիչ մ'ալ տիրոջը գործերով զբաղին, հերիք տիկնոջ գործերուն պարապեցան։

$^{8}/_{10}$ Կրոնք.—Իրավունք ունիք։

Գութ.—$^{2}/_{10}$ մասն, վոր կայրե դեռ, աշխատի թող, վոր բացառիկ կերպով չպատնվի ան ալ, վորովհետև կրոնի մասին անտարբերությունն այնչափ հառաջ գնացած ե, վոր կրոնքի հիմնական կանոնը բացառություն և բացառությունն իբրև հիմնական սկզբունք ընդունվել սկսավ։ Յերթաս բարյավ, վո՛ կրոնք։

Դ

ԱՆԿԵՂԾՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺԱՆԻՔ

Անկեղծություն.—Դո՞ւն ալ զգացիր վերջապես ոդափոխության պետքը, վո՛ Արժանիք։ Բժիշկնե՞րը խորհուրդ տվին քեզ մեկնել անդիի աշխարհեն։

Արժանիք — Ի՞նչ ոդափոխություն։

Անկեղծություն. —Կատարյալ ոդափոխություն, բառին ընդարձակ նշանակությամբ, վորովհետև հոս գաղթելու պետք պիտի չունենայիր, յեթե կարենայիր ապրիլ անդիի աշխարհին ոդը ծծելով։ Յերանի թե ուղղակի հոս աշխարհ յեկած ըլլայինք առանց անցնելու այն ապականյալ կայարանեն, վորուն կլիմայեն ներքև կարելի չե մեզ շնչել։

Մարդասիրություն — Այս մասին բարեբաղդ եմ յես ուրեմն։

Արժանիք — (Առ Անկեղծություն) Ո՞վ ե սա։

Անկեղծություն. — Մարդասիրությունն ե։

Արժանիք. — Անդիի աշխարհ գնացած չե՞ բնավ։

Անկեղծություն. — Վո՛չ, ընիկ աս տեղացի յե։

Արժանիք. — Մեռելածի՞ն ե խեղճը։

Անկեղծություն. —Ծնելամահ ե։ Սիրելի Արժանիք, թթվածինե ու ազոտե բաղադրյալ ոդույն մեջ չենք կարող շնչել։ Բնությունն սահմանած ե զմեզ ապրիլ այս մթնոլորտին մեջ։

Արժանիք. — Ինչո՞ւ ուրեմն բնությունն զմեզ անդիի աշխարհին մեջ ի լույս կը բերե և հոն զմեզ խայտառակելեն յետքը հոս կը դարձնե։ Միթե խաղալի՞կն ենք անոր։

Անկեղծություն. — Աշխարհիս վրա կա՛ միթե բան մը,

վոր բնության խաղալիկը չըլլա։ Բայց այս նյութին վրա ուրիշ ու մը կը խոսինք։ Այժմ, կը վստահացնեմ ձեզ, թե շատ գոհ պիտի ըլլաս այս օդափոխություններեն։ Հավատացեք, շատ քաջառողջ եմ մեռնելես ի վեր։ Ձեզի ասեր, յեթե չմեռնեյի։

Արժանիք.— Ճշմարիտ է, դեռ ամիս մ'առաջ քու վրա կը խոսեյին։

Անկեղծություն.—Ի՞նչ կըսեյին, վես, կոտ, անբարտավան, համառ ածականներով կը հիշատակեյին զիս, այնպես չէ՞։

Արժանիք.—Վո՛չ, բայց...

Անկեղծություն.—Գիտեմ, գիտեմ, կը ճանաչեմ այդ անպիտաններն, վորոց ջախջախած եմ գլուխները։

Մարդասիրություն.—Ինձի համար ի՞նչ կըսեն։

Արժանիք.—Ձեր վրա գաղափար չունին, վոր կարծիք հայտնեն, յեթե տեսած ըլլային...

Անկեղծություն.—Աղու՛շ է, կըսեյին։ Բայց, ձեր վրա խոսինք, Արժանիք, յեթե վոչ ողափոխության համար՝ ի՞նչ նպատակավ ուրեմն բարեհաճեցաք ձեր ներկայությամբն զմեզ պատվել։

Արժանիք.—Նպատակ չկա, պարզապես ճաթեցա։

Անկեղծություն.—ճաթեցա՞ր, և ինչո՞ւ բարեհաճեցաք ճաթիլ։

Արժանիք.—Կը խնդրեմ, մի՛ ստիպեր զիս խոսելու, վորովհետև դող և սոսկում կը բռնե զիս։

Անկեղծություն.—Մի հուզվիր... պաղ արյամբ պատմե։

Արժանիք.—Ուսկի՞ց սկսիմ... . . . .

. . . .

Արժանիք.—Բայց պիֆթեֆ չպիտի շինենք անոնցմե։ Ձեփած կովու մը գլուխը հիսուն դահեկանի կը վաճառվի և խմբագրերի մ'եփած գլխուն դանգ մը տվող չկա։

Անկեղծություն.—Կովու գլուխներն ի վաղուց անտի կը փնտռվին։

. . . .

Անկեղծություն.—Աս ճաթեցուցիչ է։

Արժանիք.—Կնճռալի դատ մը կը ներկայանա։ Ամենեն քաջ իրավագետն այն է, վոր շատ կը խոսի, բարձր ձայնով կը խոսի և պարապ բաներու վրա կը խոսի։ Կը մեծարեն այն իրա-

վագետն և բուն խորհող փաստաբանն կըստիպվի յուր պարտքերը չվճարելու համար հոդվածներ փնտռել հռովմեական օրենսգիրքին մեջ։

Անկեղծություն.—Զարմանալի յե արդարև։

Արժանիք.—Համեստությամբ ու պարկեշտությամբ օժտըված և հրապուրիչ գեղեցկությամբ փայլող աղնիվ աղջիկներն մեծ դժվարությամբ կրնան դաշխարհ ճաշակել, մինչդեռ վոսկվո գեղեցկությամբ միայն զարդարված աղջիկները դաշխարհ կը լափեն և հասարակաց կարծիքը կըսե. «գեղեցիկ չեն. բայց սիրուն են»։ Դուն ալ գետնին տակն անցիր, վո՛ հասարակաց կարծիք, փորձանք մ'ալ դուն ես, բարով խերով չելնեյիր մեր դեմը։

Անկեղծություն.—Մի՛ բարկանաք։

Արժանիք.—Սովինքները կաթով լի սոնտու մը՝ վոր տըեղ է՝ հարմար չդտավիր մեծատան մը նորածին տղուն կաթ ջամբել։ Կաթին մեջ ջուր խառնած է յեղեր։ Տան բժիշկը՝ վոր ծանոթ է մեծատան ճաշակին՝ ընտիր և առաջին կարգի կաթ կը գտնե գեղեցիկ և պչրող սոնտույի մը սոյանց մեջ, վորք բնավ կաթ չունին։ Կաթի կարոտ են և գեղեցկություն կը փնտռեն։ Մի՞թե յերեխան յուր սոնտույին ծիծերը միայն բռնելով անոր այտե՞րը պիտի ծծե։ Յերեխան գործիք է...

Անկեղծություն.—Զափազանցության մեջ կիյնաս, Արժանիք։

Արժանիք.—Վո՛չ, յերբեք վոչ։ Կը խնդրեմ, ա՛լ խոսիլ մի տար ինձի, վորովհետև ասոնց հիշատակն իսկ առողջությանս վնասակար է։

Անկեղծություն.—Գեղեցկությունն, դրամն, շողոքորթությունն և տգիտությունն ճաթեցուցած են զձեզ։

Արժանիք.—Այո՛։

Անկեղծություն.—Ձերբակալվեցա՞ն գոնե։

Արժանիք.—Յեթե յես չհաջողեցա ձերբակալել զանոնք, ուրիշ մ'ալ չպիտի կրնա հաջողիլ։

Անկեղծություն.—Յելնենք պտըտինք քիչ մը, ձեզի ներկայացնեմ Խիղճը, Գութը, Ճշմարտությունն և մեր ուրիշ ընկերները։

Արժանիք.—Յերթանք։

Անկեղծություն.—Ուրիշ ուղևոր չկա՞ մոտերս հոս գալու։

Արժանիք.—Կարծեմ Ամոթը կը հասնի մեկ ամխեն։

Անկեղծություն.—Ամոթը հո՞ն է տակավին։

Արժանիք.—Այո։

Անկեղծություն.—Սխալ ըլլալու չէ Ցեբթանք։

ՍԻՐՈ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԸ

Ամուսնությունն է սկզբանե անտի վաճառականության գըլխավոր ճյուղերեն մին համարված է։

Աշխարհիս վրա չկա յերկիր մը, քաղաք մը, գյուղ մը, խըրճիթ մ'ուր գոյություն չունենա այս առևտուրն։

Վաճառականական օրենաց այն տրամադրության համեմատ, վոր քան տարեկանե վար յեղողներուն կարգիլե վաճառականությամբ զբաղիլն, անչափահասներն չեն կրնար ամուսնանալ և ի դիմաց նոցին փոխանորդաբար կը կարգվին նոցա խնամականները։

Անոնք, վոր մեծ դրամագլխատեր են՝ մեծ քանակությամբ կը գնեն և կը վաճառեն, իսկ անոնք, վոր փոքր դրամագլուխ ունին, պզտիկ քանակությամբ գործ կընեն։

Բազումք մեծ հարստություններ կը դիզեն այս առուտուրեն և բազումք կը սնանկանան։

Ապրանքի ընտրությունն մեծ կարևորություն ունի առևտըրական այս ճյուղին մեջ։

Աղջիկներ կան, վոր մեկ անգամ լվացվելով իրենց գույնը կը նետեն, ինչպես կան մանչեր, վոր տկար հյուսվածք ունին և քիչ ժամանակի մեջ կը մաշին և կը պատռվին։

Սպիտակն և կարմիրն մյուս գույներեն ավելի հարգի համարված լինելով, շատ վաճառականներ իրենց ապրանքներն այդ գույներով կը ներկեն և հաճախորդներն կը խաբեն։

Հաճախորդներուն մեջ կա նաև սովոր մաս մ'որ թուխ գույնն նախապատիվ կը համարի, և վաճառականք վոմանք այդ գույնն ալ կը նենգեն շատ անգամ։

Ուստի այս և սոնց նման ուրիշ բազում կեղծ ու պատիր խաբեությանց չզոհվելու համար սովորություն յեղած է, մանավանդ վերջերս, միջնորդներու առաջնորդությամբ ամուսնանալ։

Այս ծանոթություններն տալե հետո դառնանք Պ. Կուռնե-

վոսին, վոր դուրսեն նոր յեկած ե ամուսնանալու համար և պանդոկ մ'իջևանած ե։

Գ. Կոռնելիոս յերեսուն յերեսունըմեկ տարեկան մարդ մ'ե, միջակ հասակով։ Դեմքն վոչ համակրելի յե և վոչ ալ հակակրելի, չեզոք դիրք մ'ունի։ Յերկար պճղնավոր մը և յերկար արծաթագույն վերարկու մը կը հագնի և մեջքը գոտի կածե։ Բարեպաշտ և աստվածավախ անձ մը լինել կը թվի, միշտ յուր քովե բարձին վրա ունի Չեն հոգեվար[157]) մը, վորուն վրա կը գտնվի յուր քթախոտի տուփն։ Ամեն առավոտ Նարեկացիեն[158]) քանի մը գլուխ կը կարդա բարձրաձայն, առանց մոռնալու յուր վոսկեզօծ Սաղմոսն[159]) և Գործք Առաքելոցն[160]), զորս մետաքսյա թաշկինակի մը մեջ կը պահե մեծ խնամով։

Գ. Կոռնելիոս պարզ մարդ մ'ե սրտով և մտքով. և այն կարծիքն ունի, թե ամեն մարդ իրեն պես ստեղծված ե, ուստի քիչ մը դյուրահավան ե և ամենուն խոսքին կը հավատա առանց խորհրդածելու և դատելու։

Պանդոկ իջնելուն հետևյալ որն հմայից դեմեց, բարեկամաց վոմանց խրատներուն անսալով պակլա նետել, տալու և հասկընալու համար, թե ամուսնությամբ յերջանիկ պիտի ըլլա, թե թշվառ։ Հաղորդվեցավ իրեն, թե սև աչերով, սև ընքվիներով, կարմիր յերեսով, հունական քիթով—գրաբառ հունարեն—փոքր բերանով, բարձրահասակ կին մը պիտի ունենար և յերջանիկ պիտի ըլլար։ Այս տեղեկությունններն ստանալեն հետո, գոհ սրտիվ դարձավ յուր սենյակն, ուր գտավ տասնի չափ կիներ, վոր, իրեն գալուստն իմանալով, փութացած եյին գալ զինքն տեսնել։

Սենյակը մանելուն պես Գ. Կոռնելիոս շվարեցավ մնաց սեմին վրա՝ ի տես այս կիներու, վորք վոտք յելնելով անմիջապես դեպի իրեն դիմեցին բարի գալուստ մաղթելու համար։

— Բարի յեկար, Մեծապատիվ Կոռնելիոս, ըսավ տիկին Ա... սկսելով անոր աջ ձեռքը թոթվել։

— Ներումն կը խնդրեմ շողենավլին մեջ զձեզ չդիմավորելուս համար, հարեց տիկին Բ... Գ. Կոռնելիոսին ձախ ձեռքը թոթվելու սկզբնավորությունն ընելով։

— Կը հուսամ, թե տունը ամենքն ալ աղեկ են, ձեր հայրը, ձեր մայրը, ձեր քույրերն, ձեր յեղբայրներն. աղեկ ըլլան, վողջ ըլլան, շարահարեց տիկին Ա... ձեռք թոթվելը շարունակելով։

— Կարծեմ թե ողն սքանչելի յեր և ծովային հաճելի ճամբորդություն մը ըրիք, ավելցուց տիկին Բ... հյուրին ձեռքն անընդհատ թոթվելով։

Գ. Կոռնելիոս մեյ մը տիկին Ա...ին կը նայեր, մեյ մը տիկին Բ...ին և հետո մյուս կանանց, վոր շրջապատած եյին զինքն սեմին վրա և ձեռքը կուգեյին թոթվելու համար։

— Բավական ե ա՛լ, տիկին Ա... թող տվեք, վոր մենք ալ բարի գալուստ մաղթենք, պոռաց տիկին Գ... և տիկին Ա...ին ձեռքեն հափշտակեց Գ. Կոռնելիոսին ձեռքն, զոր սկսավ թոթվել ուժով։

Տիկին Գ...ին օրինակին հետևեցավ տիկին Դ... և տիկին Բ...են կորզեց մարդուն ձեռքն, զոր ցավցնելու չափ ուժով սկըսավ շարժել։

Գ. Կոռնելիոս յուր ձեռքերն այս կանանց տրամադրությանը հանձնած՝ անտարբերությամբ կսպասեր իրաց վախճանին։

Ա... և Բ... տիկինները գնացին բազմոցին վրա նստան։

Տիկին Գ.—Բարի գալուստ, Գ. Կոռնելիոս, կաղոթեմ, վոր ուխտդ կատարվի ուզածիդ պես և բախտավոր ըլլաս։ Յերեկ առտու այս բանին համար հատկապես յեկեղեցի գացի և մոմ վառեցի։

Տիկին Դ.—Բարի մարդոց գործերը միշտ կը հաջողին, և դուք շատ բարի, ազնվական, վեհանձն մեկն եք, Գ. Կոռնելիոս, արդարև առաջին անգամն ե, վոր կը տեսնեմ զձեզ, սակայն յես մարդուն դեմքեն կը հասկնամ անոր ինչ բնավորության տեր ըլլալը։

Թույլ տվեք, վոր մենք ալ կատարենք մեր պարտքը, աղաղակեցին տիկնայք Ե... և Զ... և պզտիկ կամթամարտեն յետքը հաջողեցան տիրել Գ. Կոռնելիոսին ձեռքերուն։

Տիկին Ե.—Բարի յեկար Գ. Կոռնելիոս, վողջամբ յեկար, Գ. Կոռնելիոս, ինչ վոր դրած ես մտքիդ մեջը՝ խերով կատարվի, Գ. Կոռնելիոս, միշտ խնդաս. Գ. Կոռնելիոս, միշտ ուրախությյան մեջ տեսնեմ քեզի, Գ. Կոռնելիոս, քու աղեկութենեդ մենք ալ կոգտվինք, Գ. Կոռնելիոս։

Տիկին Զ.—Բարով յեկար, Գ. Կոռնելիոս, սիրելի յեղբայրս, կը մաղթեմ, վոր անապարանոք վնասակար բան մը չընես. ասանկ

գործերու մեջ լավ խորհիլ և աղեկ կշռել պետք է։ Սիրելիդ իմ Կուռնելիոս, յես ուրիշ խոսք չեմ ըներ։

Տիկին Է... և օրիորդ Ը... ինչպես նաև Թ... և Ժ... տիկիններն նույնիմաստ բարեմաղթություններով իրենց պարտականությունն վճարեցին Պ. Կուռնելիոսին և իրենց պաշտոնակիցներուն քով բազմեցան։

Ավելորդ չե նշանակել, թե քանի մը կիներ Պ. Կուռնելիոսին թեվը մտան և անկյունն բազմեցուցին զայն։

Պ. Կուռնելիոս շվարած՝ քանի մը վայրկյան կիները դիտելեն յետքը, թեմպեքի քսակն հանեց և միջնորդներուն դառնալով հարցուց.

— Մեյ մեկ Նարկիլե կը խմե՞ք։

Կիները խնդացին քրքիջով։

— Ինչո՞ւ խնդացիք, հարցուց Պ. Կուռնելիոս պաղ արյամբ։

— Վորովհետև մենք Նարկիլե չենք խմեր, պատասխանեցին կիներն միաբերան։

—Նարկիլե չխմողները կը խնդա՞ն այս քաղաքին մեջ։

— Վոչ.... բայց.... վորովհետև.... իրավ վոր մեր խնդալն պարապ բան է, կարծեմ ձեր քաղաքը կնիկները Նարկիլե կը խմեն։

—Կան վոր կը խմեն, կան վոր չեն խմեր..... բայց Նարկիլե խմելը.....

Տիկին Ա.—Նարկիլեյի խոսքը մեկդի դնենք, Պ. Կուռնելիոս.... իմ հոս գալուս պատճառն հարկավ գուշակած եք. յես կարգվիլ ուզողներուն աղջիկ կը գտնեմ և.....

Տիկին Բ.—(Ընդմիջելով) Յես ալ, Պ. Կուռնելիոս, աղջիկ կը գտնեմ և ինչ գեղե....

Տիկին Գ.—(Ընդմիջելով) Իմ արհեստս ալ այս է, ձեռացս տակ անանկ աղվ....

Տիկին Դ.—(Ընդմիջելով) Դուն ինձի մտիկ ըրե, Պ. Կուռնելիոս.... տատրակի պես.....

Տիկին Ե.—(Ընդմիջելով) Ինչո՞ւ քեզի մտիկ պիտի ընե յեղեր.... ադամանդի պես աղջիկներ կը բե.....

Տիկին Զ.—(Ընդմիջելով) Ի՞նչ պարկեշտ և ուսումնական աղջիկներ ունիմ յես..... անանկ դաշնակ կը զարնեն և անանկ կը պարեն, վոր կարծես թե մեյ մեկ հրեշտ.....

Տիկին Է.—(Դարձյալ ընդմիջելով) Հապա իմինները, վոր ֆրանսերեն կը խոսին և.....

Օրիորդ Ը.—(Ընդմիջելով) Յերեսուն տարիե ի վեր այս արհեստին մեջն եմ և այն ամեն անոնք, վորոնց աղջիկ գտած եմ, շատ գոհ յեղած են և.....

Տիկին Թ.—(Ընդմիջելով) Յես ինքզինքս չեմ գովեր, թող կուտամ, վոր գործերս խոսին. իմ գտած աղջիկներս տասներկու ղավակ կը բերեն և միշտ տասն և ութ տարեկան կը կարծվին. կին ըսածդ ալ ասանկ ըլլալու յե վոր.....

Նորեն ընդմիջումներ։

Տիկին Ժ.—Պ. Կուռնելիոս գիտե, թե մեր մեջ վո՞րն վարպետ է այս գործին մեջ, զինքը մտիկ ընենք նայինք, ինչ կարծիք պիտի հայտնե։

Կուռնելիոս.—Բայց Նարկիլե խմելն անվայել բան մը չէ կարծեմ, վոր ասանկ խնդացիք վրաս։

Տիկին Ժ.—Բան մ'եր անցավ գնաց, անոր վրա խոսիլն ավելորդ է. իսկ յեթե շատ վիրավորվեցար, մեր խնդալը հետ կը կոչենք։

Կուռնելիոս.—Ի՞նչ ըսել է հետ կոչել։

Տիկին Թ.—Այսինքն իբր չեղյալ համարել։

Կուռնելիոս.—Իբր չեղյալ համարելով ի՞նչ կըլլա։

Տիկին Ա.—Վորպես թե դուն մեզի հարցուցած կըլլաս՝ թե Նարկիլե կը խմե՞ք, և մենք ալ խնդացած չենք ըլլար։

Կուռնելիոս.—Ատ ի՞նչ խայտառակություն է. յես տղա՞ յեմ, վոր խաբվիմ, թե չխնդացիք։

Տիկին Բ.—Ատոր վրա խոսիլը չարժեր, Պ. Կուռնելիոս, հրամանքդ ի՞նչ տեսակ աղջիկ կուզես, անոր վրա խոսինք։

Տիկին Թ.—Ամեն տեսակ աղջիկ ունիմ ձեռքիս տակ, Պ. Կուռնելիոս, յեթե կը հաճիք հրամմեցեք, յերթանք մեկիկ մեկիկ ցուցունեմ ձեզ։

Յեվ տիկին Թ... Պ. Կուռնելիոսին թևեն քաշելով բազմոցեն վար կ'իջեցնե զայն։

Օրիորդ Ը.—Ո՞ւր կը տանիս մարդը, Տիկին Թ... գուցե քեզի վստահություն չունի։ Օրիորդ Ը... կսկսի Պ. Կուռնելիոսին մյուս թեվը քաշել։

Տ ի կ ի ն Գ.—Շիտակն ըսեմ՝ այս կարգի անկեղծութիւն տեսած չունիմ, խեղճ մարդուն թեւերը պէտք է փրցունենք։

Մյուս մեքենավարներն ալ կսկսին պոռալ. կռիւը կը մեծնայ. հայհոյութիւնն կամիզի կը փոխուի, կամիզը կռուի, կռուին վերջը՝ այս իրարանցումին մէջ Պ. Կուռնելիոսն մէյ մը աչքին կը քաշէն մէյ մը անդին։

Աղմուկն կը մեծնայ, վեր կը վազէ պանդոկապետը, և կը կանգնի մեքենավարներուն մեջտեղը, որ սկսած էին կոշիկի հարուածներ իջեցնել իրարու գլուխ։

— Ձե՞ք ամչնար, չե՞ք խղճիր, կը պոռայ պանդոկապետը, ի՞նչ խայտառակութիւն է աս։ Դուրս ելէք ամէնքդ ալ, չպիտի կարգուի այդ մարդը։

Կ ո ւ ռ ն ե լ ի ո ս.—Չպիտի կարգուիմ ըսէ, դուրս ելէք։

Պ ա ն դ ո կ ա պ ե տ.—Թող տուէք խեղճին օձիքը։

Կ ո ւ ռ ն ե լ ի ո ս.—Թող տուէք իմ օձիքս։

Պ ա ն դ ո կ ա պ ե տ.—Կարգուած է ան, և քանի մը զաւակներ ալ ունի։

Կ ո ւ ռ ն ե լ ի ո ս.—Այո, կարգուած եմ ըսէ, և քանի մը զաւակներ ալ ունիմ։ Վերջ ըլլայ, Պ. պանդոկապետ, որ վրայ հասար և ջուրն չառնել տուիր ինծի, այս կնիկները պիտի խեղդէին զիս։

Պանդոկապետն կը յաջողի սենյակէն դուրս հանել կնիկները և բարեկամաբար կը հորդորէ Պ. Կուռնելիոսն, որ զգուշանայ անոնցմէ և հաւատք չընծայէ անոնց խոսքերուն։

Պ. Կուռնելիոս շնորհակալութիւն կը հայտնէ պանդոկապետին և կը խոստանայ անոր խրատներով գործելու։

Կէս ժամ կանցնի։

Տիկին Գ... Պ. Կուռնելիոսին սենյակը կը մտնէ։

— Շատ ցաւ զգացի, կըսէ, քիչ մ'առաջ տեղի ունեցած անցքին վրայ։ Ես վարժված չեմ այսանկ բաներու, ես մարդու զաւակ եմ, քաղաքավարութեան սորված եմ, այդ կնիկներուն բարև տալն անգամ իմ պատիւս կը դիպչի. մ՛հ, չէք գիտեր, Պ. Կուռնելիոս, որքան ստոր են արարածներ են անոնք։

— Ինծի ալ շատ ստորին արարածներ յերևցան։

— Խարդախ են։

— Այո։

— Լիրբ են ամենքն ալ։

— Ես պէտք ըսէյի։

— Հիմա հրամանքդ ինծի մտիկ ըրէ, բայց վստահութիւն ունեցիր վրաս. մի վախնար, չեմ խաբեր քեզի, միայն ըսէ ինծ, թե ինչպես աղջիկ կուզես։

— Սև աչքերով, սև ընքվիներով, պզտիկ քիթով, բարձր հասակով աղջիկ մը կուզեմ։

Ճիշտ ուզածիդ պես հատ մը կա ձեռքիս տակը։ Վաղը վեց ու կեսին ատեններ կուգամ, քեզի կառնեմ, մեկտեղ կերթանք և աղջիկը կը տեսնես։

— Շատ աղեկ, շնորհակալ եմ. ավելի կանուխ չ°կրնար ըլլալ։

— Ձէ, ընդհանրապես ութէն մինչև ինը կերթան աղջկատեսի, վեցուկեսին ելթե ելնենք ասկից, ութին աղջկան տունը կը գտնվինք։

— Բանի որ անանկ է, ինչ ընենք, ըսածիդ պես ըլլա։

— Ա՞յս հագուստներովդ պիտի յերթաս։

— Ցեթե կուզես սև չուխայե շալվարս և Ֆրստրքը նույպես կը հագնիմ, գլուխս ալ յազմաս կը կապեմ, անանկ կ'երթանք։

— Բանթալոն, սէրժի չե՞ս կրնար հագնիլ։

— Ձէ, չէ, չէ...

— Քիչ մը ֆրանսերէն գիտե՞ս, Պ. Կուռնելիոս։

— Ամենևին չեմ գիտեր։

— Սանկ պոնժուր մը, ատիյո մը, մոնշեր մը ըսելու չափ գոնե...

— Վաղը չե՞նք կրնար սորվիլ անոնք շուտ մը։

— Ներեցեք, հրամանքնուդ գործը ինչ է, ինչ առևտուրով կզբաղիք։

— Տոկոսով ստակ կուտամ ուզողներուն։

— Շատ լավ, վաղը կուգամ, կերթանք։ Ա՛լ ուրիշին խոսքին ականջ մի կախեր։

— Ո՞վ ականջ կը կախէ այդ ստորին արարածներուն, խարդախներուն և լրբերուն։

— Ապրիս։ Վաղը անպատճառ կուգամ, մնաք բարով։

— Ցերթաք բարով։

Տիկին Գ... սենյակեն ելած ժամանակն դրան քով կը տեսնե Տիկին Է...ն, որ ալրանքի տախտակե սնտուկի մը վրա նըստած էր և առանց բարևելու զայն, կանցնի կերթա։

Տիկին Է...ն կը ներկայանա Պ. Կուռնելիոսին։

— Նորէն բարի լոյս, Պ. Կուռնելիոս։

— Դուրս, դուրս, դուրս...

— Ի՞նչ կայ, Պ. Կուռնե...

— Դուրս կըսեմ կոր քեզի, դուրս ելիր։

— Ի՞նչ պատճառաւ...

— Պատճառ կը հարցնես դեռ, ստորին արարած։

— Ե՞ս։

— Խարդախ։

— Ե՞ս։

— Լիրբ։

— Ե՞ս։

— Ձեզի բարև տալն մարդուս պատիւյն կը դպչի։

— Հասկցայ, հասկցայ, ի՛նչ ըսեմ որ ես ազնուական եմ և ուրիշներուն յետևէն խօսելու սորված չեմ. կարծեմ հիմա ասկից յելնող կ'ըլլան, անշուշտ զքեզ խաբելու համար, գլխ բամբասած է։ Բայց թող գիտնա այն կինն, որ թող չպիտի տանք իրեն, որ զքեզ խաբէ և թշուառացնէ։

— Անիկա մարդու զաւակ է։

— Այնպէս կըսէ ինք, մեկ մալ ուրիշներուն հարցուր։ Բանի քանի տուներ կործանեց, քանիներու դժբախտութեան պատճառ եղաւ, անանկ կնկան մը հետ խօսիլն իսկ վնասակար է. բայց ինչո՞ւս պետք...

— Գե՞շ կնիկ է։

— Ինձ գիտցած մի՛ ըլլար, Պ. Կուռնելիոս, բայց անկից աւելի գեշ կնիկ գտնել խիստ դժուար է։

— Իրա՞վ կըսես։

— Սատանայն մէկն է, բայց ինձ գիտցած մի ըլլար։

— Ինծի ալ ճշմարտախօս չերևաց այդ կինը։

— Բանիներու հիսուն տարեկան աղջիկներ կլլեցուցեր է քառասնըհինգ տարեկանի տեղ, բայց, կաղաչեմ, ինձ գիտցած մի ըլլար. ես ասանկ ստորին բաներու կարևորութիւն տալով անոնց վրայ խօսիլ չեմ ուզեր, իմ կրթութիւնս թող չտար, որ խօսիմ։

— Կրթյալ կնիկ մ'ալ ասանկ ըլլալու չէ։

— Չեմ ուզեր ըսել, բայց շատ սատանա կնիկ է։

— Անանկ է, անանկ. ես ալ այն կարծիքէն եմ։

— Տունդ փլցնելու համար յեկած է քեզի։

— Շատ աղէկ ըսիր, ճիշդ այն նպատակաւ յեկած է։ Լաւ համոզուեցայ։

— Հիմա, Պ. Կուռնելիոս, դուք կարգուիլ կուզեք, այնպէս չէ՞։

— Այո, կարգուիլ կուզեմ։

— Կը զովեմ զքեզ, մարդս կարգուելու չէ...

— Ծնողքս ալ այնպէս ըսին։

— Բայց հասկնալ կուզեմ նախ, թէ ինչու համար պիտի կարգուիս...

— Ինչո՞ւ համար... ի՛նչ գիտնամ... ամեն մարդ ինչո՞ւ համար կը կարգուի... կարգուելու համար։

— Ի՞նչ նպատակաւ կը կարգուիս։

— Կնիկ մ'ունենալու համար։

— Լաւ, հասկցայ միտքդ։ Ի՞նչ տեսակ աղջիկ կուզեք ուրեմն։

— Սև աչքերով, սև ընքուիներով, պզտիկ բերնով և քիթով և բարձր հասակով աղջիկի մը պէտք ունիմ։

— Գլխուս վրայ։

— Այո, ասանկ աղջիկ մը։

— Ձեր ուզածին պէս աղջիկ մը կայ. յեթէ կը հաճիք՝ վաղը յերթանք տեսնելու զայն։

— Յերթանք։

— Ընդհանրապէս յոթնուկեսին կամ ութին միջոցները աղջիկը կը հանեն ի տես. վաղը վեցուկեսին հոս կը գտնուիմ և մեկտեղ կերթանք։

— Շատ աղէկ։

— Խօսքիդ վրայ հաստատ ես, այնպէս չէ՞։

— Այո, շատ հաստատ եմ։

— (Ձեռքը թոթվելով) Մնաք բարով ուրեմն։

— Յերթաք բարով... ձեռքերնիդ որչա՜փ փափուկ է տիկին։

— Խնդալու խօսքեր կընես, Պ. Կուռնելիոս, ձեռքիս փափկութիւնն է մնացեր, հարսութեանս տեսնէիր դուն իմ ձեռքերս... ո՜հ, տարիները, տարիները... Վաղը վեց ու կեսին։

— Այո։

Տիկին Է... կը մեկնի։

Պ. Կոռնելիոս առանձին մնալով՝ Ճառկիլեն կը լցնէ և կոկսի քաշել։

Բառորդ մը կանցնի և ահա սենեկին դուռը կը բացվի և կը մտնե օրիորդ Ը... վրուն յերեսեն հեռուն հուլիսներ, հրատապ ամիսներ, անցած են։

— Ի՞նչ կուզեք, տիկին, կը հարցնէ Պ. Կոռնելիոս, քիչ մը խստութեամբ։

— Կը նախատե՞ք զիս, Պ. Կոռնելիոս։

— Նախատելու բան չկա հոս. ինչո՞ւ յեկաք։

— Այդ բառն չվայլեցուցի յես ձեզի. սիրտս վիրավորելու համար անկե ավելի սայրասուր բառ մը չեյիք կրնար գործածել։

— Ի՞նչ կը ծախես։

— Տիկին ըսիք ինձի, մինչդեռ գիտնալ հարկ եր, թե յես օրիորդ եմ այսինքն դեռ կարգված չեմ։

— Ա՞տ եր յեղեր ծանր բառը. մեղա, յես քեզ մեղա, մեյ մ’ալ չեմ ըսեր, օրիո՛րդ։ Ի՞նչ կուզեք օրիորդ, ի՞նչ գործ ունիք հոս, օրիորդ։

— Հասկնալ կուզեյի, թե քանի՞ տարեկան աղջիկ կուզեք։

— Յես չպիտի կարգվիմ, օրիորդ։

— Պիտի կարգվիք և այն ալ խաբեբա միջնորդներու առաջնորդութեամբ, և կարգվելեն շաբաթ մը հետո պիտի լաք ձեր անխոհեմութեան վրա և պիտի ըսեք «ինչո՞ւ օրիորդ Ը...ին խոսքը մտիկ չըրի...»

— Վորո՞նք են խաբեբա միջոցները։

— Այս առտվան կիներուն բոլորն ալ խաբեբա յեն, անոնք յերկու կողմեն ստակ առնելու համար միայն կը հոգնին, իրենց հոգը չե, յեթե հարսանիքեն շաբաթ մը վերջը այրը կինեն կը զատվի, անոնք թե այրը կերեն և թե աղջիկը, անոնք մեյ մեկ հրեշներ են... անոնք...

— Ի՞նչ կը լսեմ, տեր աստված։

— Անոնք անուշ խոսքերով կը թունավորեն մանչերն և աղջիկներն. աղջիկներն մանչերուն կը գովեն և մանչերն աղջիկներուն. սուտ կը խոսին, յերևակայական հարստութեններ կը խոստանան յերկու կողմին, դրամ կառնեն և թշվառութեւն կը վաճառեն։

— Յես ալ անանկ բան մը նշմարեցի այդ կանանց վրա։

— Ավելի լավ ե, վոր մարդ մ’ոտքը քար մը կապե և ինքզինքն ծովը նետե, քան թե անոնց վստահի։

— Այնպես ե. շատ վնասակար եակներ են անոնք, քանի մը վոսկվո համար ուրիշներուն անդորրութեւնը կը վրդովեն։

— Ու՞րեմն զգույշ կեցիր։

— Ո՞վ կարևորութեւն կուտա անոնց խոսքին։ Շիտակը խոսելով դուք շատ պարկեշտ և պատվավոր աղջիկ մ’եք։

— Չեմ գիտեր, բայց ստորնութեւն չեմ ընդունիր։ Ո՛հ, Պ. Կոռնելիոս, չեմ կրնար արտասուքս զսպել, յերբ կը խորհիմ, թե ինչ վիճակի պիտի յենթարկվեյիր, յեթե անոնց միջնորդութեամբ աղջիկ մը առնեյիր. ո՜հ. այս աղջիկն իբրև գերի, իբրև ստրուկ պիտի գործածեր զքեզ... առտու իրիկուն գլուխդ պիտի ցավցներ... պիտի բարկացներ զքեզ և մահդ պիտի փութացներ։ Ասանկ կնիկե մը զքեզ ազատելու համար ե, վոր յեկա քեզի հետ առանձին տեսութեւն մը ընելու։

— Շնորհակալ եմ. մեծապես շնորհակալ եմ։

— Պ. Կոռնելիոս, պարկեշտ և համեստ աղջիկներ շատ կան, միայն թե գտնելը դժվար ե... ա՜հ (ծունկի վրա) ներե ինձ, վոր անկեղծութեամբ խոսիմ հետդ, ահ... կը սիրր...

— Հե՞...

— Կը սիրեմ զքեզ։

— Կը սիրե՞ս մի զիս, ինչո՞ւ համար։

— Չգիտեմ, մաքնիսական ի՞նչ զորութեւն ունիս վրադ, վոր սիրտս քեզի ձգեցիր, մեկ անգամ միայն տեսնվելով հետս։

— Աս ի՞նչ կըսեւ .

— Ո՛հ, սիրելիդ իմ Կոռնելիոս, մի մերժեր այն սերն, վոր յուր վոտքով կուգա և կը ներկայանա ձեզ, սեր մը, վոր սրտե մը կը մեկնի, սեր մը, վոր յերջանկութեւն կը բուրե, սեր մը, վոր առանց միջնորդի կը հայտնե ինքզինքն։

— Ի՞նչ խոսքեր են ասոնք, չեմ հասկնար։

— Ըսե ինձ, Պ. Կոռնելիոս, թե կը սիրե՞ս զիս։

— Դո՛ւրս յելիր։

— Սրկե հունա չեմ յերթար, յեթե չսիրես զիս՝ մահվանս պատճառ պիտի ըլլաս, ձեռքովդ գերեզման պիտի իջեցնես զիս։

— Տեր վողորմյա, տեր վողորմյա...

— Մարդասպան պիտի ըլլաս...

— Տէր աստուած... ի՜նչ փորձանք...

— Յես բավականասեր աղջիկ մ'եմ, շատ հագուստ չեմ ուզեր, քիչ ծախքով հարսանիքը կը կատարենք, կընենք, կերթանք սիրուն զավակներ կունենանք...

— Գնա սկեց, կըսեմ քեզի, անպիտան։

— Վռնտե, չպիտի յերթամ. ծեծե զիս, չպիտի պոռամ. զարկ սրտիս, ձայն չպիտի հանեմ. քեզի նվիրված եմ յես...

— Յես նվեր չեմ ուզեր... կորի սըկե...

— Կորի՛ սըկե... կորի՛ սըկե... կորի սըկե... անգութ... ա՜հ... մարելիք կուգա վրաս... քիչ մը ջուր...

— Աս ինչ անտանելի փորձանքի հանդիպեցանք... դիմանալու բան չէ աս... վոտքին քաշելու դուրս նետելու յե լիրբը, աղջիկ գտնելու համար յեկեր՝ ինքզինքն կլլեցնելու կաշխատի կոր. ինչ աներես աղջիկ... մարեցավ, ինչ յեղավ։

Գավաթ մը ջուր կառնե և քիչ մը ջուր կը սրսկե յերեսը։

Որ Ը... աչքերը կը բանա։

— Շնորհակալ եմ, կըսե, ինձի համար տարած խնամքդ գրավական մ'ե առ իս ունեցած սիրույդ... ուրախ եմ, վոր սերս չը մերժեցիր։ Ո՜հ, Պ. Կուռնելիոս, կաղաչեմ, վերցուր զիս և բազմոցին վրա պառկեցուր, վրաս ալ աղեկ մը ծածկե, վորովհետև դող մը կզգամ։

— (Մեկուսի) Հիմա գործերնիս կարգի մտավ... խելքես մըտքես չեր անցներ ասանկ փորձանք մը... գետնին տակն անցնիս բարով խերով սենյակս չմտնիր:

Պ. Կուռնելիոս որ Ը...ին թեվը կը մտնե և կը տանի բազմոցին վրա կը պառկեցնե զինքն։

— Մեծապես շնորհակալ պիտի ըլլայի, կըսե որիորդն պառկած տեղը, յեթե բժիշկ մը ղրկեյիր ինձի, Պ. Կուռնելիոս։

Կուռնելիոս. – Յերթամ բժիշկ կանչեմ...

Որիորդ Ը.—Ա՜հ, սիրելիդ իմ Կուռնելիոս, (այս պահուն պանդոկապետն սենյակ կը մտնե) չես գիտեր թե սերը վորքան ախտերու աղբյուր է, քանի քանի աղջիկներ մեռած են իրենց սերը մերժված ըլլալուն պատճառավ։ Սիրելիդ իմ Կուռնելիոս, կյանքս ձեռացդ մեջ է... կը սիրեմ զքեզ...

Պանդոկապետ.—Բարև ձեզ...

Կուռնելիոս.—Հրամմեցեք Պ. պանդոկապետ, նստեցե՛ք։

Պանդոկապետ.—Վո՛չ, նստելու համար չեկա։ Գիտեք Պ. Կուռնելիոս, վոր այս պանդոկին մեջ գտնվող անձերուն ամենն ալ վաճառական են։

Կուռնելիոս.— Այո՛։

Պանդոկապետ.—Մանավանդ պատվավոր վաճառականներ։

Կուռնելիոս.—Այնպես է։

Պանդոկապետ. — Ուստի թող չեմ կրնար տալ, վոր ձեր դայթակղելի ընթացքն շարունակեք և իմ տունս փլցնեք, հիմա, անպատճառ հիմա դուրս յելնելու յեք այս պանդոկեն... յես զքեզ պարկեշտ և պատվավոր գավառացի մը կարծեցի...

Կուռնելիոս.—Ի՞նչ ըրի վոր...

Պանդոկապետ.—Ամեն հարյուր վոսկի ալ տաս, չեմ ընդունիր անանկ բան։

Կուռնելիոս.— Բայց...

Պանդոկապետ.—Յես քու կարծած պանդոկապետներեն չեմ, քառասուն տարի յե, վոր այս գործով կզբաղիմ։

Կուռնելիոս.—Չեմ հասկնար ինչ ըսել կուզես։

Պանդոկապետ.—Բավական պինդ յերես ունենալու յես, վոր չհասկնաս. ո՞վ է հոն պառկողը...

Կուռնելիոս.—Կին մ'ե, վոր ինձի աղջիկ գտնելու համար յեկավ և հիվանդանալով պառկեցավ։

Պանդոկապետ.—Պարապ տեղը մի՛ ջանար զիս համոզելու. յես գիտեմ գործին ինչ ըլլալը. դու կը կարծես թերևս, թե պանդոկապետն չգիտեր զքեզ և անտարբեր կը նստի յերբ կին մը յերկու յերեք ժամ սենյակիդ մեջ կը գտնվի։ Շուտ ըրե՛, սնտուկդ և անկողինդ առ և գնա ասկից, ապա թե վոչ վոստիկանության ձեռքով դուրս կը նետեմ զքեզ։

Կուռնելիոս.—Այս խոսքերեդ բան մը չեմ հասկնար։

Պանդոկապետ.—Պ. Կուռնելիոս, այս պանդոկը սիրո պանդոկ չէ, գնա, ուրիշ տեղ սիրե։

Կուռնելիոս.—Ո՞վ կը սիրե...

Պանդոկապետ.—Յերկար կընեք, ձեզի հետ շատախոսություն ընելու ժամանակ չունիմ։

Կուռնելիոս.—Այդ կինն դուրս ըրե, վոր ինքզինքն կուզե ինձ սիրցունել։

Պանդոկապետ.— Ի՞նչ կ'ըսե այս տիկին...

Որիորդ Ը.— (Որ մինչև այն ատեն գլուխն վերմակին տակ քաշած քնանալ կը ձևացներ) Յես տիկին չեմ, գավառացի ալ չեմ. ուստի դիմացինդ լավ ճանչցիր և այսպես խոսե։

Պանդոկապետ.— Շատ լավ, ի՞նչ գործ ունիս հոս։

Ոորիորդ Ը.— Այդ քու գիտնալու բանդ չե։

Պանդոկապետ.— Իմ գիտնալու բանս ե։

Կուռնելիոս.— Այո, իր գիտնալու բանն ե։

Որիորդ Ը.— Չե՞ս սիրեր զիս, Պ. Կուռնելիոս։

Կուռնելիոս.— Չեմ սիրեր։

Որիորդ Ը.— Շատ լավ, յես կերթամ, կառք մը բերեք տվեք, վոր յերթամ, վորովհետև կարողություն չունիմ։

Կուռնելիոս.— Ինչո՞ւս պետք։

Որիորդ Ը.— Ինչո՞ւդ պետք, կերևի վոր հիմանքդ Պոլսո սովորություններուն տեղյակ չես. վոչ միայն կառքի վարձքն պիտի վճարես, այլ նաև պարտավոր ես բժշկի և դեղի ծախքերն ալ հոգալ՝ մինչև վոր վոտք յելնեմ. այս սենյակին մեջ հիվնդցա յես, յեթե հոս չգայի՝ չպիտի հիվանդանայի, ապա ուրեմն դու յես պատասխանատուն։

Տիկին Ա.— (Մտնելով) Բարև ձեզ... աղվո...

Պանդոկապետ.— Պ. Կուռնելիոս բնավ պարտականություն չունի քեզի սատակ տալու։

Որիորդ Ը.— Յես տասն վոսկի չառած սենյակեն դուրս չեմ յելներ. ասկե ծագելիք հետևանքներն ալ կրնաք գուշակել, Պ. Կուռնելիոս...

Տիկին Ա.— Աղվորիկ աղջիկ մը կա քեզի համար Պ. Կուռնելիոս,

Պանդոկապետ.— (Ցածր ձայնով առ Կուռնելիոս) Ասոր քանի մը վոսկի տանք ու ճամբենք, վորովհետև կրնա ձեր գլուխը փորձանքներ բերել։

Տիկին Բ.— (Մտնելով) Բարև, Պ. Կուռնելիոս, հարուստ աղջիկ մը...

Կուռնելիոս.— Վո՞ր մեկուն պատասխանելու յե։

Պանդոկապետն հինգ վոսկի կառնե Պ. Կուռնելիոսեն և Ոորիորդ Ը...ին տալով սենյակեն դուրս կը հանե զայն, վոր բարձրաձայն կը պոռա.

«Կուռնելիոս, Կուռնելիոս, ինձի ըրած չարության կրկինը գտնաս աստուծմե, աշխարհի վրա չխնդաս, ինչ վոր բռնես՝ հող դառնա, առնելիք կնիկդ տունովդ տեղովդ փճացնե զքեզ, վողորմության կարոտ մնաս...»

Պանդոկապետն մեծ նեղությամբ կը հաջողի պանդոկեն հանել այս միջնորդ որիորդը։

Տիկին Ա.— Հոգ մի ըներ, Պ. Կուռնելիոս, ամենուն ծանոթ անառակ մ'ե այս... ճիշտ քեզի համար աղվորիկ կլորիկ աղջիկ մը գտա...

Տիկին Բ.— Սիրտդ դող մի հաներ, Պ. Կուռնելիոս, այդ աղջիկն ամենուն հետ այդ յեղանակով կը վարվի... հարուստ որիորդ մը միտքս յեկավ քեզի համար։

Տիկին Ա.— Խոսքս մի կտրեր, տիկին Բ... առաջ յես խոսիմ, յետքն ալ դուն խոսե. անանկ չե՞, Պ. Կուռնելիոս, ըսածս կանոնավոր չե՞։

Կուռնելիոս.— Շատ կանոնավոր խոսք ե։

Տիկին Բ.— Յես ալ կըսեմ, վոր գործ ունիմ, պիտի յերթամ, անոր համար առաջ յես խոսիմ. այս խոսքիս մեջ անկանոնություն մը կա՞։

Կուռնելիոս.— Աս ալ կանոնավոր ե։

Տիկին Ա.— Յես կը փափաքիմ, վոր իմ ցույց տալիք աղջիկս տեսնե առաջ, և կարծեմ թե այս փափաքս որինավոր ե։

Կուռնելիոս.— Խիստ որինավոր ե։

Տիկին Բ.— Կուզեմ, վոր առաջ իմին ներկայացնելիք որիորդս տեսնեք։

Կուռնելիոս.— Ձեր փափաքին մեջ ալ որինավորության հակառակ բան մը չեմ տեսներ։

Տիկին Բ.— Ուրեմն յես կերթամ։ Պատրաստվեցեք վաղը աղջիկ տես յերթալու ժամը ութին ատենները։

Կուռնելիոս.— Շատ լավ։

Տիկին Բ.— Մնաք բարով։

Կուռնելիոս.— Յերթաք բարով։

Տիկին Ա.— Կը զարմանամ, վոր անանկ միջնորդներու կարևորություն և խոսք կուտաք։ Վաղը հոս կուգամ, անգամ մը կը տեսնեք իմ առաջարկած աղջիկս։

Կոռնելիոս.— Յես ալ ան պիտի ըսեյի, վաղը յեկուր և անգամ մը տեսնեմ ձեր առաջարկած աղջիկը։

Տիկին Ա. կը մեկնի։

Հետզհետե կուգան և հետևյալ օրն ժամն ութին տեսներն աղջիկ-տես յերթալու խոսք առնելով Պ. Կոռնելիոսեն կերթան մյուս միջնորդներն, վոր պանդոկին մեջ մեյ մեկ ծակ պահված եյին։

Պ. Կոռնելիոս յուր հյուրերն ճամբելե հետո բազմոցին վրա անկյունը կը նստի և կը խորհի, թե ինչ պատրաստություններ տեսնել հարկ ե հետևյալ ավուր աղջիկ-տեսի համար։ Կես ժամու չափ մտածելե հետո, հանկարծ հայելիի առջև կ'երթա, կը կանգնի, կը քննե յուր հագուստն և անոր ձևն, և կորոշե վոր յեվրոպական ձևով ձեռք մը լաթ գնե. արդեն բարեկամներեն վոմանք այս խորհուրդն տված եյին իրեն։ Ուշի ուշով կը քննե մազերն ու պեխերն և զանոնք կարելու և յեվրոպական ձևի բերելու հարկը կզգա։ Պանդոկապետը կը կանչե և կաղաչե անոր, վոր ընկերանա իրեն, ձեռք մը լաթ գնելու համար։ Պանդոկապետը կը հավանի, մանավանդ կը հորդորե զինքն, վոր ադամանդյա մատանի մ'և վոսկի ժամացույցով շղթա մ'ալ գնե, հայտնելով, թե փեսացուներուն մատներուն և բաճկոնին մեծ կարևորություն կը տրվի։ Փեսացուն հավանություն կուտա, և պանդոկապետին հետ կերթա կը գնե հանդերձեղենն և զոհարեղենն, վորո համար կը վճարե իբր յոթանասուն և ութն վոսկի։

Քանի մը օրվան մեջ ֆրանսերեն ուսանիլ ալ պետք ե. Ոլենտորֆը[161]) վեց ամիսեն կը սորվեցնե. դասատու մը բոլորովին նոր և դյուրուսույց յեղանակավ յերկու ամսվան մեջ կուսուցանե։ Ասոնց և վոչ մեկեն Պ. Կոռնելիոս կրնա օգտվիլ։ Նա կուզե, վոր գոնե շաբթվան մը մեջ անսխալ գրե և խոսի։ Այս փափաքն հագեցնելու հուսով գրավաճառի մը խանութը կերթա։

— Քիչ ժամանակի մեջ ֆրանսերեն գրել և խոսիլ սորվեցնող գիրք մ'ունի՞ք։

— Այո՛, ունինք գիրք մը, վոր վաթսուն դասի բաժնված ե, և յեթե ամեն օր դաս մը պատրաստեք, յերկու ամսվան մեջ անսխալ կը գրեք, կը խոսիք, և մեծ հեղինակներն դյուրությամբ կը հասկնաք։

— Յեթե օրը տասը դաս առնեմ, վեց օրվան մեջ չե՞մ կըրնար սորվիլ։

— Ինչու չկարենաք սորվիլ, աշխատության վրա յե գործը, յեթե քիչ մ'ավելի աշխատիք և օրը քսան դաս պատրաստեք՝ յերեք օրվան մեջ ալ կրնաք սորվիլ, լեզուներու ուսումն շատ դյուրացած ե հիմա։

— Օրը յերեսուն դաս առնելով յերկու օրվան մեջ կրնա՞մ այս գործին տակեն յելնել։

— Այո՛, ինչու չե, մանավանդ թե օրերն յերկար են հիմա։

— Այդ գիրքեն հատ մը տուր ինծի։

— Գլխուս վրա։

— Գինն ի՞նչ ե։

— Կես արծաթ, տասն դահեկան։

— Շատ աղեկ։

Պ. Կոռնելիոս դյուրուսույց քերականությունն կառնե և սենյակը կերթա։

Նույն գիշերը քանի մը ժամ կը կարդա, և քնույն մեջ մինչև առավոտ ինքնիրեն կը հարցնե և կը պատասխանե։

«— Դրացվույս բամպակե ատրճանակն ունի՞ս։

— Այո՛, պարոն, ունիմ զայն։

— Հորս թղթյա վառարա՞ն ունի՞ս։

— Վո՛չ, պարոն, չունիմ զայն։

— Ո՞վ ունի իմ դերձանե նավս։

— Յեղբայրս ունի։

— Պանիրե ձիս ո՞ւր ե։

— Մածունե կառք մ'ունի՞ս։

— Այո՛, պարոն, ունիմ։»

Հետևյալ առտուն արթննալուն պես Նարեկացիեն գլուխ մը կը կարդա և անմիջապես կը ձեռնարկե նոր գնած զգեստներն հագնելու գործին։ Պանդոկապետին աջակցությամբ կը հաջողի զգեստավորվիլ, միայն փողպատն կապելու համար յերկտասարդ մը կը կանչվի, վոր ազգասիրաբար հանձն կառնե այս զոհողությունն։

Պ. Կոռնելիոս հագված, շքված կը պտտեր սենյակին մեջ, յերբ դուռը բացվելով յոթանասնոց զավառացի մը մտավ։

— Բարի չեմ ըլլար, բարի չեմ ըլլար, Գ. Կուռնելիոս, ըսավ քմծիծաղով։

— Բարի սաաքեցար, Համբարձում աղբար, պատասխանեց Գ. Կուռնելիոս։

— Աս ի՞նչ կերպարանք է, բարեկամ։

— Ասանկ պետք չեղավ։

— Թող տուր, աստված սիրես։

— Ինչու։

— Ի՞նչու... աս ի՞նչ անճոռնի հագուստ է։

— Եվրոպական է։

— Եվրոպական է... շիտակը չեմ ձեզի չվայլեցուցի...

— Ձե՞մ վայելեր կոր այս հագուստին։

— Հագուստը չվայլեր կոր ձեզի. սա բանթալոններու մեջ մեկը չէ՞ լներ, չերեսը ալյուրով ծեփած, ճիշտ ան կը նմանիք։

— Ամեն մարդ կը հագնի հապա,

— Ամեն մարդու ի՞նչ կը նայիս, դուն ինքզինքդ նայե, հանե՛, աստված սիրես, հանե՛ սա անճոռնի լաթերը։

— Խոստովանանք մեա, աղջիկ-տես պիտի չերթանք այսօր։

— Գնա, մյուս հագուստդ ի՞նչ ունի, աստվ չենք, շնորհք, կտրիճ, գեղեցիկ և մանավանդ պարկեշտ մարդ կ'երևաս, այս հագուստով անճանաչ բան մ'ես սեպի թե։

— Հանե՞մ, կըսես։

— Հարցնելդ ավելորդ է։

— Իրավ անանկ է, հանեմ սա անպիտան հագուստը։

Բանթալոնս հանելով շալվարը կը հագնի։

— Ի՞նչպես է։

— Սա բալթոն ալ նետէ և ճյուպպես հագի՛ր։

Այս միջոցին նոր հյուր մ'ալ կուգա։

— Հրամմեցեք, կըսե Գ. Կուռնելիոս, նստեցե՛ք նայինք։

— Հրամմեցինք, աս ի՞նչ է, կեսը արևելյան և կեսը չեվրոպական ճաշակով հագված եք։

— Ձեր կարծիքն ի՞նչ է։

— Իմ կարծիքս չեվրոպականին նպաստավոր է։

— Ես հակառակ եմ, կը պատասխանե Համբարձում աղբարը։

— Պիտի ածիլվի՞ք՝ Գ. Կուռնելիոս, կը հարցնե սափրիչն, որ ածելիներ և կոնք ի ձեռին դրան սեմին վրա կ'երևա։

— Այո՛, կը պատասխանե Գ. Կուռնելիոս և կը նստի աթոռի մը վրա։

Սափրիչն մեծ խնամքով կածիլե Գ. Կուռնելիոսն և անոր պեխերն ու մազերն նոր ճաշակի համաձայն կը ձևե ու կը կըտրե։

Գ. Կուռնելիոս այս գործն ալ կատարելեն անմիջապես հետո՝ կսկսի ընդունիլ միջնորդներն, որ ծովու ալյաց պես գիրար մղելով կուգան։

Տիկին Թ.—Գ. Կուռնելիոս, չերեկվան պես իրար չանցնինք, ինձի խոսք տվի՛ք, որ այսօր չերթանք աղջիկ-տեսի։ Հրամմեցե՛ք չերթանք։

Մյուս միջնորդները ամենը մեկեն.

— Ինձի ալ խոսք տվավ։

Կուռնելիոս.—Զկրնա՞ր ըլլալ, որ աղջիկներն հոս բերե՞ք։

Տիկին Գ.—Կատա՞կ կընեք, Գ. Կուռնելիոս։

Տիկին Է.—Այո, Գ. Կուռնելիոս զարմանալի մարդ մ'է, ամենուն խոսք կուտա։

Տիկին Դ.—Ի՞նչ ընե խեղճ մարդը, ամենքդ մեկեն վրան հարձակեցաք։

Տիկին Ը.—Ինչու պիտի հարձակեյինք, տեր վողորմյա։

Տիկին Թ.—Հրամմեցե՛ք Գ. Կուռնելիոս։

Մյուս միջնորդները.

—Թող չենք տար, Գ. Կուռնելիոս։ Մեզի հետ խաղա՞լ կուզես։ Տիկին Թ...կը քաշե Գ. Կուռնելիոսին մեկ կողմեն, որուն թևեն, վոտքերեն, շալվարեն կը քաշեն մյուս կիները։

Կուռնելիոս.—Աս ի՞նչ խայտառակություն է. աս ինչ անտանելի բան է չեղեր հոս աղջիկ տեսնելու չերթալը։

Միջնորդներու խումբը.—Մենք քու խաղալիկդ չենք

Կուռնելիոս.—Ամենուդ հետ ի՞նչպես կրնամ գալ միենույն ժամանակ, ինը կտոր ըլլամ։

Միջնորդներու խումբը.—Կտոր կտոր ըլլաս. ինչու համար մեզի և աղջիկներուն տերերուն ծախք ընել տվիր պարապ տեղը։

Համբարձում աղբար։—Ի՞նչ ծախք...

Տիկին Թ.—Աղջիկ-տես յնելն առանց ծախքի կըլլա՞։ Հարկավ պատրաստութիւններ կըլլան այն տուները, և պատրաստութիւնները ձրի չեն։

Կուռնելիոս.—Ի՞նչ պէտք ընենք։

Տիկին Թ.—Ի՞նչ պէտք ընես, մեր ծախքերը պէտք տաս։ Իմ և ցույց տալիք աղջկանս ծախքը չորս վոսկի յէ, կուտաս չորս վոսկին, բարի յեկար, հազար բարի։

— Հինգ վոսկի ալ յես կուզեմ։

— Վեց ալ յես։

— Նույնքան ալ իմ ծախքս է։

— Չորս ու կես ալ իմս է։

— Իմս ալ հինգեն քիչ մը պակաս է։

— Յես ալ յերեք ու կես կուզեմ։

— Չորս վոսկի ծախք ըրի յես։

— Չորս մեկ քառորդ վոսկի ալ յես ծախք ունիմ։

Կուռնելիոս.—Ի՞նչ կըսեն ասոնք, Համբարձում աղբար։

Ամենքը.

— Մենք մեր կողմեն տիկին Թ...ն փոխանորդ կը կարգենք, անոր հետը խոսե։

Տիկին Թ.—Այո, Պ. Կուռնելիոս, ասոնց ծախքը տալու յէ, ուրիշ ճար չկա, բզիկ բզիկ կընեն զքեզ։

Կուռնելիոս.—Յես ի՞նչ հանցանք ունիմ վոր...

Տիկին Թ.—Հանցանքդ սա յէ, վոր ամենուն ալ զատ զատ խոսք տվեր ես, անոնք ալ գացեր պատրաստութիւններ տեսեր են. պատրաստութիւնն ալ առանց ծախքի չըլլար։

Տիկին Ա.—Ասկե վերջ յերթալ ուզես իսկ քեզի աղջիկ չեմ ցուցներ, անանկ բալթոյով շալվար հագնող մարդուն համար աղջիկ չունիմ յես։

Տիկին Բ.—Յես ալ չունիմ։

Տիկին Գ.—Կարծեք թե յես ունի՞մ։

Տիկին Թ.—Պ. Կուռնելիոս, գոհ ընելու յես այս տիկիններն, յեթե վոչ չես կրնար հոս աղջիկ գտնել, ասոնք կերթան կավրեն քու անունդ։

Տիկին Ա.—Փողոցներու մէջ ծանուցում պէտք փակցունենք, թե Պ. Կուռնելիոս խենդին մեկն է։

Կուռնելիոս.—Յեթե ձեր ծախքը վճարեմ...

Տիկին Ա.—Այն ատեն ինչո՞ւ խենդ ըլլաս, մենք մարդ բամբասող չենք, մենք մարդու անուն ավրողներեն չենք, մենք մարդու զավակներ ենք, մենք անարատ կաթ ծծած ենք։

Համբարձում Աղբար.—Ձեր ծծած կաթին մէջ շատ ջուր խառնված է կարծեմ։

Տիկին Թ.—Պ. Կուռնելիոս, ժամանակ չանցունենք պարապ տեղ, վորոշումդ տուր։

Պ. Կուռնելիոս կը կանչե պանդոկապետն, վոր նախ կը փորձէ անուշութեամբ ճամբել միջնորդներն և չհաջողելով բռնութիւնն ձեռք կառնէ. վերջնույն մէջ ալ անհաջող կելնէ և կը համոզէ Պ. Կուռնելիոսն, վոր դրամով գոհացնէ կիներն։

Պ. Կուռնելիոս նորեն քսակին բերանը կը բանա։

Միջնորդները գոհ կըլլան և կը մեկնին շնորհակալութիւն հայտնելով։

«— Պ. Կուռնելիոսն ազնիվ մարդ է...

— Զգացման տեր է...

— Ազնիվ սիրտ ունի...

— Վեհանձն է...

— Մեծանձն է...

— Իրեն կին ըլլալիք աղջիկը շատ աղեկ ոբեր պէտք տեսնէ»։

Պանդոկապետ.—Կը ցավիմ, Պ. Կուռնելիոս, վոր ձեր դյուրահավանութեան պատճառավ պարապ տեղ կը վատնեք ձեր ստակներն։ Կանխավ իմացուցի ձեզի, թե ականջ կախելու չէ այս կանանց, վոր դյուրահավան չեզողներեն իսկ ստակ կորզելու գիտութիւնն շատ շավ ուսած են։

Կուռնելիոս.—Իրավունք ունիս. յես պէտք ընեյի. այսչափ ստակ տվինք և դեռ աղջիկ մը չտեսանք։

Պանդոկապետ.—Անպատճառ կարգվիլ կուզե՞ս։

Կուռնելիոս.—Այո։

Համբարձում.—Անպատճառ ի՞նչ ըսել է, թերևս չկարգվիր։

Կուռնելիոս.—Իրավունք ունի Համբարձում աղբարն, թերևս չեմ կարգվիր։

Պանդոկապետ.—Նախ և առաջ վորոշէ և հետո գործի սկսինք. բայց առանց ինձի խորհուրդ հարցնելու մի գործեր։ Մնաք բարով։

Կոռնելիոս.—Շատ աղեկ. շորհակալ եմ։ Յերթաք բարով։

Համբարձում.—Յես այս պանդոկապետին ընթացքին չը հավնեցա։

Կոռնելիոս.—Աղեկ ըսիր, արդեն յես ալ չիմ հավնիր այս մարդուն ընթացքին, ինչ վոր է, այսուհետև խոհեմությամբ վարվելու յեմ։

Կը խոստանանք հառաջիկային հրատարակել վեպը, կամ թատերական ձևով Պ. Կոռնելիոսին ամուսնությունն։

ՅԵՐԵՔ ՓԵՍԱՑՈՒՆԵՐ[162]

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ
ՄԵԿ ԱՐԱՐՔՈՎ ՅԵՎ ՉՈՐՍ ՊԱՏԿԵՐՈՎ

ԱՆՁԻՆՔ

ԴԻՎԱՆ
ՄԱՏԹ
ՊԻՐԻԳՂԵՆ
ԱՔԻԼԼԵՍ ՈՎՏՈՏՄԵՏՈՍ
ՀԱՍԱՐԱԿԱՑ ԿԱՐԾԻՔ
ՁԱՅՆ ԲԱԶՄԱՑ
ԺՈՂՈՎՈՒՐԴ
ՍԵՂԵՆԵ
ԿՌՈՆՈՍ
ՇԵՐԱՍ
ԲՈՐԵԱՍ
ԻՐԱՎՈՒՆՔ
ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ՇԱՀԸ
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Իննունյորն աստվածներ, անխոս բարապաններ, սպասավորներ յեվ այլն, յեվ այլն, յեվ այլն:

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

(Թատրոնը[163]) կը ներկայացնէ մեծ և փառաւոր սրահ մը. կահաւորեալ աթոռներով, սեղաններով և թիկնաթոռներով։ Վարագոյրը բացուած ժամանակ աստուածներէն ոմանք[164]) թև թևի տուած կը շրջին. ոմանք իրարու ականջին ի վար կը փըսփսան՝ անկիւն մը քաշուած։ Ժողովրդյան շահը, *սրահին մէկ կողմն առանձնացած, թիկնոցին ծայրերը կը գոցէ կարկտելով։* Հասարակաց կարծիքը *մորուքը կը սանտրէ։* Աքիլլես *յուր փայտին հարուածն կրելու արժանաւոր մարմին մը կը փնտռէ։ Խեղճ* Իրավունքն *ծախախոտ գնելու դրամ չունենալուն պատճառաւ՝ աստուածներուն քով կը պտտի* սիկարի մը *ծխախոտ ուզելու համար։* Ձայն բազմացը *աթոռին վրայ անանկ դիրք մը բռնած է, որ անօթութենէ մարած մարդու կարծիքն կը ներշնչէ։* Ժողովուրդը *սաստիկ կը հեւա նման այն աստուածին, որ յուր պարտատէրերուն ձեռքէն պրծնելով ինքզինքն ապահով տեղ մը կը նետէ)։*

Կատակերգության բոլոր անձերն թատերաբեմին վրա յեն:

Դիվան

Ատեանը բացուած է։ Մեր որակարգն է այսօր ընտրելութեան յերեք փեսացուներուն, որոնց մէջ առաւելագոյն քուէ ստացողն պիտի առնէ մեր դուստրը, զոր այնքան կը սիրենք։ Խնդիրը փափուկ է և կենսական։ Իւրաքանչիւր աստուած, ի բաց նետելով ամեն անձնական նկատումներ, աշխատելու է այնպիսի անձի մ'ընտրել, որ կորովի, հաստատամիտ և քաջառողջ ըլնի, որպեսզի կարենայ գոհացնել մեր դստեր[165]) բազմադիմի պահանջումները։

Ամբողջ դերասանք

Այո, այո։

Դիվան

Շնորհակալ եմ։ Ա՛րդ, խոսիլ ուզողներն իրենց անունն նշանակել տան, որ յուրաքանչյուրն խոսի կարգավ։ (Մեկ քանի նստարաններե խոսք կուգա) Խոսքը Սեղենեյինն ե։

Սեղենե [166])

(Ոտք յելնելով) Կը... փու... թամ... իմ... խո... րին... շ... նոր... հա... կա... լու... թյուն... ներս... մա... տու... ցա... նել...

Ասված մը

Քիչ մը ավելի շուտ կարելի չէ մատուցանել այդ շնորհակալությունները, այնքան ծանր չխոսելով։

Սեղենե

(Միեւնույն ծանրությամբ խոսելով) Քիչ մը արագ կը խոսիմ։ Կը փութամ իմ խորին շնորհակալությունները մատուցանել հանձնաժողովո պատվարժան անդամոց, որ հաճեցան զիս տեղեկաբեր կարգել և ինձ հանձնել յուր գործառնությանց արդյունքն ձեզ հաղորդելու փափուկ և բարձր պաշտոնը։ Տյարք և տիկնայք, հանձնաժողովս յուր ընտրությենեն անմիջապես յետքը գումարվեցավ, նստեցավ, խոսեցավ, վիճաբանեցավ, խորհեցավ և վորոշեց, որ վաթսուննվեցին[167]) ընտրության յեղանակն՝ զոր ասվածներուն պատկառելի ժողովս նվիրագործեց, արդարության և ազգային շահուց և ազգային իրավանց համաձայն գտնելով, վորոշեց որ, կըսեմ, այդ վաթսուն և վեցին ընտրության յեղանակն արդարության և ազգային շահուց և ազգային իրավանց համաձայն չըլլա։ Հանձնաժողովս այս վորոշումն տվավ ապավինելով միայն այն վստահության, վորով պատվեցիք զինքն։ Հանձնաժողովս, վոր այդ յեղանակն արդարության և ազգային շահուց համաձայն գտած եր և զորավոր ապացույցներով պաշ-

տպանած եր զայն դեռ յերկու որ առաջ, այսոր կուգա աններքելի, հզոր և ջախջախիչ փաստերով ապացուցանել, թե այդ յեղանակն հոտից ցգլուխ հակառակ ե ազգային շահուց ինչպես նաև իմ շահուս։

Ասված մը

Կաղաչեմ, քիչ մը շուտ խոսեցեք։

Սեղենե

Կը խնդրեմ, մի՛ ընդմիջեք զիս։

Կոռնոս

Յեթե այդպես ծանր խոսիք՝ մենք ժամանակ չպիտի գըտնենք խոսելու։

Քանի մը ասվածներ

Մի՛ բռնաբարեք ատենաբանին խոսելու իրավունքը, թույլ տվեք, վոր ազատորեն խոսի։

Սեղենե

(Քմծիծաղով) կաղաչեմ... կը խնդրեմ... կը հայցեմ... կը պաղատիմ... կաղերսեմ... մի՛ ընդհատեք խոսքս... մի ընդմիջեք զիս... մի կտրեք խոսքս... այլ թողեք, վոր ավարտեմ, լմնցնեմ, վերջացնեմ խոսքս, ատենաբանությունս, ճառս, ատենախոսությունս։ Համբերող յեղեք, յերկայնամիտ լերուք։

Ասված մը

Աս պարզապես մեր քթեն բռնել ե։

Դիվան

Շարունակեցեք, Սեղենե։

Սեղենե

(Կես ժամու չափ լուռ մնալեն յետը) Նախ՝ թե ինչու հանձնաժողովս ազգային շահուց հակառակ գտավ այն ընտրության յեղանակն՝ համոզելու. համար պատկառելի ժողովդ, կը փութամ հայտնել, նախ՝ թե հանձնաժողովս ժողովրդ. շահուց համաձայն չգտավ այդ ընտրության յեղանակն, և յերկրորդ՝ այն գլխավոր և բանավոր պատճառավ, թե քանի վոր այդ յեղանակն համաձայն չեր ժողովրդ. շահուց՝ բնականաբար չեր կրնար հակառակ չլինել ժողովրդ. շահուց։ Ահա այս տեսությամբ ե, վոր հանձնաժողովս արժան դատեց լքանել, թողուլ այդ անիծյալ յեղանակն և անոր տեղ գրկել յեղանակ մ'որ բնավ չհակառակիր ժողովրդյան շահուց։

Շերաս

Շատ իմաստությամբ և պերճախոսությամբ կիրավաբանե դատն և այնքան հստակ ու պարզ կերպով կը պատկերե վաթսուն և վեցին վնասակար և սև կետերն, վոր դող և սարսուռ կազդեն ինձ։ (Կսկսի դողալ յեվ ընդմին *կսկսին* դողդողալ իրեն կուսակից աստվածները)։

Սեղենե

Յեվ արդարև ստիպել մեր բորեասաբնակ յեղբայրներն[168]) վոր իրենց քվեն տան այն փեսացուին. վոր մեզմե քվեյից մեծամասնությունն ստացած ե՝ անոնց իրավունքն կորզել ե, հափշտակել ե, կողոպտել ե։ Արդարությունը կը պահանջե, վոր այն անձն կոչվի հաթռ փեսայության, վոր առավել քվե կը վաստկի թե մեզմե և թե մեր տարաբնակ յեղբայրներե, և աս ալ ուրիշ կերպով չըլլար, յեթե վոչ մեր տարաբնակ յեղբարց քվեյից մերիններուն վրա բարդվելովը։

Ժողովրդյան շահը

Իրավունք ունի, ժողովրդյան շահն այսպես կը պահանջե։

Հասարակաց կարծիքը

Կը կրկնեմ, Հասարակաց կարծիքին ուզածն ալ այս ե։

Իրավունք

Կը ձայնակցիմ, իրավունքն այսպես կը հրամայե։

Ձայն բազմաց

Համամիտ եմ, ձայն բազմաց՝ ձայն աստուծո։

Ժողովուրդ

Համակարծիք եմ, ժողովրդյան փափաքն ե այս։

Սեղենե

Յեթե այս նոր յեղանակն ընդունինք՝ իրավունք կունենանք հուսալու, թե Բորեասն[169]) ալ չպնդեր մեր բազմաթիվ ձայներն իբր յերկու ձայն նկատելու վորոշման[170]) վրա։ Յես վոչինչ կը խոսիմ հանձնե, այլ ինչ վոր կը խոսիմ արդարության կողմե կը խոսիմ, ի դիմաց արդարության կը խոսիմ և...

Արդարություն

Կը բողո...

Ժողովրդյան շահը

Լռե, լռե։

Արդարություն

Կը բողո...

Հասարակաց կարծիք

(Գոռալով) Պապանձե, անպիտան։

Արդարություն

Կը բո...

Իռավունէ

(Սպառնալով) *Նորավէ սրկից, ճնճոց, դեռ գոտին չը կրնաք կապել և յելեր ասանկ փափուկ խնդրոց մեջ կը մանեք։*

Զայն բազմաց

Ուտելու հաց չունի և կը բողոքեմ յեղեր։ Հիմա գլխուդ կը ջեցնեմ... լեզուդ քեզի քաշէ և տեղդ նստէ... կը բողոքե յեղեր, դուն ուր, բողոքելն ուր...

Դիվան

Արդարություն, խոսք չունիս։

Սեղենե

Մեր առաջարկած յեղանակն աշխարհիս ամեն օրինաց համաձայն է։ Պատկառելի ժողովույս մեջ ընտրելի յերեք փեսացուներեն յերրորդն իսկ կրնա փեսայության հույս տածել, ըստ վորում հավանական է, վոր մեր տարաբնակ յեղբայրները համակէր ըլլան իրեն և իրենց քվեներն անոր տան։

Կռոնոս

Ահա այժմ պարզվեցավ խնդիրն։ Ձեր ընտրելին փեսայացնելու համար կը հանդգնիք նվիրագործված օրենք մը ջնջել։ Ահ, կը դողամ։ (Կսկսի դողալ յեվ կուսակիցներն իրեն օրինակին կը հետեվին)։

Սեղենե

(Ծիծաղելով) *Նոր յեղանակն հնույն վրա սա առավելությունն ալ ունի, վոր նոր է, մինչդեռ հինը հին է։ Յեղբայրներ, թողունք նախապաշարումն, մերկանանք հինն ու զգենունք ինչ վոր նոր է... կը տեսնեք ուրեմն, թե վորքան վնասակար է հին յեղանակն... կը փութամ ձեր խորին ուշադրության հանձնել սա կետն ալ՝ թե հին յեղանակն չհամապատասխաներ ազգային շահուց...*

Պիրիգդեն

Կը խնդրեմ Սեղենեեն, նախ՝ վոր քիչ մը ավելի շուտ խոսի

և ժամավաճառ չընե զմեզ, յերկրորդ՝ վոր կրկնություններ չընե և թմրություն չպատճառե մեզ։

Սեղենե

(Ժպտելով) *Կաղաչեմ, մի՛ ընդմիջեք, խնդիրն բացատրության կը կարոտի։*

Կռոնոս

Շուտ խոսէ, և կրկնություններդ մեկդի նետէ. կը հասկընամ ձեր միտքն, վոր է ժամանակ անցունել և զմեզ խոսել չտված քվեարկության սկսիլ, բայց մինչև յերեկո մտիկ չենք ըներ զքեզ։

Աքիլլես Ովստոմեսոս

(Թատերաբեմին մեջտեղ կերեվա սպառնալից դեմքով) *Ո՞վ է այն աստվածն, վոր կը հանդգնի Սեղենեյին ըսել «Շուտ խոսե և կրկնություններդ մեկդի նետէ... մինչև յերեկո մտիկ չենք ըներ զքեզ»։*

Կռոնոս

(Մտնելու ծակ փնտռելով) *Յես չեմ, յես չեմ...*

Աքիլլես

Ո՞վ է ուրեմն։

Կռոնոս

Դուք սխալ հասկցած եք. յես չըսի վոր շուտ խոսի, այլ ընդհակառակն՝ աղաչեցի վոր քիչ մը ծանր խոսի, վորպեսզի խոսքերն աղեկ լսենք. նույնպես խոնարհաբար խնդրեցի, վոր մեկ խոսքն տասներկու անգամ կրկնե, վոր չմոռնանք։

Աքիլլես

Լավ, գնա, նստէ տեղդ։

Կռոնոս

Կը հնազանդիմ. (Մեկուսի) *ժամանակ չունիմ ծեծվելու։*

Սեղենե

Մեծապես կը հրճվիմ, տեսնելով այն բարի տրամադրությունն, զոր պատկառելի ժողովդ ունի հանձնաժողովույն տեղեկարերն լսելու։ Կետ մ՚ալ կա, զոր պիտի մոռնայի ձեր ուշադրության ներկայացնելու. կետ մ՚որ բացարձակապես կը ցուցնե թե վաթսուն և վեցին յեղանակն չհամաձայնիր մեր ժողովրդյան շահուց։

Ժողովրդյան ձանը

Բնավ չհամաձայնիր։

Հասարակաց կարծիքը

Բնավ չեր համաձայներ։

Իրավունք

Բնավ չհամաձայնեցավ։

Ժողովուրդ

Ցեվ բնավ չպիտի համաձայնի։

Պիրիգղեն

Կը ցավիմ, վոր աստվածներու ժողովեն ցարդ հարգված, պաշտպանված և նվիրագործված որենք մ՚այնքան վնասակար կը թվի աստվածոց վոմանց, բոլոր ուժովս կը մերժեմ Սեղենեյի առաջարկությունն և կառաջարկեմ մեկ փեսայի քվե տալ։

Շերաս

Վոչ, կը ցավիմ, վոր աստվածներու ժողովեն ցարդ հարգված, պաշտպանված և նվիրագործված որենք մը վնասաբեր չթվիր աստվածոց վոմանց։

Մասբ

Ցեթե մեր Բորեասաբնակ յեղբարց իրավունքն բռնաբարող կետ մը գտնվեր վաթսուն և վեցին յեղանակին մեջ՝ նախ և առաջ անոնք բողոք պիտի բառնային այդ յեղանակին դեմ, զոր

սերով ընդունած են։ Իսկ յեթե բռնաբարում մը նշմարած լինելով հանդերձ չեն բողոքեր, իրենց լռությամբն կը հայտնեն, թե այդ իրավանց վայելումեն ինքնահոժար կը զրկեն իրենք զիրենք բանավոր պատճառավ մ՚անշուշտ։ Ուստի յես ալ կը բողոքեմ այդ առաջարկության դեմ և ստիպողական հարկ մը չեմ տեսներ վայրկենի մը մեջ նոր որենք քվեարկելու։

Դիվան

Մահկանացվաց բազմություն մը կը պահանջե, վոր ժողովն վար փոխադրենք։

Ասված մը

Կը վստահացնեմ զմեզ, վոր չպիտի ծեծվինք։

Դիվան

Այո, այո։ Յերթանք։

ՊԱՏԿԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ

Թատրոնը կը ներկայե փողոց մը

Մանկանացու մը

(Ձայն բազմացին կոկորդեն բռնելով) Ո՞ւր կը փախչիս ձեռքես, անզգամ. խոսք տված եյիր, վոր այսոր ժողովեն յետքը պիտի վճարեյիր խահվեներուն գինն, զոր յերկու ամիսե հետե խմեցիր, առավոտե մինչև յերեկո սրճարանիս մեջ նստելով և ընկերներուդ հետ նարդ խաղալով։

Ձայն բազմաց

Մի՛ պոռար, պիտի վճարեմ, ժողովը շարունակելու համար վար իջանք։

Մանկանացուն

Սուտ կը խոսիս, պարտքդ վճարե։

Ձայն բազմաց

Թող տուր վոր ներս մտնեմ, քվես տամ, ստակ առնեմ և պարտքս հատուցանեմ։

Մահկանացուն

Վոչ, վոչ, վոչ, մինչև վոր ստակ չառնեմ, չեմ թողուր, վոր յերթաս։

Ձայն բազմաց

Գիտցիր սակայն, վոր այս ընթացքդ խիստ անվայել է և հակառակ հասարակաց կարծյաց։

Մահկանացուն

Հասարակաց կարծիքէն ալ մեկ վոսկի կը պահանջեմ։

Ձայն բազմաց

Ձիս հոս բռնելով մեծ և կենսական խնդրո մը կը վնասես, և պատասխանատվությունն քու վրադ կիյնա։ Յես ձայն չեմ հաներ, պատմության կը հանձնեմ։

Մահկանացուն

Ի՞նչ կը հանձնես, խմած խանվեններուդ ստակն վճարե՞լն…

Ձայն բազմաց

Պատմությունն անաչառ է, նա կարող է լուծել իմ վրեժս։

Սեղենե

Ի՞նչ է ձեր վեճը։

Ձայն բազմաց

Փոքր պահանջք մ'ունի։

Սեղենե

Վերջը կը վճարեմ յես։

Մահկանացուն

Շատ աղեկ։

(Հասարակաց կարծիքն, Իրավունքն, յեվ Ժողովուրդն մեյ մեկ աստվածի ոգնականությամբ կը հաջողին առանց արգելքի անցնիլ փողոցեն)։

Ուրիշ մահկանացու մը

(Ժողովուրդ. Շահին օձիքէն բռնելով) Թիկնոցս հանե՛, ապա թե վոչ հիմա կը խայտառակեմ զքեզ, ի՛նչ համարձակությամբ տունս կուգաս առավոտուն և վարպետությամբ թիկնոցս կուզես և կառնես, կերթաս, չե՞ս ամչնար։

Ժողովրդյան շահը

Վոտքդ պագնեմ, մի՛ պոռար… կես ժամեն կուտամ։

Մահկանացուն

Վո՛չ, թիկնոցս տուր։

Ժողովրդյան շահը

Կաղաչեմ, թող տուր զիս… չվայլեր, վոր մահու և կենաց խնդրո մը միջոցին՝ բռնություն բանեցնես վրաս. ապագան պիտի դատապարտե զքեզ, յերբ իմանա, թե կենսական խնդրո մը մեջ զրկել կուզես զիս իմ ձայնես, վախցիր ապագայեն, վոր պիտի պատժե զքեզ…

Մահկանացուն

Ապագան ձվ է, և ի՞նչ ըրած եմ, վոր վախնամ իրմե, յեթե ապագան այնքան բարի յե, թող յուր թիկնոցը տա քեզի։

Սեղենե

(Առ մահկանացուն) Թող տուր զինքն և քառորդե մը ինձմե առ թիկնոցդ։

ՊԱՏԿԵՐ ՅԵՐՐՈՐԴ

(Թատրոնը կը ներկայացնե փառավոր շենք մը, ուր իբր չորս հազար մահականացվաց բազմություն մը կը տեսնվի)

Դիվան

Ատյանը բացված է։

Սեղենե

Ինչո՞ւ բացիր, գոցե, շուտ գոցե։

Դիվան

Ատյանը գոցված է (Առ Սեղենե) *բայց ինչո՞ւ գոցեցինք ատյանը։*

Սեղենե

Հ... Ս...ը հրավիրելու համար։

Դիվան

Ուշ չէ՞։

Սեղենե

Արդեն չկար ինքն, բայց մեր պարտքն է հրավիրել զինքն
(Բուրմերը կերգեն)

Դիվան

Ատյանը նորեն բացված է։

Ասված մը

Յես կառաջարկեմ, վոր քվեարկությունն հետաձգվի այսօր՝ վորովհետև ըսվեցավ, թե Բորեասն իբր յերկու ձայն կընդունի մեր բազմաթիվ ձայները։

Շերաս

Բարեփոխություն ունիմ յես։

Պիրիգղեն

Յես ալ ունիմ։

Կռոնոս

Յես ալ ունիմ անանկ բան մը։ (Կռոնոսին կը սուլեն հակառակ կուսակցության արբանյակներեն)

Ձայներ

Քվե, քվե, քվե։

Կռոնոս

Խոսք կուզ...

Ձայներ

Սըսսսսս, քվե, սըսսսս, քվե։

Դիվան

Ով վոր վաթսունևվեցին յեղանակն ժողովրդյան շահուց հակառակ կը նկատե և նորը կընդունի՝ թող այն պոռա։

Վաթսուն յերեք անձինք

Այո։

Դիվան

Ով վոր նոր յեղանակը չընդուներ՝ թող վոչ պոռա։

Յերեսուն անձինք

Վոչ։

Կռոնոս

Թույլ չպիտի՞ տաք ինձ խոսիլ

Ձայներ

Սըսսսսս... սըսսսսս... սըսսսս...

Կռոնոս

Ճնշում կա, կը բողոքեմ ճնշման դեմ և կուզեմ վոր բողոքըս արձանագրվի։ (Կը մեկնի)։

Դիվան

Քվեարկության ժամն հասած է, ձեր քվեթուղթին վրա փեսայության յերեք ընտրելիներ պիտի նշանակեք, ջանացեք անանկ փեսաներ ընտրելի ներկայացնել, վոր կարող ըլլան կին մը կառավարելու։

Ամենքը

Այո, այո։

Ժողովրդյան ձայնը

(Առ Սեղենն) *Ա՛ռ քվեթուղթս և կարդա, քու ընտրելվույդ անունը միայն գրված է։*

Իրավունք

(Առ Սեղենն) *Քեզ կը հանձնեմ քվեթուղթս, վորուն մեջ ընտրելիդ միայն նշանակված է։*

Հասարակաց կարծիք

(Առ Սեղենն) *Խոստմանդ վստահելով ընտրելվույդ միայն քվե տվի. առ քվեթուղթս։*

Ժողովուրդ

(Առ Սեղենն) *Հաշիվը հետո կը տեսնենք, առ քվեթուղթս, ընտրելվույդ անունն գրված է միայն մեջը։*

Ձայն բազմաց

(Առ Սեղենն) *Կը հուսամ, թե ձեր խոստումը պիտի կատարեք, ահա քվեթուղթս ձեզ կը հանձնեմ։*

Հարուստ աստված մը

(Առ աղքատ աստված մը) *Կրնա՞մ հասկնալ, թե վորու տվեք ձեր քվեն։*

Աղքատ աստվածն

Ձեզի հակառակ կուսակցության կողմը դրած է զիս խեղճս։

Հարուստն

Հրամանքնիդ փրանսերեն գիտեք, կարծեմ։

Աղքատն

Այո։

Հարուստն

Վաղը մեր վաճառատունն յեկեք։

Աղքատն

Շնորհակալ եմ։ Յես ալ ուրեմն ձեր ընտրելվույն կուտամ քվես։

Հարուստն

Այդ ձեր քաղաքավարությունն է, յես ճնշում չեմ բանեցներ։ (Աղքատն ինչպես նայեվ տասն յեվ չորս աստվածներ զանազան վարձատրությանց փոխարեն կը փոխեն իրենց կարծիքն)։

Դիվան

Մտիկ ըրեք, քվեարկության արդյունքն[171]) *պիտի կարդացվի։* (կը կարդա) *Նարկիս*[172]), *վաթսունյերկու քվե։*

Ձայներ

Կեցցե, ահա միակ արժանավորն։

Դիվան

Արծվեծաղիկ[173]), *հիսուն քվե։*

Ձայներ

Կեցցե, ահա արժանավորն այս է միայն։

Դիվան

Ձմեռնածաղիկ[174]), *քառասուն յերկու քվե։*

Ձայներ

Կեցցե, ահա արժանավորագույնը։

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Նույնը յեվ Բոռեաս

Բոռեաս

Կը ցավիմ, որ դուք զձեզ հայր կը կարծեք աղջկան՝ վորուն բուն հայրն յես եմ, և վորուն արժանավոր փեսա գտնելու իրավունքն իմս է։ Դուք աղջկան ազգականներն եք և իբր այն՝ ձեր կարծիքն ալ կընդունիմ իբր յերկու ձայն։ Կաղաչեմ, ընդունեցեք հարգանացս հավաստիքն։ (Աստվածներն այս հայտարարության վրա կապշին կը մնան)։

ԱՌԱՆՑ ՄԻՋՆՈՐԴԻ ՓԵՍԱՑՈՒ ԳՏՆԵԼ

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Տեսարանն է սրճարանի մը մեջ

— Ի՞նչ լրագիր կը կարդաք, պարոն։

— Ցար տիւ Պոսֆոր։

— Աֆերիմ, տղաս, գաղղիերեն ալ գիտեք։

— Քիչ մը։

— Ձեր անունն ի՞նչ է։

— Ցերվանդ։

— Որո՞ւ տղան եք։

— Ստեփաննոս աղային։

— Ստեփաննոս աղայի՞ն, պապա մարդ է, ի՞նչ կընե Ստեփաննոս աղան, աղե՞կ է, ուե՞նտ է։

— Աղեկ է, խաթրերնիդ կը հարցնե։

— Ողջ ըլլա։ Ո՞ւր կը նստիք հիմա։

— Բերա կը նստինք։

— Շատ աղեկ, շատ աղեկ..... խահվե մը կառնե՞ք։

— Շնորհակալ եմ, հիմա խմեցի։

— Հատ մ՚ալ, հատ մ՚ալ կաղաչեմ, յես խելքը գլուխը յերիտասարդները կը սիրեմ ու կը հարգեմ. ծո՛, խահվե մը բեր։

— Շնորհակալ եմ։

— Ի՞նչ գործով կզբաղիք։

— Գրագրությամբ։

— Պատվավոր գործ, այդ գործին մեջ շատ հառաջ կրնաս յերթալ, գրագրությունն վաճառականություն ըսել է։

— Այո։

— Միշտ կուգա՞ք այս գրասալոնը։

— Այո՛, գրեթե ամեն իրիկուն, լրագիրներն աչքե կանցունեմ։

— Ապրիս, ապրիս..... տղաս կը ճանչնա՞ս։

— Ձե.....

— Ան ալ քեզի պես լրագիր կը կարդա։
— Աղեկ, մնաք բարով։
— Յերթաք բարով։

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Միյեվնույն սրճարանին մեջ

— Բարի իրիկուն, մյուսու Յերվանդ։
— Աստծու բարին։
— Ի՞նչ լուր ունիք նայինք։
— Վոչինչ։
— Լոխում մը կառնե՞ք։
— Չե։
— Կաղաչեմ, առեք, խաթերս համար լոխում մը առեք, սիրտըս շատ սիրեց քեզի։
— Ձեր ազնվությունն է։
— Ծո՛, լոխում մը բե՛ր։
— Շնորհակալ եմ։
— Քեզի պես յերիտասարդներ խիստ քիչ են ազգերնուս մեջ, թախըմ մը ճահիլ ճյուհյուլներ՝ որթան են ինկեր, ճեպերնին բարա մը չունին, կարգվելու կելնեն. ձեզի պես յերիտասարդներ կարգվելու յեն, վոր կրթյալ զավակներ հասցունեն ազգին։
— Մենք տահա պզտիկ ենք։
— Քանի՞ տարու յեք վոր։
— Քսանըվեց տարեկան։
— Ճիշտ կարգվելու տարիքն եք. յես քսանը չորսիս մեջ կարգվեցա ու, փառք տիրոջը, շատ գոհ յեղա։
— Տարիքեն զատ կարգվելու համար պետք յեղած հարըստությունն ալ չունինք։
— Հարստությունն ալ ի՞նչ բապուճ է վոր..... հարստություն..... հա, հա, հա, հարստության խո՞սքը կըլլա, բավական է, վոր յերիտասարդ եք ու կաշխատիք։ Հարստությո՛ւն, վոչինչ խոսք.....
— Այնպես, բայց.....
— Յես քու տեղդ ըլլամ նե՝ վայրկյան մը չեմ սպասեր, համեստ աղջիկ մը կը գտնամ, կառնեմ։ Քեզի ո՞վ աղջիկ չտար։ Խոսք տուր ինձի կարգվելու, յես գտնամ քեզի աղջիկ մը։
— Հիմակ ու հիմա կարգվելու միտք չունիմ։
— Ատ ուրիշ խոսք, բայց չկարգվելով աղեկ բան մը՝ ըրած չես ըլլար։
— Մնաք բարով։
— Ի տեսություն։

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

Միշտ նույն սրճարանին մեջ

— Տակավին այն մտքին վրա՞ յես։
— Այո։
— Աչքդ վախցուցեր են։
— Ամենևին։
— Ինչո՞ւ ուրեմն չես ուզեր կարգվիլ. ամոթ չե յա. սա քուկին կարգվիլ չուզելդ մերաք յեղավ ինձի։ Ամա պիտի ըսես վոր քեզի ի՞նչ, ուզեմ նե կը կարգվիմ, չուզեմ նե չեմ կարգվիր. հախ ունիս, բայց յես իբրև զավակ բռնած եմ քեզի ու անոր համար թեքլիֆսիզճե կը խոսիմ կոր։
— Շնորհակալ եմ։
— Սա ինչո՞ւ չես ուզեր կոր կարգվիլ, զավակներ ունենալ, զանոնք մեծցնել, անոնց վրա նայելով խնդալ, ուրախանալ, ամուսնության պես աղեկ բա՞ն կա աշխարհիս վրա, մեղք չե՞ս, վոր սանկ ամուրի մնաս։
— Դեռ կանուխ է ինձի համար։
— Ուշ է պիլե։ Հասկցա, կարծեմ չեմ ուզեր ճեպս ձգեյի պես բաներ կըսես կոր. կը հասկնամ։
— Ամենևին։
— Հասկցա յես գործը, բայց դարձյալ աֆերիմ, քիպարության մեկ ապացույցն ալ սա յե քի, համարձակություն չունիս պիտի կարգվիմ ըսելու. ապրիս տղաս, աֆերիմ, աֆերիմ, աստված թշնամիիս քեզի պես զավակ տա։ Ահ, անանկ ճահիլ ճյուհյուլներ կը ճանչնամ, վոր կնիկ կուզեն տեյի մորերնուն մազերը կը փեթտեն, չամչցածներ։

— Եթե կարգվելու միտք ունենայի՝ ընավ չեյի քաշվիր ըսելու, թե պիտի կարգվիմ։

— Հերիք, յես միտքդ հասկցա։ Հրամանքդ ուր կը գտնըվիս վաղը իրիկուն ժամը տասն ու կեսին միջոցները։

— Հոս։ Ի՞նչ պիտի ընենք։

— Կիմանաք։

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ

Նույն սրճարանին մեջ

— Հայտե, մյուսյու Երվանդ, կառքը կսպասե կոր։

— Ո՞ւր պիտի յերթանք։

— Բերա տուն մը պիտի յերթանք այս իրիկուն, մեկտեղ պիտի ուտենք։

— Շնորհակալ եմ, բայց չեմ կրնար գալ։

— Անկարելի յե վոր չգաս..... կառքը հոս ե։

Կառքի մեջ.

— Այս գիշեր սանկ ժամանակ կանցունենք, չ՞ըլլար։

— Կըլլա, բայց.....

— Բայցը ի՞նչ ե. քիչ մը կը նստինք, կը խոսինք, տերտեշմիշ կըլլանք։

— Շատ աղեկ։

— Ինչ վոր գրված ե նե՝ ան կըլլա։

— Անանկ ե։

— Մարդուս մեկ սահաթը մյուս սահաթին չնմանիր։

— Ճիշտ ե։

— Շուկա կելլաս քիչ մը պտըտելու համար, աղվոր բան մը աչքիդ կը զարնե, կերթաս պազարլըխ կընես կառնես, անանկ չե՞ մի։

— Անանկ ե։

Տեսարանն ե տան մեջ

— Աղջիկս, մեզի քիչ մը ողի բեր։

— Ողի չեմ խմեր։

— Մեյ մեկ գավաթ կը խմենք։

— Բայց սովորություն չունիմ։

— Վնաս չունի, գավաթ մը ողի ախորժակ կը բանա. աղջիկս, քիպրիթ բեր մեզի։

— Սիկարա չեմ ծխեր։

— Հատ մը խմե. աղջիկս, քիչ մը խավյար սալաթասի բեր։ Կենդանություն, մյուսյու Երվանդ։

— Անուշ ըլլա։

— Ձեք խոսիր կոր, մյուսյու Երվանդ։

— Ի՞նչ խոսիմ։

— Ըրկե, նըկե բան մը խոսե, ազգային գործերուն վրա խոսե։

— Ազգային գործերուն վրա տեղեկություն չունիմ։

— Աղջիկս, հոգնեցար, նստե քիչ մը։ Մայրդ ուր ե, աղջիկս։

— Եկեղեցի գնաց, հիմա կուգա։

— Շատ աղեկ. չեք խոսիր կոր, մյուսյու Երվանդ։

— Մտիկ կընեմ կոր։

— Աղջիկս, մայրդ յեկավ, սեղանը պատրաստ ե։

— Այո։

— Հրամմեցե՛ք, մյուսյու Երվանդ, քիչ մը բան ուտենք։

Կիջնեն.

— Տիկին, մյուսյու Երվանդը կը ճանչնա՞ք։

— Ձե։

— Ստեփաննոս աղային տղան։

— Վորչափ մեծցեր ե, մաշալլահ, ինչպես ե Ստեփաննոս աղան, ինչպես են մայրդ, քույրերդ, յեղբայրներդ։

— Աղեկ են։

— Ձեք ուտեր կոր, մյուսյու Երվանդ։

— Կուտեմ կոր։

— Մյուսյու Երվանդին գինի լեցուր, աղջիկս։ Տիկին՝ չըխոսի՞ք։

— Ի՞նչ խոսիմ։

— Այս իրիկուն խոսք չենք կրնար կոր գտնել... չխոսի՞ք, մյուսյու Երվանդ։

— Կը խոսինք կոր յա։

— Ձեր կենդանությանը կը խմեմ։

— Անուշ ըլլա։

Վեր կելնեն։ Երիտասարդը մեկ յերկու ժամ ևս նստելեն հետո կը մեկնի։

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Սրճարանի մեջ

— Բարիկուն, մյուսյու Յերվանդ։
— Աստծու բարին։
— Քեզի բան մը ըսե՞մ։
— Ի՞նչ կա։
— Պոլիսը փոխվեր է, առաջին Պոլիսը չէ։
— Ի՞նչ յեղեր է։
— Ի՞նչ պիտի ըլլա, աս առտու դեմս յելնողը ձեռքս կը սխմե կոր, կը շնորհավորե կոր զիս...
— Ինչո՞ւ համար։
— Կեոյա դուն աղջկանս հետ նշանվեր ես յեղեր։ Զե, կըսեմ կոր նե, կը պահես կոր, կըսեն կոր, աս ի՞նչ մասխարայություն է, ճանըմ, պարե մեջերնիս անանկ խոսք մը անցա՞ծ ըլլար։
— Զարմանալի բան։
— Կեոյա դուն հարյուր հիսուն ոսկի Թլախոմա ուզեր ես տե, յես ալ բեք աղեկ, տամ, ըսեր եմ. ինչպես ալ ույտուրմիշ կընեն կոր... Ճանըմ, հայտե ըսենք, դուն անանկ միտք մը կուներնաս տե, հարյուր հիսուն ոսկի ալ կուզես, յես ալ կուտամ, քեզմե աղեկի՞ն պիտի տամ աղջիկս, ատ ուրիշ խնդիր, բայց հիչ չեղած մեկ բանը յըլլել տե ասդին անդին խոսիլ, շիտակը ամոթ բան է, մեղք է։
— Ականջ մի կախեր դուն։
— Գիտե՞ս, տուներնիս կուգաս տե, աղջիկնիս կը տեսնաս, ան ալ քեզի կը տեսնա, դուն ան կը հավնիս, ան քեզի կը հավնի, դուն ան հավնելեն յետքը, ան ալ քեզի հավնելեն յետքը, մեկու մը միջոցավ կուգես աղջիկս, յես ալ կուտամ։ Կը տեսնամ վոր շատ մեսարիֆ ընելու ատեն չունիս, տուն փեսա կառնեմ քեզի, մեկ յերկու հարյուր ոսկի ալ Թրախոմա կուտամ, պըզտիկ դրամագլուխ մը կը դնես, քանի մը տարի տունի մեսարիֆ չես ըներ, վոր քիչ մը սերբիլմիշ ըլլաս, ատոր ըսելիք չունիմ, բայց...
— Մենք մեզի գիտենք յա՛, Թող անոնք ուզածնին զրուցեն։

— Զրուցեն ամա, աղջիկ զավակ է, տղաս, անոր ալ ականջը կերԹա, սեր կուտա քեզի, գիտե՞ս առաջին սերն վորչափ վտանգավոր բան է, աղջիկս ձեռքես կելլա.....
— Հոգ մ’ըներ, հոգ մ’ըներ։
— Ի՞նչպես հոգ մ’ըներ։
— Մնաք բարով։
— Ի տեսություն։

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Միշտ սրճարանի մեջ

— Ըսածս յելա՞վ յա։
— Ի՞նչ։
— Աղջիկս խնդության մեջ է։
— Աս ի՞նչ խայտառակություն է։
— Զիտեմ, տղաս, չիտեմ, աղջիկս անանկ սեր տված է քեզի, վոր չեմ կրնար պատմել։
— Եյ, հիմա։
— Խղճիդ հարցո՛ւր, դու կարող ես այսոր աղջիկս կորսնցնել կամ փրկել։
— Պատճառը դուն ես, ինչո՞ւ տարիր զիս տունդ։
— Ի՞նչ գիտնամ, վոր ասանկ խոսքեր պիտի յելլան, ճանըմ, աղեկ մ, ծուռ նստինք շիտակ խոսինք, սանքի ինչո՞ւ սա աղջիկը չառնես. առնես նե՝ ի՞նչ վնաս կունենաս. խոսք է յա.....
— Կարգվելու միտք չունիմ յես։
— Պարապ բան։ Յեկուր անանկ ընենք, յերկու յերեք հարյուր ոսկի տամ քեզի, դրամագլուխ ըրե, գործի մը սկսե, հինգ վեց տարի ալ տունի ծախք ընել չեմ տար քեզի։
— Մտմտամ քիչ մը։
— Շատ աղեկ. քանի մ’օրեն տուր պատասխանը։

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅՈԹՆԵՐՈՐԴ

— Ի՞նչ վորոշում տվիր։
— Զորս հարյուր վոսկի պիտի տաս։
— Կընդունիմ։

— Տասը տարի տան ծախք չպիտի ընեմ։

— Շատ աղեկ, զավակս ես լմին, թող կուտամ վոր ծախք ընես։

— Նշանտուքթյունը գալ շաբթու կընենք։

— Լավ։

— Տարիե մ՚ալ հարսնիքը։

— Շատ աղեկ, տղաս, շատ աղեկ, վողջ ըլլաս։ Կուզեմ, վոր ամեն իրիկուն մեզի գաս կերակուրի։

— Կուգամ։

— Յեկուր համբուրեմ զքեզ, զավակս։

— Յես ալ ձեռքդ համբուրեմ, հայր իմ։

— Խըսմեթը ասանկ է յեղեր. զաթը առաջի որեն յես քեզի հաճեցա ամա, բերանս առաջ չգնաց բանալու քեզի, ամչցա, եյ, գիտես, դժվար բան է աղջիկս քեզի տամ ըսելը, ամա անանկ հայրեր չկա՛ն, շա՛տ, գլխուս մազին չափ ամա, ինչ ոգուտ, վոր հայր կա, հայր ալ կա։

-- Ան ալ խօսք է։

— Մենք չենք վարժված անանկ բաներու, մենք կամչնանք։

— Պելլի յե։

— Կեցիր բարով, փեսաս։

— Յերթաք բարով։

— Կերակուրի կսպասեմ։

— Պիտի գամ։

ՊԱՐԱՀԱՆԴԵՍԵՆ ՈՐ ՄԸ ՅԵՏՔԸ

Ընտանյաց բարի հայր մը հետևյալ նամակը կընդունի.

«Մեծապատիվ տեր,

«Ձեր նազելաշուք դուստրն օրիորդ... ինձի հետ է։

«Բարեհաճեցե՛ք յերեք հարյուր ոսկի ղրկել, որպեսզի հառաջիկա շաբաթ օրը ձեռք պագնելու գանք։

«Ընդունեցե՛ք, կաղաչեմ, ամենախորին հարգանացս հավաստիքն

Որդով մնամ.

Ձեր ամենախոնարհ և ամենահնազանդ փեսան

* * * »

— Կնի՛կ, Միհրանը ուշացավ։

— Մինչև հիմա անպատճառ գալու յեր։

— Արդյոք փորձանք մը...

Դուռը կը զարնվի։

Պանդուխտ մը վեր կելնե։

— Աղա՛, քիչ մը վար կիջնա՞ք։

— Ի՞նչ կա։

— Բան չկա, խոսք մ՚ունիմ։

— Զրուցե՛, ի՞նչ կա, կըսե տանտիկինն հուզված։

— Ծանըմ, յերեկ գիշեր ձեր տղան պալոյին մեջ գինովցուցեր են, առեր տուն մը տարեր են, հիմա թող չեն տար, որ գա, զավալըն կուլա կոր։

— Յերթանք, յերթանք։

— Զավակս, զավակս, կը պոռա տիկինը։

— Հոգ մի՛ ըներ, հիմա կը բերեմ, յերթանք, աղբար, յերթանք...

— Ի՞նչ ըսեմ սա պալոն իմաստ ընողին։

— Իրիկուն յեղավ, ձուր մնացիր։

— Փուզում, կաղաչեմ, մի՛ սկսիր նորեն, պալո մը գնացի, քթես բերնես մի՛ հաներ։

— Քթեն բերնեն բերելու բան չկա, ինչո՞ւ ուշացար։

— Ուշացա մի՛... յես կանուխ յելա... տահա չելան պալոյին։

— Դուն առաքելոցեն յելար հե՞...

— Տահա ամեն մարդ հոն ե։

— Ամեն մարդ՝ պետք չե ինձի, ինձի յես պետք եմ, հասկըցար։

— Ամա ինձի նայե, յես շատ խոսք չեմ ուզեր... փոթիններս հագնելուս պես կառնեմ կը քալեմ։

— Ատ ի՞նչ խոսք ե... ատանկ խոսք ըրած չունեյիր դուն։

— Զունեյի, հիմա ունիմ։

— Պալոյի պերեքեթ ե։

— Հե, պալոյի պերեքեթ, իշթե կերթամ կոր յես, մինչև վաղը առտու չպիտի գամ։

Վար կը վազե, դիմակն յերեսն անցունելով դուռը կը բանա և դուրս կելնե միանալու համար ուրիշ դիմակավորի մը հետ, վոր դրան առջև կսպասեր իրեն։

———

Երկան և կնոջ մեջտեղ.

— Ա՛լ դուն իմին խալըախիս հասկցուր։

— Յես ալ քուկին ինչ տեսակ մարդ ըլլալդ հասկցա։

— Յես ճանչցա քեզի և գքեզ փորձելու համար քովդ յեկա և քեզի պարի հրամցուցի։

— Սուտ մի՛ խոսիր, դուն զիս ուրիշ կին մը կարծեցիր և քծնեցար. յես ալ թող տվի, վոր քծնիս, վորպեսզի անհավատարմությունդ աղեկ մը հաստատեմ, անհավատարիմ քեզի, ինձի համար կը մեռնի՞ս հաա, ստախո՛ս...

— Դուն ալ ինձի հոգվույս հատորը կըսեյիր, բայց յես չեյի հավատար, իրավունք ունիմ յեղեր։

— Ըսել ե թե առիթը ներկայանալուն պես կը մոռնես կոր զիս։

— Դուն ես, վոր առիթ ստեղծեցիր զիս խաբելու համար... ինչո՞ւ պահեցիր իզմե պալո յերթալու դիտավորությունդ։

— Դո՞ւն ինչու պահեցիր։

— Յերկար բարակ խոսքերու պետք չկա, այսուհետև չենք կրնար մեկ տեղ ապրիլ։ Մորդ տունը կերթաս կը նստիս, յես ալ հորս քով կերթամ, խնդիրը կը վերջանա։

— Շատ աղեկ, իմ ուզածս ալ այս ե։

Այս վորոշումը կը հարգվի ցարդ։

———

— Բարա չունեյիք նե՝ պալո չերթայիք, եֆենտիմ։

— Վաղը յեկուր, աղաս։

— Ձիերուս գարի պիտի առնեմ, մինչև առտու ձեզի սպասեցի, բարաս կուզեմ։

— Հիմա բարա չունինք։

— Չունինքեն չեմ հասկնար, վորչափ ձայն ունիմ նե՝ կը պոռամ։

— Չես հավատար նե՝ աս բալթոս րեյին տամ։

— Տուր։

Կառավարն բալթոն կառնե, կը ծախե ու ձիերուն գարի կը գնե։

Քանի մը որ յետքը մարդը կառավարը կը գտնե ու.

— Բալթոս ո՞ւր ե, կը հարցնե։

—Ձիերս կը հագնին կոր, կը պատասխանե կառավարը։

———

— Մայր... դող մը յեկավ վրաս... կը դողամ կոր...

— Կը դողա՞ս կոր...

— Այո՛, կը կը կը դողամ կոր։

— Ծո Թորո՛ս, բժշկին վազե՛։

— Կը մսիմ կոր։

— Ծո, շուտ մը աս եղաճին կանչե։

— Կարծես թե գլխես վար խովաներով պաղ ջուր կը թափեն կոր։

— Չայ մը յեփեցե՛ք։

— Ջուր տաքցուցեք վոտքերուս։

— Յախըլամիշ ընենք։

Քառորդե մը կուգա բժիշկն։

— Շուտ մը դեղ մը տայիր, տոքթոր։

— Այո՛, այո՛...

Բժիշկը դեղագիրը կը գրե և հետո կսկսի քննել հիվանդությունը։

— Ի՞նչ հիվանդություն է տոքթոր։

— Պաղ առած է, բան մը չէ, տասն տասներկու վոսկիի ծործ մ'է, կանցնի։

— Անցնի տե, ի՞նչ ընենք։

— Մայրի՛կ, բան մը կըլլամ կոր։

— Ի՞նչ ունիս, աղջիկս։

— Սրտիս մեջ նեղություն մը կզգամ կոր։

— Բժիշկ մը բերենք։

— Բժիշկ չեմ ուզեր... անհանգստություն մ'ունիմ։

— Ի՞նչ անհանգստություն, մսեցա՞ր։

— Մեկը տեսա... տեսնես մայրիկ, ի՜նչ սիրուն յերիտասարդ։

— Եյ...

— Շատ բարի յերիտասարդ մը... ինձի շատ պատիվ ըրավ։

— Հետո՞։

— Յեվ ըսավ, թե շատ յերջանիկ պիտի ըլլար, յեթե զի՛նքըն փեսա ընդունեյինք... յես չըլլար, ըսի... հիմա կը մտմտամ կոր քի ինչո՞ւ համար չըլլար ըսի, չըլլալու բան մը չէ, անանկ չէ՞, մայրիկ։

— Մենք քեզի ուրիշին պիտի տանք, աղջիկս։

— Մայրի՛կ, իմ տեսածս անանկ յերիտասարդ մ'է, վոր տեսնաս նե՝ դուն ալ պիտի հավնիս։ Ան յերիտասարդը կուզեմ յես, հայրիկիս զրուցե՛, վոր վաղը առտու նշանվինք, տեսնաս ի՜նչ բարի տղա յե։

— Ատ խոսքը մեյ մ'ալ չըսես, հայրդ իմանա նե...

— Թե վոր ինձի ան յերիտասարդին չտաք՝ գալ շաբթու կը փախչիմ, գիտցած ըլլաք։

— Հանցանքն մերն է, վոր քեզի պարահանդես ղրկեցինք։

ՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՔ ԽԻԿԱՐԻ

1 Օգոստոս

Յերուսաղեմի պարտուց[175])—վորքան լավ կը լիներ, յեթե պարտուցին տեղ միաբանության բառը գրված ըլլար—բարձման և նպաստ հանգանակության խնդիրն հառաջիկա ուրբաթ որն ալ չպիտի կրնա ներկայացվիլ Ազգ. ժողովի[176]) պատկառելի գրասեղանին, վորովհետև Ազգ. վարչությունն[177]) այս մասին տեղեկություններ ունի քաղելու։

2 Օգոստոս

Յերուսաղեմի պարտուց—վանուց ըստ սովոր, վանքերուն թիվը միևնույնն ե—բարձման հոգուտ հանգանակության խնդիրըն Ազգային ժողովո պատկառելի հաջորդ նիստին ալ չպիտի կրնա ներկայացվիլ, վորովհետև պատրիարքարանն այս մասին յուր տեղեկություններն ամբողջացուցած չե։

Յերուսաղեմա միաբան գեր. Տ. Յերեմիա յեպիսկոպոս, ս. Հարության տաճարին մեջ վարդապետ ձեռնադրեր ե յերեք ավագ սարկավագ։

(Արևելք)

Տխրությունն այն ե, վոր պարտուց հետ վարդապետներն ալ կավելնան Յերուսաղեմի վանուց մեջ, գոնե սա վարդապետաց հավելման առաջքն առնվեր, վոր անոնց բարձման համար ալ Հանձնաժողովներ կազմելու հարկին մեջ չգտնվեյինք։

3 Օգոստոս

Ազգային ժողովը գումարվեցավ։ Նշանակության արժանի յե հիշել, թե սույն գումարման մեջ յերեսփոխանք վոմանք իրարու չհայհոյեցին, և ազգին շնորհակալյաց արժանացան։

4 Օգոստոս

Գարուն և Աշուն...

Կը վաճառուի Կ. Պոլիս Պահճէ քարու Ջրավաճառ Հակոբ աղա Ադամալյանի քով։

Հեղինակն է պ. Տիգրան Պ. Սեթյան։ Պատիվ կամ առիթ չունեցանք տակավին տեսնելու ԳարունՆ և ԱշունՆ, սակայն կարդացինք լրագրի մը մեջ անոր ծանուցումն, զոր կը փութանք տառագրել ատ մեր դիտողություններով։

Սույն գրքույկն կը բաղկանա ինն ուն և վեց յերեսներե և բաժնված է կրկին մասերու։

— Գրքույկի մ'իննսուն և վեց յերեսներե բաղկացումն և կրկին մասերու բաժանումն յերաշխավորություն մը չեն անոր հեղինակին արժանյաց։—

Ա. «Գարուն», վոր կը բովանդակե յերեսուն և հինգ կտոր տաղեր, վորոնց առաջին չորս տաղերը հեղինակին կատարելության հասակին առաջին արդյունքն են։

— Յեթե գարունը հեղինակին կատարելության հասակն է, ըսել է թե ամառն, աշունն և ձմեռն հեղինակին թերակատարության յեղանակներն կը կազմեն։ Բայց հեղինակի մը գարունությունն ես գրավական մը չե նորա տաղանդին. վորքան հեղինակներ գարնան յեղանակին մեջ ձմեռած են։—

Նախաբանն Վահրամի[178]) ուղղյալ ուղերձ մ'է։

— Նախաբանները յերկար տարիներե ի վեր Վահրամէ կը դիմեն։ Շատ հեղինակներ կը կարծեն, թե կը բարձրանան, յեթե ականավոր անձանց ուղերձներ գրեն. մինչդեռ, ըստ իս, բարձրանալու նպատակավ ի գործ դրված ասանկ փոքր ջանքերն են, վոր կը տապալեն շատ հեղինակներ։ Նախաբանեն ալ ուրեմն պետք չե դատել գրքույկին արժանիքն։—

Տաղերու մեծ մասը, բնական է, հոգեկան առարկայից կը վերաբերին...

Տաղերը կրնան վերաբերիլ շատ առարկաներու, սակայն հանճարն է, վոր կը փայլի միշտ, նույնիսկ ամենեն չնչին առարկայից վրա չափված տաղերուն մեջ. ուստի յես չեմ կրնար հավատալ, վոր բնական և հոգեկան առարկայից վերաբերյալ տաղերն միշտ գեղեցիկ և ընտիր ըլլան։

Յեվ մի քանին ազգային ծանուցյալ քերթողներու ուղղյալ տաղեր են...

— Ազգային ծանուցյալ քերթողներու հետ թղթակցությունըն արգիլյալ չե և վոչ մեկ բանաստեղծի. սակայն յես բնավ չեմ ախորժիր այն տաղերեն, վոր ծանուցյալ անձանց կուղղըվին։—

Որհներգ մ'առ Հյուկո[179]) և ընդունելության գաղղիերեն պատասխանագիր...

Որհներգ մ'ալ առ սուրբ աստվածածին, հատ մ'ալ առ հոգին սուրբ հարկ եր գրել, գոնե պատշաճից ոբինաց դեմ չմեղանչելու համար։—

Բ. Մասն է Աշուն, վոր կսկսի Արտոսրով մը...

— Տմր ատված, վոր ծխացով չվերջանար։—

Կը պարունակե տասն և մեկ կտոր դամբանական տաղեր, Մ. Պեշիկթաշլյանի[180]) և այլոց հիշատակին և վողբացյալ «Նահատակի» մը...

— Միշտ ուրիշներուն կամ ուրիշներուն հիշատակին ուղղյալ։—

Յեվ ի վերջո հոգեխոս նամակ մ'առ հեղինակն...

— Յեվ այսքան նամակներու մեջ մեզի բնավ բարև չկա։—

Անհավատիկ ԳարունՆ և ԱշունՆին ծանուցումն, վոր ինչպես հայտնի յե, ուղերձներու ցանկ մը միայն կը ներկայացնե մեզ և բնավ չխոսիր բանաստեղծին այն տաղերուն վրա, վոր յերբեմն հրատարակված եյին ազգային լրագրաց մեջ և վոր ախորժակով կարդացված եյին։

Տարակույս չկա, թե այս ուղերձներն այն անձանց, վորոնց ուղղված են՝ ճաշակին հարմար պիտի գան միայն, վորովհետև յես, օրինակի համար, վոր քանի մ'ատենե ի վեր սովորություն ըրած եմ աղերսագիր անվանել ուղերձն, բնավ հաճույք չպիտի զգամ կարդալով տաղեր՝ վոր միույն տաղանդին վրա, մյուսին գեղեցկությանը վրա և ուրիշի մը գանձին վրա գովեստներ կը պարունակեն։ Այս ուղերձներն, ըստ իմ խոնարհ կարծյաց նամակով մ'իրենց հասցեյին ուղղվելու յեն և բնավ յելնելու չեն հրապարակ։ Ասոնք են մեր դիտողություններն ԳարունՆ և ԱշունՆի ծանուցումին վրա. յեթե գրքույկն կարդալեն հետո զգանք մեր սույն դիտողությանց ավազի վրա հիմնված ըլլալն՝ թույլ

պիտի տանք, վոր կործանին անոնք. իսկ յեթե տաղերու մեջ գովեստ մ'ալ մեզի համար գտնելու պատիվը ունենանք՝ բնականաբար պիտի փութանք հանձնարարել տաղասեր ընթերցողաց, վոր հաճին յերկերկու որինակ գնել Աշուն և Գարունէն։

5 Ոգոստոս

Սամաթիո[181]) ս. Գեվորգ յեկեղեցվո հիմնարկության հանդեսն կատարվեցավ ի ներկայության բազմաթիվ ազգայնոց։

Յեղիա եֆենտի Տեմիրճիպաշյան[182]) Խասգյուղի ս. Ներսեսյան վարժարանաց մրցանակաբաշխության հանդեսն գնացած լինելով ատենաբանելու, ժամանակ չունեցավ սույն հանդեսին մեջ ատենախոսելու։

6 Ոգոստոս

Կիլիկիո կաթողիկոսն չարաչար կը հալածե յեղեր Ատանայի Յեկեղեցասիրաց ընկերությունը։

Ազգային լրագիրք գրեթե միաբանած են Կիլիկիո Կաթողիկոսին հալածել տալ նույնիսկ ամենեն ավելի անհալածելի բաները։

Ժամանակ յեղած ե, վոր լրագրի մը նայելով, նորին ամենապատվությունն հալածած ե նույնիսկ յուր շուքն։

Լավ, բայց այս բարձրաստիճան յեկեղեցականը գոնե օր մը, ժամ մը, վայրկյան մը հալածված չե՞ ուրիշներե։

7 Ոգոստոս

Կաթողիկոսական խնդիրն, կըսե, Արձագանք[183]) դիվանական մթության մեջ ծածկված ե։

8 Ոգոստոս

Լրագիրք պարապ խոսքերով լցված են։

Քաղաքական ժողովը գումարվեցավ և շատ մը տնօրինություններ ըրավ։

9 Ոգոստոս

Արևելքի[184]) մեջ ոգտակար խրատ մը չկա այսոր։

Վանորեից խորհուրդն[185]) յուր որակարգն մաքրած ըլլալով՝ այսոր նիստ չըրավ։

Այս կը նշանակե՝ թե վանքերն բարեկարգության շավղին մեջ մտած են, և այլ ևս պետք չկա անոնց համար խորհրդակցելու։

10 Ոգոստոս

Բերայի գերեզմանատան Հանձնախումբն մեծ գործունեությամբ կը կատարե յուր պաշտոնը։

Կըսվի, թե այս հանձնախումբն կանոնագիր մ'ալ պատրաստած ե մեռելներու համար, այնպես վոր ամեն ննջեցյալ չըպիտի կրնա, առաջվան պես, յուր ուզած տեղը պառկիլ, և մանավանդ յուր ուզած ժամանակը մեռնիլ։ Մեռնողները պարտավոր պիտի ըլլան տուրք մը վճարել իրենց կարողությանը համեմատ և այն ալ մեռնելեն առաջ։ Լավ փոսերն հարուստներու պիտի հատկացվին, իսկ աղքատներն չպիտի կրնան իրենց վոտքերն յերկնցնելով հանգիստ պառկիլ, իրենց փոսին յերկայնությանը պիտի հավասարեցնեն իրենց հասակը։ Միջին դասու համար ալ դատ թաղ մը պիտի սահմանվի, և այս թաղին ոդն բարձր դասուն ոդին չափ առողջարար չպիտի լինի բնականաբար։ Այս մասին ուրիշ շատ գրույցներ ևս կը լսվին, բայց մենք կանոնագրությունն չտեսած՝ չենք ուզեր կարծիք հայտնել։ Չը մոռնանք աստ հիշելու՝ թե լրագիրք վոմանք ամենամեծ գովեստով կը խոսին Հանձնախումբին վրա և համոզված են արդեն՝ թե Բերայի գերեզմանատունն յուր մեռյալներովը որինակելի տիպար մը պիտի հանդիսանա ուրիշ գերեզմանատուններու։

Մենք ալ կը մաղթենք և կաղոթենք, վոր Հանձնախումբին քրտնաթոր վաստակներն առատորեն պսակվին, և ազգն ալ մխիթարվի տեսնելով՝ վոր յեթե վոչ յուր վարժարաններն, գոնե յուր գերեզմաններն բարեկարգ վիճակի մեջ կը գտնվին։

11 Ոգոստոս

Յերուսաղեմի պարտուց բարձման ի նպաստ հանգանակության խնդիրն հառաջիկա ուրբաթ ևս չպիտի կրնա ներկայացվիլ Ազգ. ժողովույն, վորովհետև բազում տեղեկություններ կը պակսին դեռ։

12 Օգոստոս

Նշանակության արժանի դեպք մը չկա։

13 Օգոստոս

Մեր մտերիմներեն մին գիտել կուտա մեզ՝ թե խիկար միշտ մինույն գեղծմանց կուղղե յուր նետերն։

Իրավունք կունենար մեր մտերիմն, յեթե միշտ մինույն գեղծումներն չկրկնվեյին ամեն որ։

14 Օգոստոս

Ուսումնական խորհրդո[186]) արտասովոր նիստն տեղի ունեցավ։

Խորհուրդն վարչության մատուցանելի տեղեկագիրն պատրաստեց և վորոշեց խնդրույն ստիպողականությունն տալ։

Իցիվ թե վարչությունն խնդրույն ստիպողականությունն չտալու կողմն չգտնվեր և ժամ առաջ կատարվեր սույն կրթական հաստատության բացումը, զոր ցարդ ուշացուցին ասպետական ինչ ինչ նկատումներ։

15 Օգոստոս

Խառն ժողով[187]) չգումարվեցավ։

16 Օգոստոս

Արևելքի մեջ Ա. Ա. գրադատելով Պ. Ն. Տյուղենճյանի գործնական համարակալությունը՝ հետևյալ տողերը կը գրե. «Պ. Ն. Տյուղենճյանի Գործնական համարակալություն դասագիրքն այն գրքերեն ե, վորք թեպետև չեն կրեր շողշողուն անուն մը, բայց և այնպես վոչ միայն կարևոր ծառայություններ կը մատուցանեն ազգին, այլ նաև բարերարներ կընան համարվիլ դաս մը պատանիներու համար»։

Համարակալության ուսումը անշուշտ խիստ օգտակար ե պատանիներու, և այս մասին հակառակ չունի յուր դեմ Պ. Ա. Ա. միայն կը վախնամ, վոր ազգին բարերարներ հորջորջվելու փափաքով վաղը մեր յերևելի և ազգասեր վաճառականներն չելնեն մեյ մեկ տոմարակալություն հրատարակեն և հրապարակն այդ դասագիրքերով լեցնեն։

17 Օգոստոս

Քանի մը ամիս առաջ լրագիր մը պատվաստի ուսումն կը հանձնարարեր մեզ։ Յերկու ամիս առաջ հեղինակ մը կը պնդեր, թե մարդուս ամենեն օգտակար գիտությունն գրական փիլիսոփայությունն ե։ Հետո ուրիշ մը սկսավ պոռալ՝ թե ուղեղի ուսման անծանոթ մարդն կենդանիեն ընավ տարբերություն չունի և ախոռի մեջ կապվելու արժանի յե։ Ասոր հաջորդեց լեզվագետ մ՚որ ամեն որ կողբա սանսքրիթն չգիտցողներն։ Առողջաբան մ՚ալ անդիեն կաղաղակե, թե ակռաներն պահպանելու մասին տոքթոր Կալֆըի հրատարակած տետրակը մեծ կարևորություն ունի ուսանողաց համար։ Տնտեսագետ մը արտասուք կը թափե Կարինո չգիտեմ վո՛ր վարժարանին մեջ տնտեսագիտության դաս չգտնվելուն համար։ Բանաստեղծն կը՞ փափաքի, վոր յուր տաղերն բերնուց սորվինք և ճաշեն յետքը բարձր ձայնով արտասանենք։ Մին՝ յեթե կուզեք մարդ ըլլալ, կըսե, Ուղեվորությունս կարդացեք, անպիտաններ. ուրիշ մը յուր հնարած մազի ներկին գտած ընդունելության վրա յերկար ատենաբանություն մը կընե. անդիեն գործակատար մը կը հրավիրե զմեզ, վոր մեր կյանքըն ապահովելու համար իրեն տասն վոսկի տանք ամիսն և այլն, և այլն, և այլն...

Անհատ մ՚ասոնց վո՞ր մեկին հասնի։ Յես պատվաստի ուսումը չավարտած՝ ստիպված եմ համբերություն սորվիլ, վոր օգտակար գիտություն մ՚ե յեղեր, և համբերությունն չիմացուցած պիտի ստիպվիմ ակռաներուս ուսման, բաթաթեսի մշակության, սանսքրիթի և քիչ մ՚ալ տաղաձագործության պարապիլ, վորովհետև տաղաձագործությունն ալ նետվելու բան չե, կըսեն։ Բայց ասոնց մեջ ալ չպիտի կընամ խարիսխ նետել, վորովհետև պիտի կարդամ լրագրի մը մեջ ուրիշ գիտություն մ՚որ ասոնցմե առաջ ուսանիլ հարկ ե ազգասերի մը։ Վերջապես մինչև վոր գերեզման մտնեմ, այս ծանուցումներեն չը պիտի կընամ պըրծիլ։ Ի՞նչ ընեմ, Պ. Ժուրտեն։

18 Օգոստոս

Ուսումնական խորհուրդն կը շարունակե յուր ջանքերն կեդրոնական վարժարանի բացման համար։ Ազգ. վարչությունն ևս յուր կողմեն խոսք և խորհուրդ չխնայեր Ուսումնական խորհըր-

դը ջանքերն պսակելու համար։ Տնտեսական խորհուրդն Ազգ. ժողովեն քվեարկված գումարն և Ղալաթիո Կալվածոց Հոգաբարձության ամսե ամիս 25 ոսկի վճարել սկսած ըլեն ազգն պիտի ունենա յուր Կեդրոնական վարժարանն, որուն խոսքն ամեն որ կը բացվի տասն տարիներե ի վեր։

19 Ոգոստոս

Իրենց խոսակցությանը մեջ «ինքզինքս գովելու համար չէ որ կըսեմ» ըսողներն են, որ ամենեն ավելի կը գովեն իրենք զիրենք։

20 Ոգոստոս

Կրոնական ժողովն արտաքո կարգի նիստ ըրավ որոշելու համար՝ թե յուր անօրինությանց վո՞ր մասն լրագրաց հաղորդվիլ պետք է։

21 Ոգոստոս

Տիրայր[188] Արեվելքի մեջ դամբանական մը հրատարակելով համեստաբար կը հայտնե, թե Արեվելքի մեջ համեստաբար հուզված խնդիրն այսօր պաշտոնական բարձր տեղեր յելած է, թե Ընդհ. ժողովն վիճակավոր առաջնորդաց ընտրության խնդրովն զբաղիլ սկսած է. իսկ Վանորեյից խորհուրդն ալ յուր ծրագիրն կեդրոնական վարչության մատուցած է, թե պարագաներն ոչ միայն մխիթարական են յեղեր, այլև պարտք կը դընեն յեղեր, որ յուր խորհրդածություններն հառաջ բերե, գոնե միտքերը լուսավորելու։

Այս դամբանականեն հետո հրատարակված է Արեվելքի մեջ «Ողապարիկներու ուղղությունն» խորագրով գիտական հոդված մը։

22 Ոգոստոս

Կրոնական ժողովն Հանձնաժողով մը կընտրե յեկեղեցականաց նյութական վիճակին բարվոքման պետք յեղած միջոցներն գտնելու պաշտոնով։

Յեկեղեցականաց բարոյական վիճակին բարվոքման մասին խորհելու պաշտոնով Հանձնաժողովն դեռ ընտրված չէ։

23 Ոգոստոս

Հետևյալ ծանուցումն կը կարդանք լրագրաց մեջ.
Քննադատություն Նուպարյան[189] թարգմանության

Վիքտոր Հյուկոյի Նոտր-Տամին
Գրեց Նորայր Ն. Բյուզանդացի[190]
Գինն 100 բարա արծաթ։

Տնտեսագիտությունն կարգիլե մեզ գնել ասանկ գրքեր, որքան ալ աժան ըլլան անոնք։

Տասնվեց տարի առաջ ֆրանսերենի մեջ նվազ հմտություն ունեցողն այսօր կրնա զայն կատարելապես ուսած ըլլալ։

Պ. Նորայր իրավունք չունի տասն և հինգ տարի յետ յերթալ Պ. Նուպարյանի այս ավուր կարողությունն քննելու համար։

Պ. Նուպարյանի հրատարակելի բառարանն ինքնին կը կործանե յեթե սխալներ պարունակե։ Սպասենք ուրեմն և չաճապարենք սպաննել, ինչ որ ծնած չէ տակավին։

24 Ոգոստոս

Վենետիկո վաղեմի աշակերտներեն Ա. Ա. մ'որ Արեվելքի մեջ գրադատելու պաշտոն ստանձնած է, գրադատական մը կը հրատարակե Արեվելքի մեջ։ Այս հոդվածին նպատակն է աղաչել յերիտասարդության, որ Պ. Նորայրին ձեռք կարկառե և յուր ոժանդակությունն զլանա Պ. Նուպարյանեն։

Ասանկ քննադատություն մ'առաջին անգամն է, որ կը կարդանք։ Աստված յերկրորդեն պահպանե։

25 Ոգոստոս

Դատաստանական խորհուրդն[191] քանի մը ժամանակե ի վեր չկրնար կանոնավոր նիստ ընել, մինչդեռ կանոնավոր կնաթողություններ և երիկ կնկան կռիվներ ամեն որ տեղի կունենան։

26 Ոգոստոս

Յեկեղեցականաց բարոյական և նյութական վիճակն բարվոքելու պաշտոնով Հանձնաժողով մը կարգվելով՝ Պատրիարքարան հրավիրվեցավ։

27 Օգոստոս

Հաճնո մէջ բանի ամուսնություն մը կատարված է— յեղեր—։
Կրոնական ժողովը սկսած է այս խնդրով զբաղիլ։

28 Օգոստոս

Զրույց կը պտտի, թէ Արևելքի խմբագրությունն Հաճնո մէջ կատարված բանի ամուսնության պատճառավ մասնավոր թղթակից մը պիտի ղրկէ հոն, այս դեպքին պարագաները մօտէն քննելու և Արևելքին տեղեկագրելու համար։
Կըսվի նաև, թէ Արևելք մօտերս պիտի սկսի հուզել Բերայի հրկիզելոց խնդիրն։

29 Օգոստոս

Արևելքի մէջ Եկեղեցական զեղծում մը խորագրով ուշադրության արժանի հոդված մը հրատարակվեցավ։
Կը հուսամք, թէ գեր. տապանաբանք կը կարդան զայն և տախտակե սնտուկներուն վրա չեն սպառեր իրենց պերճախոսությունը։

30 Օգոստոս

Յերուսաղեմի պարտուց բարձման խնդիրն կը պատրաստվի ներկայանալ Ազգ. ժողովույն, բայց համարձակություն կը պակսի իրեն միս մինակ ներկայանալու համար։ Ինչպես կերևի, խնդիրն ամոթխած է և կամչնա ինք իր գլխուն Ընդհ. ժողովո առջև յելնելու. քիչ ամչցող ազգայնո մը հանձնելու յե զայն Ազգ. ժողովո ներկայացնելու պաշտոնն։

31 Օգոստոս

Այս ամսույն մէջ ազգն վոչինչ ըրավ նշանակության արժանի։ Բայց մ'իսկ չառավ դեպի հառաջ, քանի մը քայլ միայն առավ դեպի յետ, և աս ալ մխիթարական յերևույթ մ'է մեր մէջ։

1 Սեպտեմբեր

Ազգ. ժողովո յերեկվան նստին ատենական գործողության մասին մէջ, Պ. Ս. Փափազյան[192]) դիտել տվավ դիտել ուզող յերեսփոխանց, թե Մայր-Դիվանի կամ, յեթե չեք բարկանար, Ալջիկ-Դիվանի կողմեն առ Պ. Հ. Մերենմգուլի[193]) ուղղյալ գըրույն հետևյալ տողերն. «Ձեր հրաժարին առիթ տվող պատճառներն բարձված պետք է համարվին այն նոր յեռանդին ու խոհականության շնորհիվ, վոր կը տիրե այժմ ժողովույն մէջ» ժողովույն արժանապատվությունն կը վիրավորեն։
Յերեսփոխանական աթոռակներեն բողոքո ձայներ բարձրացուցին այս դիտողության դեմ, պաշտպանելով դիվանի գիրն և ընդունելով, թե յերբեմն Ազգ. ժողովո մէջ տիրած հին յեռանդն ու անխոհականությունն պատճառ տված եյին Պ. Հ. Մերենմգուլի հրաժեշտին։ Այս բողոքո ձայնից դեմ բաղխեցան ուրիշ բողոքներ։ Բողոքո պատերազմն սաստկացավ—վորքան քաջ ենք, յերբ պատերազմինք խոսքով— անկարգությունն, շփոթությունն տիրեց շնորհիվ այն նոր յեռանդին ու խոհականության, վոր կը տիրեն այժմ ժողովույն մէջ, բարեկարգությունն խանգարեցավ, յերեսփոխանք ցրվեցան և ատյանը փակվեցավ շնորհիվ այն նոր յեռանդին ու խոհականության, վոր կը տիրե այժմ ժողովույն մէջ։
Տասն վայրկենի դադարեն յետքը ժողովն վերստին բացվեցավ։ Պ. Հ. Մերենմգուլի կերպով մը հասկցուց, թե նորեն պատրաստ եր հրաժարիլ՝ յեթե Ազգ. ժողովն խնդրո նյութ ընե Մայր Դիվանի գրույն վերոհիշյալ տողերն, թե ինք հրաժարած եր միայն այն պատճառներու համար, վորք այժմ բարձված են բարեբախտաբար։
Յերեսփոխանական աթոռակներ կամ յերեսփոխանիկներ միաձայն հայտնեցին, թե Մայր-Դիվանի գրույն հիշյալ տողերն անզոր եյին վիրավորելու Ազգ. ժողովո արժանապատվությունն —վոր ինքնին վերք մ'է արդեն—թե հին յեռանդն ու անխոհականությունն, վոր առիթ տված եյին յերեսփոխանի մը հրաժեշտին, Ազգ. ժողովո փառք, պատիվ ու պարծանք կը բերեյին, թե Պ. Ս. Փափազյանի դիտողությունն իբր չեղյալ նկատվելով, հարկ եր փակել սույն փակագիծն։

Յեվ տեսավ ատենապետն, վոր բարի յե և փակեց։

Արդարև մեծ խոհականություն և նոր յեռանդ…

Այսքան խոհականություն, այսքան զիջում ցույց տվող ժողովը մը բարձրացումն դժվար կը թվի մեզ, յեթե վոչ անհնար։

Կը շնորհավորենք Պ. Հ. Մերեեմզուլեն, վոր յուր հրաժարականն, վորուն պատճառն ծանոթ է ամենուս, հետս կոչելու համար հաջողեցավ նվաստացնել Ազգ. ժողովը ճիշտ այն պահուն, հորում խոհականություն յեվ նոր յեռանդ կը տիրեն ժողովը մեջ։

* * *

Հրազդան[194]*)* Ռովան կյանէր *վերնագրով հոդված մը կը հրատարակե այսոր* Արեվելքի *մեջ և Պ. Նորայրի և նորա* Տիկնոջ *կյանքը կը նկարագրե։*

Հոդվածին վերևն կրնար Պ. Նորայրի *կյանքը դնել։* Ռովան կյանէրին *տեղ,* Գիշերվան կյանէ *ալ կրնար դնել։*

Հոդվածն վիպասանական ձևով կսկսի. «Հունիսի վերջին օրերն եյին 1879 տարվո, յերբ տեսանք Պ. Նորայրի Բառգրքին առաջին թերթը։ Հաշվեցինք այդ օրը, թե յերկու տարիներ հազիվ կը բավեյին ավարտելու համար Բառգրքին ամբողջ տպագրությունն»։

Իմ ճաշակիս համաձայն լինելու համար՝ սույն հոդվածն հարկ եր սկսիլ այսպես.

1879 տարվո հունիսն մերձ եր յուր վախճանին։

Արևն տակավ տակավ ծալլելով յուր անզոր ճառագայթներն, անբեծ կույսի մը նվաղյալ դեմքն կը պատկերեր. և հրաժեշտ տալով յուր աթոռույն՝ մեղմիկ կը սահեր կիջներ ամպածրար լեռանց յետևեն յուր ապարանքն մտնելու և հանգչելու համար անդ։ Յուր փոխանորդն, լուսինն կըսեմ, ինչպես ամեն փոխանորդներ, յուր գլխավորին աթոռն հափշտակելու համար կսկսեր ինքզինքն ցույց տալ, սակայն աստանդական ամպեր մերթ ընդ մերթ կը նսեմացնեյին լուսնին յերեսն և թույլ չեյին տար, վոր կարենար լուսով ճաճանչել ծովն։ Խոր լռություն մը կը տիրեր, և այս խոր լռության մեջ եր, վոր տեսանք Պ. Նորայրի Գաղղիերեն—Հայերեն Բառագրքին առաջին թերթն, վարդի թերթն,

վոր շուրջ կը սփռեր և կը ծավալեր յուր քաղցր բույրն և…— ի՞նչ վնաս ունի—և… թույրն։

«Դեռ աչքերուս առաջ պատկերացած կը տեսնեմ, կը շարունակե Պ. Հրազդան, Միլվուայի Անկումն տերեվոցի *հիվանդ յերիտասարդը։ Դեռ ականջիս կը հնչե— ականջի հնչելն պաղեն հառաջ կուգա— կոմսուհվո մը մելամաղձիկ շեշտը* Բովերո նեովլինե, *հեք յերիտասարդ ըսելով»։*

Հե՜ք ականջներ…

«Այն ատեն դեռ տղա եյինք…»

— Ա՞յն ատեն ալ դեռ տղա եյիք… բայց յե՞րբ պիտի մեծնաք դուք—

«Անծանոթ եր մեզ մարդկային սիրտն. Ինչպես կրնայինք վորոշել հոգվո վիշտերն մարմնո ցավերեն»։

Կերևի թե Պ. Հրազդան տրամաբանորության *մեջ քաջ չէ։ Բայց մենք կը հասկնանք. կոմսուհին ալ Բառգիրք մը հրատարակելու յերկունք ունեցեր է։*

«Հեղինակներ… գոնե չեն ըլլար քիչ փառքով. իրենց սրտերուն մեջ կը սնուցանեն փառասիրության մեծագույնը։ Անմահ լինել, այն է իրենց սրտի գեղձումն։ Ինչու համար ըլլանք այնչափ անգութ, վոր խռովենք գիրենք այդ անուշ յերազներու մեջ, թող մնան պահ մը կենաց դառնությունները, թող արբենան պահ մը հաշիշով և յերազեն»։

Համամիտ չեմ Պ. Հրազդանին։

«Շատ անգամ ներելի յե մեզ, փորձառության ոգնությամբ ճշտել թվաբանական հաշվով, թե ուր կրոնչական են, ուր անմահ։ Այդ հաշիվներուն հենած կրնանք հավատալ թե դարերը— գեթ շատ յերկար ատեն—իրարու պիտի փոխանցեն Նորայր անունը իբր այն սյուներեն մին, վորոց վրա անքույթ և ապահով պիտի հանգչի հայ լեզուն և յուր հետ հայ անունը»։

Ահա նոր Պետրոս մը[195]*), նոր քար մը, նոր վեմ մ’որու վրա հաստատել կը փափաքի Հրազդան հայ լեզվին հիմերն, վոր ավազի վրա դրված չեն արդեն, և յես չեմ ուզեր բնավ հավատալ, վոր դարերն իրարու փոխանցեն Նորայր անունն, ըստ վո-*

բում Հրազդանի հավատքն ունենալու համար հարկ է փափաքիլ, վոր հայ գրականությունն շարունակե արդի վողբալի վիճակն։

«Ո՞վ ի մենջ արդյոք յերախտապարտ չպիտի մնա այս համեստ անվան»։

Խելար տակավին պետք չզգաց յերախտապարտ մնալու այս համեստ անվան, զոր կը հարգե։

Յերախտագիտությունն յերախտիք վայելելեն յետքը կուգա, և այն որեն յորում յուր Բառարանեն բարիք տեսնելու բախտն պիտի ունենա, յերախտագիտական զգացումներն պիտի փութա հայտնել, այսինքն այն որեն, յորում Պ. Նորայրի բառարանին մեջ փնտռված բառին համանիշ հայերեն բառն գըտնելու պիտի արժանանա։

«Վո՞րքան բառեր, վո՞րքան բացատրություն, վորոնց գոյությունն չեյինք գիտեր, վորոնեց Նորայր և գյուտ մ'ըրավ մեր լեզվին համար»։

Պ. Հրազդանի կը մնա ոգուտ քաղել Նորայրի այնքան բացատրություններեն և այնքան բառերեն, զորս կը փափաքեյինք հրատարակված տեսնել Արևելքի մեջ... և չենք կարծեր, վոր այնքան բառերն և այնքան բացատրություններն, յեթե կան իրոք, Արևելքի մեկ սյունակն կարենան գրավել։

Պ. Հրազդան կը վերջացնե յուր հոդվածն ըսելով.

«Նորայր այն անունն է, վորուն յերախտապարտ պարտինք մնալ»։

Այո, բայց Ազգային ժողովո մեջ հարցաքննում ընելու յետ, և ժողովույն վորոշմամբն պաշտոնապես յերախտապարտ մնալ պարտք է։

2 Սեպտեմբեր

Կըսեն թե ներեն կը լսենք՝ թե Ռուսիո կառավարությունն վորոշած է կաթողիկոսական նոր ընտրություն կատարել տալ առաջիկա ապրիլ ամսո մեջ։

Կը հուսանք, թե Ընդհ. ժողովը ուր նոր յեռանդ յեվ խանդավառություն կը տիրեն, պիտի պատրաստվի խոհական ընթացք մ'ունենալ կաթողիկոսական յերկրորդ ընտրության մեջ։

3 Սեպտեմբեր

Իսկյուտար Պաղլար պաշըի[196]) գերեզմանատան հայկական սահմանին շրջափակման ծախուց համար կարգյալ հանգանակիչ մասնաժողովն այս շաբթու կսկսի հանգանակության գործը։ Կը հուսամք, թե քանի մ'ավուրց մեջ լրանալով այս գործը, շրջափակման գործը կսկսի։ Կը լսենք՝ թե Հույնք արդեն սկսած են հանգանակել իրենց սահմանը շրջափակելու համար, և Հրեայք ինչպես կանխավ գրած եմք, իրենց ազգային սնտուկեն պիտի հոգան իրենց սահմանին պետք յեղած ծախքը։

(Արևելք)

Արդարև ծանր է առաջարկել Հունաց և Հրեից, վոր մեր սահմանին շրջափակման ծախքն ալ հոգան, բայց կրնանք աղաչել անոնց, վոր իրենց սահմաններն այնպիսի կերպով մը շըրջափակեն, վոր իրենց սահմանաց շրջափակմամբն մերինն ալ շրջափակվի։ Մեր սույն դիտողությունն Տնտեսական խորհրդո ուշադրությանը կը հանձնենք։

4 Սեպտեմբեր

Ավետարանիչ Գ. Ն. Շիշմանյան ստորագրությամբ և Պատասխան վերնագրով ինն տողերե բաղկացյալ ծանուցում մը կը կարդանք լրագրաց մեջ։

Այս պատասխանեն կը հասկցվի, թե բողոքականաց կողմե Հայտարար ճշմարտության անունով տետրակ մը հրատարակվեր է ավետարանիչ Պ. Շիշմանյանի դեմ։ Ավետարանիչն փութացեր է անմիջապես պատասխան մը գրել այդ տետրակին, բայց մաարիֆին կողմանե սխալ հասկցողությամբ արգիլվեր է ավետարանիչին պատասխանին հրատարակությունը։ Մեծապատիվ ավետարանիչն կը ծանուցանե այժմ, թե այդ պատասխանին տըպագրության հրամանը ընդունվեր է, թե քիչ որեն ի լույս պիտի ընծայե զայն, թե մեն մի որինակն վաթսուն բարայի պիտի ծախե՝ փոստայի ծախքն յուր վրա ըլլալու պայմանավ։ Այս Ավետարանիչն Կետիկ բաշա[197]) կը բնակի։

Մեծապատիվ ավետարանիչ և յուր ընդդիմախոսն ազատ են ճշմարտությունը կոտրակել, համարիչ ճշմարտության և հայտարար ստության խորագրով տետրակներ հրատարակել և արքա-

յության ճանբան հարթել հավատացելոց առջև։ Միայն թե Տիշմանյան ավետարանիչին Կեսիկ բաշա բնակիլն և յուր ավետարանն վաթսուն բարայի վաճառելն ավետարանչական պաշտոնին փափկությանը վնաս կը բերեն քիչ մը։ Մյուս ավետարանիչները վոչ Կեսիկ բաշա կը բնակեյին, և վոչ ալ վաթսուն բարայի կը վաճառեյին իրենց ավետարանն։ Կերևա, վոր Տիշմանյան ավետարանիչն յուր ավետարանին հասույթովը ապրելու հարկադըրված է, և այս վիճակին մեջ մեծապատիվ ավետարանիչ եֆենտին պիտի սորվի, յուր ավետարանն ամենուն հաճելի ընելու աշխատիլ և՛ հետևապես, ավետարանիչե մը պահանջված անաչառութենե շեղիլ յերբեմն։

Սպասելով այս ավետարանին հրատարակության, հաջողություն և կարողություն կը մաղթենք մեծապատիվ ավետարանչին և յուր ընթերցողաց։

5 Սեպտեմբեր

Արեվելքի տնորենությունն պատիվ ունի ծանուցանել, թե պատրաստ է ամենայն դյուրություն ընծայել և փաստաբաններ կարգել որբորդ Նարկիլդին ծնողաց համար, վորպեսզի կարենան իրենց դատն արդարությամբ առաջ տանիլ։

Արեվելք յուր պաշտոնին սահմանեն դուրս կելնե այս ծանուցմամբըն։ Նմանորինակ վեճեր ամեն որ, ամեն տեղ կը պատահին, և յեթե Արեվելք ամեն դատի համար փաստաբան կարգելու պարտականություն ստանձնե՝ փաստաբանության դրասենյակ մ՚ալ բանալու կստիպվի։ Շատ լավ է յեթե Արեվելք կարենա Արեվմտյան կողմը չգտնվի ազգային խնդրոց մեջ։

Մենք չենք կարծեր, վոր Արեվելք որբորդ կամ տիկին Նարկիլդի խնդիրն պաշտպանելով այնչափ մեծ ժողովրդականություն վաստկի, վորքան կարծեց Արեվելքի պատվարժան տնորենությունն յուր վերջընթեր նիստին մեջ։

Բերայի հրկիզելոց խնդրույն պաշտպանությանը մեջ ավելի ժողովրդականություն վաստկելու հույս կա։ Յեվ զարմանալի յե, վոր Արեվելքի պատվարժան տնորենությունն այս խնդրույն համար փաստաբան կարգած չե ցարդ։

* * *

Հույս կա, թե Յերուսաղեմի պարտուց և Նպաստ հանգանակության խնդիրն վերջնականապես պիտի կարգադրվի մոտերս։

6 Սեպտեմբեր

Կարևոր լուր մը.

Որբորդ Նարկիլդին չուզած ռամիկ և տգետ անձին անունն Հայրապետ է յեղեր, վորու հետ զինքն բռնի ամուսնացուցած են տեղվույն ագաներն ու յեկեղեցականներն։

Յեվ Արեվելք յուր բոլոր ճիգն պիտի սպառե, վոր որբորդ Նարկիլդն այդ տգետ և ռամիկ անձին, այդ Հայրապետին կինը չըլլա։

Ազգասիրությունն, ազգային շահն և քիչ մ՚ալ բանաստեղծությունն են, վոր ուժով կը հրեն Արեվելքն այս սիրո խնդրույն մեջ։

7 Սեպտեմբեր

Արեվելքն որբորդ Նարկիլդով կզբաղի։ Զարաբաստիկ որբորդ Նարկիլդին հայրը Գրդյաշարյան աղա յե յեղեր։

Եհ, Պ. Գրդյաշարյան, մխիթարվե. աղջիկդ լրագրաց նյութ յեղավ։ Արդարությունն յերևան բերելու համար Արեվելք չպիտի ընկրկի և վոչ մեկ զոհողության առջև։ Փառավոր ապագա մը կը սպասե ձեր դուստր չարաբաստիկ որբորդ Նարկիլդին, և այդ ապագան կը պատրաստվի Արեվելքի տնորենության կողմեն։

8 Սեպտեմբեր

Հույս կա, թե Յերուսաղեմի պարտուց խնդիրն յուր լուծումըն պիտի ստանա մոտերս։

9 Սեպտեմբեր

Արեվելքի տնորենությունն այս ավուր նիստին մեջ կորոշե վաղվան թվույն մեջ ծանուցանել բանասեր ընթերցողաց, թե «Որբորդ Նարկիլդ շատ գեղեցիկ աղջիկ մ՚է յեղեր։ Անձ մը, վոր տեսած է (յեղեր) զնա և այժմ Կ. Պոլիս կը գտնվի, կը վկայե

(յեղեր), թե Կ. Պոլսո մեջ իսկ դժվար է այդ Կիլիկեցի գեղուհվոյն հավասարը գտնել»։

Այս տողերն անգամ մ'ևս կապացուցանեն, թե որևորդ Նարկիզն իրավունք ունի, վորովհետև իրավունքը... գեղեցկադունինն է միշտ։ Նույն տողերն սակայն անգամ մ'ևս ցույց կուտան նաև, թե Արեվելքի տնօրենությունը խմբագրական ասպարեզեն տարբեր ասպարեզի մը մեջ ինկած է հանդեսս։

10 Սեպտեմբեր

Յերեկ կատարվեցավ Սամաթիո[198]) ազգային վարժարանաց պարգևաբաշխության հանդեսն։

«Վաթսունի չափ քննիչք հաստատած են, թե անցելույն հետ բաղդատմամբ հույժ հառաջադեմ վիճակ մ'ունեցեր են աշակերտք այս տարի»։

Վաթսունի չափ քննչաց կողմե տրված վկայության վրա կասկածելու պատճառ մը չունինք։ Տեսնված չէ քննիչ մը, վոր հարցաքննության մը ներկա գտնվի, հոն աղեկ մը ուտե, խմե և հետո քննչաց տետրակին մեջ արձանագրե, թե անցելույն հետ բաղդատմամբ հույժ հետամնաց վիճակ մը ունին աշակերտք։ Յեվ նախ անքաղաքավարություն է ասանկ վկայություն մը տալ, յերկրորդ՝ այդ քննիչն և վոչ մեկ դպրոցե մը կը հրավիրվի հաջորդ տարին։

Քսանըհինգ տարիե ի վեր շարունակ կըսենք. «Անցելույն հետ բաղդատմամբ մեր վարժարաններն հսկայաքայլ հառաջդիմած են»։

Չեմ գիտեր, թե անցելույն մեջ ինչ կուսանեյին աշակերտք, արդյոք փայտ կտրելու դասագիրք կը կարդային, թե ձկնորսություն կը սորվեյին։

Քիչ մը անկեղծ ըլլանք, Պոլսեցի յեղբարք իմ ի շողոքորթություն, և խոստովանինք, թե Պոլսո Թաղային վարժարաններն, քիչ բացառությամբ, վողբալի վիճակի մեջ կը գտնվին տակավին. և գայս խոստովանելեն յետքը, աշխատինք զանոնք բարեկարգ դրից բարձրացնել։ Անցյալն, վոր վոչ լեզու ունի և վոչ բերան, բասրելով, պարսավելով ինչ կը շահինք...

11 Սեպտեմբեր

Տարօրինակ յերազներ բավական խնդացուցին զիս յերեկ գիշեր։

Տեմոսթեն անունով կառավարի մը կառքով ճաշարան մը գնացի և տեսակցություն մ'ունեցա խոհարարի մը հետ, վորուն անունն եր Սոկրատ։ Յեվ այս կառավարն ու այն խոհարարն բնավ չեյին կարմրեր ունենալնուն համար անուններ՝ վոր չեյին համապատասխաներ իրենց պաշտոնին, և այնպիսի վարք մ'ունեյին, վոր իրենք զիրենք Տեմոսթենեսին[199]) ու Սոկրատին[200]) արժանի հաջորդներ կը կարծեյին։

Զարմանալի յեն մարդիկ յերազներու մեջ...

Անունն Սոկրատ, արվեստը խոհարար...

Նմանորինակ պարագայի մեջ անունս կը փոխեյի յես անմիջապես։

Բայց միթե ամեն մարդ ինձի պես կը խորհի. միթե դուք ալ չլսեցիք՝ թե քանի մը հարուստներ, վոր հազիվ կրնան անսըխալ խոսիլ իրենց մայրենի լեզուն, ազգային գիշերօթիկ վարժարանի մ'ուսմանց ծրագիր պատրաստելու վրա յեն։

Յեվ այս հարուստներն ուխտ ըրած են իրենց մեջ չընդունիլ դասատուներ։

Յերկաթե, ափիոնե, բուրդե, լեղակե, վոսկորե և կտավե շինված ուսմանց ծրագիրներով չեն կարող իրենց ազգասիրության հագուրդ տալ այդ հարուստներն, վոր այնքան յերկար ատենե ի վեր արգելքներ կը հարուցանեն Կեդրոնական վարժարանի բացման դեմ։

12 Սեպտեմբեր

Կին մ'յուր նորածին տղուն համար ստնտու մը կուզե յուր ամուսինեն։ Ամուսինն կը հակառակի։ Կինն կը սրդողի և այսոր հեռագիր մը կը քաշե Արեվելքի Տնօրենության սա իմաստով.

«Ամուսինս ագահ և անկիրթ է, չուզեր ստնտու մը բռնել յուր նորածին տղուն համար, ի սեր աստուծո, խնդրույն միջամտեցեք և փաստաբան մը կարգեցեք, վոր արդարությունն յերևան յելնե։ Հեռագիր մ'ալ Պատրիարքարան քաշված ե։ Խնդրույն ընդհանուր տեսակետով կրնա նայվիլ, յեթե ուզեք, ըստ վորում

չկա խնդիր մը, վորուն յուր ուզած տեսակետեն չկարենա նայիլ վոք։ Մանրամասնությունք թղթատարով»։

13 Սեպտեմբեր

Բողոքականաց կողմե հրատարակված «Հայտարար ճշմարտության» դեմ Մեծապատիվ ավետարանիչ Գ. Ն. Շիշմանյան եֆենտիին պատասխանն, վոր քիչ որեն ի լույս պիտի ընծայվեր, կը շարունակի քիչ որեն ի լույս ընծայվելու մեջ։

14 Սեպտեմբեր

Բանաստեղծք վոմանք, յերբ կորուսնեն իրենց կինն, զոր իրենց հոգվույն հատորն կը կոչեյին և վորուն զոհել կը կարծվեյին նույնիսկ իրենց կյանքն, անմիջապես հնգավանկ վոտանավոր մը կամ տաղ մը կամ քերթված մը կամ դյուցազներգություն մը կը հրատարակեն և կը վազեն ուրիշ կնկան մը հետ կարգվելու, այսինքն հոգվո յերկրորդ հատոր մը գնելու։

Յերանի բանաստեղծից վոմանց, վոր հնգոտն տաղով մը գիտեն սփոփանք և մխիթարություն գտնել իրենց ցավոց։

Այս բանաստեղծից վոմանց հոգին վորքան հատորներ ունի։ Ասոնց սերն վորքան շուտ կը ծնի և վորքան վաղ կը մեռնի։ Մինթե բանաստեղծի մը սերն յուր առարկային հող դառնալն տեսնելուն պես մոխիր դառնալու յե...

Ըստ այսց բանաստեղծից վոմանց պոետ մը կրնա քանի կնկան հետ ամուսնանալ և ամենուն վրա մեյմեկ տաղ գրելով զանոնք սիրած ըլլալ, վորպես Պողոս զՎիրգինիա[201])։

Այս տեսակ բանաստեղծությունն ըստ իս ուրիշ բան չե, յեթե վոչ հանգավոր վայրենություն։

15 Սեպտեմբեր

Պ. Սուրենյան անցյալ տարի Մնակյան ժառանգության և Բերայի հրկիզելոց հաշվույն վերաբերյալ հարցումներ ըրած եր Ազգ. ժողովո մեջ և Բարիզ ուղեվորված եր իրավագիտություն ուսանելու։ Պ. Սուրենյան այժմ դարձած ըլլալով Բարիզեն, յերեկվան ժողովույն մեջ գրավոր կերպով խնդրեց, վոր այդ հարցմանց պատասխաններուն հապաղման պատճառն հայտներ Ազգ. Վարչությունն։

Այս խնդիրն Վարչության հղվեցավ։

Պ. Սուրենյան կրնա յուր դասերն շարունակել ի Բարիզ և գալ տարի նորեն հարցնել այդ պատասխաններուն հապաղման պատճառն։

16 Սեպտեմբեր

Յերուսաղեմի պարտուց խնդիրն միշտ կը պատրաստվի Ազգ. ժողովո ներկայանալու պատիվն ունենալու։

17 Սեպտեմբեր

Կեդրոնական վարժարանի[202]) բացման համար ջանքերն կը բազմապատկվին։

Կեդրոնական վարժարանի բացումն շատ դժվարության կը հանդիպի։ Կարելի չե՞ արդյոք մեկդի թողուլ Կեդրոնական վարժարանն և գոնե մինակ կեդրոնական բան մ՚ունենալ Կ. Պոլսո մեջ։

18 Սեպտեմբեր

Կ. Պոլսո մեջ կեդրոնական անտարբերություն կամ կեդրոնական անմիաբանություն անվանք մասնաժողով մը պիտի կազմվի մոտերս, և այդ մասնաժողովին պիտի հանձնվի ազգային կենսական խնդրոց լուծումն։

Այս մասնաժողովն, ինչպես հայտնի յե, վոչ պաշտոնապես կը գործեր ցարդ։

19 Սեպտեմբեր

Արժ. Մաղաքիա[203]) վարդապետ Որմանյան գալ տարվան որացույցին մեջ պիտի հրատարակե նաև ցուցակ մը վարդապետաց Հայաստանյայց սուրբ յեկեղեցվո։

Կղերական Ֆաբուլա մ՚որ ինչպես կը ծանուցանե Նորա արժանապատիվ յերկասիրողն, յուր պարզության մեջ շատ ոգտակար արդյունքներ կը պտղաբերե, բայց նորին արժանապատվությունն չհայտներ, թե այդ ցուցակին մեջ յուրաքանչյուր վարդապետին արժեքն ալ պիտի դրվի՞, թե վոչ։

20 Սեպտեմբեր

Ոդը գեշ է։
Քաղաքական ժողովը չգումարվեցավ։

21 Սեպտեմբեր

Ոդն շատ աղեկ է։
Քաղաքական ժողովը նիստ չըրավ։

* * *

Հայոց ազգին համար մեծ և նշանավոր օր մ'է այսօր։

Ո՛չ թե անոր համար, որ Քաղ. ժողով չգումարվեցավ, այլ անոր համար, որ ազգային յերեսփոխանաց մեկ մասն այսօր «Բեմական Հառաջդիմական միություն» անունով այսինքն յերկու ածականով և մեկ գոյականով կուսակցություն մը կազմեց, կուսակցություն մ'որուն նպատակն է հառաջ, հառաջ դիմել... բեմին վրա։

Սիրելի յեղբայրք իմ, ժամանակ է ալ հրաժարելու այդ ունայն և սին ցուցամոլութենեն, և այդ ուռուցիկ և թռուցիկ ածականներեն, վորովհետև չեք կրնար գտնել հայ մ'որ բեմական Հառաջդիմական միության մը չգոյության մեջ փնտռե Ազգ. ժողովո անբեմական և անհառաջդիմական անմիության պատճառն։

22 Սեպտեմբեր

Յուրաքանչյուր լրագիր իր ուզած կերպով լուրեր կը հրատարակե կաթողիկոսական նոր ընտրության նկատմամբ։ Ընտրության որն պիտի կրնանք իմանալ, թե ո՞վ է ընտրվածն։

23 Սեպտեմբեր

Տփղիսցիք կաթողիկոսության մասին Խրիմյանի[204]) կուսակից չեն «յերեր», և Մուրատյան[205]) սրբազանին անունն չեն տար «յերեր», այլ դրսեն մի անհայտ յեվ չխոսված անձ մը կուզեն «յերեր», վոր կաթողիկոս լինի։

(Արեւելք)

24 Սեպտեմբեր

Կրոնական ժողովը վորոշեց շնորհակալության նամակ գրել առ Տ. Մկրտիչ կաթողիկոս[206])։

— Ինչո՞ւ համար։

Հաճո ամուսնության խնդրույն համար Պատրիարքարանեն քաշված հեռագրին պատասխանած ըլլալուն համար։

25 Սեպտեմբեր

Արժ. Հ. Սերովբե վարդապետ Տերվիշյան [207]), վորո լեզվաբանական հոդվածներն ծանոթ են հայ բանասիրաց, հրատարակեց Հնդեվրոպական նախալեզու անուն յերկասիրությունն։

Կըսվի թե մեծ խնամոք թարգմանված է այս գրքույկն։

26 Սեպտեմբեր

Պանդուխտ քահանա մը յերկու շաբաթ ապաշխարանաց յենթարկվեր է, մարդասպան հայ մը հանդիխիվ թաղած լինելուն համար։

Յեթե դամբանական մ'ալ խոսեր, քանի՞ տարվան ապաշխարանաց պիտի յենթարկվեր արդյոք...

27 Սեպտեմբեր

Պ. Մեսրոպ Նուպարյան Սխալներու խնդիր վերնագրով հոդված մը կը հրատարակե այսօր ի պատասխանի Պ. Նորայրի քննադատության։

Պ. Նուպարյան Պ. Նորայրի սխալներեն ծաղկաքաղ մ'ըրած է, զոր կը խոստանա հրատարակել հատուկ տետրակով մը։

Ըստ մեզ Պ. Նուպարյանին առ յուր հակառակորդն տալիք ամենեն ազդու պատասխանն, յուր բառգրքին գոնե առաջին տետրակն հրատարակության տալն է։

28 Սեպտեմբեր

Արեւելք կը ծանուցանե, թե Սեդրակ եֆենտի Տեր Սարգըսյանց Կ. Պոլիս յեկած է[208])։

Բարի յեկար, ո՜վ Սեդրակ եֆենտի Տեր Սարգսյանց. ինչպես եք, աղեկ եք։ Սեդրակ եֆենտի Տեր Սարգսյանց, մեր բա-

ընկամն, Շանենն ի Սիբիրի հեղինակն է։ Հարաբերություն հաստատած է նաև այն մեծատանց հետ, վոր պաշտպան և նեցուկ են Արեվելքի։

29 Սեպտեմբեր

Հաճնո խնդիրը չորս մաս ունի յեղեր ըստ Արեվելքի:

Պատմական, դատական, ազգային յեվ հանրային:

Լավ ուրեմն, այս վերնագրով թող լրագիր մը հրատարակե Արեվելքի տնօրենությունն, ավելցնելով նաև քերթողական, սին-րանհարական, տնտեսական և ընասիրական մասերն, վոր կրնա-հարմարիլ Հաճնո խնդրույն։

30 Սեպտեմբեր

Ամսույս մեջ ազգն վոչինչ գործեց նշանակության արժանի։

Ցետ գնաց մեկ ու կես քառակուսի մետր:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՔ ԽԻԿԱՐԻ

Պատիւ ունեցանք կարդալու Հառաջդիմական Միութեան հայտագիրն՝ վորուն պատճէնն կը դնենք հոս։

«Ստորագրյալ յերեսփոխանքս նկատելով վոր,

Ա.— Ազգային ժողովո ժամերուն մեկ մասն անկարևոր խնդիրներու վիճաբանությանց և թյուրիմացությանց զոհվելով, ժողովույն հարգը կը նվազեցնեն, կենսական խնդիրներ յետ կը թողուն, վարչական մեքենան կը տկարացնեն և ծանր հետևանաց տեղի կուտան։

Բ.— Յերեսփոխանք Ազգ. ժողովո ներկայացյալ խնդիրներն քննելու և սերտելու ժամանակ և մեջոց չունենալով, վիճաբանությունները չափազանց կերկարին կամ վորոշումներ կը տրվին հանպատրաստից։

«Այս անտեղությանց մերովսանն դարման տանելու համար, վորոշեցինք Բեմական խումբ մը կազմել Հառաջդիմական Միություն անվամբ։

Այս միության նպատակն է ուրեմն՝ Ազգ. ժողովո յուրաքանչյուր նիստեն առաջ նախապատրաստական գումարում ընելով, որակարգի խնդիրները սերտել և զանոնք խորհրդակցության յենթարկելով համոզում գոյացնել և կարծիքներ համախմբել, զերծ համենայն կուսակցական նկատմանց (?) Հառաջդիմական Միության անհեղլի պայմանն է Ազգ. ժողովույն նիստերն արդյունավորել, հանրային կարևորություն ունեցող խնդիրները նախապատելով և զանոնք գործնական վոգով լուծելու՝ հետամտելով, համաձայն Ազգ. Սահմանադրության հիմնական սկզբանց և ներքին կանոնագրի տրամադրությանց, Հայաստանյայց յեկեղեցվո կանոնաց և տերության ընդհանուր որինաց։

«Այս միության հարիլ ուզողները պետք է վոր ստորագրեն ներկա հայտագիրն և պարտականություն ստանձնեն բացակա-չմնալ Ազգ. ժողովո նիստերեն»։

Ահա գեղեցիկ հայտագիր մը, սքանչելի հայտագիր մը, զոր այն յերեսփոխաններ միայն չպիտի ստորագրեն, վոր ժողովուրդին հարցը կոտրել կուզեն, կենսական խնդիրները յետ թողուլ կաշխատին, Ազգ. ժողովո նիստերն արդյունավորել չեն փափաքիր, Ազգ. Սահմանադրության հիմնական սկզբանց կը հակառակին, ներքին կանոնագրի տրամադրությունները չեն ընդունիր, Հայաստանյայց յեկեղեցվո կանոնաց դեմ կըմբոստանան և տերության ընդհանուր օրինաց չեն հպատակիր։

Չենք կարծեր, վոր գտնվի յերեսփոխան մ'որ վարանի յուր ստորագրությունն դնել սանկ հիանալի հայտագրի մը։ Հետևապես ամեն յերեսփոխան պիտի ստիպվի հարիլ այս միության, և այս միությամբ ուրիշ բան ըրած չպիտի ըլլանք, այլ միայն Ազգային ժողովո Հառաջդիմական Միություն *անունն տված պիտի ըլլանք։*

Յեվ ի՞նչ պիտի ըլլա այս Հառաջդիմական միությունն։

Նախապատրաստական գումարումներ պիտի ըլլան, այսինքն օր մը առաջ պիտի սկսի Ազգային ժողովո ժամերն անկարևոր խնդիրներու վիճաբանությանց և թյուրիմացությանց զոհելու, ժողովուրդին հարցը նվաղեցնելու, կենսական խնդիրներն յետ թողլու և վարչական մեքենան սկարացնելու։ Յեթե համոզում չգոյանա՝ յերկրորդապատրաստական գումարում մը պիտի ըլլա և վերջապես պիտի շարունակե յուր... պատրաստական գումարումները մինչև վոր համոզում գոյանա։ Ազգային գործերը միշտ յետ պիտի մնան, միայն թե ազգային յերեսփոխանք ազգային ժողովո մեջ ժամավաճառ ըլլալու տեղ նախապատրաստական գումարման մեջ ժամանակ պիտի անցունեն և ազգային սնտուկն պիտի ազատեն ժամավաճառության ատենագրության տպագրության ծախքեն։ Իսկ յեթե համոզում գոյանա, նույն օրն յերկու յերեսփոխաններ պիտի ընտրվին և պաշտոն պիտի տրվի անոնց հետևյալ օրն ժողովո մեջ թեր ու դեմ խոսիլ, վորպեսզի ունկնդիր ժողովուրդն լսե. և հետո միաձայն հավանությամբ որ մ'առաջ տրված վորոշումն պիտի տրվի։ Այս պարագային մեջ ալ օրվան մը կորուստ կա, վորովհետև այն խնդիրն, վոր կը լուծվի նախապատրաստական գումարման մեջ՝ կրնա յուր լուծումն ստանալ Ազգ. ժողովո մեկ նիստին մեջ. հետևապես նախապատրաստականն ավելորդ է։

Ի՞նչ է ուրեմն Հառաջդիմական Ընկերության նպատակն։

Սատանան առնե մեղքը, բայց կըսվի թե յերկաթապետական, կտավսպետական և բրդապետական[209]) միությունն ամրացնել է նպատակն։ Յեթե Հառաջդիմական Միությունն բացորոշ կերպիվ հայտներ նպատակն յուր հայտագրին մեջ, ավելի քաջություն ցույց տված կը լիներ և թերևս ավելի համակրություն վաստկեր։

Իսկ յելնել հայտագիր մը հրատարակել և անոր մեջ ըսել թե.

Ով վոր բարի յե այս թուղթն ստորագրե, *կարծենք և վոչ մեկ յերկրի մեջ նմանը չտեսնված և չտեսնվելիք հայտագրի մը հեղինակ ըլլալ է, հայտագրի մը՝ վոր բան մը չը հայտներ, և զոր անպատեհ չե ծածկագիր անվանել։*

* * *

Բարեկամ մ'որո անկեղծությանը վրա կասկածելու պատճառ մը չունինք՝ հետևյալ տողերը կը գրե մեզ Յերիզայեն[210]).

«Ձեզ հետ ունեցած մտերմությունս կը պահանջե դիտողություն մը ներկայացնել ձեզ Խիկարի *համար։ Դիտողությունս յեթե միայն իմ կարծիքովս ըլլար՝ չպիտի ընեյի. բայց վորովհետև շատերե կը լսեմ՝ օգտակար համարեցի ընել։ Այժմյան* Խիկարն *անցյալ* Թատրոններուն *և* Ծիծաղներուն *շարունակություն չհամարվիր, անոնց չափ զվարճալի հոդվածներ չպարունակեր։ Կերեվա թե, քաղցրիկ բարեկամս, այս դառն ասպարեզեն բավական սառած եք։ Յեթե հաճիք ձեր... գրիչն սրել, կը հուսամ թե ավելի բաժանորդներ պիտի ունենաք։ Քաջահույս եմ, թե սույն անկեղծ դիտողությունս ներողամտությամբ կընդունվի։*

Անկեղծ դիտողություններն միշտ կը հարգենք. ուստի մեր բարեկամն կրնա վստահ ըլլալ, թե յուր դիտողությունն գոհությամբ և սիրով ընդունված է։

Սույն դիտողությունն մենք ևս ներկայացուցած ենք մեր գրչին. մենք ևս զգացած ենք, թե Խիկար յուր ընթերցողաց ծիծաղն շարժելու տեղ ձանձրույթ կը պատճառե անոնց։ Իսկ հիմա, վոր շատերուն կողմեն ևս կը կրկնվի նույն դիտողությունն, և քանի վոր շատերուն ձայնն աստուծո ձայնն է, ըսելե թե Խիկար սկսած է զաստված ալ ձանձրացնել. ուստի հարկ անհրաժեշտ կա հայտնել և բառնալ այն պատճառն, վոր թույլ չտար Խիկարին զվարճալի հոդվածներ պարունակել։

Մարդերն և իրերն մեր ընդունած տպավորության ներքև գրելու վարժված լինելով՝ մեր գրչին կը հանձնենք մեր սիրտն, վոր կրած ազդեցության տակ կը ծիծաղի, կը տխրի կամ կը ձանձրանա։

Եր ժամանակ հորում մեր ծիծաղը կը շարժեյին այն թերությունները և զեղծումները, զորս կը նշավակեյինք։ Ուստի կը ծիծաղեյինք և մեր ընթերցողներն կը ծիծաղեյին։ Լացնելու համար, կըսե Ովրատիոս[211]), լալ պետք է, և մենք կը խնդայինք մեր ընթերցողներն խնդացնելու համար։

Իսկ այժմ ինչ վոր կը տեսնենք կամ կը լսենք տխրություն կը պատճառե մեզ. կը տխրինք, կը ձանձրանանք և մեր ընթերցողներն ալ կը ձանձրանան և հնար չէ, վոր ծիծաղին անոնք, յերբ մենք կը տխրինք։ Մինչև իսկ կը վախնանք, վոր իրաց այս վիճակն, յեթե շարունակե, հայհոյության պիտի առաջնորդե մեզ, պիտի հայհոյենք և մեր ընթերցողներն ալ պիտի սկսին հայհոյել։

Տխուր է իրաց վիճակն, սիրելի բարեկամ, կուսակցությունն, յերկաթապետությունն և բռնապետությունն յերրորդություն մը կազմած՝ կը քանդեն ազգն և ազգաշեն կը հոշոտվին։ Ազգային ժողովն շատոնց կորուսած է յուր նշանակությունն և շատերն դեռ այն կարծիքն ունին, թե Ընդհ. ժողովն յուր իրավանց սահմանին մեջ կարող է գործել ինչ վոր ազգին շահավոր կը կարծե։ Դասատվաց հալածումն կը շարունակվի, կրթությունն վերոհիշյալ առևտրական յերրորդության ձեռքն անցած է։ Վողջամիտներն կը քարկոծվին, և հիվանդամիտներն ամենուրեք սիրով և պատվով կընդունվին. և դժվար է հասկցնել՝ թե մարդ մ՚յուր ազգն սիրելու համար անպատճառ յերկաթ, ափիոն, բուրդ կամ կտավ վաճառելու պարտավոր չէ. թե դագաղի առջև հարգանք իսկ ճշմարտության առջև միշտ պատկառանք պետք է, թե դագաղ մը բարձրացնելու համար ճշմարտությունն ալ դագաղի մեջ դնելն առևտրական ազգասիրություն մ՚է, թե հարստապետությունն, վոր տասը տարիներե հետե կը տիրե ազգին մեջ, բառնալու համար ժողովրդական լրագրաց ույժ տալ պետք է, թե հարուստներեն վոմանք աղքատաց կամ ժառանգորդաց վոմանց իրավունքն կը հափշտակեն և այս մասին իրենց ուղղվելիք հարցմանց առաջքն առնելու համար Բեմական միություն կը կազմեն, համոզումներ գոյացնելու, սահմանադրական սկզբանց և

յեկեղեցվո օրինաց համաձայն մարսելու այն վոսկիներն, վորոնց հաշիվն կը խնդրվի իրենցմե, թե ամեն խաղ և նենգություն ազգասիրություն կը հռչակվի հարուստներու գործիք լրագրին մեջ[212])...

Չեմ ուզեր յերկարել և ընթերցողներս յերկնցնել. միայն կուզեմ հասկցնել, թե իրաց այս ճաթեցուցիչ վիճակն շատ հեռի յե մեր ծիծաղը շարժելե։

Այսու ամենայնիվ Խիկար ամեն ջանք պիտի դնե յուր ընթերցողներն գոհացնելու, և կը հուսա, թե պիտի շարունակե վայելել նոցա քաջալերությունը։

* * *

Դեմքը սրտին հայելին է, կըսեն։ Կը խնդրեմ ուրեմն Բեմական հառաջդիմական միության հայտագիրն ստորագրող յերեսփոխաններեն, վոր հաճին իրենց պատկերն ուղարկել մեզ...

* * *

Ազգային ժողովո ամեն ուրբաթ ավուր նիստերն հառաջիկա ուրբաթ ավուր հետաձգված են, վորովհետև հույժ հավանական է յեղեր, վոր վարչությունն նույն օրն կարենա Ազգ. ժողովո ներկայացնել Յերուսաղեմի պարտուց խնդրույն ծրագիրն։

Ազգային ժողովո նիստերն կանոնավոր կերպով չը շարունակելու համար պատճառ մ՚ալ ավելցուցինք արդեն գտնված պատճառներուն վրա։

* * *

Մեծապատիվ ավետարանիչ Գ. Ն. Շիշմանյանի պատասխանն՝ վորո վրայոք գրած եյինք մեր Սեպտ. թերթին մեջ, հրատարակված է յեղեր.

«Սույն գրքույկը, կըսե արժանապատիվ ավետարանիչն, յերեք մասերու բաժնված է. կը պարունակե նախ՝ բողոքականաց մեզի դեմ հրատարակած հայտարար ճշմարտության դեմ մեր պատասխանը. յերկրորդ՝ ս. գրոց վկայություններով ցուցված է, թե բողոքականությունը Քրիստոսի առաքյալներուն քարոզած պարզ քրիստոնեությունը չէ. յերրորդ՝ մեր (Քրիստոսի աշակեր-

տաց) ընդունած և քարոզած քրիստոնեական վարդապետութիւններն, գին վաթսուն բարա, դուրս ղրկվելու բոստայի ծախքը մեր վրա ըլլալով։

Պարոն ավետարանիչն այս անգամ ինքզինքն Քրիստոսի աշակերտաց կարգը կանցունե, և յուր ընդունած և քարոզած, կամ չընդունած և չքարոզած վարդապետութիւնները վաթսուն բարայի կը ծախե, բայց չըսեր, թե վորն՞ կը ծախե։ Դարձյալ բացորոշ կերպիվ գին չդներ յուր ապրանքին, և չըսեր մեզ, թե բոլո՞ր վարդապետութիւններն վաթսուն բարայի յե, թե վո՞ր վարդապետութիւնն վոր հաճինք և առնենք վաթսուն բարա վճարելու պարտավոր ենք։

* * *

Ոգտակար խրատ։

Անոնք վոր Խուրպաղըճըխի հիվանդութիւն ունին՝ զգուշանալու յեն իրենց ոլիին մեջ ջուր խառնելե։

* * *

Սրճարանի մը մեջ.

— Շատ քաջ գինվոր մ՚եր, այնպես վոր թշնամիույն գնտակն մեկ ականջեն մտավ մյուս ականջեն յելավ և ինքը վայրկյան մը հրացանն չնետեց։

— Ականջեն մտնողն յելնողն խրատ մ՚ըլլալու յե ուրեմն։

— Արեվելքի՞ ոգտակար խրատներն։

— Անոնք ականջե մտնելու չափ ույժ ունի՞ն…

* * *

Կրոնական ժողովո կողմեն հրատարակված շրջաբերականի մը համաձայն քահանաներն իրենց դեմ յեղած հրատարակութեանց պատասխանելու իրավունքեն զրկված են։ Քահանայք իրավունք պիտի ունենան միայն Կրոնական ժողովո իմաց տալ յերբ իրենց դեմ հոդված մը տեսնվի լրագրի մը մեջ. և Կրոնական ժողովն պիտի տնօրինե պարտ ու պատշաճն։

Կըսվի թե Մկրյան տեր Հովհաննես հոր քանի մը տարիներե հետե յեպիսկոպոսաց և ուրիշ անձանց դեմ հրատարակած անքահանայավայել հոդվածներն պատճառ տված են Կրոնական ժողովո այս վորոշման։

Ի՞նչ վոր ալ ըլլա, կուզեյինք իմանալ, թե քահանաներն իրենց գործելիք հանցանքներն ալ Կրոնական ժողովո նախապես իմաց տալու պարտավո՞ր են, թե վոչ։

* * *

Կրոնական ժողովն պաշտոնական ծանուցմամբ կը հերքե ազգային լրագրաց այն լուրն, թե Կրոնական ժողովն Հաճնո խնդրույն առթիվ շնորհակալյաց գիր ուղղած ե առ ամեն. կաթողիկոսն Կիլիկիո։

Վորքան գոհ և ուրախ կը լինեյինք, յեթե Կրոնական ժողովո նմանօրինակ հերքումներն վոտանավոր գրվեյին…

* * *

Կըսվի թե Կարապետ եֆ Սվաճյան չե ստորագրած Բեմական հառաջդիմական միութիւնն, վոր ընդհանրական խնդրովք զբաղելու նպատակ ունի։

Ազգային ժողովո մեջ Կարապետ եֆենտի Սվաճյան հարցում մ՚ուղղած ե, թե վարչութիւնն ի՞նչ միջոցներ ի գործ դրած ե Հաճնո բռնի ամուսնութեան խնդրույն համար։

Ծան. — Կարապետ եֆենտի Արեվելքի հիմնադիրներեն մին ե։ Կարապետ եֆենտին բավական ամիսներ առաջ Ազգ. ժողովո մեջ կը պոռար, թե յերեսփոխանական ժողովն մասնավորաց խնդիրներով զբաղելու պաշտոն չունի, և խզել կը ջանար Փանոսյան եֆենտին, վոր կը պնդեր Բերայի հրկիզելոց խնդրույն հաշիվն պահանջել Նորատունկյան եֆենտիեն, վոր Արեվելքի հիմնադիրներեն ե։

* * *

Որ պիտի գա — և այս որն մոտեցած իսկ ե — վոր Արեվելքի հիմնադիրներն, վոր Ազգ. ժողովո մեջ մեծամասնութիւն կազմած են արդեն, Ազգային վարչութիւնն ևս ձեռք պիտի անցունեն։ Յեվ այն որն ազգն շատ պիտի խնդա, յեթե չլա։

Օրինակի համար Արեւելքի հիմնադիրներէն յերեսփոխան մը Արեւելքի մէջ հրատարակված հոդվածի մը համար հարցում մը պիտի ուղղէ Ազգային վարչության: Ազգային վարչությունն, որ ինչպես ըսինք, Արեւելքի հիմնադիրներէն կազմված է, անմիջապես պիտի պատասխանէ իրեն ուղղված հարցման, գովելով հարցնող յերեսփոխանին ազգասիրական յեռանդն: Ազգային ժողովը ևս շնորհակալություն պիտի մատուցանէ Ազգային վարչության, և Արեւելք անթառամ պսակներ պիտի բաշխէ Ընդհ. ժողովո և Ազգային վարչության փոխադարձաբար, Արեւելքն, հարուստներու բերանն, պիտի քաջալերվի ի վնաս ժողովրդական թերթերու:

* * *

Ազգային ժողովո մեկ նստին մէջ Մեծ. Հ. Գուրգէն[213]) էֆենտի, որ Արեւելքի հիմնադիրներէն չէ, անհերքելի փաստերով հաստատեց, թէ Մեծ. Թ. Պեկյան էֆենտիին՝ որ Արեւելքի հիմնադիրներէն չէ, յերեսփոխանական ընտրության Ազգ. ժողովո կողմէն չվավերացվիլն հակառակ է սահմանադրության սկզբանց, և առաջարկեց, որ Սամաթիո Նոր Թաղի յերեսփոխանական ընտրությունն վավերացվի Ազգ. ժողովեն:

Մեծ. Թորոսյան էֆենտին, որ Արեւելքի հիմնադիրներէն է, հայտնեց, թէ Գուրգէն էֆենտին, որ Արեւելքի հիմնադիրներէն չէ, որենքին բուն վոգին թափանցել չուզեր:

Մեծ. Նորատունկյան էֆենտին, որ Արեւելքի հիմնադիրներէն է, դիտել տվավ թէ առէնաբան էֆենտին խնդրույն վերաքննության ձեռնարկած է:

Մեծ. Սվաճյան էֆենտին, որ Արեւելքի հիմնադիրներէն է, պահանջեց, որ Ազգային ժողովո կողմէ նախապես տրված վորոշումն հարգվի և գործադրվի անխախտ:

ԳՐՊԱՆԻ ՏԵՏՐՍ

Այս տարի ևս մեծ շուքով կատարվեցավ Իզմիրյանց կտակի[214]) մրցանակաբաշխության հանդեսը։

Եվ վորովհետև հանձնաժողովույն տեղեկագիրը կը հայտներ, թե Յենայի համալսարանի փիլիսոփայական կանդիդատ Գ. Իսահակ Հարությունյանցի Հայոց գիրը[215]) անուն յերկը նոր ուսումնասիրություն մը չեր, ազգային և օտար ազգի բանասիրաց կարծյաց հավաքածո մ'եր և նոր լույս մը չեր սփռեր հայկական տառերուն վրա, վորոշվեցավ ըստ սովորության նվիրել մրցանակն, 600 րուբլի, Յենայի համալսարանի փիլիսոփայական կանդիդատ Գ. Իսահակ Հարությունյանցի, յուր Հայոց գիրը անուն յերկասիրության համար, վոր ինչպես վկայած եյին նորին քննիչք, նոր ուսումնասիրություն մը չեր, ազգային և օտարազգի բանասիրաց կարծյաց հավաքածո մ'եր և նոր լույս մը չեր սփռեր հայկական տառերուն վրա։

Կրոնական ժողովո և Կրոնական ժողովո մեջ տեղը պզտիկ անհամաձայնություն մը կը ծագի։

Կրոնական ժողովո թերթը կարծիք կը հայտնե, թե հայ յեկեղեցին ընդունած չե Նիկիո[216]) Ս. ժողովը։ Կրոնական ժողովը պաշտոնական հայտարարությամբ մը կը հերքե յուր թերթին այդ կարծիքը։

Անհամաձայնությունը կը վերջանա հայաբնակ գավառաց յեկեղեցվո Խոսնակը Սոխակի փոխվելով։

Ազգային բանաստեղծները բարձր գովեստներով կը խոսին Սեթյանի[217]) Հուզման ժամեր անուն քերթվածքին վրա, բայց կարելի յեղածին չափ ցած ձայնով կը խոսին, վոր այդ գովեստներն ամեն մարդ չլսե։ Լուրջ թերթերու մեջ, բացի

Ցերկրագունտե[218]) բանադատական յօդված մը չերեցավ դեռ այս գործին վրա։ Այս տխուր երևույթը կը վերագրենք մարդկային այն տկարության, որով մարդս չուզեր գրիչով խոստովանիլ, ինչ որ բերնով կը խոսի։ Սեթյան կրնա մխիթարվիլ սակայն, երբ համոզվի սա ճշմարտության, թե մեր մեջ լավագույն գործերն անոնք են, որոնց վրա քիչ կը խոսվի կամ բնավ չխոսվիր։

Հուզման ժամերն, որոնց վրա խոսվի կամ ոչ, կաղապակեն թե բեղմնավոր բանաստեղծի մը ծնունդ են իրենք։ Իմաստից վսեմություն, բացատրության գեղեցկություն, ոճի հստակություն և տաղաչափական օրինաց կատարյալ հնազանդություն գլխավոր նկարագիրները կը կազմեն սույն քերթվածոց։ Ցեվ այս առավելությանց քով հազիվ կը նշմարվին քիչ մը դանդաղություն և ներդաշնակության պակասություն։

Ամեն քնար խորհելու և լալու յեղանակ մ՚ունի. ազատ թողունք ուրեմն Հուզման ժամերու հեղինակն և մանավանդ քաջալերենք զինքն, որպեսզի ընտիր գործերովն շարունակե զարդարել մեր գրականության աղքատ մատենադարանը։

Ծովը մեծ զարկ տված մեր ազգային գինովության։ Անոնք որ շաբաթը մեկ անգամ կը գինովնային՝ այժմ օրը յերեք անգամ կը գինովնան։

Ցերեկ յերկու բարեկամներ այսպես կը խոսեյին.

— Մարտիրոս աղա, ասանկ առտըվանցով խմենք նե՝ վերջը ծուր կերթա։

— Տեղ մ՚ալ չերթար։

— Ի՞նչ կըսես։

— Ցես անոր դեղը գտած եմ, թե որ գտած չըլլայի նե՝ առտըվանցով կը խմցնեյի՞ քեզի։

— Ի՞նչ է դեղը։

— Ծովը, քառասուն օխա օղի խմե, ծով մտիր, բան մը չմնար, կարծես թե յերկու օրե ի վեր օղի դըրած չես բերանդ։ Խմե, խմե... ծով կը մտնենք, կերակուրնիս կուտենք, դեղձով պատվական գինի կը խմենք, նորեն ծով կը մտնենք, կելլենք, օղիի կսկսինք, վերջը դարձյալ ծով կերթանք, կելնենք, կերակուր կուտենք, գինին կը տնկենք, նորեն ծով կը մտնենք, յետքը

տեղերնիս կը պառկինք, որ առտուն խելքնիս գլուխնուս գործերնուս յերթանք։

Ամեն ժամ խմելու յե ուրեմն, որովհետև գինովության դեղթափն գտնված է։

Հրատ մոլորակի մեջ ջրանցքներու բացումը գիտական աշխարհին գլխավոր ուշադրության առարկա յեղած է այս օրերս։

Գրեթե հաստատված է, կըսեն, թե յերկրաչափներն մեծ փութաջանությամբ ջրանցքներ կը բանան Հրատ մոլորակի մեջ։

Ուրիշ կողմե լուր կը տրվի, թե աստղագետ մ՚այդ ջրանցքներեն քանի մը շոգենավներու անցնիլն իսկ տեսած է, բայց դըրոշակները չե կրցեր տեսնել, որպեսզի իմանար թե այդ շոգենավներն Անգլիական եյին թե Իտալական։ Միայն քանի մը նավապետներու շարժումներեն ու ձևերեն հասկցեր է, թե նավապետներն առանց ջրանցքի տուրք վճարելու անցնիլ կուզեն յեղեր։

Իտալացի աստղագետ մ՚ալ յերկաթուղիներ տեսած է այդ մոլորակին մեջ և շատ գովեստով կը խոսի կառքերուն մաքրությանը և մանավանդ ֆոնտյուֆբերներու քաղաքավարությանը վրա։

Այս ֆոնտյուֆբերները, կըսե հիշյալ աստղագետը, չեն հրեր, չեն մշտեր ճանբորդները, կառքերու մեջ տեղավորելու համար զանոնք որպես սովորություն է Սիրքեճի[219]), այլ կը թողուն յեղեր ճանբորդներն մտնել իրենց ուզած կառքերուն մեջ։ Այս կերպով ճանբորդներուն ոչ թեն և ոչ ալ ոտքը կը կոտրի յեղեր։ Ասկեց զատ տասնմեկ ժամվան ճանբորդության մը համար յերկու մեճիտիյե պակաս կը վճարեն յեղեր։

Թրամվեյներ ալ կան յեղեր, որոնց ձիերը կես ճամբան չեն իյնար ու մարիր յեղեր, այլ մինչև վերջյալ վայրը կրնան յեղեր քաշել կառքերը։

Կառքերուն մեջ ոչ մլուկ և ոչ լու կը գտնվի յեղեր։

Հրատ մոլորակի մեջ հոյակապ թատրոններ, թանգարաններ, գեղարվեստական հաստատություններ ևս կը գտնվին յեղեր։

Միայն չգիտցվիր տակավին, թե բնակիչ ալ կա՞ արդյոք Հրատ մոլորակին մեջ։

— Անցած ըլլա բարեկամ։
— Շնորհակալ եմ։
— Նոր իմացա հիվանդ պառկելնիդ, անոր համար քիչ մը ուշացայ, ներեցէք։
— Հոգ չէ։
— Պաղ առէք։
— Հանցանքն իմս է, գիտեմ յես։
— Դուք ինչո՞ւ հանցավոր ըլլաք։
— Գիտես, յես քիչ մը կը սիրեմ բանաստեղծությունը։
— Այո՛։
— Բարով խերով չսիրեյի։ Գիտես ա՛, բանաստեղծները գեղջկական կյանքը միշտ կը գովեն, հովիվը, կըսեն, ծառի մը տակ, առվակի մ'առջև նստած սրինգը կը հնչեցնե, վոչխարներն ալ դալարի վայրերու մեջ կը ճարակին, չկա մե՞ յա ասանկ խոսքեր, յես ալ յելլամ ըսի քանի մ'որ գյուղ մ'երթամ և գեղջկական անմեղ կյանք մը վարեմ, մարդ ես, չե՞ս ըսեր մի, աղբար։
— Կըսես ա՛։
— Յելանք Ալեմտաղի[220]) կողմերը գյուղ մը գնացինք։ Յերկար չըննեմ, հովիվ մը գտա և աղաչեցի իրեն, վոր մեկ յերկու օր հետը գտնվիմ։ Ընդունեց մարդը։ Հովիվի հագուստ հագա, հովիվը կը խնդա ու կը խնդա։ Առտուն կանուխ յելանք, ու սկըսանք քալել մացառներու մեջ, յետքն ալ ճահիճներու մեջ, հոգիս բերանս յեկավ մինչև վոր արոտավայրն յեկանք, ո՞ւր է կըսեն, վոր զեփյուռը կը շոյե յեղեր, սրինգը կը հնչե յեղեր, առվակը կը խոխոջե յեղեր... Մրկեցա, երեցա արևուն ճառագայթներուն տակ. հովանոց չունեյի հետս. առվակ ըսածը կանաչ և լեղի ջուր մ'է, վոր խմվելու բան չէ, մեյ մ'ալ վոտքերուս տակը օձի մը գալարիլը չտեսնամ մի... վորչափ ձայն ունեյի նե՝ պոռացի և լեղապատառ փախա։ Հովիվին մնաք բարով ըսելու ժամանակ չունեցա։
— Վախցար ըսել է։
— Վախնալն ալ խո՞սք է, բայց միայն վախով չմնացավ, գալես ի վեր իչ աղրսի մը ունիմ, վոր չանցնիր, քիչ մը հողի վրա նստեցա՝ անկից ըլլալու յե. մա՛ քեզի գեղջկական կյանք ու վար նստե՜։ Զեփյուռը սանկ կընե յեղեր տե, սրինգն ալ նանկ կընե յեղեր տե... հովիվն ալ յերջանիկ է յեղեր։ Գետնին տակն

անցնին ամենքն ալ։ Հայպա անոթի մնալս... հաճարի ալյուրե շինված հաց մ'որ բերան չըրվիր, քար, հարդ, հող, ամեն բան կա մեջը, չը կրցի ուտել վոր։
— Հովվական կյանքին ալ ճաշակն առիր ուրեմն։
— Առինք ա՛։ Բայց կորդացած ժամանակդ, վո՞րքան կախորժիս, ո՞ւր եր թե հովիվ ըլլայի, կըսես։
— Այսուհետև ուրեմն հովիվներուն վրա նախանձե, բայց մի ուզեր հովիվ ըլլալ։
— Վոչ իսկ կը նախանձիմ, բայց բանաստեղծության մեջ այսչափ ալ խոշոր սուտ ըլլալո՞ւ յե, ամոթ չէ՞, աղբար։ Հայպա վախես լեղիս բրդեր ու մեռնեյի նե. ասանկ բանաստեղծությո՞ւն կըլլա։
— Բանաստեղծներն ալ հանցանք չունին, բուն յերջանկությունը կը կայանա թշվառությունը չզգալու մեջ և հովիվն այս տեսակետով յերջանիկ է։
— Այսուհետև բանաստեղծություն չեմ կարդար։
— Կարդա Հուզման ժամերն, վոր նորեն սիրես բանաստեղծությունը։ Կը վաճառվի բոլոր գրավաճառաց քով, գին 10 դահեկան։

Դպրոցական տարեդարձներու և հանդեսներու մասին հաջորդ թերթով։

Կրթական հունձքը հույժ առատ յեղավ այս տարի, հակառակ յերեսուն աստիճանի ջերմության, վոր բավական օրեր շարունակեց։ Այս տաքության մեջ ուսմունք հաջողեցան չչորնալ։ Տաքության ազդեցությունն ուղեղներու վրա հայտնի յե արդեն։

Պերպերյան[221]) վարժարանը կը շարունակե յուր արգասավորությունը շնորհիվ անդուլ ջանից նորա տնօրենին։ Այս տարի ևս տասներկու ուսումնավարտներ կընծայե ազգին, բարեկիրթ և ուսյալ յերիտասարդներ։

Նույնքան ուսյալ աշակերտուհիներ կուտա ազգին նաև Մեզպուրյան[222]) վարժարանն, վոր այսօր աղջկանց միակ գիշերօթիկ վարժարանն է ազգին մեջ։

Դպրոցասեր տիկնանց վարժարանն[223]) ևս կը նվիրե ազգին, հինգ վարժուհիներ, վորք գավառները կերթան մեր գավառացի քույրերուն լույս ջամբելու համար։

Հայկական կրթարանն, վոր ինչպես հայտնի յե, ամեն տարի մարտի մեջ կուտա յուր տարեկան հարցաքննությունները և նույն ամսո մեջ կարձակե յուր ուսումնավարտները, կը շարունակե ազգին տալ ուսյալ և կրթյալ յերիտասարդներ։

Հույս, համբերություն և հաջողություն կը մաղթենք այս վարժարանաց տնորենության։

Թաղային վարժարաններն ևս, իրենց սահմանին մեջ, արդյունավոր եղեն այս տարի, վորպես Գատը գյուղի[224]) Արամյան վարժարանն, Մայր յեկեղեցվո վարժարանը, Պեշիկթաշի[225]) Մաքրուհյան վարժարանը, և Թաղային մյուս վարժարանները, զորս մի առ մի հիշելն ավելորդ ե։ Կը հուսանք սակայն, թե կրթական տեսչության հոգածությամբ գալ տարի ավելի կրնանք հնձել այս վարժարաններեն։

Հիվանդախնամ ընկերության մ'ատենապետը հետևյալ հրավիրագիրը կը ղրկե ընկերության անդամոց.

«Մեծ. տեր,

Յեթե հառաջիկա նստին ալ ներկա չգտնվիք, անդամակցութենե հրաժարյալ պիտի համարվիք, վորով պիտի զրկվիք նաև տարին աղքատաց 100-150 դահեկան նվեր ընելե։

Մնամ հարգանոք»

Հրավիրագիրս քիչ մը կծու չե՞։

Շաքարի տեղ վոմանք սկսած են սախառին գործածել։ Քոլեռայի տեղ խոլեռին։

Քոլեռայի դեմ ազդու դեղ մը գտնված ե։

Քոլեռայով պիտի պատվաստեն զմեզ. ավելի պարզ խոսելով, ամենքս ալ մեկ մեկ խոլեռա պիտի ըլլանք և խոլեռայեն չպիտի վախնանք. միայն թե չպատվաստված մարդոց չպիտի կրնանք մերձենալ, վորպեսզի անոնց չփոխանցվինք։ Յեթե Բաստեորյան[226])

այս դրությունն այսքան զոհացուցիչ արդյունքներ հառաջ կը բերե՝ ինչո՞ւ կուշանան զմեզ պատվաստելու տիֆուսով, կարկինոսով, սիֆոլիսով, պարալիտապով, եմպեթիկոյով և այլն և այլն. վորպեսզի քիչ մը շունչ առնենք։ Նույնպես ինչո՞ւ կուշանան զմեզ պատվաստել քիչ մ'անամոթությամբ, կտոր մ'անհոգությամբ, պատառ մ'անքաղաքավարությամբ, վորպեսզի չչարչարվինք այս ախտերեն։

Ի վերջո, ինչո՞ւ չեն պատվաստեր զմեզ մահվամբ։

Ուրախությամբ կիմանանք, թե տիկին Մատակյան[227]) միտք ունի հաստատել Գատը գյուղ մանկանց պարտեզ մը, ուր պիտի ընդունվին չորսեն մինչև յոթը տարեկան տղայք։

Կը հուսանք, թե մեր ազգայինները պիտի փութան քաջալերել նաև սույն ձեռնարկությունը։

Շիրքեթը Խայրիյեյի[228]) շոգենավներուն միույն մեջ.

—Ինձի նայե, պարոն, կըսե նստարանի վրա նստած վաթսուն տարեկան մարդ մ'երիտասարդի մ'որ մտադրաղ կերևի և նստելու տեղ կը փնտռե։

Յերիտասարդը չլսեր։

— Բարեկամ։

Յերիտասարդը չիմանար և կսկսի հառաջանալ։

— Չե՞ս լսեր։

Պատասխան չկա։

— Խու՞լ ե, ի՞նչ ե։

— . . .

— Տեր վողորմյա...

Յերիտասարդը միշտ նստելու տեղ կը փնտռե։

Մարդը վոտք կելնե և անանկ ուժով կը քաշե յերիտասարդին թիկնոցեն, վոր կես կանգուն յերկայնությամբ կը պատռե զայն։

— Ինչո՞ւ քաշեցիր։

— Բաչադ քակված ե, տղաս... կապե...

Խիկարի հուլիս ամսաթերթին Ռոտնին տեսարաններուն մէջ զոհանչ բառն չակեցին անշուշտ մեր ընթերցողք կեսուր կարդալով։

Հակառակ մեր կամաց կարելի չեղաւ մեզ ներկայացնել մեր դիտողութիւններն ծանուցյալ կոնդակին վրայ։ Խիկարի սահմանն Եսեպիյարն է ամեն կողմէ։

Սրճարանի մը մէջ.

— Քանի մ՚օրե ի վեր է, որ գլխարկաւոր մուրացկաններ յերեւան յելան, ծեւկից կուգան կոր ասոնք։

— Վիեննային կուգան կոր շոգեկառքով։

— Պոլսո մէջ արվեստ մը մնացած եր ան ալ ձեռվնուս պիտի առնեն աս յեվրոպացիները։

Յերկու հոգի նարտ խաղալու կը նստին.

— Սև քարերը չեմ առներ յես, կըսե մին։

— Ճերմակները յես պիտի առնեմ, կը պոռա մյուսը։

— Անանկ է նե՝ չեմ խաղար, սև քարերը առնեմ նե՝ կը կորսնցնեմ կոր, քառասուն անգամ փորձած եմ։

— Յես ալ սև քարերով չեմ կրնար խաղալ։

— Ջենք խաղար։

— Դուք գիտեք։

— Տղայութիւն չէ՞ ըրածնիդ, ինչու կերկնցնեք գործը, յերկուքնիդ ալ ճերմակ քարերով խաղացեք եփնտիմ, ըսավ անդիեն նարտ չգիտցող ծերունի մը։

Լրագրի մը մէջ բերկրութեամբ սրտի կարդայի, թե Սերպիո կառավարութիւնը տուրք դրած է կեղծօրիկներու վրա։

Հայտնի յե, թե կեղծօրիկն որքան մեծ ըլլա տուրքն ալ այնքան կը մեծնա։

Ստացանք Տեմիրճիպաշյանի[229]) Գաղ-Հայ գրպանի բառարանն, որ կը պարունակե 25000 բառ։ Գին 12 դահեկան։

Ահա գրպանի բառարան մ՚որ ամեն գրպաններու կը հարմարի, թե՛ յուր գնով և թե՛ յուր պարունակութեամբը։

Նույնպես ընդունեցանք Տ. Կամսարականի[230]) Վարժապետին աղջիկը։ Գին 12 դահեկան։ Հարկ չկա հիշելու, թե որքան քաջալերութեան արժանի յե յերիտասարդ և տաղանդաւոր վիպասանը։

Բ. Տեր Վրթանեսյանե աշխատասիրյալ տետրակ մը ստացանք։ Տետրակին վրա գրված է.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչաց և ուսուցչուհյաց համար

Ինչ որ կը հաստատե, թե աշակերտներեն ավելի մեր ուսուցիչներն և ուսուցչուհիները կարոտ են կարգապահութեան սորվելու։

Տետրակին վրա գրված է նաև, թե «Առանց կարգապահութեան դպրոցը կը նմանի ջուր չունեցող ջրաղացի»։

Արդարև վարժարանաց մէջ կարգապահութեան պետքը ավելի ճիշտ նմանութեամբ կարելի չեր բացատրել։

Գին 3 և կես դահեկան։

Այնքան համեստ գին մ՚որ չարժեր անկարգապահ ըլլալ։

Շատ մեծ ուրախութեամբ լսեցինք, թե Ազգ. Պատրիարքարանը մայրաքաղաքիս մէջ գտնվող վարդապետները վանքերը պիտի ղրկե ըստ վաղեմի սովորութեան, և միայն մեծ պահոց մէջ մայրաքաղաքս պիտի կանչե զանոնք, որ յեկեղեցյաց մէջ հոգեշահ քարոզներով ժողովուրդը մխիթարեն։

Ժողովրդյան կողմե մեծ խնդութեամբ պիտի ընդունվի Պատրիարքարանի այս որոշումն, որ այլուստ կը ձգտի բարեկարգել, զարգացնել և լուսավորել այդ սուրբ ագարակները։

Յերվանդ Կ. Գարթալյանե հորինված «Առաջնորդ թվաբանության ի պետս մանկանց» ստացանք։

Գինն 3 դահեկան է։

Վստահ ենք, թե սույն դասագիրքն ալ հեղինակին մյուս դասագրյանց պես ջերմ ընդունելությամբ պիտի դիմավորվի ազգային վարժարաններեն։

— Ամբակում աղա, իմացա՞ր կայծակին պատմությունը։

— Ո՞ր կայծակին։

— Անցյալ գիշեր Ինճատիյե231) տուն մը կայծակ ինկեր է ծխնելույզեն, խոհանոցը մտեր է, խոհանոցեն յելեր մառանը մտեր է, մառանեն կերակուրի սենյակը գացեր է, անկից հյուրերու սենյակը մտեր է, հյուրերու սենյակեն դուրս յելեր ու սանդուխեն վեր յելնելով, տան տիրոջ սենյակը մտեր է, քիչ մը պառն խառներ է...

— Բան մը տարե՞ր է։

— Ի՞նչ պիտի տանի, հետո վար է իջեր և քանի մը դրացիներուն տուներն ալ պտըտեր է։

— Կերևա թե զարնելու մեկը փնտռեր է ու չէ կրցեր գտնել, նույն կուզա՞ մի իմ կինս զարնելու

Սարսափելի խավարյալ մը․

— Միքայել աղա, Սահմանադրության վրա սրբազան Պատրիարքին ուխտ ըրած օրը դուն ալ յեկեղեցի՞ն եյիր։

— Չէ։

— Ինչո՞ւ չգացիր։

— Շիտակը կուզե՞ս, խղճմտանքիս դպավ։

— Խղճմտանքի բան չկա հոս։

— Սահմանադրության փասներն այնքան մոտեն տեսա, որ անոր վրա ուխտ ըլլալը լսեմ նե՝ ինձի անանկ կուգա, որ ազգը կտոր մ՚ալ կործանելու ուխտ կըլլա։

Անցյալ կյուրակե ներկայացում մը տրվեցավ Բերա, ի նըպաստ Դպրոցասեր Տիկնանց ընկերության։

Խաղին անունն է Քռաստ։ Գլխավոր դերը կատարեց հանրածանոթն Ադամյան։

Պատիվ ունիմ հայտնել կատարյալ անկեղծությամբ, թե բան մը չհասկցա այս խաղեն։

Ուրախ եմ սակայն բան մը չհասկնալուս վրա, վորովհետև բան մը չհասկնալես հասկցա, թե շատ բարձր է այդ թատերգությունը։

Աստուծով անոր յերկրորդ ներկայացումեն կը ջանամ բան մը չհասկնալ դարձյալ։

— Կղզիեն իջա՞ք։

—Չէ։

— Ուշ եք մնացեր։

— Մսավաճառը, նպարավաճառը, հացավաճառը թող չեն տար, որ իջնաս։

— Անոնց ալ սիրտը կոտրելու չէ... հոն անցուցեք այս ձըմեռ։

— Ուզենք չուզենք անանկ պիտի ընենք։

— Աս ի՛նչ բախտ է մեր բախտը, Կարապետ աղա։

— Ի՞նչ կա։

— Ալբա՛ր, ոչ շըմենտըֆերը232) կը զարնե մեզի, ոչ...

— Կայծակը։

Ստացանք․

Սփոփանք ռամկին Միհրան Հովհաննեսյանի։

Կրթություն ձայնական յերաժշտության ըստ յեվրոպական դըրության Մինաս Գ. Մինասյանի։

Առձեռն բառարան հայերենե ի գաղղիերեն Կոմիտաս Ա. Վոսկյանի։

Ոսմաներեն քերական Միհրան Աբիկյանի։

Այս գործերն՝ վորոնց յուրաքանչյուրն ունի յուր օգտակարությունը, կը փութանք հանձնարարել մեր ազգայնոց։

Սույն յերկասիրությանց, ինչպես նաև մեր գրասեղանին վրա գտնվող ուրիշ նոր հրատարակության վրա պիտի գրենք պատեհ առթիվ, առ Տիկին պատմություն։

Յերկրորդ անգամ իմացանք բերկրությամբ սրտի, թե մայրաքաղաքիս մեջ գտնվող բոլոր վարդապետները վանքերը պիտի ղրկվին։

Խեղճ Տիմիթրիոս Զոլաքյան...

Բավական վիրավորվեցավ վերջերս մեր քանի մ'եկեղեցականներեն յուր հունարեն լեզվավ հրատարակած Արարողություն Սրբո Պատարագի, ըստ Հայաստանյայց ուղղափառ յեկեղեցվո գրքին հառաջաբանին պատճառավ։ Յեվ սակայն հարձակում կրելու հանցանք մը գործած չեր։

Ի՞նչ կըսեր հառաջաբանին մեջ։

Հայկական յեկեղեցվույն վրա պատմական ինչ ինչ ծանոթություններ տալով՝ ուղղափառ կը դավաներ զայն և յուր ազգայինները հանդիմանելով կը հորդորեր, վոր իրենք ալ այնպես ճանչնան։ Պատմական սխալներ յեթե ուներ նա յուր հառաջաբանին մեջ, կրնային հերքվիլ վայելուչ լեզվավ։

Յերբ ուղղափառ յեկեղեցի մը մեզի հերետիկոս ըսե, անմիջապես կը փութանք հաստատել, թե մեր յեկեղեցին ալ ուղղափառ յեկեղեցվույն հար և նմանն է ինչ ինչ պզտիկ տարբերություններով. իսկ յերբ այն ուղղափառ յեկեղեցվույն մեկ անդամը պաշտպանե մեր յեկեղեցվույն ուղղափառությունը, այն ատեն ալ կրակ կը կտրինք և մեր յեկեղեցին ձերինին չնմանիր կըսենք։

Կերևի թե առաջին պարագային մեջ, ապացուցանելու համար, թե մենք հերետիկոս չենք, կը գիջանինք վոր մեր յեկեղեցին մեր յեկեղեցվույն հերետիկոս ըսող յեկեղեցվույն նմանի. իսկ յերկրորդ պարագային մեջ, մեր յեկեղեցվո անկախությունը չկորուսանելու համար չենք ուզեր, վոր մեր յեկեղեցին մեր յեկեղեցվույն ուղղափառ ըսող յեկեղեցվույն նմանի քիչ մը։

Բերկրությամբ կիմանանք, թե ազնվասիրտ և առատաձեռն մեծ. Միքայել եֆենտի Հակոբյանի նախաձեռնությամբ հանգանակություն պիտի ձեռնարկվի կղերանոց մը հաստատելու նպատակավ Արմաշու վանուց մեջ։

Լավագույն պատասխանով մը կարելի չեր ըմբերանել քանի մը վարդապետներն, վոր մեզ աշխարհականացս կը պոռան յերբեմն.

— Ի՞նչ ցանեցիք, վոր ինչ հնձեք։

Յեվ չեն գիտեր, թե մենք աշխարհականքս կուլանք միայն անոր համար, վոր կը հնձենք ինչ վոր ցանած չենք։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կիրակնօրյա հայրենիք.—*Շաբաթաթերթ. Կ. Պոլիս, 1887. №. №. 1—16. խմբ. Մինաս Գափամաճյան: Այս թերթի մեջ Պարոնյանն սկսել է գրել «Առտնին տեսարաններ»-ը. ապա նույն նյութը փոխադրելով իր հրատարակած «Խիկար»-ի մեջ՝ հետևյալ ծանոթությունն է կցել. «Կիրակնօրյա Հայրենիք»-ի մեջ վերջերս քանի մը հոդվածներ հրատարակած ենք «Առտնին Տեսարաններ» խորագրով և միտք ունեյինք շարունակել զանոնք միևնույն թերթի մեջ: Պարագաններն ստիպած ըլլալով զմեզ ուրիշ ազգային հանդեսներու և լրագրներու մեջ չգրել այսուհետև, որոշեցինք «Խիկար»-ի մեջ շարունակել «Առտ. Տես.»-ը. ուստի «Հայրենիք»-ի մեջ հրատարակված վերոհիշյալ քանի մը հոդվածները կը փութանք հրատարակել այս ավուր թերթեն սկսյալ:*

2. Շիրքեթի խայրիյե.—*Մի նավային ընկերության անունն է, որի նավերը յերթևեկում են Վոսփորի նեղուցի մեջ:*

3. Սոկրատ Հույն *նշանավոր փիլիսոփա (IV դարում մեր թվականությունից առաջ): Աթենքի հասարակությանը ուղղած իր հանդիմանությունների և ծաղրի պատճառով հալածվեց և ի վերջո մահվան դատապարտվեց:*

4. E pur si muove.—*Այնուամենայնիվ պտտվում է: Իտալացի աստղագետ Գալիլեյի խոսքը:*

5. Լաֆոնտենի գորտը.—*Ֆրանսիացի առակախոսի (1621—1695) գորտն ուզում է մեծությամբ ցուլին նմանել ու այնքան է ուռչում, որ պայթում է:*

6. Սողոմոն իմաստուն.—*Հրեաստանի թագավոր (1082—975 մեր թվակ. առաջ): Արևելյան հին ազգերի մեջ համբավավոր իր իմաստությամբ: Սրան է վերագրվում «Առակաց» գիրքը, ինչպես և «Յերգ յերգոցը», «Ժողովողը» աստվածաշնչի մեջ:*

7. Գորդյան հանգույց.—*Փոքր Ասիայի Գորդիում քաղաքում այն խորհրդավոր հանգույցը, որը կապում էր մի սայլի ղեկը նրա լուծի հետ և անքակտելի էր: Ըստ աստվածների պատգամի այդ հանգույցը լուծողը պիտի դառնար Ասիայի թագավորը: Աղեքսանդր Մակեդոնացին հանգույցը սրով կտրեց՝ առանց այն լուծելու հնարքների մասին մտածելու:*

8. Նորմա.—*Բելլինիի մի օպերան, գրված 1831 թ:*

9. Մայտա.—*Արևմտահայ վիպագիր Սրբուհի Տյուսաբի (1842—1894) վեպի անունը:*

10. Վահան Վարդապետ.—*Պարտիզակցի (Տեր Մինասյան), հեղինակ՝*

«Խոսք զհայրենյաց» (Կ. Պոլիս 1880) «Հայկական Հինանկ առակք» (Կ. Պոլիս, 1880) «Անգիր դպրություն և առակք» (Կ. Պոլիս 1893) աշխատությունների։

11. Casus belli․—Կռվի պատճառ։

12. Ultimatum—Վերջնագիր։

13. Ժողովող․—Տես № 6։

14. Պղնձե քաղաք․—Միջնադարյան առասպելական վեպ, որի նյութը վերցված է Շահնամեից։

15. Պենտաիրություն։—Տես եջ 101։

16. Իտնոս.—Անծանոթ անուն։

17. Լուկիլիոս․—(Լուցիլիոս) Հույն գրող II դարում։

18. Ովրատիոս․—(Հորացիոս) Հռոմեական հռչակավոր քնարերգակ և երգիծաբան (64—8 մեր թ. առաջ)։

19. Հոբնալ.— (Յուվենալ) Հռոմայեցի երգիծաբան (49—125)։

20 Ils sont trop verts et bons pour des goujats.—Նրանք շատ խակ են, և հարմար են գռեհիկներին։

21. Դիոգինես․—Ցինիկ փիլիսոփա, որ արհամարհում էր բոլոր վայելքները։

22. Քալանքարյանց.—Դավիթ, ութսունական թվականներին Պոլսում և Բրուսայում ուսուցչությամբ զբաղվող արևելահայ։

23. Զուրերը տանիլ․—Հանքային ջրերի մասին է խոսքը։

24. Ռոչիլտ.—Յեվրոպայում հայտնի բանկիրների մի ընտանիքի անունն է։

25. Վոսկեղեն դար.—Հին, առասպելական դար, ուր կար միայն սեր և երջանկություն։

26. Խիկար.—Պարոնյանի հրատարակած թերթը, որտեղ տպված է այս գրվածքը (1884—1888)։

27.—Բերա.—Պոլսի մի թաղը, եվրոպական ցամաքամասի վրա։

28. Դատաստանական խորհուրդ․—Չորս կրոնավորներից և չորս աշխարհականներից կազմված մարմինը, որը քննում էր ընտանեկան վեճերը։

29. Պիզմարք․—Իշխան Օտտո Բիսմարկ, գերմանական վարչապետ, կատաղի միլիտարիստ, գերմանական իմպերիալիզմի կուռքը (1815—1899)։

30. Կիերս․—Գիրս, ցարական դիվանագետ (1820—1895)։

31. Սալիզպըրի․—Մարկիզ Սալիզբըրի, Անգլիացի դիվանագետ և քաղաքական գործիչ, յերկար ժամանակ պահպանողական կուսակցության պարագլուխը (1830—1903)։

32. Ցեկեացե ի վերա իմ․—«Թող գա ինձ վրա»՝ այսպես է սկսվում մի սաղմոս, որը գործածական է յեղել հայկական յեկեղեցու ժամերգության մեջ (համ. № 159)։

33. Նոյ Նահապետ․—Ըստ աստվածաշնչի առասպելի՝ Նոյը համարվում է մարդկության նախահայրը ջրհեղեղից հետո, այստեղ նա հնության, նախնականության խորհրդանիշն է։

34. Վորդան ծիրանի.—Վորդան կարմիր, հատկապես Հայաստանում աճող մի տեսակ կաղնիի վրա զարգացող որդ, որից պատրաստում են կարմիր ներկ։

35. Կեդրոնական վարժարան․—Պոլսի Ղալաթիա թաղամասի դպրոցը, որը 1884 թվին վերակազմվեց Կեդրոնական վարժարան անունով։

36. Կաքսա ի գլուխ․—«Կաթսան գլխի վրա» դնելով Պոլսի փողոցներում կամ շուկայում ծախում են յեփված զանազան ուտելիքներ։

37. Ադամ․—Ըստ աստվածաշնչի առասպելի՝ աստված նախամարդուն՝ Ադամին քնացրեց և նրա կողից հանեց առաջին կնոջը։

38. Իսոկրատ․—Աթենացի հռետոր, (436—338 մեր թ. առաջ)։

39. Վանական յեվ Տնտեսական գործեր․—Ակնարկություն է հատկապես այն գործերի մասին, որոնք վերաբերում էին արևմտահայերի վանքերի, ինչպես և տարբեր ազգային հաստատությունների տնտեսության և բարեկարգման համար կազմված մարմիններին (տես հատոր III. ծան. № 48)։

40. Պեզճյան․—Հարություն, Սուլթանական փողերանոցի (դրամահատության) տեսուչ «Բարեգործ» բուրժուա, Պոլսի «ազգային հիվանդանոցի» հիմնադիրը (ծն. 1771)։

41 Մեծ բանաստեղծն․—Գամառ Քաթիպան 80-ական թվականներին գտնվել է Պոլսում, Պարոնյանի այս հեգնական ակնարկությունները անշուշտ նրան են վերաբերում։

42. Վոսփոր․—Բոսֆոր. Սև և Մարմարա ծովերը միացնող, Ասիան և Յեվրոպան բաժանող նեղուցը։ Նեղուցի ափին ընկած շրջաններն էլ նույն անունով են կոչվում։

43. Իշխանաց կղզի․—Այսպես կոչվում են չորս կղզիներ, որոնք գտնվում են Մարմարա ծովում, ասիական ափի դիմաց։

44. Քաղկեդոն.—Հին անունն է այժմյան Գատը գյուղի, որ Պոլսի մի թաղն է և գտնվում է Մարմարա ծովի ասիական ափին։

45. Մարգարե ի գավառի յուրում պատիվ վոչ ունի.—Մարգարեն իր գավառում պատիվ չունի։

46. Կաթողիկոսական ընտրություն.—Ակնարկում է Մակար կաթողիկոսի ընտրությանը, որ տեղի յե ունեցել 1885 թ։

47. Յերկու ընտրելի․—Ըստ ցարական օրենքի՝ հայկական կաթողիկոսության համար պիտի ընտրվեյին յերկու ընտրելիներ, դրանցից մեկին ցարը կաթողիկոս էր նշանակում։

48. Հակամակարյանք․—Նրանք՝ որոնք չեյին ցանկանում Մակարի կաթողիկոսությունը։

49. Մատթեոս կաթողիկոս․—Մատթեոս Ա. Կ. Պոլսեցի (1858—1865)։

50. Գեորգ Կաթողիկոս.—Գեվորգ IV Կոստանդնուպոլսեցի, (1866—1882)։

51. Զմյուռնիո գեր. Առաջնորդը․—Զայների մեծամասնությամբ Զմյուռնիայի առաջնորդ Մելքիսեդեկ յեպ. Մուրատյանն ընտրված էր կաթողիկոսական առաջին թեկնածու, սակայն ցարի վստահությունը չունենալու պատճառով՝ կաթողիկոս նշանակվեց քիչ քվե ստացած յերկրորդ թեկնածու Մակար յեպիսկոպոսը։ Պարոնյանի համակրությունը Մուրատյանի կողմն էր։

52. Ուղղականին.—Քերականական այս տերմինների լեզվով ուղղականը ուղիղ, անմիջական կերպով ընտրվածն է, այսինքն Մելքիսեթեկ յեպիսկոպոսը,

իսկ բացառականը, բացառիկ. վոչ ուղիղ կերպով նշանակվածը, այսինքն՝ Մակար յեպիսկոպոսը։

53. Վանք.—Յերուսաղեմի հայկական վանքի պարտքի մասին է ակնարկությունը։

54. Ազգային ժողով.—Արևմտահայերի ներկայացուցչական ժողովը, վորտեղ 1908 թ. հետո ղեկավար դեր եյին կատարում հայկական նացիոնալիստական կուսակցությունները, (համմ. հատ. III. ծան. № 31)։

55. Խիզան. - Վանի նահանգի մի գավառ։

56. Մոլիեռ.—Ֆրանսիացի մեծ կատակերգակ. «Տարտյուֆ» «Միզանտրոպ» «Դոն Ժուան» «Յերևակայական հիվանդ» «Ակամա բժիշկ» «Ագահը» և այլ կատակերգությունների հեղինակը (1622—1673)։

57. Աստվածաբանության դաս կուտա Եջմիածին.—Խոսքը վերաբերում է Որմանյան յեպիսկոպոսին (հետո Կ. Պոլսի Հայոց պատրիարք), վոր 1887 թ. Կարնի առաջնորդությունից հրաժարվելով՝ յեկավ Եջմիածին և ճեմարանում ստանձնեց աստվածաբանության դասերը։

58. Կրոնագիտության դաս տալու.—Ակնարկում է Վահրամ յեպ. Մանկունիին, վորը Եջմիածնում Գեվորգ IV կաթողիկոսի դիվանապետն եր։ Նա հայտնի յեր իր կաշառակերությամբ։

59. Մինաս եփ. Քափամաճյան.—Գաբամաճյան. 1879 թվին Պոլսում լույս տեսած ազգայնական վոգով գրված «Ազգային պատմություն» գրքի հեղինակը։

60—.«Պատկեր.»—Շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1887, հր. Մ. Գաբամաճյան (համմ. № 59)։

61. Հրանտ.—Ծածկանունը Մելքոն Գյուրջյանի, հայկական նացիոնալիստական գրականության ամենածայրահեղ ներկայացուցիչներից մեկը։

62. Խիկար իմաստուն.—Այս հատուկ անունը մեր միջնադարյան աշխարհիկ գրականության մեջ հոմանիշ և «Խելոքի»-ի «Իմաստուն»-ի։

63. Կրոնական ժողով.—Պոլսի հայկական յերեսփոխանական ժողովի (№ 54) կողմից ընտրված 14 կրոնականների ժողովն է, վորը զբաղվում եր արևմտահայերի կրոնական հարցերով։

64. Ճերմակի Շարգիլյ.—Հայատառ թուրքերեն լրագիր, Կ. Պ. 1885—1913։

65. Կաթողիկոսական Ընտրություն.—Մակար կաթողիկոսի ընտրությունը 1885 թվին, (տես № 46)։

66. Հայուհյաց ընկերություն.—«Ազգանվեր հայուհյաց ընկերությունը», վորը նվիրատվություններ հավաքելով աղջիկների դպրոցներ եր պահում թյուրքիայի գավառներում, վերջին շրջաններում նրա ղեկավարն եր բանաստեղծուհի Սիպիլը։

67. Գատր գյուղ.—(Համ. № 44)։

68. Նոր կտակարան.—«Ավետարանը» կոչվում է նոր կտակարան, տարբերելու համար «աստվածաշնչից» վոր կոչվում է հին կտակարան։

69. Թաղական Խորհուրդ.—Այսպես կոչվում է թաղային այն մարմինը Պոլսում, վորն ընտրվում է թաղեցիներից՝ տեղական դպրոցների ու յեկեղեցու գործով զբաղվելու։

70. Խորեն Աշըգյան.—Պոլսի հայոց պատրիարք 1888—1894 թ։

71. Արգելյալ պտուղ.—Ըստ աստվածաշնչի առասպելի՝ արգելված եր Ադամին և Յեվային ուտելու դրախտի մեջ այն յերկու ծառերի պտուղները, վորոնք կոչվում եյին ծառ գիտության բարու և չարի։

72. Պատրիարք.—Տես հատ. III ծան. № 9։

73. Ընդհանուր ժողով.—Տես. ազգ. ժողով, (№ 54)։

74. Սերվիչեն.—Արևմտահայ լիբերալ գործիչ, Սերովբե Վիչենյան, բժիշկ, Պոլսո բժշկական ֆակուլտետի դասախոս, Ազգ. Սահմանադրության հեղինակներից մեկը։

75. Բարունակ Պեյ.—Բարունակ Մանվել Ութուճյան, բժիշկ, հիմնադիր «Կիլիկյա» կիսամսյա թերթի, Պոլիս, 1861—1875, յերեսփոխան ազգային ժողովի, Պարոնյանի «ազգային ջոջերից» մեկը. (տես հատոր III եջ 222)։

76. Ստեփան փաշա.—Ստեփան Ասլանյան, Պոլսի հայկական յերեսփոխանական ժողովի նախագահ. Պարոնյանի «ազգային ջոջերից» մեկը. (հատ. III եջ 31)։

77. Փեշտիմալճյան.—Տիգրան Փեշտիմալճյան, գրաբարագետ, Հայերեն մեծահատոր բառարանի հեղինակ։

78. Քյաթիպյան.— Հայտնի բժիշկ, վոր Սուլթան Համիդի որով սպանված դոնվեց ծովի ափին։

79. Սահմանադրություն.—Այսպես կոչվում է այն կանոնադրությունների ժողովածուն, վորոնք հրատարակվեցին 1862 թ. Կ. Պոլսում, և վորոնք վերաբերում են արևմտահայերի ազգային, յեկեղեցական և քաղաքական կյանքը վարող մարմինների կազմության և նրանց ֆունկցիաների վորոշման։ Պոլսում ամեն տարի մայիսին տոնվում եր այդ սահմանադրության հաստատման տարեդարձը։

80. Ս. Փրկչյան Մատուռ.—Գտնվում է Պոլսի հայկական հիվանդանոցի շրջափակում, ուր տոնվում եր սովորաբար Սահմանադրության հաստատման տարեդարձը։

81. Բյուզանդ Քեչյան.—Հրապարակագիր, «Արևելք» (1884) և «Բյուզանդիոն» (1896) պահպանողական ուղղության թերթերի խմբագիրը, (մեռ. 1923)։

82. «Վարժապետին աղջիկը».—Տիգրան Կամսարականի վեպը, վորով հեղինակը քննադատում է պոլսահայ բուրժուական շրջանների բարքերը։

83. «Մանզումեյի Եփքյար».—Որագիր, հայատառ տաճկերեն, հետո հայերեն, Պոլիս, 1866 ից մինչև 1900 թվականները։ Խմբ. Կարապետ Փանոսյան։

84. Նոյ Նահապետ.—Աստվածաշնչի առասպելի հետևողությամբ Նոյ (տես № 33) համարվում է առաջին վորթատունկը մշակողը, գինին պատրաստողը։

85. Կը ձգեմ.—Ըստ աստվածաշնչի առասպելի Քամը Նոյի վորդին եր։ Տարբեր առասպելների համաձայն՝ «Քամ» նշանակում է սև, սևադեմ, այս նշանակությունը կապված է հետևյալ անեկդոտի հետ՝ վորին ակնարկում է այստեղ Պարոնյանը։ Նոյը իբրև գինեգործ՝ մի անգամ հարբում է, և բոլորովին մերկ՝ պառկում է, Քամը հոր այդ վիճակը տեսնելով բարձրաձայն ծիծաղում է, փոխանակ նրան ծածկելու։ Նոյը արթնանալով՝ բարկանում է և անվանում է նրան «քամ» «սևերես»։ Այդ որվանից նրա և նրա ամբողջ սերնդի դեմքը մնում է սև։

86. Գավառական ժողով.—«Ազգային կեդրոնական ժողովի» (տես 54) ո-

ընելով Թյուրքիայի յուրաքանչյուր հայաբնակ նահանգ ուներ իր տեղական գավառական ժողովը։

87. Արամազդ․—Հայկական անունը աստվածների հոր։ Հունական Զևսը, Հռոմեական Յուպիտերը։

88. Աթենաս.—Հին հույների իմաստասիրության աստվածուհին, որ ծընունդ առավ Զևսի ուղեղից։

89. Հեփեստոս.—Ըստ Հույն դիցաբանության Հեփեստոսը մետաղների և կրակի աստվածն էր, աստվածների դարբինը։

90․—Պյուխներաբանություն․—Գերմանացի փիլիսոփա, Բյուխների (1824—1899) վուլգար մատերիալիստական ուսմունքը։

91. Մասքերո․—Յեգիպտագետ ֆրանսիացի գիտնական (1846—1916)։

92. Խիկար.—Տես № 26։

93. Մեարիֆ.—Կրթական մինիստրություն։

94. Ճաշակ.—«Ճաշակ ոսկեղեն դպրության» գրաբար ամսաթերթ (1886—1888)։

95. Տելեմաք—Նկատի ունի Ֆրանսիացի հեղինակ Ֆենելոնի «Տելեմաքի արկածները» գիրքը։

96. Յերկրագունտ․—Պոլսի ամսագիր, 1883—1888 խմբագրներն են Հ. Պարոնյանը և ապա Յե. Տեմիրճիպաշյանը։

97. Հյուրմյուզ․—Յեավարդ Հյուրմյուզ, Վենետիկի Մխիթարյան, ունի գրաբար լեզվով բանաստեղծություններ և թարգմանություններ՝ Ռասինից, Ֆենելոնից, Վերգիլիոսից, ինչպես և Բերնարդեն դը սեն Պիերից, (1799—1876)։

98. Վիեննայի Մխիթարյան․—Հայ կաթոլիկ վանականներ են, որոնք 1828 թվից բաժանվելով Վենետիկի մխիթարյաններից հաստատվել են Վիեննայում։

99. Հիշատակ յեվ այլն.—Այս տողերով Պարոնյանը ծաղրում է որացույցների անհասկանալի բացատրությունը։

100. Զգուշացիր սպունգե․—Պարոնյանը հիշյալ Գ. Արշավիրին իբր եշ է ներկայացնում և ակնարկում է այն առակը, ըստ որի՝ աղով բարձված էշը պատահմամբ ընկնելով ջուրը՝ ազատվում է. խրախուսվելով այս կերպ իր բեռի թեթևացումից՝ յերկրորդ անգամ յերբ սպունգով է բեռնավորած՝ դիտմամբ նորից ընկնում է ջուրը, բայց այս անգամ այլևս դուրս չի գալիս։

101. Համբիչ մ՛առ.—Պարոնյանը համրիչ է ուզում, որպեսզի համրի թե քանի անգամ արդեն հրաժարվել է պաշտոնից և քանի անգամ դեռ հրաժարվելու յէ։

102. Կրոնական ժողով.—Տես № 63։

103. Մանկունի յեպիսկոպոս.—Տես № 58։

104. Հրազդան.—Նացիոնալիստ վիպագիր և հրապարակախոս Արփիար Արփիարյանի կեղծանունը։

105. Որվան կյանք.—Այս վերնագրով պարբերական հոդվածները «Կիրակնորյա հայրենիքի» մեջ։

106. Զպարոնյան բարձյալ տանի․—Այս ամբողջ պարբերությունը կառուցված է աստվածաշունչի հեռևյալ առասպելական պատմության վրա։ Բաղաամը նշանավոր կախարդ էր, մի անգամ էշը հեծած Մովաբի թագավորի օգտին Իսրայելացիներին անիծելու յէր գնում։ Էշը հանկարծ հրեշտակին տեսնելով ճանապարհից շեղվում է և պատերին է քսվում, ուզում է պատից վեր բարձրանալ և վնասում է Բաղաամի ոտքը։

107. «Թատրոն» — Պարոնյանի հրատարակած յերգիծական հանդեսը, Կ. Պոլիս, 1874—1877 թ.։

108. Մետաս.—Ըստ Հունական դիցաբանության՝ փռյուգիայի թագավորը, որին աստվածներից մեկը զարդարեց էշի ականջներով։

109. Պահնե Գաբու.—Պոլսի շուկաներից մեկը յեվրոպական ցամաքամասի վրա։

110. Ճերիտեյի Շարքիյե—Տես № 64։

111. Պոսիւե․—Ֆրանսիացի հայտնի քարոզիչ, և պատմաբան (1627—1704)։

112. Սաբիենս.—Իմաստասերի խորհուրդներն հիմար էյին։

113—Մինևրվա.—Հունական Աթենասի հռոմեական անունը, (տես № 88)։

114. Բոմ լա դետ տը Մետյուզ․—Ինչպես Մեդյուսի գլուխը։ Տիկինը մեռնում է. Տիկինը մեռավ. յես ամենևին վիրավորված չեմ։

115. Voila.—Ահա թե ինչից է, որ ձեր աղջիկը համր է։

116․—Ազգային Հիվանդանոց.—Փրկչի հիվանդանոց. (տես № 80)։

117. Միացյալ ընկերությունք․—Մի շարք բուրժուական «բարեգործական» ընկերություններից կազմված ընկերություն, որն իր գոյությունը պահեց մինչև համաշխարհային պատերազմը։

118. «Տնտես» - Ամսաթերթ, Կ. Պոլիս, 1886—1888։

119. Արշակավան․—Արշակ Բ. Հայոց թագավորը Մասիսի ստորոտում շինել տվեց այս անունով մի քաղաք, ուր ըստ հայկական իդիալիստական պատմաբանության՝ բնակեցրեց մարդասպաններին և ավազակներին։

120. Սուլթան Համամ.—Պոլսի թաղերից մեկը։

121. Կամուրջին գլուխը.—Վոսկեղջյուրի վրա ձգվող կամուրջի մասին է խոսքը։

122. Զաքմաքճըլար.—Պոլսի բանուկ շուկաներից մեկը՝ յեվրոպական ցամաքամասի վրա։

123. Վոսփոր—Տես № 42։

124. Մասիս. — 1852 թ. Կ. Պոլսի շաբաթաթերթ, որը հետո իբր ամսաթերթ շարունակ լույս է տեսել մինչև 1900 ական թվականները։

125. Փանոսյան․—Ալեքսանդր Փանոսյան, բանաստեղծ. (1858—1919)։

126 Հ... ի վրա. Այսինքն Հրազդանի վրա, (տես № 104)։

127. Խմբագրի շունն է․—Այսինքն յերգիծանքը. որ խայթում է, նույն այդ իմաստով էլ Պարոնյանի V հատորը կոչվում է «Ծիծաղ»։

128. Լաֆոնթեն․—Տես № 5։

129. Հիպպոկրատ․—Հին Հունաստանի ամենամեծ բժիշկը. ծնված մոտավորապես 460 թ. մեր թվականությունից առաջ։

130. Պարտուց տակը․—Տես № 53։

131. Գավառական ժողով․—Տես № 86։

132. Ազգային վարչություն․—Պոլսահայերի կրոնական և քաղաքական ժողովները միասին կոչվում էյին «ազգային վարչություն»։

133. Ազգային ժողով․ -Տես № 54։

134. Ղալաթիա․—Պոլսի մի թաղամասը, Մարմարա ծովի Եվրոպական ափին, Վոսկեղջյուրի մուտքի մոտ։

135. Բում ճաբու․—Պոլսի մի թաղամասը յեվրոպական ցամաքամասի վրա ուր գտնվում և Պոլսի հայոց պատրիարքարանը։

136. Ամսօրյա Հանդես․—Վիեննայի Մխիթարյանների ամսաթերթ․ (տես № 98)։

137. Խաս գյուղ․—Վոսկեղջյուրի վրա մի թաղամաս և նավամատույց։

138. Իզմիրյանցի կտակ․—Ղլըրցի Հովսեփ Իզմիրյանցի կտակով յերկու տարին մի անգամ Պոլսում մրցանակ եր տրվում լավագույն հայագիտական աշխատության։

139. Քարաճաշյան․—Անտոն Մաղաքիա Գարգաշյան, բանասեր, պատմաբան, հեղինակը «Քննական պատմություն հայոց» քառահատոր աշխատության, Վիեննայի Մխիթարյան նախկին միաբան, վորը Բյուլների «Նյութ և Ույժ» աշխատության ազդեցության տակ հրաժարվեց հոգեվորականությունից։

140. Հ. Տերվիշյան․—Սերովբե, Վիեննայի Մխիթարյան վարդապետ. լեզվաբան, ունի լեզվաբանական ուսումնասիրություններ. 1887 թվին Պոլսում հրատարակել և «Լեզու» ամսաթերթը (տես եջ 169. ավանակը հնչ և)։

141. Ոմեոպաթիա․—Հոմեոպաթ, նմանաբուժություն, բժշկական այն դրությունը, վոր բուժում և հիվանդությունը այնպիսի միջոցներով, վորոնք նման են հիվանդությունն առաջացնող պատճառներին։

142. Յերեսփոխան․—Յերեսփոխան կոչվում եյին ազգ. յերեսփոխանական ժողովի անդամները (տես № 54)։

143. Հոգաբարձու․—Հոգաբարձուներն ընտրվում եյին քաղաքական ժողովից դպրոցների ուսումնական խնդրով զբաղվելու համար։

144. Արեվելք․—Որաթերթ, Կ. Պոլիս 1884—1912։

145. Տ… բյան․—Տերության (պետական)։

146. Չախչախյան․—Հայտնի հայագետ, ունի հայերենից իտալերեն բառարան, 1837 թ.։

147. Հյուրմյուզյան.—Տես № 97։

148. Հ. Թ․—Գուցե Վենետիկի Մխիթարյան Հ. Թովմաճյանը, Իլիականի թարգմանիչը։

149. Վոսկեղեն դար․—Այստեղ Պարոնյանը նկատի ունի հինգերորդ դարի հայերեն լեզուն: Այսպիսով «Վոսկեղեն դար» արտահայտությունը տվյալ դեպքում գործ և ածվում վոչ այն իմաստով ինչ վոր վերոհիշյալ դեպքերում։

150. Յեվայի դարու տեճուլբե․—Այսինքն բոլորովին մերկ։

151. Ատոդիկ—Հայկական դիցաբանության մեջ սիրո և գեղեցկության աստվածուհին։

152. Մովսես Մարգարե․—Հրեաների որենսդիրը, մովսեսականության հիմնադիրը։

153. Առաքյալներու ձուկ բռնելը․—Ըստ ավետարանական առասպելի՝ Քրիստոսի աշակերտները ձկնորսներ եյին։

154. Արամազդ․—Տես № 87։

155. Մահ Սոկրատա․—Սոկրատը դատապարտվեց թույն խմելու, (տես №3)։

156. Սահմանադրության․—Տես № 79։

157. Ջեն հոգեվոր.—Կրոնական բովանդակությամբ մի աշխատություն, վորի մի մասը հայատառ տաճկերենով և գրված, հեղինակություն Հակոբ պատրիարք Նալյանի. Կ. Պոլիս, 1757 թ։

158. Նարեկացի․—Գրիգոր Նարեկացի, XI դարու հայ կրոնավոր, «Մատյան վողբերգության» միստիկական գրվածքի հեղինակը։

159. Սաղմոս․—Այսպես կոչվում են Աստվածաշնչի մեջ այն հին Հրեական կրոնական բանաստեղծությունները, վորոնք վերագրվում են Դավիթ թագավորին։

160. Գործք առաքելոց․—Այսպես և կոչվում այն գիրքը, վոր նկարագրում և Քրիստոսի աշակերտների քարոզչական գործունեյությունը։

161. Ոլենտորփ։—Ֆրանսերենի դասագիրք՝ հեղինակի անունով։

162. Յերեք փեսացուներ․—1884 թվին կաթողիկոսական ընտրության առթիվ Պոլսում տեղի ունեցած անցուդարձերին և վերաբերվում այս կատակերգությունը. «Յերեք փեսացուներ» պետք և հասկանալ կաթողիկոսության յերեք թեկնածուներ։ Յեվ վորովհետև Քրիստոս համարվում և փեսա, իսկ յեկեղեցին հարս, նույն կապակցությամբ եվ Պարոնյանը կաթողիկոսին փեսա յե անվանում։

163. Թատրոնը․—Հայոց Ազգային յերեսփոխանական ժողովն և։

164. Աստվածներեն վոմանք —Յերեսփոխանները։

165. Դուստրը։—Յեկեղեցին։

166. Սեղենե․—Եջմիածնի սինոդի հետ բանակցություններ վարելու, կաթողիկոսական ընտրության առթիվ տաճկահայոց մասնակցության յեղանակը կարգավորելու համար՝ յերեսփոխանական ժողովի կողմից ընտրված եր մի հանձնաժողով․ այժմ Սեղենեն այդ հանձնաժողովի հաշվետվությունն և կարդում։

167. Վարսուն յեվ վեցին ընտրության յեղանակն.—Պոլսո ազգ․ժողովը վաթսուն և վեց թեմերի ներկայացուցիչն եր, հետևաբար որենք եր, վոր նույն համեմատությամբ ներկայանար կաթողիկոսական ընտրության։

168. Բոբեասարենակ յեղբայրներ․—Այսինքն ռուսահայ յեղբայրներ. բորեասը հյուսիսային քամին և, այդ անունով այստեղ ներկայացվում և ցարական Ռուսաստանը։

169. Բորեաս —Տես № 168։

170. Իբր յերկու ձայն ընտրելու վորոշման․—Ակներև և, վոր ամբողջ կատակերգությունը պատկերացնում և յերեսփոխանական ժողովի 1884 թվի ապրիլի 2-ի նիստը, ուր վորոշվեց բազմաթիվ ձայների փոխարեն յերկու ձայնով ներկայանալ Եջմիածին՝ առաջարկելով այնտեղ կաթողիկոսական յերեք թեկնածուներ։

171. Քվեարկության արդյունք.—Պոլսո յերեսփոխանական ժողովի 1884 թ. ապրիլի 2-ի նիստում քվեարկությամբ յերեք թեկնածուներ ընտրվեցին։

172. Նարկիս․—Ներսես պատրիարք Վարժապետյան։

173. Արծվեծադիկ․—Մկրտիչ արքեպ. Խրիմյան, վոր Վարագա վանքում իր հրատարակած «Արծվի Վասպուրականի» թերթի առնչությամբ հաճախ իբր «արծիվ» և հիշատակվում Պարոնյանի գրվածքներում։

174. Զմյուռնածաղիկ.—Զմյուռնիայի առաջնորդ՝ Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյան, (տես № 46)։

175. Ազգ. ժողով.—Տես № 54։

176. Ազգ. Վարչություն.—Տես № 132։

177. Ցերուսաղեմի պարտուց.—Տես № 53։

178. Վահրամ.—Գրիգոր Ոտյանի կեղծ անունը։

179. Հյուկո.—Վիկտոր Հյուգո, Ֆրանսիայի նշանավոր բանաստեղծը և վիպասանը, ռոմանտիկ դպրոցի պարագլուխը (1802—1885)։

180. Պեշիկթաշլյան.—Արևմտահայ հայտնի ազգայնական բանաստեղծ, արևմտահայ թատրոնի հիմնադիրներից մեկը, (1828—1868)։

181. Սամաթիա.—Պոլսի հայաշատ մի թաղը, Մարմարա ծովի եվրոպական ափին։

182. Եղիա Տեմիրճիպաշյան.—(Գրասեր Աստմ) բանաստեղծ, փիլիսոփա, ուսուցիչ, խմբագիր «Ցերկրագունդ» «Տնտես» «Գրական և Իմաստասիրական շարժում» հանդեսների, (մեռ. 1908)։

183. Արձագանք.—Աբգար Հովհաննիսյանի խմբագրությամբ Թիֆլիսում լույս տեսած պահպանողական ուղղության օրաթերթ։

184. Արևելք.—Տես № 144։

185. Վանորեյից խորհուրդ.—Տես № 39։

186. Ուսումնական խորհուրդ.—Կոչվում էր նույնպես ուսումնական հոգաբարձություն, զբաղվում էր դպրոցների ուսումնական խնդիրներով։

187. Խառն ժողով.—Կրոնական և քաղաքական ժողովների միացյալ ժողովը։

188. Տիրայր.—Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Կարնո յերբեմնի առաջնորդը, 1896—1908 թ. կ. Պոլսի Հայոց պատրիարք, յեկեղեցական պատմաբան, (1842—1919)։

189. Նուպարյան.—Մեսրոպ, Ֆրանսիագետ, ֆրանսերեն հայերեն բառարանի հեղինակ, նա ունի ֆրանսերենից զանազան թարգմանություններ։

190. Նորայր Ն. Բյուզանդացի.—Բանասեր, հայերեն ֆրանսերեն բառարանի հեղինակը, (մեռ. 1914)։

191. Դատաստանական խորհուրդ.—Պոլսում պատրիարքարանի կից չորս կրոնական և չորս աշխարհական անձերից կազմված ժողովը, վորը ստեղծված էր պոլսահայերի ընտանեկան վեճերը կարգավորելու նպատակով։

192. Ս. Փափազյան.—Ստեփան Փափազյան, ուսուցիչ, հայկական ազգային յերեսփոխանական ժողովի պահպանողական անդամ. Հ. Պարոնյանի «ազգային ջոջերից» մեկը, (տես հատոր III, եջ 108)։

193. Հ. Մերեեմ գուլի.—Հարություն Մերեեմ Գուլի, ազգային յերեսփոխանական ժողովի անդամ, Պարոնյանի «ազգային ջոջերից» մեկը, (տես հատ. III, եջ 88)։

194. Հրազդան.—Տես 104։

195. Պետրոս.—Պետրոս առաքյալ, կաթոլիկ յեկեղեցու կողմից համարվում է քրիստոնեական յեկեղեցու հիմնաքարը (վեմ)։

196. Պաղլար պաշի—Ասիական ցամաքի վրա գտնված Պոլսի Իսկյուտար թաղի մի մասը։

197. Կետիկ փաշա.—Պոլսի հայաշատ մի թաղը յեվրոպական ցամաքամասի վրա։

198. Սամաթիա.—Պոլսի մի թաղամասը, Մարմարա ծովի յեվրոպական ափին։

199. Դեմոսթենես.—(Դիմոսթենես) Աթենացի նշանավոր հռետոր (384—322 մեր թվ. առաջ)։

200. Սոկրատ.—Տես №№ 3, 155։

201. Պողոս յեվ Վիրգինյա.—Բերնարդեն դը Սեն Պիեռի հովվերգական վեպը (1787 թ.)։

202 Կեդրոնական վարժարան.—Տես 35։

203. Մաղաքյա վարդապետ Օրմանյան.—Տես № 182։

204. Խրիմյան.—Տես 173։

205. Մուրատյան.—Տես 51։

206. Մկրտիչ կաթողիկոս—Կիլիկիայի Հայոց կաթողիկոս (1871—1886)

207. Հ. Ս. Տերվիշյան—Տես 140։

208. Սեդրակ Տեր-Սարգսյան—Ճանաչվում է նույնպես Ս. Դեվկանց անունով, հայտնի իր «Շահենն և Սիբիլ» վեպով։

209. Յերկաթապետական, կտավապետական, բրդապետական, միություն.—Յերկաթի, բրդի և կտավի առևտրով զբաղվող վաճառականների ներկայացուցիչներից կազմված միությունը, վորի իսկական նպատակն այն չէ, ինչ վոր նշանակված է հայտագրի մեջ։

210. Ցերիզա—Փոքր Ասիայի Ցերզնկա քաղաքը։

211. Օվրատիոս—(Հորացիոս) Հռոմեական հռչակավոր քնարերգակ և յերգիծաբան (64—8 մեր թվ. առաջ)։

212. Հարուստներու գործիք լրագիր.—Ակնարկում է «Արևելք» պահպանողական լրագիրը։

213. Հ. Գուրգեն.—Պոլսի «Ճաշակ վոսկեղեն դպրության» գրաբար ամսաթերթի խմբագիրը, 1886—88 (մեռ. 1922)։

214 Իզմիրյանց կտակ.—Տես № 138։

215. Իս. Հարությունյան.—Թիֆլիսի Ներսեսյան դպրոցի ուսուցիչ, գրել է այստեղ հիշատակվող «Հայոց գիրը» գիրքը։

216. Նիկիա.—Այժմ կոչվում է Իզնիկ։ 325 թվին այդտեղ գումարվեց առաջին յեկեղեցական տիեզերական ժողովը, վորին մասնակցեցին և հայերը։

217. Սեքյան.—Պոլսի թաղային դպրոցների ուսուցիչ և բանաստեղծ։

218.—Ցերկրագունտ.—Տես № 96։

219. Սիրքենի.—Պոլսի մի թաղամասը Մարմարա ծովի յեվրոպական ափին։

220. Ալեմտաղի.—Պոլսի թաղերից մեկը, Բոսֆորի ասիական ափին։

221. Պերպերյան վարժարան.—Ռեթեոս Պերպերյանի հիմնած դպրոցը. վորտեղից դուրս են յեկել մի շարք արևմտահայ ազգայնական գրողներ և հասարակական գործիչներ։

222. Մեզպուրյան վարժարան.—Մկրտիչ Մեզպուրյանի հիմնած աղջիկների դպրոցը։

223. Դպրոցասեր տիկնանց վարժարան.—*Այսպես կոչվում էր գավառների համար ուսուցչուհիներ պատրաստող դպրոցը:*

224. Գատը գյուղ.—*Տես № 44:*

225. Պեշիկթաշ.—*Պոլսի եվրոպական մասի մի թաղը, Բոսֆորի վրա նայող մի բլրի վրա:*

226. Բաստյոր.—*Լուի Պաստյոր: Հայտնի իր գիտական աշխատություններով՝ պատվաստումների մասին. (1822—1895):*

227. Տիկին Մատակյան.—*Տիկին Գայանե Մատակյան, Պոլսի մանկապարտեզպանուհի:*

228. Շիրքեթի խայրիյե.—*Պոլսի թուրքական նավային ընկերության անունն է:*

229. Տեմիրճիպաշյան.—*Տես № 182:*

230. Տ. Կամսարական.—*Տես № 82:*

231. Իճատիյե.—*Ասիական ցամաքի վրա գտնված Պոլսի Իուսկյուտար թաղի մի մասը:*

232 Շըմեն տը ֆեր.—*Յերկաթուղային ընկերության բաց թողած փոխառության տոմսերի վիճակախաղը:*

ԲԱՌԱՐԱՆ

Ա

ԱՁԻՆՔ.—*ազդեր*
ԱԼԼԱՀ ՔԵՐԻՄ.—*աստված ողորմած*
ԱԿՌԱՆ ՍՂՄԵԼ.—*համբերել*
ԱՂԱԴԱՎ.—*համար*
ԱՃՊԱՐԱՐ.—*փոկուսնիկ*
ԱՆՍԱԼ.—*լսել*
ԱՆՔՈՒՅԹ.—*ապահով*
ԱՌՆ (ԱՅՐ).—*մարդուն*
ԱՏԱՄ—*մարդ, մարդ աստուծո*
ԱՌՏՆԻՆ—*ընտանեկան*
ԱՎԱԴԻԿ—*ահավասիկ*
ԱՎԵՐԱՆԱՑ—*ավերների*
ԱՏԵԹ—*սովորություն*
ԱՐԱՐԱՇԽԱՐՀ—*ամբողջ աշխարհ*
ԱՐԹԸԽ—*այլևս*
ԱՐՏՈՍՐ—*արցունք*
ԱՐՓՇԻՌ—*արբշիռ, հարբեցող, մոլի*
ԱՔՍԻՈՒԹՅՈՒՆ—*հակառակություն*
ԱՖԵՐԻՄ—*կեցցես*
ԱՖ ՔՆԵԼ.—*ներել*

Բ

ԲԱԹԱԹԵՍ—*կարտոֆիլ*
ԲԱԹՈՄԻՄ—*մնջկատակ*
ԲԱՆԹԱԼՈՆ—*շալվար*
ԲԱՆԻՎ ԲԵՐԱՆՈ—*բերանացի խոսքով*
ԲԱՊՈՒՃ—*չուստ, հողաթափ*
ԲԱՆՆ—*խոսքը, ասացվածը*
ԲԱՌՆԱԼ—*վերցնել, վերջացնել*
ԲԱՐԻԿՈՒՆ—*բարի լույս*
ԲԱՐԻԹ—*նորություններից ընկած, հնացած*
ԲՅՈՒՐՔԱԹԻՎ—*լուծողական*
ՊՈՒՏՐԱ—*բրնձափոշի*

ԲՈԼԻԹԻՔԱ—*քաղաքականություն*
ԲՌՈՎԼԱ—*դերձակի փորձ, պրիմերկա*
ԲՐԴԿՎԵԼ—*բուրդը դուրս տալ, բարկանալ*
ԲՐԻՁՈԼԱ—*խորոված*

Գ

ԳԱՅՈ.—*քայր. մանյակ*
ԳԱՆԱԿՈԾԵԼ.—*ծեծել*
ԳՈԼՈՎ.—*լինելով*
ԳՈՏԻ ԱԾԵԼ.—*գոտի կապել*
ԳՈՒՁՈՒՄ—*գառնուկս*
ԳՈՒՄԱՐ—*թղթախաղ*

Դ

ԴԱՀԵԿԱՆ—*դուրուշ, դրամ 5 1/2 կ.*
ԴԱՆԳ—*դրամի նվազագույն քանակ*
ԴԻՄԱԳՐԱՎԵԼ.—*դիմագրել*
ԴՅՈՒՐԱՃԵՋ—*հեշտությամբ մարվող*
ԴՈՒՌՆՅՈՒՌ—*կեղծոսկի. դեր յերևնալու համար մեջքին կապելիք բարձիկ*
ԴՍՏԻԿՈՆ—*հարկ, ստամ*

ՅԵ

ՅԵԲԵՆՈՍ—*ապանոս, փայտի լավ տեսակ*
ՅԵԵԼ.—*հողացավ, քամի*
ՅԵՂՋՅՈՒՐ ԱԾԵԼ.—*զոռոզանալ*
ՅԵՆ.—*կան*
ՅԵՐԿԱՅՆԱՄԻՏ.—*համբերող*

Զ

ԶԱԹԸ.—*արդեն*
ԶԱՀԵՐ.—*ուրեմն, թերևս, յերևի*

ԶԱՀՄԵԹ ԸՆԵԼ.—նեղություն քաշել
ԶԱՏԵ.—ազնվորդի, ազնվական
ԶԱՎԱԼԼԸ.—խղճալի
ԶԻ ՄԻ.—չլինի թե
ԶՄՈՒՌՍ.—անուշահոտ խունկ
ԶՐԿԱՆԱՑ.—զրկանքների

Ե

ԵԶԱՃԻ—դեղագործ
ԵԼՊԵԹՏԵ.—ինարկե, բնական է
ԵՑԼԵՆՄԻՇ ԸԼԼԱԼ—զվարճանալ
ԵՆԹԱՐԻ.—արևելյան յերկար վերարկու
ԵՐԱԾ ԵՄ.—այրված եմ

Ը

ԸՆԴ ԱԿԱՄԲ—աչքի տակով
ԸՆԴՈՒՆԱՑՆ.—դադարկ
ԸՆՋԵՌԵԼ.—տալ
ԸՍՔԱՐԲԻՆ.—կլսակոչիկ

Թ

ԹԱԼԵՀ.—բաղդ, ճակատագիր
ԹԱՆՋՔ.—փորհարություն
ԹԱՎՈՒԽ.—հավ
ԹԱՓԻՉ.—լվացարար
ԹԵԶՔԵՐԵ.—անձագիր
ԹԵՄՊԵՔԻ.—թամբաքու
ԹԵՐ.—կողմ
ԹԵՔԼԻՖՍԻԶ—անհրավեր, ընտանեբար
ԹԽՄԵԼ—լեցնել, կոխել
ԹՌԱՖ—տարօրինակ
ԹՈՒՅՐ—գույն
ԹՈՒՐՇԻ—թթու
ԹՐԱՔՈՄԱ—(թրախոմա) դրամոժիտ

Ի

Ի ԲԱՑ ՀԻՆԵՆ—հեռու ինձանից
Ի ԾԱԳԱՑ ԱՇԽԱՐՀԻ—աշխարհի ծայրերից
ԻՃԱՏ ԸՆԵԼ—հնարել
Ի ՀՆՈՒՄՆ—հին ժամանակ
ԻՆԹԻՔԱՆ—լուծողական
ԻՆՍԱՖ—գութ
ԻՍԵՏԵ—թեպետև
ԻՑԻՎ ԹԵ—յերանի թե
ԻԻԼԻԻՖԵՐ—ձկան տեսակ
ԻԻԹԻԻ—հաբթակ
ԻԻԹԻԻՍԻԶ—առանց հարթակի
ԻՔԵՆ—մինչդեռ, միջոցին

Լ

ԼԱԽԸՐՏԸ—զրույց, խոսակցություն
ԼԱՀԱՆԱ—կաղամբ
ԼԱՎԱՆԴԱ—անուշահոտություն
ԼԵՐՈՒՔ—յեղեգ
ԼԵՔԵ—լաքա, արատ
ԼՈԼՈԶԵԼ—համոզել
ԼԾԱԿԻՑ ԼԻՆԵԼ—նույն լուծը տանել, ա-մուսնանալ
ԼՈԽՈՒՄ—բահաթ լոխում
ԼՈՇՏԱԿ—մարդու կերպարանք ունեցող մի արմատի անունը
ԼՑԻ—կատարվի
ԼՎԱՐՈՒՔ—լսեցեք

Խ

ԽԱԼԱՊԱԼԸԽ—ամբոխ, աղմուկ
ԽԱԼԲԱԽ—քալբաք, դատակ
ԽԱՂՔ—խայտառակություն
ԽԱՀՎԱԼԹԸ—նախաճաշ
ԽԱՆԴԱՂԱՏԱՆՔ—գուրգուրանք, սեր
ԽԱՏԱՑԸՖ—արևելյան խմորեղեն
ԽԱՐՏՑԱՇ—շեկ
ԽԱՊՈՒԽ—կեղև
ԽԱՓԱՆ—թակարդ
ԽԵԼ ՆԱՎԱԿԻ—նավակի ղեկի կողմը
ԽԸՑԱՆԵԹ—չարագործ, անպիտան
ԽԸՑՄԵԹ—հարգ, արժեք
ԽԸՑԱՖԵԹ—կերպարանք
ԽԸՌԽԸՌ—կռիվ, անհամաձայնություն
ԽԸՍՄԵԹ—բախտ
ԽԸՊԸԼԻԿՈՒԹՅՈՒՆ—ծամածռություն, խեղկատակություն
ԽԻԹ—փոքր ցավ
ԽՈՇ—հաճելի
ԽՈՒՇԻԿ—թռչնիկ
ԽՈՒՄԱՇ—ղումաշ, քամաշ, կերպասեղեն
ԽՈՎԱ—դույլ
ԽՈՐԱԹԵԼ—խոսակցել

Կ

ԿԱՍԿԱՐԱ—խորոված պատրաստելու գործիք

ԿԱՐ—կարողություն
ԿԱՐԵՎԵՐ—շատ վերքով
ԿԱՔԱՎԵԼ—պարել
ԿԵԼ, ՔԵՖԻՄ ԿԵԼ—ոխ, յերանի ինձ
ԿԵՆԴԱՆԱԳԻՐ—լուսանկար
ԿԵՆՃՈՒԹՅՈՒՆ—յերիտասարդություն
ԿԵՌՑԱ—իբր թե
ԿԵՐՊԱՍ—կտորեղեն
ԿԻՑ—քացի
ԿՑՈՒՄԻՇ ՊԱԼԸՂ—արծաթաձուկ
ԿՆՏՐՈՒԿ—խունկ
ԿՈԾԻԼ—վողբալ
ԿՈՆՔ—լական
ԿՈՎԱԿԻՐ—կով կրող, փոխադրող
ԿՈՒՆՏ—ճաղատ
ԿՌՈՆ—ընտիր կտորեղեն (մետաքս)

Հ

ՀԱՄՆԵՏԱԳՈՐԾ—փայլանտուզ
ՀԱՆԳԵՏՍ—առանց գիտնալու
ՀԱՉՍ—աչքերում
ՀԱՎԱՏԻՍ—լավ լուր
ՀԱՏԱ—վերջացա, սպառվեցի
ՀԱՐԵՎԵԼԻՑ ՄԻՆՉԵՎ ԻՄՈՒՍՏ—արևելքից մինչև արևմուտք
ՀԵՄ—համ, և թե
ՀԵԼՊԵԹՏԵ—անշուշտ
ՀԵՄԵՆ—իսկույն, հենց
ՀԻՆՑՑԱՂԻ—հնդկականյուղ (դասատրկա)
ՀՄԱՑՔ—բախտ բացանող (ֆալճի)
ՀՈՇ—թեպետև, խոմ
ՀՈՒՍԿՈՒՐԵՄՆ—ի վերջո

Ձ

ՁԵՌՆԱԾՈՒԹՅՈՒՆ—կախարդություն, ֆոկուս

Ճ

ՃԻՑԵՐ—թոք. հոգեհատոր
ՃՑՈՒՊՊԵ—Ասիական յերկար վերարկու
ՃՆՃՈՑ—սրբիչ
ՃՈՒՐՃԻՆԱ—խեղկատակություն

Մ

ՄԱԶԼՈՒՄ—անմեղ
ՄԱՆԱՎԱՆԴՑԱԼ—վորոշ հատկության տեր
ՄԱՆԹՈ—վերարկու
ՄԱՆՂԸՐ—փոքր քանակով սև փող
ՄԱԽՍՈՒՍ—դիտմամբ
ՄԱՇԱԼԼԱՀ—կեցցես
ՄԱՍԽԱՐԱ—ծաղր, խեղկատակ
ՄԱՍՔԵ—դիմակ, դիմակավոր
ՄԵՃԻՏԻՑԵ—սուլթան Մեճիտի անունով արծաթ դրամ (1ռ. 60կ.)
ՄԵԶԵ—աղանդեր
ՄԵՑԽԱՆԵ—գինետուն
ՄԵՐԱՔ—թախիծ, մտատանջություն
ՄԵՍԱՐԻՖ—ծախք
ՄԻԱԼՈՒԾ ԲԵՐԵԼ—միաձայն, միակտուր ներկայացնել
ՄԻ ՀԱԶ—մի աջ
ՄԻ ՀԱՑԱԿ—մի ձախ
ՄԻՍՈ—ներքին շրջազգեստ
ՄՈՏԵՍԹՐԱ—կարուհի
ՄՈՒՍԼՈՒԽ—ծորակ
ՄՈՒԽԱՃԻՐ—խումաշ
ՄՑՈՒԼՀԱԶԱ—խորհրդածություն
ՄՈՒՀԱՊԵԹ—սեր, համերաշխություն
ՄՏՄՏԱԼ—մտածել

Յ

ՅԱԶՄԱ—գլուխը ծածկելու գործվածք
ՅԱԹԱԽ—անկողին
ՅԱԽԸԼԱՆՄԻՇ ԸՆԵԼ—յախու կապել
ՅԱԽԸՇՏԸՐՄԸՇ—հարմարեցրած
ՅԱՎՐՈՒ—ձավակ, բալիկ
ՅԱՐԱՄԻՇ—ոգտակար
ՅՈՒՄՈՒՐՃԱՂ—դրող, ժանդախտ

Ն

ՆԱԶԱՐ—աչք տալ
ՆԱԼԼԵԹ—անիծյալ
ՆԱԽՃԻՐ—վոճիր, կոտորած, չարիք
ՆԱՆՐԱՍԵՐ—դատարկ բաներ սիրող
ՆԱՎԶՆԵՐԴ—զարկերակ
ՆԱՐԿԻԼԵ—կլկլակ

ՆԵՐԲՈՂԵԼ—գովաբանել
ՆՈՆՈՇԻԿ—սիրունիկ, գեղեցիկ
ՆՈՐԱՏԻ—յերիտասարդ

Շ

ՇԱԼՎԱՐ—արևելյան անդրավարտիք
ՇԱԽԱ—կատակ
ՇԱՀՊՐԱԿ—ծաղկի անուն է
ՇԱՊԽԱ—գլխարկ
ՇԱՏԱՆԱԼ—բավականանալ
ՇԱՏ Է—բավական է
ՇՆՉԱՀԵՂՁՈՒԹՅՈՒՆ—շնչարգելություն
ՇՈՂՈՄԵԼ—շողոքորթել

Ո

ՈԽԱԼԸԽ—ոխանոց, մի ոխա ծանրությամբ
ՈՇԱՐԱԿ—շարբաթ
ՈՐԹԱԼԸԽ—ոտարներ, հասարակություն
ՈՐՆ ԻԲՈՒՆ—ամբողջ օրը
ՈՒԾԱՑՆԵԼ—հեռացնել, սիրտը սառեցնել
ՈՒՅՔ—վորոնք
ՈՒՅՏՈՒՐՏՈՒՔ—հարմարեցրինք, սարքեցինք
ՈՒՅՏՈՒՐՄԻՇ ԸՆԵԼ—սարքել, հարմարեցնել

Ջ

ՋԱՄԱՇՐՃԻ—լվացարար
ՋԻԼԻՆԿԱՐ—դարբին
ՋԻՆԿՅԱՆԵ—գնչու, բոշա
ՋԻՐՈՋ—չորացրած սկումբրիա ձուկ
ՋԻՐՔԻՆ—տգեղ
ՋԻՖԹ—զույգ
ՋՈԼՈՒԽ ՋՈՃՈՒԽ—ընտանեկան պարագաներ, յերեխաներ

Պ

ՊԱՋԱՐԼԸԽ—սակարկություն
ՊԱՋԻ ՊԱՋԻ—յերբեմն յերբեմն
ՊԱԹՄԻՇ ԸԼԼԱԼ—կործանվել
ՊԱԼՈ—պարահանդես
ՊԱԿՇՈՏ—ցոփ
ՊԱՑՂՈՒՇ—բու
ՊԱՆՊԱՇԽԱ—բոլորովին ուրիշ
ՊԱՇԼԱՑԵԼ—սկսել

ՊԱՐԱՆՈՑ—վիզ
ՊԱՐԵ—գոնե
ՊԵՋԱՋ—կերպասավաճառ, բազազ
ՊԵՋԻՔ—թղթախաղի տեսակ
ՊԵԼԱ—փորձանք, խաթաբալա
ՊԵԼԼԻ—հայտնի
ՊԵՍԼԵՄԵ—սպասուհի
ՊԵՐԵՔԵԹ—առատություն; որհնություն
ՊԻԼԵ—նույնիսկ
ՊԻՆԼԻԿ—շտապ
ՊԻՖԹԵՔ—բիշտեկս
ՊՂՊԵՂ—տակտեղ
ՊՃՂՆԱՎՈՐ—յերկար վերարկու
ՊՃՆԵԼ—զարդարել
ՊՑՈՊՈՒՐԼԱՆՄԻՇ ԸԼԼԱԼ—գոռոզանալ
ՊՈԹԻՆ—կոշիկ
ՊՈՇ—դատարկ

Ջ

ՋԱԽԵԼ—չեխել, հանդիմանել
ՋԱՄԲԵԼ—կերցնել, սնուցանել

Ռ

ՌԻՆՏ—լավ, սիրուն

Ս

ՍԱԴՐՑԱԼ—դրդված
ՍԱԽԱ—ջրկիր
ՍԱՎՈՒՇ—հեռացիր, անցիր
ՍԱՐԱՃ—համետագործ, փալանտուզ
ՍԱՐՍԸԽ—անխելք
ՍԹԱՋՄՈ—ջղաձգություն
ՍԵՐԲԻԼՄԻՇ—սրսկել
ՍԵԹՐԻ—սերդուկ
ՍԵՊԵԹԵ—համարյա թե
ՍԵՊԵԼ—կարևորություն տալ, հնազանդել
ՍԵՐԹ—խիստ, թունդ
ՍԻՊԻՐ ՑԱՂԸ—սիբիրի յուղ
ՍԻՐՏ ԴՆԵԼ—գաղտնի պահել
ՍԿԱՎԱՌԱԿ—ապսե
ՍՈՒՏԱԿԱՍՊԱՍ—կեղծավոր, շողոքորթ
ՍՐԲԱՆ—հետույքի անցք
ՍՐԴՈՂԻԼ—զայրանալ, խռովել
ՍՓԱԾԱՆԵԼԻ—գոգնոց

Վ

ՎԱԽ ՎՈՐ, ՎԱՀ ՎՈՐ—ափսոս վոր
ՎԱԽԻԹ—ժամանակ
ՎԱՀԱՆԱՁՈՒԿ—ձկան տեսակ
ՎԱՀ ՑԱՎՐՈՒՄ—վախ ցավակս
ՎԱՑ ՊԱՆԱ—վայ ինձ
ՎԱՑՐԱՊԱՐ—դատարկ տեղը
ՎԵՍ—գոռոզ
ՎԵՍԵԼԱՄ—վերջ, վերջապես
ՎԵՄ—քար
ՎԵՐՍՏԻՆ—կրկին
ՎՐԱ ԳԱԼ—գերանալ

Տ

ՏԱՆԹԵԼԱ—ժանյակ (կրուժեվա)
ՏԱՐԱԲՆԱԿ—պանդուխտ
ՏԱՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ—բացակայություն
ՏԵՑԻ—իբր, թե
ՏԸՔՆԵԼ—անքուն գիշեր անցնել, աշխատել
ՏԵՐՏԼԵՇՄԻՇ ԸԼԼԱԼ—վշտակից լինել, վշտերը միմյանց հայտնել
ՏԸՐԼԻԽ—հանգստություն, վիճակ
ՏՆԿԵԼ—խմել
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ—կարգադրություն
ՏՈՂՐԱՄԱՃԻ—ատաղձագործ

Ր

ՐԵՑԻՆ—գրավ

Փ

ՓԱԹԼԱՄԻՇ ԸԼԼԱԼ—ճաքել, ուռել
ՓԱՐԱ—փող
ՓԱՐԱՏԵԼ—պատառոտել
ՓԻԼԻՃ—հավու ճուտ, վառեկ
ՓՍԻԱԹ—խսիր

Ք

ՔԱՋԱՋ—մետաքսավաճառ
ՔԱՀԸՐ—վիշտ, հոգս
ՔԱՄԵԼԻԱ—ծաղկի անուն
ՔԵԲԱՋԵՑՈՒԹՅՈՒՆ—խայտառակություն
ՔԵՇԿԵ—յերանի թե
ՔԵՐԵՍԹԵՃԻ—տախտակ քաշող, տախտակավաճառ
ՔԵՐԹԵԼ—պոկել, բանաստեղծել
ՔԵՐԹՈՂ—բանաստեղծ
ՔԵՆՆԱՑԻ ԽՈՍՔԵՐ—հակառակ խոսքեր (ի հեճուկս)
ՔԻՇԻ ՋԱՏԵ—ազնվազարմ
ՔԻՊԱՐ—ազնվական, պատվավոր
ՔԻՊՐԻԹ—լուցկի
ՔՑՈՒԼԱՀ—գլխարկ (դալբաք)
ՔՑՈՐ—կույր
ՔՈՆՍՈԼ—պահարան վրան հայելիով
ՔՈՒՋՈՒՄ, ԳՈՒՋՈՒՄ—զառնուկս
ՔՈՐՍԵ—քորսեղ, սեղմիրան
ՔՈՐՏԵԼԱ—ժապավեն
ՔՈՒՐՄԻՇ ԸՆԵԼ—լարել, ծխել
ՔՌՈՇԵ—ձեռագործի ասեղ
ՔՐԸՔՃԻ—ժողովրդական վիրաբույժ, սրնրխջի
ՔՐՈՆԻԿԱԳԻՐ—ժամանակագիր

Ֆ

ՖԱԹՈՒՐԱ—կերպասեղեն կտորների նըմուշներ՝ մեկ կազմի մեջ
ՖԱՄԻԼՅԱ—ընտանիք
ՖԵՐԱՀ ՖԵՐԱՀ—ազատ, համարձակ
ՖԸՍՏԸՔ—պիստակ
ՖՈՒՋԱԼԱՆՄԻՇ ԸՆԵԼ—խոզանակել
ՖՈՐՔԵԴԱ—կանանց մազերը պահելիք, հերակալ (շպիլկա)

ՀՍՍՀ-ССРА

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Խմբագրողի կողմից 5

Առտնին տեսարաններ 7

Առտնին կռիվներ 87

Ընտանեկան նամականի 99

Քանի մը խոսք առ օրիորդ կամ տիկին պատմություն . 115

Նետ 149

Խոսակցություն մեռելոց 183

Սիրո միջնորդները 199

Երեք փեսացուներ 223

Առանց միջնորդի փեսացու գտնել 241

Պարահանդեսեն որ մը յետքը 251

Որագրություն Խիկարի 257

Դիտողություն Խիկարի 283

Գրպանի տետրս 293

Ծանոթություններ 309

Բառարան 321

10
538
ՀՀ Ազգային գրադարան
NL0362157

49991